

«Գուդ գրուպ (Ինթերնեշնլ) Լիմիթեդ» (ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրում)

«International GAAP» ®

Առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրող կազմակերպության
ֆինանսական հաշվետվությունների ցուցադրական օրինակ 2011թ.
դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հիմնված 2011թ. մարտի 31-ի դրությամբ թողարկված ֆինանսական
հաշվետվությունների միջազգային ստանդարտների վրա

Բովանդակություն

Հապավումներ և կարևոր սահմանումներ.....	3
Ներածություն	4
Անկախ աուդիտորական եզրակացություն «Գուդ գրուպ (Ինթերնեշլ) Լիմիթեդ»-ի (ՖՀՄՄ-ների առաջին անգամ որդեգրում) բաժնետերերին.....	11
Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն.....	12
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն	14
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	15
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն.....	17
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն.....	20
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	22
1. Տեղեկատվություն ընկերության վերաբերյալ	22
2.1 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները.....	22
2.2 Հաշվետվությունների համախմբման հիմունքները.....	22
2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր.....	23
2.4 ՖՀՄՄ-ների առաջին անգամ որդեգրում	47
3. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ	62
4. Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ	67
5. Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ և չվերահսկող բաժնեմասերի ձեռքբերում	68
6. Համատեղ ձեռնարկում մասնակցություն	72
7. Ներդրում ասոցիացված կազմակերպությունում	75
8. Սեզոնների վերաբերյալ տեղեկատվություն.....	75
9. Այլ եկամուտներ/ծախսեր և ճշգրտումներ	78
9.1 Այլ գործառնական եկամուտներ.....	78
9.2 Այլ գործառնական ծախսեր	78
9.3 Ֆինանսական ծախսեր.....	78
9.4 Ֆինանսական եկամուտներ	78
9.5 Մաշվածություն, ամորտիզացիա, փոխարժեքային տարբերություններ և ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում ներառված պաշարների ինքնարժեք.....	79
9.6 Աշխատակիցներին հատուցումների գծով ծախսեր	79
9.7 Հետազոտության և մշակման ծախսումներ.....	79
9.8 Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների տարրեր	80
10. Շահութահարկ	80
11. Ընդհատված գործունեություն	84
12. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ.....	85
13. Հիմնական միջոցներ.....	87
14. Ներդրումային գույք	89
15. Ոչ նյութական ակտիվներ	90
16. Այլ ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ	91
16.1 Այլ ֆինանսական ակտիվներ	91
16.2 Այլ ֆինանսական պարտավորություններ.....	92
16.3 Հեջավորում և ածանցյալ գործիքներ.....	96
16.4 Իրական արժեքներ.....	99
17. Գույքի և անորոշ օգտակար ծառայություն ունեցող ոչ նյութական ակտիվների արժեզրկման ստուգում	104

18.	Պաշարներ	106
19.	Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (կարճաժամկետ)	107
20.	Դրամական միջոցներ և կարճաժամկետ ավանդներ	108
21.	Թողարկված կապիտալ և պահուստներ.....	108
22.	Առաջարկված և վճարված շահաբաժիններ.....	110
23.	Պահուստներ	111
24.	Պետական շնորհներ	113
25.	Հետաձգված հասույթ.....	113
26.	Թոշակային և այլ հետաշխատանքային հատուցման պլաններ.....	113
27.	Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների պլաններ	119
28.	Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր (կարճաժամկետ).....	121
29.	Կապակցված կողմերի բացահայտումներ	122
30.	Պարտավորվածություններ և պայմանական պարտավորություններ	125
31.	Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունները	127
32.	Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր.....	135
	Հավելված 1. Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն (միասնական հաշվետվության օրինակ)	136
	Հավելված 2. Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն (ծախսերն ըստ բնույթի ներկայացման օրինակ)	138
	Հավելված 3. Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն ուղղակի մեթոդով	139
	Նշումներ.....	140

Հապավումներ և կարևոր սահմանումներ

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված սույն ֆինանսական հաշվետվությունների ցուցադրական օրինակում օգտագործվում են հետևյալ հապավումները՝

ՀՀՄՍ 33.41	Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ թիվ 33, պարագրաֆ 41
ՀՀՄՍ 1.ԵՀ13	Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ թիվ 1, Եզրակացության հիմքեր, պարագրաֆ 13
ՖՀՄՍ 2.44	Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ թիվ 2, պարագրաֆ 44
ՄՄԿ 29.6	Մեկնաբանությունների մշտական կոմիտեի մեկնաբանություն թիվ 29, պարագրաֆ 6
ՖՀՄՄԿ 4.6	ՖՀՄՍ մեկնաբանությունների կոմիտեի (Նախկինում՝ ՖՀՄՄԿ) մեկնաբանություն թիվ 4, պարագրաֆ 6
ՀՀՄՍ 39.ԻՈՒ.Է.2	ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը», ՀՀՄՍ 39 ստանդարտի իրագործման ուղեցույց, Բաժին Է՝ Այլ, պարագրաֆ Է.2
ՀՀՄՍ 39.ԿՈՒ71	ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը», հավելված Ա, կիրառման ուղեցույց, պարագրաֆ ԿՈՒ 71
ԱՄՍ 700.25	Աուդիտի միջազգային ստանդարտ թիվ 700, պարագրաֆ 25
Մեկնաբանություն	Մեկնաբանությունը պարզաբանում է, թե ինչպես են ՖՀՄՍ-ների պահանջները իրագործվում ներկայացված ցուցադրական օրինակում:
ՀԸՀՍ	Համընդհանուր ընդունված հաշվապահական ստանդարտներ
ՀՀՄՍԽ	Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդ
Մեկնաբանությունների կոմիտե	ՖՀՄՍ մեկնաբանությունների կոմիտե (Նախկինում՝ Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտե (ՖՀՄՄԿ))
ՄՄԿ	Մեկնաբանությունների մշտական կոմիտե

Ներածություն

Սույն հրապարակումը պարունակում է «Գուդ գրուփ (Ինթերնեշնլ) Լիմիթեդ»-ի (ՖՀՄՄ-ների առաջին անգամ որդեգրում) և իր դուստր կազմակերպությունների (այսուհետ՝ «Խմբի») համախմբված ֆինանսական հաշվետվությունների ցուցադրական օրինակը 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Սույն հաշվետվությունները Խմբի առաջին ֆինանսական հաշվետվություններն են, որոնք պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան: Խումբն առաջին անգամ ՖՀՄՄ-ներ որդեգրող է: Խումբը հանդիսանում է եվրոպական որևիցե պայմանական պետությունում հրապարակային գրանցված խոշոր արտադրական կազմակերպություն, որի ֆունկցիոնալ արժույթը Եվրոն է: Խմբի բաժնետոմսերը գնանշվում են բորսայում: Մայր կազմակերպության ֆունկցիոնալ և Խմբի հաշվետվությունների ներկայացման արժույթը հանդիսանում է Եվրոն:

Նպատակը

Ֆինանսական հաշվետվությունների փաթեթի սույն ցուցադրական օրինակը «Էրնսթ ընդ Յանգ» ընկերության կողմից պատրաստված բազմաթիվ օրինակներից մեկն է՝ օժանդակելու ձեզ սեփական ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու ընթացքում: Ցուցադրական օրինակի նպատակն է արտացոլել այնպիսի գործարքներ և բացահայտումներ, որոնք, մեր կարծիքով, ամենագործածականն են հանդիսանում առաջին անգամ ՖՀՄՄ-ներ որդեգրողների մեծամասնության համար: Սույն հրապարակումը օգտագործողներին առաջարկվում է ընտրել իրենց կազմակերպությանը բնորոշ բացահայտման օրինակները և ճշգրտել դրանք՝ ըստ անհրաժեշտության: Օգտագործողները պետք է նաև հաշվի առնեն, որ այլ գործարքները կարող են պահանջել լրացուցիչ բացահայտումներ:

Սույն հրապարակումը, այնուամենայնիվ, նախատեսված չէ արտացոլելու կարգավորվող կամ խիստ մասնագիտացված ոլորտների նկատմամբ կիրառվող տեղեկատվության բացահայտումների պահանջները: Մենք ձեր ուշադրությանն ենք ներկայացնում նաև մի շարք այլ ոլորտների համար հրապարակումներ:

Այդ հրապարակումներն են՝

- ▶ «Գուդ գրուփ (Ինթերնեշնլ) Լիմիթեդ»
- ▶ «Գուդ գրուփ (Ինթերնեշնլ) Լիմիթեդ» (ՖՀՄՄ-ների առաջին անգամ որդեգրում)
- ▶ «Գուդ գրուփ (Ինթերնեշնլ) Լիմիթեդ»՝ ցուցադրական համախմբված միջանկյալ խտացված ֆինանսական հաշվետվություններ
- ▶ «Գուդ բանկ (Ինթերնեշնլ) Լիմիթեդ»
- ▶ «Գուդ ինշուրանս (Ինթերնեշնլ) Լիմիթեդ»
- ▶ «Գուդ ինվեսթմենթ ֆանդ Լիմիթեդ»
- ▶ «Գուդ ռեալ էսթեյթ գրուփ (Ինթերնեշնլ) Լիմիթեդ»
- ▶ «Գուդ մայնինգ (Ինթերնեշնլ) Լիմիթեդ»
- ▶ «Գուդ փեթրոլիում (Ինթերնեշնլ) Լիմիթեդ»

Այլ ոլորտների ֆինանսական հաշվետվությունների ցուցադրական օրինակները կհամալրեն սույն ցանկը ապագայում:

Էջի աջ կողմում ծանոթագրությունները ցույց են տալիս ՖՀՄՄ-ների այն պարագրաֆները, որոնք նկարագրում են բացահայտման նկատմամբ պահանջները: ՖՀՄՄ-ներում ներառված պահանջների նկատմամբ կանկաժների պարագրաֆում անհրաժեշտ է անդրադառնալ համապատասխան սկզբնաղբյուրներին և անհրաժեշտության դեպքում դիմել համապատասխան մասնագիտական խորհրդատվության:

Պետք է հաշվի առնել, որ ֆինանսական հաշվետվությունների ցուցադրական օրինակները նախատեսված չեն բավարարելու որևէ երկրի կամ արժեթղթերի շուկայի կարգավորող մարմինների պահանջները և չեն ներկայացնում ՖՀՄՄ-ներին համապատասխան հաշվապահական հաշվառման կամ բացահայտումների բոլոր հնարավոր պահանջները:

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ (ՖՀՄՄ)

«ՖՀՄՄ» հապավումը նկարագրվում է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների ներածության 5-րդ պարագրաֆում, որպես՝ «Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից հաստատված ստանդարտներ և մեկնաբանություններ, Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ (ՀՀՄՄ) և Մեկնաբանությունների մշտական կոմիտեի (ՄՄԿ) մեկնաբանություններ, որոնք հրապարակվել են համաձայն նախկին Դրույթների»: Այն նաև նշվում է ՀՀՄՄ 1-ի 7-րդ և ՀՀՄՄ 8-ի 6-րդ պարագրաֆներում: Հետևաբար, երբ հայտարարվում է, որ ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՄ-ներին, նշանակում է, որ դրանք համապատասխանում են ՀՀՄՄԽ-ի բոլոր պաշտոնական հրապարակումներին՝ ներառյալ՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների մեկնաբանությունների կոմիտեի (նախկին ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտե՝ ՖՀՄՄԿ կամ նախկին Մեկնաբանությունների մշտական կոմիտե՝ ՄՄԿ) կողմից հրապարակված մեկնաբանությունները:

Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդ (ՀՀՄՍԽ)

ՀՀՄՍԽ-ն հանդիսանում է ՖՀՄՍ հիմնադրամի (անկախ, շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն, որը ներկայացնում է հանրային շահը) ստանդարտներ սահմանող անկախ մարմին: ՀՀՄՍԽ-ի անդամները (ներկա դրությամբ 15 լրիվ դրույքով աշխատող անդամներ) պատասխանատու են ՖՀՄՍ-ների և ՖՀՄՍ մեկնաբանությունների կոմիտեի կողմից մշակված ՖՀՄՍ-ների մեկնաբանությունների հաստատման համար: Ստանդարտների ընդունման պարտականությունները կատարելիս ՀՀՄՍԽ-ն վերահսկում է ստանդարտների հաստատման և թողարկման հիմնավոր, բաց և թափանցիկ ընթացակարգերը, որոնցից՝ խորհրդատվական փաստաթղթերի (քննարկման համար նախատեսված և առաջարկվող նախագծեր) հրապարակումը հանրային մեկնաբանությանը ներկայացնելու նպատակով հանդիսանում է կարևոր բաղկացուցիչ:

ՖՀՄՍ մեկնաբանությունների կոմիտե

ՖՀՄՍ մեկնաբանությունների կոմիտեն (Մեկնաբանությունների կոմիտե) հանդիսանում է ՀՀՄՍԿ հիմնադրամի հոգաբարձուների կողմից նշանակված կոմիտե, որն օժանդակում է ՀՀՄՍԽ-ին՝ ֆինանսական հաշվետվությունները պատրաստողների, օգտագործողների և աուդիտորների համար ֆինանսական հաշվառման ստանդարտների և հաշվետվությունների սահմանման ու բարելավման նպատակով:

Մեկնաբանությունների կոմիտեն անդրադառնում է համեմատաբար լայնամասշտաբ կարևորության խնդիրների և ոչ այնպիսի խնդիրների, որոնք առնչվում են միայն քիչ քանակով կազմակերպություններին: Կոմիտեի մեկնաբանություններն անդրադառնում են՝

- ▶ ֆինանսական հաշվետվությունների ներկայացմանը վերաբերվող նոր հայտնաբերված խնդիրներին, որոնց հատուկ անդրադարձ չի կատարվել ՖՀՄՍ-ներում,
- ▶ այն խնդիրներին, որոնց գծով անբավարար կամ հակասական մեկնաբանություններ են մշակվել կամ հնարավոր է, որ կմշակվեն համապատասխան ուղեցույցի բացակայության պատճառով՝ տվյալ խնդրի շուրջ փոխհամաձայնության հասնելու նպատակով,
- ▶ խորհրդատվությանը ՀՀՄՍԽ-ին՝ ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումների նախագծերի իրականացման ընթացքում:

ՖՀՄՍ-ներ 2011թ. մարտի 31-ի դրությամբ

Սույն ցուցադրական ֆինանսական հաշվետվություններում կիրառված ստանդարտները 2011թ. մարտի 31-ի դրությամբ հրապարակված տարբերակներն են և ուժի մեջ են այն տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, որոնք սկսվում են 2011թ. հունվարի 1-ից:

ՖՀՄՍ-ները բաղկացած են ՀՀՄՍԽ-ի կողմից որդեգրված ստանդարտներից և մեկնաբանություններից: Մեր կողմից պատրաստված ֆինանսական հաշվետվությունների ցուցադրական օրինակներում ստանդարտները ներկայացված են հետևյալ կերպով՝

		«Առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրող» ¹	«Գուր գրուի» ²	«Գուր գրուի» միջանկյալ ¹	«Գուր բանկ» ²	«Գուր ինշուրանս» ³	«Գուր ինվեսթմենթ» ²	«Գուր ռեալ էսթեյթ» ²	«Գուր քոնսթրաքշն» ²	«Գուր մայնիզ» ²	«Գուր փեթրոլիում» ⁴
Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ (ՖՀՄՍ)											
ՖՀՄՍ 1	Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրումը	✓			✓						✓
ՖՀՄՍ 2	Բաժնետոմսերի վրա հիմնված վճարում	✓	✓	✓	✓	✓			✓		
ՖՀՄՍ 3	Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ (2008թ. վերանայված)	✓	✓	✓		✓		✓	✓	✓	✓
ՖՀՄՍ 4	Ապահովագրության պայմանագրեր					✓					
ՖՀՄՍ 5	Կաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործունեություն	✓	✓	✓			✓	✓			
ՖՀՄՍ 6	Օգտակար հանածոների հետախուզում և գնահատում									✓	✓
ՖՀՄՍ 7	Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓
ՖՀՄՍ 8	Գործառնական սեզմենտներ	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓
ՖՀՄՍ 9	Ֆինանսական գործիքներ. դասակարգումը և չափումը										
Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ (ՀՀՄՍ)											
ՀՀՄՍ 1	Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓
ՀՀՄՍ 2	Պաշարներ	✓	✓	✓				✓	✓	✓	✓
ՀՀՄՍ 7	Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓
ՀՀՄՍ 8	Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓
ՀՀՄՍ 10	Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓
ՀՀՄՍ 11	Կառուցման պայմանագրեր							✓	✓		
ՀՀՄՍ 12	Շահութահարկեր	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓
ՀՀՄՍ 16	Հիմնական միջոցներ	✓	✓	✓	✓	✓		✓	✓	✓	✓
ՀՀՄՍ 17	Կարձակալություն	✓	✓	✓	✓	✓		✓	✓	✓	✓
ՀՀՄՍ 18	Հասույթ	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓
ՀՀՄՍ 19	Աշխատակիցների հատուցումներ	✓	✓	✓	✓	✓				✓	✓
ՀՀՄՍ 20	Պետական շտրիների հաշվառում և պետական օգնության բացահայտում	✓	✓	✓							
ՀՀՄՍ 21	Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓
ՀՀՄՍ 23	Փոխառության ծախսումներ	✓	✓	✓		✓		✓	✓	✓	✓
ՀՀՄՍ 24	Կապակցված կողմերի բացահայտումներ	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓
ՀՀՄՍ 26	Թոշակային հատուցումների պլանների հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունները										
ՀՀՄՍ 27	Համախմբված և առանձին ֆինանսական հաշվետվություններ (2008թ. վերանայված)	✓	✓	✓	✓	✓		✓	✓	✓	✓
ՀՀՄՍ 28	Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	✓	✓	✓		✓		✓	✓		
ՀՀՄՍ 29	Ֆինանսական հաշվետվությունները գերսղաճային տնտեսություններում										
ՀՀՄՍ 31	Մասնակցություն համատեղ ձեռնարկումներում	✓	✓	✓				✓	✓	✓	✓
ՀՀՄՍ 32	Ֆինանսական գործիքներ. ներկայացումը	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓
ՀՀՄՍ 33	Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓
ՀՀՄՍ 34	Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ				✓				✓		
ՀՀՄՍ 36	Ակտիվների արժեզրկում	✓	✓	✓		✓		✓	✓	✓	✓
ՀՀՄՍ 37	Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓
ՀՀՄՍ 38	Ոչ նյութական ակտիվներ	✓	✓	✓	✓	✓		✓	✓	✓	✓
ՀՀՄՍ 39	Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓
ՀՀՄՍ 40	Ներդրումային գույք	✓	✓	✓		✓		✓			
ՀՀՄՍ 41	Գյուղատնտեսություն										

Մեկնաբանություններ		«Առաջին անգամ ՖՀՄՄ-ներ ստեղծվելու» ¹	«Գուր գրուի» ²	«Գուր գրուի» միջամակայ «Գուր» ³	«Գուր ինչուրում» ⁴	«Պորուրում» ⁴	«Վերջին լինելու» ⁴	«Վերջին լինելու» ⁴	«Վերջին լինելու» ⁴	«Վերջին լինելու» ⁴
ՖՀՄՄ 1	Փոփոխություններ ապագործարկման, վերականգնման և նմանատիպ գոյություն ունեցող պարտավորություններում	✓	✓	✓			✓	✓		
ՖՀՄՄ 2	Կոռպորատիվ կազմակերպություններում անդամների բաժնեմասերը և նմանատիպ գործիքներ									
ՖՀՄՄ 4	Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում	✓	✓	✓			✓	✓		
ՖՀՄՄ 5	Ապագործարկման, վերակառուցման և շրջակա միջավայրի վերականգնման ֆոնդերում մասնակցության իրավունքը		✓				✓	✓		
ՖՀՄՄ 6	Էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների թափոնների յուրահատուկ շուկայում մասնակցությունից առաջացող պարտավորություններ	✓	✓	✓						
ՖՀՄՄ 7	Վերահաշվարկման մոտեցման կիրառումը՝ համաձայն ՀՀՄՄ 29-ի՝ ֆինանսական հաշվետվությունները գերսղաճային տնտեսություններում									
ՖՀՄՄ 9	Պարունակվող ածանցյալ գործիքների գնահատման վերանայում		✓		✓	✓				
ՖՀՄՄ 10	Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ և արժեզրկում		✓	✓						
ՖՀՄՄ 12	Ծառայության կոնցեսիայի համաձայնություններ								✓	
ՖՀՄՄ 13	Հաճախորդի հավատարմության ծրագրեր	✓	✓		✓					
ՖՀՄՄ 14	ՀՀՄՄ 19 – Սահմանված հատուցումների գծով ակտիվի սահմանափակումը, նվազագույն ֆինանսավորման պահանջները և դրանց փոխադրելությունը	✓	✓	✓	✓					
ՖՀՄՄ 15	Անշարժ գույքի կառուցման պայմանագրեր									
ՖՀՄՄ 16	Արտերկրյա ստորաբաժանումում զուտ ներդրման հեջերը	✓	✓	✓						
ՖՀՄՄ 17	Ոչ դրամական ակտիվների բաշխումը սեփականատերերին									
ՖՀՄՄ 18	Հաճախորդների կողմից ստացված ակտիվներ									
ՖՀՄՄ 19	Բաժնային գործիքների միջոցով ֆինանսական պարտավորությունների մարումը									
ՄՄ 7	Անցումը եվրոյի									
ՄՄ 10	Պետական օգնություն՝ առանց գործառնական գործունեության հետ յուրահատուկ կապի									
ՄՄ 12	Համախմբում. հատուկ նշանակության կազմակերպություններ	✓	✓	✓	✓					
ՄՄ 13	Համատեղ վերահսկվող կազմակերպություններ. ձեռնարկողների ոչ դրամային ներդրումները	✓	✓	✓						
ՄՄ 15	Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ	✓	✓	✓				✓		
ՄՄ 21	Շահութահարկ. վերազնահատված չմաշվող ակտիվների վերականգնում	✓	✓	✓				✓		
ՄՄ 25	Շահութահարկ. փոփոխություններ կազմակերպության կամ նրա բաժնետերերի հարկային կարգավիճակում									
ՄՄ 27	Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը	✓	✓	✓						
ՄՄ 29	Ծառայության կոնցեսիայի համաձայնություններ. բացահայտում									
ՄՄ 31	Հասույթ. բարտերային գործարքներ, որոնք ներառում են գովազդային ծառայություններ									
ՄՄ 32	Ոչ նյութական ակտիվներ. ինտերնետային կայքի ծախսումներ	✓	✓	✓					✓	✓

✓ Սույն ստանդարտը կամ մեկնաբանությունը արտացոլված է հաշվապահական հաշվառման քաղաքականություններում և/կամ առանձին գործարքների համապատասխան ծանոթագրության բացահայտումներում:

- ¹ 2011թ. մարտի 31-ին թողարկված ՖՀՄՄ-ների հիման վրա:
- ² 2010թ. օգոստոսի 31-ին թողարկված ՖՀՄՄ-ների հիման վրա:
- ³ 2010թ. հունիսի 30-ին թողարկված ՖՀՄՄ-ների հիման վրա:
- ⁴ 2010թ. մայիսի 31-ին թողարկված ՖՀՄՄ-ների հիման վրա:

Վերոնշյալ բոլոր ստանդարտներն ու մեկնաբանությունները ներառում են բոլոր այն փոփոխությունները, որոնք ուժի մեջ են 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար, եթե այլ բան նշված չէ: Սույն փոփոխությունները ներառում են նաև այն փոփոխությունները, որոնք ընդունվել և հրապարակվել են 2008թ. մայիսին, 2009թ. ապրիլին և 2010թ. մայիսին «ՋՀՄՍ-ների բարեփոխումների» արդյունքում:

Հարկավոր է նշել, որ ՀՀՄՍ-ն 2011թ. մարտի 31-ից հետո կարող է հրապարակել նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ: Հետևաբար, սույն հրապարակումը օգտագործողները պետք է համոզվեն, որ 2011թ. մարտի 31-ի և իրենց ֆինանսական հաշվետվությունների հրապարակման վավերացման ամսաթվի միջև ընկած ժամանակահատվածում ՋՀՄՍ-ների պահանջներում փոփոխություններ չեն կատարվել: Բացի այդ, թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ցանկացած ստանդարտ բացահայտման նպատակներով պետք է ներկայացվի հաշվետու կազմակերպության ծանոթագրություններում:

ՋՀՄՍ-ներով առաջին ֆինանսական հաշվետվություններում հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

ՋՀՄՍ 1-ը պահանջում է, որ կազմակերպությունը օգտագործի հաշվապահական հաշվառման միևնույն քաղաքականությունը իր ֆինանսական վիճակի մասին՝ ՋՀՄՍ-ներով սկզբնական հաշվետվության մեջ և ՋՀՄՍ-ներով իր առաջին ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջաններում: Տվյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է համապատասխանի իր ՋՀՄՍ-ներով առաջին հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող յուրաքանչյուր ՋՀՄՍ-ին, բացառությամբ ՋՀՄՍ 1-ում նշվածի (օրինակ, երբ ՋՀՄՍ 1-ը արգելում է հետընթաց կիրառում կամ երբ կազմակերպությունը օգտվում է ՋՀՄՍ 1-ի կամավոր բացառություններից): Կազմակերպությունը չպետք է կիրառի ՋՀՄՍ-ների տարատեսակ տարբերակներ, որոնք ուժի մեջ էին ավելի վաղ ամսաթվերին: Կազմակերպությունը կարող է կիրառել նոր ՋՀՄՍ, որը դեռ պարտադիր չէ կիրառման, եթե ՋՀՄՍ-ն թույլ է տալիս վաղ կիրառում:

Առաջին անգամ ՋՀՄՍ-ներ որդեգրողը չի կիրառում ՀՀՄՍ 8 «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ» ստանդարտի պահանջները հաշվապահական հաշվառման քաղաքականության այն փոփոխությունների համար, որոնք առաջանում են, երբ կազմակերպությունը առաջին անգամ որդեգրում է ՋՀՄՍ-ները: Առաջին անգամ ՋՀՄՍ-ներ որդեգրողը պետք է ներկայացնի անցման հետ կապված ճշգրտումների բացատրություն և սեփական կապիտալի ու համապարփակ ֆինանսական արդյունքների համաձայնեցում: Եթե առաջին անգամ որդեգրողը փոփոխում է իր հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կամ ՋՀՄՍ-ներով առաջին ֆինանսական հաշվետվություններում ընդգրկված ժամանակաշրջանի ընթացքում ՋՀՄՍ 1-ի կամավոր բացառությունների իր կիրառումը, ապա կազմակերպությունը պետք է բացատրի, թե ինչպես է նման փոփոխությունը ազդում նախկինում ներկայացված ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա: Քանի որ այդ փոփոխությունը տեղի կունենար ՋՀՄՍ-ներին անցման ամսաթվի դրությամբ, կազմակերպությունը պետք է նաև նորացնի սեփական կապիտալի և համապարփակ ֆինանսական արդյունքների համաձայնեցումները: Այս հրատարակության Ծանոթագրություն 2.4-ում ներկայացված է, թե ինչպես է առաջին անգամ ՋՀՄՍ-ներ որդեգրողը ներկայացնում անցման հետ կապված ճշգրտումները և ՋՀՄՍ 1-ով անհրաժեշտ համաձայնեցումները:

Թույլատրելի այլընտրանքային մոտեցումներ

Որոշ դեպքերում ՋՀՄՍ-ները միևնույն գործարքի կամ դեպքի համար թույլ են տալիս կիրառել մեկից ավել մոտեցումներ: Ֆինանսական հաշվետվություններ պատրաստողները պետք է ընտրեն այն մոտեցումը, որն առավել համապատասխան կլինի իրենց գործունեությանը:

ՀՀՄՍ 8-ը պահանջում է, որ կազմակերպությունն ընտրի և հետևողականորեն կիրառի իր հաշվապահական հաշվառման քաղաքականությունները նույնանման գործարքների համար և/կամ այլ դեպքերի կամ իրավիճակների համար, քանի դեռ ՋՀՄՍ-ները հատուկ չեն պահանջում կամ թույլատրում առանձնացնել որոշակի դեպքեր, որոնց համար նպատակահարմար կարող է լինել կիրառել հաշվառման այլ քաղաքականություն: Երբ ՋՀՄՍ-ները պահանջում կամ թույլատրում են նման դասակարգում, ապա յուրաքանչյուր դասի համար անհրաժեշտ է ընտրել և հետևողականորեն կիրառել համապատասխան հաշվառման քաղաքականություն: Հետևաբար, երբ ընտրվում է այլընտրանքային մոտեցումներից որևէ մեկը, այն ներառվում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունում և պետք է կիրառվի հետևողականորեն:

ՋՀՄՍ-ներով առաջին ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելուց հետո հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխություններ իրականացվում են միայն այն դեպքում, երբ պահանջվում է ստանդարտով կամ մեկնաբանությունով, կամ եթե այդ փոփոխությունը հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում ավելի արժանահավատ և տեղին տեղեկատվության ներկայացմանը:

Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով թույլատրվում է հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրություն, սույն հրատարակությունում խումբը կիրառում է իր գործունեությանը համապատասխան քաղաքականությունը: Ընտրված քաղաքականության, այդ ընտրության պատճառների և բացահայտման պահանջներում տարբերությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է մեկնաբանություններում:

Ղեկավարության կողմից կազմակերպության գործունեության ֆինանսական ակնարկ

Շատ կազմակերպություններ ֆինանսական հաշվետվություններից բացի ներկայացնում են ղեկավարների կողմից կազմակերպության գործունեության ֆինանսական ակնարկ: ՖՀՄՍ-ները չեն պահանջում նման տեղեկատվության բացահայտում, թեև ՀՀՄՍ 1-ի 13-րդ պարագրաֆում կարճ նկարագրված է, թե ինչպիսի տեղեկատվություն կարող է ներառվել տարեկան հաշվետվությունում: ՀՀՄՍԽ-ն 2010թ. դեկտեմբերին թողարկել է «Ղեկավարության մեկնաբանությունների» գործնական ուղեցույց ՖՀՄՍ-ներին համապատասխան, որտեղ ներկայացվում է ՖՀՄՍ-ների համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ ղեկավարության մեկնաբանությունների ընդարձակ և չպարտադրող հիմնադրույթներ: Գործնական ուղեցույցը ստանդարտ չէ, հետևաբար, կազմակերպությունը ՖՀՄՍ-ներին համապատասխանելիս կարիք չունի համապատասխանելու նաև գործնական ուղեցույցին:

Ղեկավարության կողմից պատրաստված ֆինանսական ակնարկի բովանդակությունը հաճախ որոշվում է տվյալ շուկայի կամ իրավական համակարգի օրենսդրական պահանջներից ելնելով: Այդ պատճառով, առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրող «Գուդ գրուփ (Ինթերնեշնլ) Լիմիթեդ»-ի համար ղեկավարության ֆինանսական ակնարկ չի ներկայացվել:

«Գուդ գրուփ
(Ինթերնեշնլ) Լիմիթեդ»
(ՖՀՄՍ-ների առաջին անգամ
որդեգրում)

Համախմբված ֆինանսական
հաշվետվություններ

2011թ. դեկտեմբերի 31

Անկախ աուդիտորական եզրակացություն «Գուդ գրուպ (Ինթերնեշնլ) Լիմիթեդ»-ի (ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրում) բաժնետերերին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Գուդ գրուպ (Ինթերնեշնլ) Լիմիթեդ»-ի (ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրում) և իր դուստր կազմակերպությունների (այսուհետ՝ «Խմբի») կից ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան պատրաստելու և ճշմարիտ ներկայացնելու, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարոխության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, անցկացված աուդիտի հիման վրա, կարծիք արտահայտել սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և պլանավորենք ու իրականացնենք աուդիտը՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով:

Աուդիտը ներառում է ընթացակարգերի իրականացում համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից՝ ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և արժանահավատ ներկայացնելու համար կիրառվող ընկերության ներքին վերահսկողության համակարգը, տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր մշակելու, սակայն ոչ ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է նաև կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորվածության, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով, համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

«Փորձագետ Հաշվապահներ ընդ Քո»

2012թ. հունվարի 28

Եվրոպիլ փող. 17,

Եվրոպիլ

Մեկնաբանություն

Աուդիտորական եզրակացությունը պատրաստվել է ԱՄՍ 700 (վերամշակված) «Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության և կարծիքի ձևավորում» ստանդարտին համապատասխան, որը կիրառվում է 2009թ. դեկտեմբերի 15-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար: Աուդիտորական եզրակացությունները կարող են տարբերվել՝ կախված տարբեր օրենսդրական պահանջներից: Օրինակ, երբ օրենսդրությունը կամ կազմակերպությունը պահանջում է աուդիտորական կարծիք յուրաքանչյուր ներկայացված ժամանակաշրջանի համար կամ կարծիք՝ ՖՀՄՍ-ներին անցման ամսաթվի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վերաբերյալ:

Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

2011 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

\$ՀՄՍ 1.21, ՀՀՄՍ 1.10(բ)
ՀՀՄՍ 1.51(բ)(գ)

	Ծան.	2011թ.	2010թ.	ՀՀՄՍ 1.51(դ)(ե)
		000, եվրո	000, եվրո	
Շարունակական գործունեություն				
Ապրանքների վաճառք		190,599	172,864	ՀՀՄՍ 18.35(բ)(i)
Ծառայությունների մատուցում		17,131	16,537	ՀՀՄՍ 18.35(բ)(ii)
Հասույթ «Գուդ բոնուսների» մարումից	25	1,375	1,125	ՀՀՄՍ 18.35(բ)(ii)
Վարձակալությունից եկամուտ	14	1,404	1,377	ՀՀՄՍ 18.35(գ)
Հասույթ		210,509	191,903	ՀՀՄՍ 1.82(ա)
Վաճառքի ինքնարժեք		(163,691)	(155,268)	ՀՀՄՍ 1.103
Համախառն շահույթ		46,818	36,635	ՀՀՄՍ 1.85, ՀՀՄՍ 1.103
Այլ գործառնական եկամուտ	9.1	1,585	2,548	ՀՀՄՍ 1.103
Վաճառքի և բաշխման ծախսեր		(14,000)	(13,002)	ՀՀՄՍ 1.103
Վարչական ծախսեր		(19,746)	(13,482)	ՀՀՄՍ 1.103
Այլ գործառնական ծախսեր	9.2	(1,153)	(706)	ՀՀՄՍ 1.103
Գործառնական շահույթ		13,504	11,993	ՀՀՄՍ 1.85, ՀՀՄՍ 1.ԵՀ55-56
Ֆինանսական ծախսեր	9.3	(2,868)	(1,223)	ՀՀՄՍ 1.82(բ), \$ՀՄՍ 7.20
Ֆինանսական եկամուտ	9.4	1,186	211	ՀՀՄՍ 1.82(ա)
Ասոցիացված կազմակերպության շահույթի բաժնեմաս	7	83	81	ՀՀՄՍ 1.82(գ), ՀՀՄՍ 28.38
Շարունակական գործունեությունից շահույթ նախքան շահութահարկը		11,905	11,062	ՀՀՄՍ 1.85
Շահութահարկի գծով ծախս	10	(3,893)	(3,432)	ՀՀՄՍ 1.82(դ), ՀՀՄՍ 12.77
Շարունակական գործունեությունից հաշվետու տարվա շահույթ		8,012	7,630	ՀՀՄՍ 1.85
Ընդհատված գործունեություն				
Ընդհատված գործունեությունից հաշվետու տարվա շահույթ/(վնաս) շահութահարկից հետո	11	220	(188)	ՀՀՄՍ 1.82(ե), \$ՀՄՍ 5.33(ա)
Հաշվետու տարվա շահույթ		8,232	7,442	
Վերագրելի՝				
Մայր կազմակերպության սեփականատերերին		7,944	7,203	ՀՀՄՍ 1.83(ա)(ii)
Չվերահսկող բաժնեմասին		288	239	ՀՀՄՍ 1.83(ա)(i), ՀՀՄՍ 27.27
		8,232	7,442	
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ	12	եվրո	եվրո	ՀՀՄՍ 33.66
▶ Մայր կազմակերպության սովորական բաժնետոմսեր տիրապետողներին վերագրելի տարվա բազային շահույթ		0.38	0.38	
▶ Մայր կազմակերպության սովորական բաժնետոմսեր տիրապետողներին վերագրելի տարվա նոսրացված շահույթ		0.38	0.37	
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շարունակական գործունեությունից շահույթ		եվրո	եվրո	
▶ Մայր կազմակերպության սովորական բաժնետոմսեր տիրապետողներին վերագրելի շարունակական գործունեությունից բազային շահույթ		0.37	0.39	
▶ Մայր կազմակերպության սովորական բաժնետոմսեր տիրապետողներին վերագրելի շարունակական գործունեությունից նոսրացված շահույթ		0.37	0.38	

Մեկնաբանություն

ՀՀՄՍ 1 ստանդարտի 10-րդ պարագրաֆը առաջարկում է վերնագրեր հիմնական ֆինանսական հաշվետվությունների համար, օրինակ՝ «Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն» կամ «Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն»։ Այնուամենայնիվ, կազմակերպությունները կարող են օգտագործել այլ վերնագրեր, օրինակ՝ «Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն» կամ «Հաշվապահական հաշվեկշիռ»։

ՀՀՄՍ 1.82(ա)-ն պահանջում է բացահայտել ընդամենը հասույթը որպես առանձին տող ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում։ Խումբը որոշել է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում բացահայտել հասույթի տարբեր տեսակների վերլուծություն։ Այս տեղեկատվությունը կարող է ներկայացվել նաև ծանոթագրություններում (համաձայն ՀՀՄՍ 1.97-ի)։

ՀՀՄՍ 1.99-ը պահանջում է, որ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ծախսերը վերլուծվեն ըստ բնույթի կամ գործառույթի՝ կախված, թե դրանցից որն է ներկայացնում ավելի արժանահավատ և տեղին տեղեկատվություն։ Խումբը ծախսերի վերլուծությունը ներկայացրել է ըստ գործառույթի։ Հավելված 2-ում ներկայացված է ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն ծախսերի՝ ըստ բնույթի վերլուծությամբ։ Կազմակերպությունը ներկայացրել է գործառնական գործունեությունից շահույթը՝ Այն պարտադիր տող չէ ՀՀՄՍ 1 ստանդարտով։ Բացահայտելով գործառնական գործունեությունից շահույթը՝ կազմակերպությունը պետք է համոզված լինի, որ բացահայտված գումարը ներկայացնում է միայն այն գործունեությունը, որը սովորաբար համարվում է «գործառնական»։

ՀՀՄՍ 33.68-ը պահանջում է ներկայացնել մեկ բաժնետոմսին բաժին ընկնող ընդհատվող գործունեությունից բազային և նստրացված շահույթը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում։ Խումբը նախընտրել է ցույց տալ այդ տեղեկատվությունը ընդհատվող գործունեության նկատմամբ պահանջվող պարտադիր այլ բացահայտումների հետ միասին Ծանոթագրություն 11-ում և ցույց տալ մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շարունակական գործունեությունից շահույթն անմիջապես ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում։

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

2011 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Ծան.	2011թ.	2010թ.	\$ՀՄՄ 1.21, ՀՀՄՄ 1.51(բ)(գ)
	000, եվրո	000, եվրո	ՀՀՄՄ 1.51(դ)(ե)
Հաշվետու տարվա շահույթ	8,232	7,442	ՀՀՄՄ 1.82(գ)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			ՀՀՄՄ 1.82(ե)
Ջուտ ներդրումների հեջավորումից զուտ օգուտ	278	–	
Շահութահարկի ազդեցություն	(83)	–	ՀՀՄՄ 1.90
	195	–	
Արտերկրյա ստորաբաժանման գործառնությունների վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերություններ	(246)	(117)	
Դրամական միջոցների հոսքերի հեջավորման զուտ շարժ	9.8 (732)	33	
Շահութահարկի ազդեցություն	220	(10)	ՀՀՄՄ 1.90
	(512)	23	
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով զուտ (վնաս)/ օգուտ	9.8 (60)	(22)	
Շահութահարկի ազդեցություն	18	6	ՀՀՄՄ 1.90
	(42)	(16)	
Սահմանված հատուցումների պլանների գծով ակտուարային օգուտ/ (վնաս)	26 311	(401)	ՀՀՄՄ 19.93Բ
Շահութահարկի ազդեցություն	(94)	120	ՀՀՄՄ 1.90
	217	(281)	
Հողամասերի և շենքերի վերագնահատում	13 846	–	
Շահութահարկի ազդեցություն	(254)	–	ՀՀՄՄ 1.90
	592	–	
Հաշվետու տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ՝ զուտ հարկերից	204	(391)	ՀՀՄՄ 1.85
Հաշվետու տարվա ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ՝ զուտ հարկերից	8,436	7,051	ՀՀՄՄ 1.82(զ)
Վերագրելի՝			
Մայր կազմակերպության սեփականատերերին	8,148	6,812	ՀՀՄՄ 1.83(բ)(ii)
Զվերահսկող բաժնեմասին	288	239	ՀՀՄՄ 1.83(բ)(i) ՀՀՄՄ 27.27
	8,436	7,051	

Մեկնաբանություն

Խումբը նախընտրել է ներկայացնել երկու հաշվետվություն՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ միասնական համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն ներկայացնելու փոխարեն, որը կպարունակեր այդ երկու բաղադրիչները: Եթե կիրառվել է երկու ֆինանսական հաշվետվությունների մոտեցումը, ապա ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը պետք է հաջորդի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը: Ցուցադրական նպատակներով, Հավելված 1-ում ներկայացված է միասնական հաշվետվության ներկայացման մոտեցմամբ պատրաստված համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն:

Վերոնշյալ հաշվետվությունում համապարփակ ֆինանսական արդյունքների տարբեր տարրեր ցուցադրված են զուտ հիմքով: Այդ իսկ պատճառով, պահանջվում է ներկայացնել լրացուցիչ ծանոթագրություն՝ ցույց տալու վերադասակարգման ճշգրտումները և ընթացիկ տարվա օգուտները և վնասները (տես՝ Ծան. 9.8-ը): Այլապես՝ առանձին տարրերը կարող էին ներկայացվել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Խումբը նախընտրել է շահութահարկի ազդեցությունը ներկայացնել անհատական հիմքով, հետևաբար, ծանոթագրությունում լրացուցիչ տեղեկատվության բացահայտում չի պահանջվում:

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

ՖՀՄՍ 1.21, ՀՀՄՍ 1.10(ա)
ՀՀՄՍ 1.51(բ)(գ)

	Ծան.	2010թ. հունվարի 1-ի դրությամբ			ՀՀՄՍ 1.51(դ)(ե)
		2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո	000, եվրո	
Ակտիվներ					
Ոչ ընթացիկ ակտիվներ					
Հիմնական միջոցներ	13	34,411	25,811	20,385	ՀՀՄՍ 1.60, ՀՀՄՍ 1.66 ՀՀՄՍ 1.54(ա)
Ներդրումային գույք	14	8,893	7,983	7,091	ՀՀՄՍ 1.54(բ)
Ոչ նյութական ակտիվներ	15	6,019	2,461	2,114	ՀՀՄՍ 1.54(գ)
Ասոցիացված կազմակերպությունում ներդրումներ	7	764	681	600	ՀՀՄՍ 1.54(ե), ՀՀՄՍ 28.38
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	16	6,550	3,616	3,419	ՀՀՄՍ 1.54(դ), ՖՀՄՍ 7.8
Հետաձգված հարկային ակտիվներ	10	383	365	321	ՀՀՄՍ 1.54(կ), ՀՀՄՍ 1.56
		<u>57,020</u>	<u>40,917</u>	<u>33,930</u>	
Ընթացիկ ակտիվներ					
Պաշարներ	18	24,875	25,489	27,151	ՀՀՄՍ 1.60, ՀՀՄՍ 1.66 ՀՀՄՍ 1.54(ե)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	19	27,672	24,290	25,537	ՀՀՄՍ 1.54(զե), ՖՀՄՍ 7.8(գ)
Կանխավճարներ		244	165	226	ՀՀՄՍ 1.55
Այլ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	16	551	153	137	ՀՀՄՍ 1.54(դ), ՖՀՄՍ 7.8
Դրամական միջոցներ և կարճաժամկետ ավանդներ	20	17,112	14,916	11,066	ՀՀՄՍ 1.54(թ)
		<u>70,454</u>	<u>65,013</u>	<u>64,117</u>	
Ակտիվներ՝ դասակարգված որպես վաճառքի համար պահվող	11	13,554	–	–	ՀՀՄՍ 1.54(զ), ՖՀՄՍ 5.38
		<u>84,008</u>	<u>65,013</u>	<u>64,117</u>	
Ընդամենը ակտիվներ		141,028	105,930	98,047	
Սեփական կապիտալ և պարտավորություններ					
Սեփական կապիտալ					
Թողարկված կապիտալ	21	21,888	19,388	19,388	ՀՀՄՍ 1.54(զդ) ՀՀՄՍ 1.54(զդ), ՀՀՄՍ 1.78(ե)
Էմիսիոն եկամուտ	21	4,780	80	–	ՀՀՄՍ 1.54(զդ), ՀՀՄՍ 1.78(ե)
Հետգնված բաժնետոմսեր	21	(508)	(654)	(774)	ՀՀՄՍ 1.54(զդ), ՀՀՄՍ 1.78(ե)
Կապիտալի այլ պահուստներ	21	1,171	864	566	ՀՀՄՍ 1.54(զդ), ՀՀՄՍ 1.78(ե)
Չբաշխված շահույթ		34,934	28,855	23,533	ՀՀՄՍ 1.54(զդ), ՀՀՄՍ 1.78(ե)
Սեփական կապիտալի այլ տարրեր		(121)	18	128	ՀՀՄՍ 1.54(զդ), ՀՀՄՍ 1.78(ե)
Վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբի պահուստներ	11	46	–	–	ՀՀՄՍ 1.54(զգ)
Ընդամենը մայր կազմակերպության բաժնետերերին վերագրելի սեփական կապիտալ		62,190	48,551	42,841	
Չվերահսկող բաժնեմաս		2,410	740	208	ՀՀՄՍ 1.54(զե), ՀՀՄՍ 27.27
Ընդամենը սեփական կապիտալ		64,600	49,291	43,049	
Ոչ ընթացիկ պարտավորություններ					
Տոկոսային վարկեր և փոխառություններ	16	20,856	22,203	19,436	ՀՀՄՍ 1.60, ՀՀՄՍ 1.69 ՀՀՄՍ 1.54(ի)
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ	16	806	–	–	ՀՀՄՍ 1.54(ի), ՖՀՄՍ 7.8(ե)
Պահուստներ	23	1,950	77	60	ՀՀՄՍ 1.54(լ), ՀՀՄՍ 1.78(դ)
Պետական շտրոհներ	24	3,300	1,400	1,300	ՀՀՄՍ 20.24
Հետաձգված եկամուտ	25	196	165	174	ՀՀՄՍ 1.55
Աշխատակիցների հատուցումների գծով պարտավորություններ	26	2,622	2,494	2,074	ՀՀՄՍ 1.55, ՀՀՄՍ 1.78(դ)
Այլ պարտավորություններ		263	232	212	ՀՀՄՍ 1.55
Հետաձգված հարկային պարտավորություններ	10	3,072	1,247	1,279	ՀՀՄՍ 1.54(կ), ՀՀՄՍ 1.56
		<u>33,065</u>	<u>27,818</u>	<u>24,535</u>	
Ընթացիկ պարտավորություններ					
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	28	19,556	21,281	20,600	ՀՀՄՍ 1.60, ՀՀՄՍ 1.69 ՀՀՄՍ 1.54(ի)
Տոկոսային վարկեր և փոխառություններ	16	2,460	2,775	4,555	ՀՀՄՍ 1.54(ի), ՖՀՄՍ 7.8(գ)
Այլ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ	16	3,040	303	303	ՀՀՄՍ 1.54(ի), ՖՀՄՍ 7.8(ե)
Պետական շտրոհներ	24	149	151	150	ՀՀՄՍ 1.55, ՀՀՄՍ 20.24
Հետաձգված եկամուտ	25	220	200	190	ՀՀՄՍ 1.55
Շահութահարկի գծով պարտավորություններ		3,963	4,013	4,625	ՀՀՄՍ 1.54(զդ)
Պահուստներ	23	850	98	40	ՀՀՄՍ 1.54(լ)
		<u>30,238</u>	<u>28,821</u>	<u>30,463</u>	
Վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներին ուղղակիորեն վերագրելի պարտավորություններ	11	13,125	–	–	ՀՀՄՍ 1.54(ը), ՖՀՄՍ 5.38
		<u>43,363</u>	<u>28,821</u>	<u>30,463</u>	
Ընդամենը պարտավորություններ		76,428	56,639	54,998	
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		141,028	105,930	98,047	

Մեկնաբանություն

ՖՀՄՍ 1-ը պահանջում է, որ կազմակերպության ՖՀՄՍ-ներով առաջին ֆինանսական հաշվետվությունները ներկայացնեն ամնվազն երեք ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն, երկու համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն, երկու առանձին ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն (եթե ներկայացված է), երկու դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն և երկու սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն և կից ծանոթագրություններ, ներառյալ՝ համեմատական տեղեկատվությունը:

Համաձայն ՀՀՄՍ 1.60-ի՝ Խուճրդ դասակարգել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվության տարրերը ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվների, և ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորությունների: ՀՀՄՍ 1-ը նաև թույլ է տալիս, որ կազմակերպությունները ներկայացնեն իրենց ակտիվները և պարտավորությունները ըստ իրացվելիության, եթե այդպիսի ներկայացումը արժանահավատ է և ավելի տեղին:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

2011 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

\$ՀՄՍ 1.21,
ՀՀՄՍ 1.10(գ)
ՀՀՄՍ 1.51(բ)(գ)
ՀՀՄՍ 1.106(դ)

Վերագրելի մայր կազմակերպության սեփականատերերին

	Թողարկված կապիտալ (Ծան. 21)	Էմիսիոն եկամուտ (Ծան. 21)	Հետգնված բաժնետոմսեր (Ծան. 21)	Կապիտալի այլ պահուստներ (Ծան. 21)	Չբաշխված շահույթ	Վաճառքի հրամանական միջոցների հեջավորման գծով պահուստ (Ծան. 21)		Վաճառքի մատչելի ֆինանսական ակտիվների գծով պահուստ (Ծան. 21)		Արտարժույթի փոփոխությունների գծով պահուստ (Ծան. 21)	Ակտիվների վերագնահատման գծով պահուստ (Ծան. 21)	Ընդհատված գործունեություն (Ծան. 11)	Չվերահսկող բաժնեմաս	Ընդամենը սեփական կապիտալ	ՀՀՄՍ 1.51(դ)(ե)
						000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո						
2011 թ. հունվարի 1-ի դրությամբ	19,388	80	(654)	864	28,855	(71)	89	(117)	117	-	48,551	740	49,291		
Հաշվետու տարվա շահույթ	-	-	-	-	7,944	-	-	-	-	-	7,944	288	8,232	ՀՀՄՍ 1.106(դ)(i)	
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	-	217	(512)	(42)	(51)	592	-	204	-	204	ՀՀՄՍ 1.106(դ)(ii)	
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	-	8,161	(512)	(42)	(51)	592	-	8,148	288	8,436		
Շենքերի գծով մաշվածության տեղափոխում	-	-	-	-	80	-	-	-	-	(80)	-	-	-	ՀՀՄՍ 1.96	
Ընդհատված գործունեություն (Ծան. 11)	-	-	-	-	-	-	(46)	-	-	-	46	-	-	\$ՀՄՍ 5.38	
Բաժնետիրական կապիտալի թողարկում (Ծան. 21)	2,500	4,703	-	-	-	-	-	-	-	-	-	7,203	-	7,203	ՀՀՄՍ 1.106(դ)(iii)
Օպցիոնների իրագործում (Ծան. 21)	-	29	146	-	-	-	-	-	-	-	-	175	-	175	ՀՀՄՍ 1.106(դ)(iii)
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գծով գործարքներ (Ծան. 27)	-	-	-	307	-	-	-	-	-	-	-	307	-	307	ՀՀՄՍ 1.106(դ)(iii) \$ՀՄՍ 2.50
Գործարքի գծով ծախսումներ (Ծան. 5)	-	(32)	-	-	-	-	-	-	-	-	-	(32)	-	(32)	ՀՀՄՍ 32.39
Շահաբաժիններ (Ծան. 22)	-	-	-	-	(1,972)	-	-	-	-	-	-	(1,972)	(30)	(2,002)	ՀՀՄՍ 1.107
Ձեռնարկատիրական գործունեության միավորումներում առաջացող չվերահսկող բաժնեմասի ձեռքբերում (Ծան. 5)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1,547	1,547	ՀՀՄՍ 1.106(դ)(iii)
Չվերահսկող բաժնեմասի ձեռքբերում (Ծան. 5)	-	-	-	-	(190)	-	-	-	-	-	-	(190)	(135)	(325)	ՀՀՄՍ 1.106(դ)(iii)
2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	21,888	4,780	(508)	1,171	34,934	(583)	1	(168)	629	46	62,190	2,410	64,600		

Մեկնաբանություն

Բաժնային գործիքներով վճարվող բաժնետոմսերի վրա հիմնված գործարքների գծով \$ՀՄՍ 2.7-ը պահանջում է, որ կազմակերպությունները ճանաչեն սեփական կապիտալի աճը այն ժամանակ, երբ ապրանքները կամ ծառայությունները ստացվել են: Այնուամենայնիվ, \$ՀՄՍ 2-ը չի նշում, թե սեփական կապիտալի որ մասում այն պետք է ճանաչվի: Խումբը նախընտրել է ճանաչել այն կապիտալի այլ պահուստներում: Խումբը բաժնետոմսերի օպցիոններն իրագործող աշխատակիցներին տրամադրել է հետզնված բաժնետոմսեր և հետզնված բաժնետոմսերի ձեռքբերման գնից ավել ստացված դրամական միջոցները ճանաչել է էմիսիոն եկամտում: Որոշ իրավական համակարգերում ընդունված է բաժնետոմսերի օպցիոններն իրագործելու կամ ժամկետանց դառնալու դեպքում կապիտալի այլ պահուստները տեղափոխել էմիսիոն եկամուտ կամ չբաշխված շահույթ: Խումբը որոշել է շարունակել ներկայացնել կապիտալի այլ պահուստները առանձին տողով:

ՀՀՄՍ 27-ի համաձայն՝ դուստր կազմակերպությունում լրացուցիչ բաժնեմասի ձեռքբերումը առանց վերահսկողության փոփոխության հաշվառվում է որպես սեփական կապիտալում գործարք: Չվերահսկող բաժնեմասի հաշվեկշռային արժեքից ավել կամ պակաս ցանկացած վճարում ճանաչվում է մայր կազմակերպության սեփական կապիտալում այն գործարքների դեպքում, երբ չվերահսկող բաժնեմասը ձեռք է բերվել կամ վաճառվել է առանց վերահսկողության կորստի: Խումբը նախընտրել է ցույց տալ այդ ազդեցությունը չբաշխված շահույթում: Այս դուստր կազմակերպության չվերահսկող բաժնեմասի գծով չկային այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված եկամտի կամ ծախսի կուտակված տարրեր: Եթե գոյություն ունենային նման տարրեր, ապա դրանք կվերաբաշխվեին մայր կազմակերպության սեփական կապիտալում (օրինակ՝ արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների գծով պահուստում կամ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով պահուստում):

\$ՀՄՍ 5.38-ը պահանջում է, որ ընդհատված գործունեության գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված եկամուտն ու ծախսերը բացահայտվեն առանձին: Խումբն այդ ազդեցությունը ներկայացրել է սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունում: Այնուամենայնիվ, ընդհատված գործունեությունում այդպիսի հոդվածների ներկայացումը չի փոխում պահուստի բնույթը: Անհրաժեշտության դեպքում իրականացվում է այդպիսի գումարների վերադասակարգում շահույթի կամ վնասի կազմում:

Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն աշխատակիցների հատուցումների պլաններից առաջացող ակտուարային օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունից դուրս այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Քանի որ դրանք այլևս չեն վերադասակարգվելու շահույթի կամ վնասի կազմում, դրանք անմիջապես արտացոլվում են չբաշխված շահույթում: Ստանդարտը բացառում է այդպիսի ազդեցության՝ որպես առանձին բաղկացուցիչ ներկայացումը: Այնուամենայնիվ ՀՀՄՍ 19-ը պահանջում է բացահայտել ժամանակի ընթացքում ճանաչված օգուտների և վնասների կուտակված գումարը (տես՝ Ծան. 26):

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

2010 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

ՖՀՄՍ 1.21,
ՀՀՄՍ 1.10(գ)
ՀՀՄՍ 1.51(բ)(գ)
ՀՀՄՍ 1.106(դ)

Վերագրելի մայր կազմակերպության սեփականատերերին

	Թողարկված կապիտալ (Ծան. 21)	Ըմբիսին եկամուտ (Ծան. 21)	Հետզևված բաժնետոմսեր (Ծան. 21)	Կապիտալի այլ պահուստներ (Ծան. 21)	Չբաշխված շահույթ	Դրամական միջոցների հոսքերի հեջավորման գծով պահուստ (Ծան. 21)	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով պահուստ (Ծան. 21)		Արտարժույթի փոխարժեքի նների գծով պահուստ (Ծան. 21)	Ակտիվների վերագնահատման գծով պահուստ (Ծան. 21)	Ընդամենը	Չվերահսկող բաժնեմաս	Ընդամենը սեփական կապիտալ	
							000, եվրո	000, եվրո						
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	19,388	-	(774)	566	23,533	(94)	105	-	117	42,841	208	43,049		ՀՀՄՍ 1.51(դ)(ե)
Հաշվետու տարվա շահույթ	-	-	-	-	7,203	-	-	-	-	7,203	239	7,442		ՀՀՄՍ 1.106(ա)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	-	(281)	23	(16)	(117)	-	(391)	-	(391)		ՀՀՄՍ 1.106(դ)(ii)
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	-	6,922	23	(16)	(117)	-	6,812	239	7,051		
Օպցիոնների իրագործում (Ծան. 21)	-	80	120	-	-	-	-	-	-	200	-	200		ՀՀՄՍ 1.106(դ)(iii)
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գծով գործարքներ (Ծան. 27)	-	-	-	298	-	-	-	-	-	298	-	298		ՀՀՄՍ 1.106(դ)(iii) ՖՀՄՍ 2.50
Շահաբաժիններ (Ծան. 22)	-	-	-	-	(1,600)	-	-	-	-	(1,600)	(49)	(1,649)		ՀՀՄՍ 1.106(դ)(iii)
Ձեռնարկատիրական գործունեության միավորումներում առաջացող չվերահսկող բաժնեմասի ձեռքբերում (Ծան. 5)	-	-	-	-	-	-	-	-	-	-	342	342		ՀՀՄՍ 1.106(դ)(iii)
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19,388	80	(654)	864	28,855	(71)	89	(117)	117	48,551	740	49,291		

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

2011 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Ծան.	ՖՀՄՍ 1.21, ՀՀՄՍ 1.51(բ)(գ) ՀՀՄՍ 1.10(դ) ՀՀՄՍ 1.51(դ)(ե) ՀՀՄՍ 7.10, ՀՀՄՍ 7.18(բ)	
	2011թ. 000, Եվրո	2010թ. 000, Եվրո
Գործառնական գործունեություն		
Շարունակական գործունեությունից շահույթ նախքան շահութահարկը	11,905	11,062
Ընդհատված գործունեությունից շահույթ/(վնաս) նախքան շահութահարկը	11	213
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը	12,118	10,869
Ոչ դրամական ճշգրտումներ նախքան շահութահարկը շահույթը զուտ դրամական հոսքերին համաձայնեցնելու նպատակով		
Հիմնական միջոցների մաշվածություն և արժեզրկում	13	3,907
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա և արժեզրկում	15	325
Բաժնեմասի վրա հիմնված վճարումների գործարքների գծով ծախսեր	27	412
Ներդրումային գույքի արժեքի նվազում	14	306
Ֆինանսական գործիքների արժեքի նվազում		924
Հիմնական միջոցների օտարումից օգուտ	9.1	(532)
Պայմանական հատուցումների իրական արժեքի ճշգրտումներ	5	358
Ֆինանսական եկամուտ	9.4	(1,186)
Ֆինանսական ծախսեր	9.3	2,868
Այլ գործառնական եկամուտ		(210)
Ասոցիացված կազմակերպության շահույթից բաժնեմաս	7	(83)
Պահուստներում, թոշակային պարտավորություններում և պետական շնորհներում շարժեր		(729)
Շրջանառու կապիտալի ճշգրտումներ`		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի, կանխավճարների ավելացում		(8,877)
Պաշարների նվազում		4,091
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի ավելացում		4,236
	17,928	17,864
Ստացված տոկոսներ		336
Վճարված շահութահարկ		(3,759)
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	14,505	13,696
Ներդրումային գործունեություն		
Մուտքեր հիմնական միջոցների վաճառքից		1,990
Հիմնական միջոցների ձեռքբերում	13	(10,352)
Ներդրումային գույքի ձեռքբերում	14	(1,216)
Ֆինանսական գործիքների ձեռքբերում		(3,294)
Մուտքեր ֆինանսական գործիքների վաճառքից		232
Մշակման ծախսումներ	15	(587)
Դուրսորդ կազմակերպության ձեռքբերում	5	230
Պետական շնորհների ստացում	24	2,951
Զուտ դրամական միջոցների հոսքեր` օգտագործված ներդրումային գործունեությունում	(10,046)	(8,118)
Ֆինանսավորման գործունեություն		
Բաժնետոմսերի օպցիոնների իրագործումից հոսքեր	21	175
Չվերահսկող բաժնեմասի ձեռքբերում	5	(325)
Բաժնետոմսերի թողարկման գծով գործարքի ծախսումներ	21	(32)
Ֆինանսական վարձակալության պարտավորությունների գծով վճարումներ		(51)
Մուտքեր փոխառություններից		5,299
Մարված փոխառություններ		(1,806)
Վճարված տոկոսներ		(586)
Մայր կազմակերպության սեփականատերերին վճարված շահաբաժիններ	22	(1,972)
Չվերահսկող բաժնեմասին վճարված շահաբաժիններ		(30)
Զուտ դրամական միջոցների հոսքեր` ստացված/(օգտագործված) ֆինանսավորման գործունեությունից	672	(1,647)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		5,131
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների զուտ տարբերություններ		43
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հունվարի 1-ի դրությամբ	20	12,266
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	20	17,440
		12,266

Մեկնաբանություն

ՀՀՄՍ 7.18-ը թույլ է տալիս կազմակերպություններին գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը ներկայացնել ուղղակի կամ անուղղակի մեթոդով: Խումբն իր դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը ներկայացնում է անուղղակի մեթոդի միջոցով: Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության ուղղակի մեթոդով պատրաստված օրինակը ներկայացված է Հավելված 3-ում:

Խումբը համաձայնեցրել է մինչև շահութահարկը շահույթը գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքերին: Այնուամենայնիվ, շահութահարկից հետո շահույթի համաձայնեցումը ևս ընդունելի է ՀՀՄՍ 7-ի շրջանակներում:

ՀՀՄՍ 7.33-ը թույլ է տալիս, որպեսզի վճարված տոկոսը ներկայացվի որպես գործառնական կամ որպես ֆինանսավորման գործունեություն, իսկ ստացված տոկոսը՝ որպես գործառնական կամ որպես ներդրումային գործունեություն՝ կախված, թե կազմակերպությունը որ տարբերակն է տեղին համարում: Խումբը նախընտրել է վճարված տոկոսը արտացոլել ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքերում: Խումբը նախընտրել է ստացված տոկոսը արտացոլել գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքերում:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

1. Տեղեկատվություն ընկերության վերաբերյալ

ՀՀՄՍ 1.10(ե)
ՀՀՄՍ 1.51(բ)(գ)
ՀՀՄՍ 1.138(ա)
ՀՀՄՍ 10.17

Խմբի 2011 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները վավերացվել են հրապարակման համար Տնօրենների խորհրդի 2012թ. հունվարի 28-ի որոշման համաձայն: Խումբը հանդիսանում է սահմանափակ պատասխանատվությամբ կազմակերպություն, որը գրանցված է և գործում է Եվրոլենդում: Խմբի բաժնետոմսերը ազատ շրջանառվում են արժեթղթերի շուկայում: Խմբի իրավաբանական հասցեն է Հոմֆայր Հաուս, Աշդաուն հրապարակ, Եվրոլի:

ՀՀՄՍ 1.138(բ)
ՀՀՄՍ 1.138(գ)

Խմբի հիմնական գործունեությունը նկարագրված է Ծան. 8-ում, իսկ Խմբին վերահսկող վերջնական մայր կազմակերպության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծան. 29-ում:

2.1 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

ՀՀՄՍ 1.16,
ՖՀՄՍ 1.23

Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՀՀՄՍ) համապատասխան, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

Բոլոր ժամանակաշրջանների համար, ներառյալ՝ 2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարին, Խումբն իր ֆինանսական հաշվետվությունները պատրաստել է տեղական համընդհանուր ընդունված հաշվապահական ստանդարտներին (ՀՀՀՄ) համապատասխան: 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա այս ֆինանսական հաշվետվությունները առաջին հաշվետվություններն էին, որոնք Խումբը պատրաստել է համաձայն ՀՀՄՍ-ների: Տե՛ս Ծանոթագրություն 2.4-ը Խմբի կողմից ՀՀՄՍ-ների որդեգրման վերաբերյալ տեղեկատվության համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա՝ բացառությամբ ներդրումային գույքի, հողամասերի և շենքերի, ածանցյալ ֆինանսական գործիքների և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների, որոնք չափված են իրական արժեքով: Իրական արժեքով հեջերում որպես հեջավորվող հողված սահմանված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները, որոնք այլապես կչափվեին ամորտիզացված արժեքով, ճշգրտվում են, որպեսզի արտացոլեն արդյունավետ հեջավորման հարաբերություններում հեջավորված ռիսկերին վերագրելի իրական արժեքների փոփոխությունները: Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են Եվրոյով և բոլոր արժեքները կլորացված են մինչև հազար (000, եվրո), եթե այլ բան նշված չէ:

ՀՀՄՍ 1.112(ա)

ՀՀՄՍ 1.117(ա)

ՀՀՄՍ 1.51(դ)(ե)

Մեկնաբանություն

ՀՀՄՍ 1-ը պահանջում է, որ կազմակերպությունը բացատրի, թե ինչպես է այն անցում կատարել նախկին ՀՀՀՄ-ից ՀՀՄՍ-ների և ինչպիսի ազդեցություն է ունեցել այդպիսի անցումը ներկայացված ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա: Խումբն այդ անցման բացահայտումը ներկայացրել է Ծանոթագրություն 2.4-ում:

2.2 Հաշվետվությունների համախմբման հիմունքները

ՀՀՄՍ 27.12
ՀՀՄՍ 27.26

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները բաղկացած են Խմբի և դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվություններից 2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Դուստր կազմակերպությունները ամբողջովին համախմբվում են Խմբի կողմից վերահսկողություն ձեռք բերելու պահից սկսած և շարունակվում են համախմբվել մինչև այդ վերահսկողությունը չի դադարում: Դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են մայր կազմակերպության հետ միևնույն հաշվետու ժամանակաշրջանի համար՝ օգտագործելով հետևողական հաշվապահական հաշվառման քաղաքականություն: Ներխմբային բոլոր հաշիվները, գործարքները, ներխմբային գործունեության արդյունք հանդիսացող չիրացված օգուտներն ու վնասները և շահաբաժինները ամբողջությամբ բացառվում են:

ՀՀՄՍ 27.22

ՀՀՄՍ 27.23

ՀՀՄՍ 27.24

ՀՀՄՍ 27.20

Դուստր կազմակերպության վնասներից վերագրվում են չվերահսկող բաժնեմասին, նույնիսկ եթե դրանք հանդիսանում են բացասական մնացորդի պատճառ:

ՀՀՄՍ 27.28

Առանց վերահսկման կորստի դուստր կազմակերպության սեփականության փոփոխությունը հաշվառվում է որպես սեփական կապիտալի փոփոխություն: Եթե Խումբը կորցնում է դուստր կազմակերպության նկատմամբ վերահսկողությունը, այն՝

ՀՀՄՍ 27.30

- ▶ ապաճանաչում է դուստր կազմակերպության ակտիվները (ներառյալ՝ գույքիլը) և պարտավորությունները,
- ▶ ապաճանաչում է չվերահսկող բաժնեմասի հաշվեկշռային արժեքը,
- ▶ ապաճանաչում է սեփական կապիտալում հաշվառված կուտակված փոխարժեքային տարբերությունները,
- ▶ ճանաչում է ստացված հատուցման իրական արժեքը,
- ▶ ճանաչում է մնացած ներդրման իրական արժեքը,
- ▶ ճանաչում է գործարքի արդյունքում առաջացած ցանկացած ավելցուկ կամ պակասորդ շահույթում կամ վնասում,
- ▶ վերադասակարգում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում նախկինում ճանաչված մայր կազմակերպության տարրերի բաժինը շահույթ կամ վնաս, կամ չբաշխված շահույթ, որը որ ավելի համապատասխան է:

ՀՀՄՍ 27.34

ՀՀՄՍ 27.41

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր

Խումբն իր համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառել է հաշվապահական հաշվառման քաղաքականության հետևյալ նշանակալի մասերը.

ՖՀՄՍ 1.7,
ՀՀՄՍ 1.112
ՀՀՄՍ 1.117(ա)(բ)

Մեկնաբանություն

ՖՀՄՍ 1-ը պահանջում է, որ կազմակերպությունը օգտագործի հաշվապահական հաշվառման միևնույն քաղաքականությունը իր ֆինանսական վիճակի մասին՝ ՖՀՄՍ-ներով սկզբնական ֆինանսական հաշվետվության մեջ և ՖՀՄՍ-ներով իր առաջին ֆինանսական հաշվետվություններում (առաջին տարեկան ֆինանսական հաշվետվություններ, որտեղ կազմակերպությունը որդեգրում է ՖՀՄՍ-ները՝ այդ հաշվետվություններում կատարելով ՖՀՄՍ-ներին համապատասխանության վերաբերյալ բացահայտ և անվերապահ հայտարարություն) ներկայացված բոլոր ժամանակաշրջաններում: Հաշվապահական հաշվառման այդ քաղաքականությունը պետք է համապատասխանի ՖՀՄՍ-ներով իր առաջին հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող յուրաքանչյուր ՖՀՄՍ-ին, բացառությամբ ՖՀՄՍ 1-ում նշվածի (օրինակ, երբ ՖՀՄՍ 1-ն արգելում է հետընթաց կիրառում կամ երբ կազմակերպությունը օգտվում է ՖՀՄՍ 1-ի կամավոր ազատումներից): Կազմակերպությունը չպետք է կիրառի ՖՀՄՍ-ների տարատեսակ տարբերակներ, որոնք ուժի մեջ են մտել ավելի վաղ ամսաթվերին: Կազմակերպությունը կարող է կիրառել նոր ՖՀՄՍ, որը դեռ պարտադիր չի, եթե ՖՀՄՍ-ը թույլ է տալիս վաղ կիրառում:

2.3.1 Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ և գուդվիլ

Ձեռնարկատիրական գործունեության միավորումները հաշվառվում են՝ օգտագործելով ձեռքբերման մեթոդը: Ձեռքբերման արժեքը չափվում է որպես ձեռքբերման օրվա դրությամբ փոխանցված հատուցման իրական արժեքի և ձեռքբերվող կազմակերպության ցանկացած չվերահսկող բաժնեմասի հանրագումար: Յուրաքանչյուր ձեռնարկատիրական գործունեության միավորման համար առանձին Խումբը որոշում է չափել ձեռքբերված կազմակերպության չվերահսկող բաժնեմասը իրական արժեքով կամ ձեռքբերված կազմակերպության որոշելի զուտ ակտիվների համապատասխան մասնաբաժնի գումարի չափով: Ձեռքբերումից առաջացած ծախսումները ծախսագրվում և ներառվում են վարչական ծախսերում:

ՖՀՄՍ 3.4
ՖՀՄՍ 3.18
ՖՀՄՍ 3.19

Երբ Խումբը ձեռք է բերում ձեռնարկատիրական գործունեություն, ապա ֆինանսական ակտիվները և պարտավորությունները դասակարգում է պայմանագրի պայմաններին, տնտեսական բնույթին և ձեռքբերման պահին այլ էական պայմաններին համապատասխան: Այն ներառում է ձեռքբերվող կազմակերպության հիմնական պայմանագրերով նախատեսված պարունակվող ածանցյալ գործիքների տարանջատումը:

ՖՀՄՍ 3.15
ՖՀՄՍ 3.16

Ձեռնարկատիրական գործունեության փուլային ձեռքբերման դեպքում ձեռք բերող ձեռքբերվողի սեփական կապիտալում իր նախկինում ունեցած բաժնեմասը պետք է վերաչափի ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրական արժեքով՝ տարբերությունը ճանաչելով շահույթում կամ վնասում:

ՖՀՄՍ 3.42

Ցանկացած պայմանական հատուցում, որը պետք է փոխանցվի ձեռք բերողի կողմից, ճանաչվում է ձեռքբերման ամսաթվի իրական արժեքով: Ակտիվ կամ պարտավորություն հանդիսացող պայմանական հատուցումների իրական արժեքի ցանկացած հետագա փոփոխություն ճանաչվում է ՀՀՄՍ 39-ի համաձայն շահույթում կամ վնասում կամ ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում փոփոխություն: Եթե պայմանական հատուցումը դասակարգված է որպես սեփական կապիտալ, ապա այն չի վերաչափվում: Հետագա մարումը հաշվառվում է սեփական կապիտալում: Այն դեպքում, երբ պայմանական հատուցումը չի համապատասխանում ՀՀՄՍ 39 ստանդարտի շրջանակներին, այն չափվում է համապատասխան ՖՀՄՍ-ի համաձայն:

ՖՀՄՍ 3.58

Գուդվիլը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը հանդիսանում է փոխանցված հատուցման և ճանաչված չվերահսկող բաժնեմասի հանրագումարի և ձեռքբերված որոշելի զուտ ակտիվների և ստանձնած պարտավորությունների դրական տարբերությունը: Եթե հատուցումը ավելի քիչ է, քան ձեռքբերված դուստր կազմակերպության զուտ ակտիվների իրական արժեքը, ապա տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

ՖՀՄՍ 3.54
ՖՀՄՍ 3.Բ63(ա)
ՀՀՄՍ 36.80

Սկզբնական ճանաչումից հետո գուդվիլը չափվում է սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կուտակված ցանկացած կորուստ: Արժեզրկման ստուգման նպատակով ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռքբերված գուդվիլը, ձեռքբերման ամսաթվից սկսած, պետք է բաշխվի Խմբի այն դրամաստեղծ միավորներին, որոնք ակնկալվում է, որ կստանան օգուտներ ձեռնարկատիրական գործունեության միավորումից՝ անկախ այն հանգամանքից, արդյոք ձեռք բերվողի այլ ակտիվները կամ պարտավորությունները վերագրված են այդ միավորներին թե՛ ոչ:

ՀՀՄՍ 36.86

Եթե գուդվիլը վերագրվել է այնպիսի դրամաստեղծ միավորի, որի գործունեության մի մասը օտարվել է, ապա օտարված գործունեությանը առնչվող գուդվիլը գործունեության օտարումից օգուտը կամ վնասը հաշվարկելու ժամանակ ներառվում է գործունեության հաշվեկշռային արժեքում: Այս պարագայում օտարված գուդվիլը չափվում է՝ ելնելով օտարված գործունեության գումարի և դրամաստեղծ միավորի մնացած մասի գումարի հարաբերակցությունից:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

2.3.2 Մասնակցություն համատեղ ձեռնարկում

Խումբն ունի մասնակցություն համատեղ ձեռնարկում, որը հանդիսանում է համատեղ վերահսկվող կազմակերպություն, որտեղ ձեռնարկողները ունեն կազմակերպության տնտեսական գործունեության նկատմամբ համատեղ վերահսկողություն սահմանելու վերաբերյալ պայմանագրային համաձայնություն: Համաձայնությունը պահանջում է ձեռնարկողների միջև ֆինանսական և գործառնական որոշումների միաձայն համաձայնություն: Խումբը ճանաչում է իր մասնակցությունը համատեղ ձեռնարկում՝ օգտագործելով համամասնական համախմբման մեթոդը: Խումբն իր համախմբված ֆինանսական հաշվետվություններում միավորում է համատեղ ձեռնարկման ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի իր համամասնական բաժինը համամասն հողվածների հետ տող առ տող սկզբունքով: Համատեղ ձեռնարկման ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են Խմբի հետ միևնույն հաշվետու ժամանակաշրջանի համար: Ճշգրտումներ կատարվում են այն դեպքում, երբ անհրաժեշտ է լինում համատեղ ձեռնարկման հաշվապահական քաղաքականությունը համապատասխանեցնել Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությանը:

ՀՀՄՍ 31.3
ՀՀՄՍ 31.9
ՀՀՄՍ 31.30
ՀՀՄՍ 31.34

Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճշգրտումներ են կատարվում Խմբի և համատեղ ձեռնարկման ներխմբային մնացորդների, գործարքների և այդ գործարքների գծով չկրած օգուտների կամ վնասների Խմբի բաժինը բացառելու նպատակով: Գործարքներից վնասները միանգամից ճանաչվում են, եթե վնասն իրենից ներկայացնում է ընթացիկ ակտիվի իրացման զուտ արժեքի նվազում կամ արժեզրկումից կորուստ: Համատեղ ձեռնարկումը համամասնորեն համախմբվում է մինչև այն պահը, երբ Խումբը դադարում է ունենալ համատեղ վերահսկողություն համատեղ ձեռնարկման նկատմամբ:

ՀՀՄՍ 31.48
ՀՀՄՍ 31.36

Մինչև համատեղ վերահսկողության կորուստը Խումբը չափում և ճանաչում է իր մնացորդային ներդրումն իրական արժեքով: Համատեղ վերահսկողության դադարեցման պահին նախկին համատեղ վերահսկվող կազմակերպության հաշվեկշռային արժեքի և մնացորդային ներդրման իրական արժեքի ու օտարումից մուտքերի հանրագումարի ցանկացած տարբերություն ճանաչվում է շահույթում կամ վնասում: Երբ մնացորդային ներդրումն ունի նշանակալի ազդեցություն՝ այն հաշվառվում է որպես ներդրում ասոցիացված կազմակերպությունում:

ՀՀՄՍ 31.45

Մեկնաբանություն

Խումբն իր մասնակցությունը հաշվառում է համամասնական համախմբման մեթոդով: ՀՀՄՍ 31.38-ը թույլ է տալիս համատեղ վերահսկվող կազմակերպություններում մասնակցությունը ճանաչել նաև բաժնեմասնակցության մեթոդով:

Եթե կազմակերպությունը նախընտրում է համատեղ վերահսկողությամբ կազմակերպությունում մասնակցությունը ճանաչել բաժնեմասնակցության մեթոդով, ապա այն ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում պետք է ներկայացնի համատեղ ձեռնարկումում շահույթի և վնասի իր մասնաբաժինը: Ներդրումն անհրաժեշտ կլինի նաև ներկայացնել ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ոչ ընթացիկ ակտիվներում:

2.3.3 Ներդրում ասոցիացված կազմակերպությունում

ՀՀՄՍ 28.6

Խմբի ներդրումը ասոցիացված կազմակերպությունում հաշվառվում է բաժնեմասնակցության մեթոդով: Ասոցիացված կազմակերպությունը այն կազմակերպությունն է, որում ընկերությունն ունի նշանակալի ազդեցություն:

ՀՀՄՍ 28.11
ՀՀՄՍ 28.23
ՀՀՄՍ 28.22
ՀՀՄՍ 28.39

Բաժնեմասնակցության մեթոդի շրջանակներում ասոցիացված կազմակերպությունում ներդրումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվառվում է սկզբնական արժեքով՝ զուտարած ձեռքբերումից հետո ասոցիացված կազմակերպության զուտ ակտիվներում Խմբի բաժնեմասի փոփոխությունները: Ասոցիացված կազմակերպությանը վերաբերող գուդվիլը ներառվում է ներդրման հաշվեկշռային արժեքում և չի ամորտիզացվում ու չի ստուգվում ըստ արժեզրկման հայտանիշների ամկայության:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը արտացոլում է ասոցիացված կազմակերպության գործունեության արդյունքների մասնաբաժինը: Երբ ասոցիացված կազմակերպության սեփական կապիտալում տեղի է ունենում փոփոխություն, Խումբը ճանաչում է ցանկացած փոփոխության իր մասնաբաժինը և բացահայտում այն, եթե կիրառելի է, սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվությունում: Խմբի և ասոցիացված կազմակերպության միջև գործարքների գծով չկրած օգուտներն ու վնասները բացառվում են ասոցիացված կազմակերպությունում ներդրման բաժնի չափով:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

2.3.3 Ներդրում ասոցիացված կազմակերպությունում (շարունակություն)

ՀՀՄՍ 28.37(ե)
ՀՀՄՍ 28.26

Ասոցիացված կազմակերպության շահույթի կամ վնասի մասնաբաժինը արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այն ասոցիացված կազմակերպության սեփականատերերին վերագրելի շահույթն է, այսինքն՝ ասոցիացված կազմակերպության շահույթն է հարկումից և նրա դուստր կազմակերպություններում չվերահսկող բաժնեմասի ճշգրտումից հետո:

Ասոցիացված կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են Խմբի հետ միևնույն հաշվետու ժամանակաշրջանի համար: Անհրաժեշտության դեպքում, կատարվում են ճշգրտումներ՝ ասոցիացված կազմակերպության ցուցանիշները Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխանեցնելու նպատակով:

Բաժնեմասնակցության մեթոդի կիրառումից հետո Խումբը որոշում է ասոցիացված կազմակերպությունում ներդրման գծով լրացուցիչ արժեզրկումից կորուստ ճանաչելու անհրաժեշտությունը: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը որոշում է, արդյոք, գոյություն ունի անկողմնակալ վկայություն, ըստ որի ասոցիացված կազմակերպությունում ներդրումը արժեզրկվել է: Արժեզրկման հայտանիշի առկայության դեպքում Խումբը հաշվարկում է արժեզրկման գումար՝ որպես ասոցիացված կազմակերպությունում ներդրման փոխհատուցվող գումարի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչում գումարը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ասոցիացված կազմակերպությունից շահույթի կամ վնասի բաժնեմաս տողում:

ՀՀՄՍ 28.31
ՀՀՄՍ 28.33

Ասոցիացված կազմակերպությունում նշանակալի ազդեցության կորուստի դեպքում Խումբը չափում և ճանաչում է ցանկացած պահպանվող ներդրում իրական արժեքով: Նշանակալի մասնակցության կորուստից հետո ասոցիացված կազմակերպության հաշվեկշռային արժեքի և պահպանվող ներդրումների իրական արժեքի ու օտարումից մուտքերի հանրագումարի միջև ցանկացած տարբերություն ճանաչվում է շահույթում կամ վնասում:

ՀՀՄՍ 28.18

2.3.4 Արտարժույթի փոխարկում

Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են եվրոյով, որը նաև մայր կազմակերպության ֆունկցիոնալ արժույթն է: Խմբում յուրաքանչյուր կազմակերպություն սահմանում է իր ֆունկցիոնալ արժույթը և յուրաքանչյուր կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների հոդվածները չափվում են այդ ֆունկցիոնալ արժույթով: Խումբը նախընտրել է վերադասակարգել համախմբման ուղղակի մեթոդից (այն մեթոդը, որը Խումբն օգտագործում է համախմբումն իրականացնելիս) առաջացած օգուտը կամ վնասը:

ՀՀՄՍ 1.51(դ)
ՀՀՄՍ 1.117(բ)
ՀՀՄՍ 21.9

ի) Գործարքներ և մնացորդներ

Արտարժույթով գործարքները սկզբնապես հաշվառվում են Խմբի կազմակերպությունների կողմից ֆունկցիոնալ արժույթի՝ գործարքի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքով:

ՀՀՄՍ 21.21
ՀՀՄՍ 21.23(ա)
ՀՀՄՍ 21.28
ՀՀՄՍ 21.32

Արտարժույթով սահմանված դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են հաշվետու ամսաթվի դրությամբ գործող ֆունկցիոնալ արժույթի փոխանակման սփոթ փոխարժեքով:

ՀՀՄՍ 21.32

Բոլոր տարբերությունները ներառվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ բացառությամբ բոլոր այն դրամական հոդվածների, որոնք կազմում են արտերկրյա ստորաբաժանումում զուտ ներդրումների մաս: Վերջիններս ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում մինչև զուտ ներդրումների օտարումը՝ ինչի դեպքում դրանք վերադասակարգվում են շահույթում կամ վնասում: Տվյալ դրամային հոդվածների գծով փոխարժեքային տարբերություններին վերագրվող հարկային ծախսերը և փոխհատուցումները նույնպես հաշվառվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Ոչ դրամային հոդվածները, որոնք չափվում են պատմական արժեքով արտարժույթով վերահաշվարկվում են՝ օգտագործելով սկզբնական գործարքի ամսաթվի դրությամբ փոխարժեքները: Արտարժույթով իրական արժեքով չափվող ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ օգտագործելով իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքները: Ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացող օգուտները և վնասները ճանաչվում են փոխարժեքային տարբերություններ առաջացնող հոդվածի օգուտների և վնասների հետ միասին (այն հոդվածների վերահաշվարկման տարբերությունները, որոնց օգուտը կամ վնասը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ շահույթ/վնասում, ճանաչվում են համապատասխանաբար այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ շահույթ/վնասում):

ՀՀՄՍ 21.23(բ)
ՀՀՄՍ 21.23(գ)

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

2.3.4 Արտարժույթի փոխարկում (շարունակություն)

ii) Խմբի ընկերություններ

Արտերկրյա ստորաբաժանումների ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են եվրոյով հաշվետու ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքով, իսկ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունները վերահաշվարկվում են գործարքների ամսաթվերի դրությամբ գործող փոխարժեքներով: Վերահաշվարկման արդյունքում առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Արտերկրյա ստորաբաժանման օտարման դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում այդ ստորաբաժանման գծով առկա փոխարժեքային տարբերության տարրը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

ՀՀՄՍ 21.39(ա)
ՀՀՄՍ 21.39(բ)
ՀՀՄՍ 21.39(գ)

ՀՀՄՍ 21.48

ՀՀՄՍ 21.47

2010թ. հունվարի 1-ից հետո արտերկրյա ստորաբաժանման ձեռքբերումից առաջացող ցանկացած գույքի և ձեռքբերումից առաջացող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքն իրական արժեքով ցանկացած ճշգրտում ճանաչվում է որպես արտերկրյա ստորաբաժանման ակտիվ և պարտավորություն և վերահաշվարկվում է փակման փոխարժեքով:

ՀՀՄՍ 21.59,
ՖՀՄՍ 1.92

Մինչև 2010թ. հունվարի 1-ը՝ ՖՀՄՍ-ների անցման ամսաթիվը, Խումբը գույքի և ձեռքբերումից առաջացած ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների իրական արժեքով ճշգրտումները ճանաչել է որպես մայր կազմակերպության ակտիվներ և պարտավորություններ: Հետևաբար, տվյալ ակտիվներն ու պարտավորությունները ոչ դրամային հոդվածներ են, որոնք արդեն արտահայտված են մայր ընկերության ֆունկցիոնալ արժույթով, ուստի հետագայում փոխարժեքային տարբերություններ չեն առաջանա:

2.3.5 Հասույթի ճանաչում

Հասույթը ճանաչվում է այն չափով, որքանով հավանական է, որ ապագա տնտեսական օգուտներ կհոսեն դեպի Խումբ, և այդ հասույթը կարելի է արժանահավատորեն չափել՝ անկախ այն փաստից, թե երբ է վճարումը կատարվել: Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով պայմանագրով սահմանված վճարման պայմանները և բացառելով հարկերն ու տուրքերը: Խումբն իր հասույթի գծով գործարքները գնահատում է որոշակի չափանիշներով՝ որոշելու, արդյոք, այն հանդես է գալիս որպես պրինցիպալ կամ գործակալ: Խումբը եզրակացրել է, որ այն հանդես է գալիս որպես պրինցիպալ հասույթի հետ կապված իր բոլոր գործարքներում: Հետևյալ չափանիշները նույնպես պետք է բավարարվեն նախքան հասույթի ճանաչումը:

ՀՀՄՍ 18.35(ա)
ՀՀՄՍ 18.14
ՀՀՄՍ 18.20
ՀՀՄՍ 18.9

Ապրանքների վաճառք

Ապրանքների վաճառքից հասույթը ճանաչվում է, երբ գնորդին են փոխանցվում ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատուցների նշանակալի մասը, սովորաբար՝ ապրանքների մատակարարման ժամանակ:

ՀՀՄՍ 18.14
ՀՀՄՍ 18.14(ա)
ՀՀՄՍ 18.14(բ)

Էլեկտրոնային սարքավորումների սեզմնետում Խումբն օգտագործում է հաճախորդների հավատարմության միավորների ծրագիր՝ «Գուդ բոնուսներ», որը թույլ է տալիս հաճախորդներին կուտակել միավորներ Խմբի մանրածախ խանութներից ապրանքներ գնելիս: Միավորները կարող են այնուհետև մարվել անվճար ապրանքներով՝ անհրաժեշտ նվազագույն միավորներ ձեռք բերելու պահից սկսած:

ՀՀՄՍ 13.5
ՀՀՄՍ 13.7

Ստացված հատուցումը բաշխվում է վաճառված էլեկտրոնային սարքավորումների և թողարկված միավորների միջև՝ միավորներին բաշխված հատուցումը հաշվարկելով իրական արժեքով: Միավորների իրական արժեքը որոշվում է վիճակագրական վերլուծության միջոցով: Թողարկված միավորների իրական արժեքը հետաձգվում և ճանաչվում է որպես հասույթ այն ժամանակ, երբ միավորները մարվում են:

Մեկնաբանություն

ՀՀՄՍ 18-ը և ՖՀՄՍ 13-ը չեն նկարագրում բազմատարր համաձայնության համար որևէ բաշխման մեթոդ: Խմբի «Գուդ բոնուսների» թողարկում ներառող վաճառքից հասույթի ճանաչման քաղաքականությունը հիմնված է թողարկված միավորների իրական արժեքի վրա: Խումբը հասույթի ճանաչման իր քաղաքականությունը կարող էր սահմանել վաճառված ապրանքների և թողարկված միավորների հարաբերական իրական արժեքների հիման վրա:

ՖՀՄՍ 13-ը չի սահմանում տեղեկատվության բացահայտման նկատմամբ պահանջներ: Խումբը չի ներառել ընդարձակ բացահայտում հավատարմության ծրագրի վերաբերյալ, քանի որ գումարները էական չեն: Եթե հետաձգված հասույթը և «Գուդ բոնուսներ» ծրագրի հասույթը լինելու էական, ապա լրացուցիչ բացահայտումները կարող էին ներառել՝ դեռևս չմարված միավորների քանակը, ժամանակահատվածը, որի ընթացքում ակնկալվում է, որ հասույթը կճանաչվի, հիմնական ենթադրությունները, որոնք օգտագործվել են հասույթի ճանաչման ժամանակահատվածը որոշելու նպատակով, մարման տեմպերի ցանկացած փոփոխության ազդեցությունը:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

2.3.5 Հասույթի ճանաչում (շարունակություն)

Ծառայությունների մատուցում

Կրակմարիչների, հրդեհը կանխարգելող և կրակապաշտպան սարքավորումների տեղադրումից հասույթը ճանաչվում է ըստ ավարտվածության աստիճանի: Ավարտվածության աստիճանը յուրաքանչյուր պայմանագրի համար չափվում է՝ ելնելով մինչև տվյալ ամսաթիվը աշխատած աշխատաժամերի և գնահատված ընդհանուր աշխատաժամերի հարաբերությունից: Երբ պայմանագրի արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել, ապա հասույթը ճանաչվում է այնքանով, որքանով կատարված ծախսերը ենթակա են փոխհատուցման:

ՀՀՄՍ 18.20

ՀՀՄՍ 18.26
ՀՀՄՍ 18.20(գ)

Տոկոսային եկամուտ

Ամորտիզացված արժեքով չափվող բոլոր ֆինանսական գործիքների և վաճառքի համար մատչելի դասակարգված տոկոսային ֆինանսական ակտիվների տոկոսային եկամուտը կամ ծախսը հաշվառվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքը՝ դրույք, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ, համապատասխան դեպքերում, ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները ճշգրիտ գեղչում է մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության գուտ հաշվեկշռային արժեքը: Տոկոսային եկամուտը ներառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ֆինանսական եկամտում:

ՀՀՄՍ 18.30(ա)

Շահաբաժիններ

Հասույթը ճանաչվում է, երբ սահմանվում է վճարը ստանալու խնդիր իրավունքը:

ՀՀՄՍ 18.30(գ)

Վարձակալությունից եկամուտ

Ներդրումային գույքի գործառնական վարձակալությունից վարձակալական եկամուտը հաշվառվում է գծային մեթոդով վարձակալության ժամկետի ընթացքում:

ՀՀՄՍ 17.50

2.3.6 Պետական շնորհներ

Պետական շնորհները ճանաչվում են, երբ գոյություն ունի հիմնավոր հավաստիացում, որ շնորհը ստացվելու է և բոլոր կից պայմանները բավարարվելու են: Երբ շնորհը վերաբերում է ծախսային հոդվածին, այն ճանաչվում է որպես եկամուտ այն ժամանակաշրջանների ընթացքում, որոնցում պարբերական հիմունքով անհրաժեշտ է համապատասխանեցնել շնորհը նախատեսված հատուցվող ծախսերին: Երբ շնորհը վերաբերում է ակտիվներին, այն ճանաչվում է որպես հետաձգված եկամուտ և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվառվում է հավասարաչափ գումարներով՝ համապատասխան ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում:

ՀՀՄՍ 20.7
ՀՀՄՍ 20.12
ՀՀՄՍ 20.26

ՀՀՄՍ 20.23

Երբ խումբը ստանում է ոչ դրամային շնորհներ, ակտիվը և շնորհը համախառն հաշվառվում են անվանական արժեքներով և ներառվում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ըստ ակնկալվող օգտակար ծառայության և տնտեսական օգուտների սպառման մոդելի՝ հավասարաչափ տարեկան գումարներով: Երբ վարկեր կամ նմանատիպ օգնություն է տրամադրվում կառավարության կամ այլ նմանատիպ հաստատությունների կողմից ընթացիկ շուկայական դրույքից ցածր տոկոսադրույքով, ապա տվյալ ավելի բարենպաստ տոկոսադրույքի ազդեցությունը հաշվառվում է որպես լրացուցիչ պետական շնորհ:

Մեկնաբանություն

ՀՀՄՍ 20-ը թույլ է տալիս ակտիվներին վերաբերող պետական շնորհների ներկայացման երկու տարբեր եղանակ: Այն կարող է ներկայացվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հետաձգված եկամուտ, որը ճանաչվում է որպես եկամուտ պարբերական և ռացիոնալ հիմունքով՝ ակտիվի օգտակար ծառայության ընթացքում: Որպես այլընտրանք այն կարող է նվազեցվել ակտիվի հաշվեկշռային արժեքից: Շնորհն այնուհետև ճանաչվում է որպես եկամուտ մաշվող ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ նվազեցվող մաշվածության ծախսի միջոցով: Ցանկացած մեթոդ կիրառելիս հետագա բացահայտումներ չեն պահանջվում:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

2.3.7 Հարկեր

Ընթացիկ շահութահարկ

Ընթացիկ ժամանակաշրջանի շահութահարկի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները ՀՀՄՍ 12.46
չափվում են այն գումարով, որն ակնկալվում է ստանալ հարկային մարմիններից կամ վճարել հարկային
մարմիններին: Հարկերի դրույքների և հարկերի գումարների հաշվարկման համար օգտագործվող օրենքներն,
այն օրենքներն են, որոնք կիրառվել կամ սահմանվել են հաշվետու ամսաթվի դրությամբ այն երկրներում, որտեղ
հունբը գործում և առաջացնում է հարկվող շահույթ:

Սեփական կապիտալի հոդվածներում ուղղակիորեն ճանաչված ընթացիկ շահութահարկը ճանաչվում է ՀՀՄՍ 12.61U
սեփական կապիտալում, այլ ոչ թե ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ղեկավարությունը ՀՀՄՍ 1.117
ժամանակ առ ժամանակ գնահատում է հարկերի փոխհատուցումների դիրքերը ըստ այն իրավիճակների, որտեղ
կիրառվող հարկային կարգավորումները հանդիսանում են մեկնաբանությունների առարկա, և
անհրաժեշտության դեպքում սահմանում է պահուստներ:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը հաշվառվում է պարտավորությունների մեթոդով հաշվետու ամսաթվի դրությամբ
ակտիվների և պարտավորությունների հարկային բազաների և դրանց ֆինանսական հաշվետվություններում
արտացոլված հաշվեկշռային արժեքների ժամանակավոր տարբերությունների հիման վրա:

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր
տարբերությունների համար, բացառությամբ` ՀՀՄՍ 12.22(q)

- ▶ երբ հետաձգված հարկային պարտավորությունը առաջանում է գուղվիլի կամ ձեռնարկատիրական
գործունեության միավորում չհանդիսացող գործարքներում ակտիվների կամ պարտավորությունների ՀՀՄՍ 12.39
սկզբնական ճանաչումից, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող
շահույթի կամ վնասի վրա,
- ▶ համատեղ ձեռնարկումներում, դուստր և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների հետ
կապված հարկվող ժամանակավոր տարբերությունների դեպքում, որտեղ ժամանակավոր
տարբերությունների հակադարձման ժամանակահատվածը կարող է վերահսկվել և հավանական է, որ
ժամանակավոր տարբերությունները չեն հակադարձվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների, ՀՀՄՍ 12.34
տեղափոխված չօգտագործված հարկային զեղչերի և չօգտագործված հարկային վնասների համար այնքանով,
որքանով հավանական է, որ կլինի հարկվող շահույթ, որի դիմաց այդ նվազեցվող ժամանակավոր
տարբերությունները և տեղափոխված չօգտագործված հարկային զեղչերը և վնասները հնարավոր կլինի
օգտագործել` բացառությամբ հետևյալ դեպքերի`

- ▶ երբ նվազեցվող ժամանակավոր տարբերություններին վերաբերող հետաձգված հարկային ակտիվը
առաջանում է ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքներում ակտիվների ՀՀՄՍ 12.44
կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական
շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի կամ վնասի վրա,
- ▶ համատեղ ձեռնարկումներում, դուստր և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների գծով
նվազեցվող ժամանակավոր տարբերություններից հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են
այնքանով, որքանով հավանական է, որ ժամանակավոր տարբերությունները կհակադարձվեն տեսանելի
ապագայում և կլինի հարկվող շահույթ, որի դիմաց հնարավոր կլինի օգտագործել ժամանակավոր
տարբերությունները:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի ՀՀՄՍ 12.56
դրությամբ և նվազեցվում է այնքանով, որքանով այլևս հավանական չէ, որ բավարար հարկվող շահույթ կլինի,
որի դիմաց կօգտագործվի հետաձգված հարկային ակտիվը: Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները ՀՀՄՍ 12.37
վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում այնքանով, որքանով հավանական
է, որ ապագա հարկվող շահույթը թույլ կտա վերականգնել հետաձգված հարկային ակտիվը: ՀՀՄՍ 12.47

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են այն հարկային դրույքաչափերով,
որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն այն տարում, երբ ակտիվները կիրառվեն կամ պարտավորությունները
կմարվեն` հիմնվելով հաշվետու ամսաթվի դրությամբ կիրառված կամ կիրառման ենթակա օրենքով սահմանված
հարկային դրույքաչափերի (և հարկային օրենքների) վրա:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

2.3.7 Հարկեր (շարունակություն)

Շահույթի կամ վնասի կազմում չճանաչված հոդվածների գծով ճանաչված հետաձգված հարկը նույնպես ճանաչվում է շահույթի կամ վնասի կազմից դուրս: Հետաձգված հարկային հոդվածները ճանաչվում են դրան վերաբերող գործարքներին զուգահեռ՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ անմիջապես սեփական կապիտալում:

ՀՀՄՍ 12.61U

ՀՀՄՍ 12.71

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա իրավաբանորեն ամրագրված իրավունք ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների նկատմամբ հաշվանցելու, և հետաձգված հարկերը վերաբերում են մինչև հարկվող կազմակերպությանը և հարկային մարմիններին:

ՀՀՄՍ 12.68

Որպես ձեռնարկատիրական գործունեության միավորման մաս՝ ձեռքբերված հարկային օգուտները, որոնք այդ ամսաթվի դրությամբ չեն բավարարում առանձին ճանաչման չափանիշներին, կճանաչվեն հետագայում, փաստերի և իրողությունների փոփոխությունների վերաբերյալ նոր տեղեկատվության առկայության դեպքում: Եզրտումը կդիտարկվի որպես նվազեցում գույքի կից (քանի դեռ այն չի գերազանցում գույքի կարճեքը), եթե այն վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության միավորման սկզբնական հաշվառման պահին կամ՝ կարտացույցի շահույթում կամ վնասում:

Իրացման հարկեր (Ավելացված արժեքի հարկ /ԱԱՀ/)

Հատույթը, ծախսերը և ակտիվները ճանաչվում են զուտ իրացման հարկերից՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.

ՀՀՄՍ 18.8

- ▶ երբ իրացման հարկն առաջացել է այնպիսի ակտիվների կամ ծառայությունների գնումից, որի գծով այն չի հատուցվում հարկային մարմինների կողմից. այս դեպքում հարկը ճանաչվում է որպես ակտիվի ձեռքբերման ինքնարժեքի մաս կամ որպես ծախսային հոդված համապատասխանաբար,
- ▶ դեբիտորական և կրեդիտորական պարտքերն արտացույցիս, որոնք ներկայացված են իրացման հարկերի գումարը ներառյալ:

Հարկային մարմիններից հատուցման ենթակա կամ պարտավորություն հանդիսացող իրացման հարկերի գծով գումարները ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես դեբիտորական կամ կրեդիտորական պարտք:

2.3.8 Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործունեություն

Վաճառքի համար պահվող դասակարգված ոչ ընթացիկ ակտիվները և օտարման խմբերը չափվում են հաշվեկշռային արժեքից և վաճառքի գծով ծախսումներից զուտ իրական արժեքից՝ նվազագույնով: Ոչ ընթացիկ ակտիվները և օտարման խմբերը դասակարգվում են որպես վաճառքի համար պահվող, եթե դրանց հաշվեկշռային արժեքները փոխհատուցվելու են հիմնականում վաճառքի գործարքի միջոցով, այլ ոչ թե շարունակական օգտագործման միջոցով: Այս պայմանը համարվում է բավարարված միայն այն դեպքում, երբ վաճառքի հավանականությունը բարձր է, և ակտիվը կամ օտարման խումբը ներկա վիճակում մատչելի է անմիջապես վաճառքի համար: Ղեկավարությունը պետք է ունենա վաճառքի պարտավորվածություն, որն ակնկալվում է, որ կբավարարի ավարտված վաճառք ճանաչելու պայմաններին դասակարգման ամսաթվից սկսած մեկ տարվա ընթացքում:

ՖՀՄՍ 5.15

ՖՀՄՍ 5.6

ՖՀՄՍ 5.7

ՖՀՄՍ 5.8

ՖՀՄՍ 5.33

Հաշվետու ժամանակաշրջանի և նախորդ տարվա համադրելի ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում ընդհատված գործունեությունից եկամուտները և ծախսերը ներկայացվում են շարունակական գործունեության եկամուտներից և ծախսերից առանձին՝ մինչև շահութահարկից հետո զուտ գումարի մակարդակը, նույնիսկ, եթե Խումբը վաճառքից հետո պահպանում է չվերահսկող բաժնեմաս դուստր կազմակերպությունում: Արդյունքում առաջացող շահույթը կամ վնասը (հարկումից հետո) ներկայացվում է առանձին՝ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

ՀՀՄՍ 5.25

Վաճառքի համար պահվող դասակարգված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների գծով մաշվածություն կամ ամորտիզացիա չի հաշվարկվում:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

2.3.9 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքով՝ զուտ կուտակված մաշվածությունից և/կամ արժեզրկումից կուտակված կորուստներից, եթե կան այդպիսիք: Սկզբնական արժեքն իր մեջ ներառում է հիմնական միջոցի փոխարինվող մասերի ծախսումները, երկարաժամկետ շինարարական նախագծերի փոխառության ծախսումները՝ ճանաչման չափանիշներին բավարարելու դեպքում: Երբ հիմնական միջոցի նշանակալի մասերը անհրաժեշտ է պարբերաբար փոխարինել, խումբն ապաճանաչում է փոխարինված մասը և ճանաչում նոր մասն իր օգտակար ծառայության ժամկետով և մաշվածությամբ: Նմանապես, երբ իրականացվում են լայնածավալ ստուգումներ, ապա այդ ծախսումը ճանաչվում է հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքում որպես փոխարինում՝ ճանաչման չափանիշներին բավարարելու դեպքում: Բոլոր այլ վերանորոգման և սպասարկման ծախսումները առաջանալու պահին ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ակտիվի օգտագործումից հետո ակնկալվող ապագործարկման ծախսումների ներկա արժեքը ներառվում է համապատասխան ակտիվի արժեքում՝ պահուստի ճանաչման չափանիշներին բավարարելու դեպքում: Ապագործարկման ծախսումների գծով պահուստի մասին լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է «Կարևոր հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ» (Ծան. 3) և «Պահուստներ» (Ծան. 23) ծանոթագրություններում:

ՀՀՄՍ 16.73(ա)
ՀՀՄՍ 16.30
ՀՀՄՍ 16.15
ՀՀՄՍ 16.16

Հողամասը և շենքերը չափվում են իրական արժեքով՝ հանած վերագնահատման ամսաթվից հետո ճանաչված կուտակված մաշվածությունը շենքերի համար և արժեզրկումից կորուստները: Գնահատումներն իրականացվում են բավարար հաճախականությամբ, որպեսզի վերագնահատված ակտիվի իրական արժեքը էապես չտարբերվի իր հաշվեկշռային արժեքից:

ՀՀՄՍ 16.73(ա)
ՀՀՄՍ 16.31

ՀՀՄՍ 16.39
ՀՀՄՍ 16.40

Վերագնահատումից արժեքի ցանկացած աճ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և կուտակվում սեփական կապիտալի ակտիվի վերագնահատումից պահուստում, բացառությամբ այն դեպքերի, երբ այն հակադարձում է նույն ակտիվի գծով վերագնահատումից նվազումը, որը նախկինում ճանաչվել էր ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ինչի դեպքում աճը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վերագնահատումից նվազումը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի և միայն այն մասով, որը հաշվանցում է ակտիվի վերագնահատման պահուստում ճանաչված նույն ակտիվի գծով վերագնահատումից աճը:

ՀՀՄՍ 16.41

Ակտիվի վերագնահատման պահուստից տարեկան տեղափոխությունը չբաշխված շահույթ իրականացվում է ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերության մասով: Բացի այդ, կուտակված մաշվածությունը վերագնահատման ամսաթվի դրությամբ բացառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից և զուտ գումարը վերաներկայացվում է ակտիվի վերագնահատված գումարի չափով: Օտարման դեպքում վաճառվող ակտիվի գծով վերագնահատման ցանկացած պահուստ տեղափոխվում է չբաշխված շահույթ:

Մեկնաբանություն

Խումբը որոշել է վերագնահատումից աճը տեղափոխել չբաշխված շահույթ, քանի որ ակտիվն օգտագործվում է: Այլապես, այդ գումարը կտեղափոխվեր չբաշխված շահույթ ակտիվի օտարման դեպքում:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, որը սահմանվում է հետևյալ չափով՝

ՀՀՄՍ 16.73(բ)
ՀՀՄՍ 16.73(գ)

- ▶ Շենքեր 15 - 20 տարի
- ▶ Սարքավորումներ և արտադրական հզորություններ 5 - 15 տարի

Սկզբնապես ճանաչված հիմնական միջոցի միավոր և ցանկացած էական մաս ապաճանաչվում է օտարման դեպքում և երբ ակտիվի օգտագործումից կամ օտարումից ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում: Ակտիվի ապաճանաչումից առաջացող ցանկացած օգուտ կամ վնաս (հաշվարկված որպես օտարումից զուտ մուտքերի/հատույցների և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերություն) ներառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ ակտիվն ապաճանաչվում է:

ՀՀՄՍ 16.67
ՀՀՄՍ 16.68
ՀՀՄՍ 16.71

ՀՀՄՍ 16.51

Ակտիվների մնացորդային արժեքները, օգտակար ծառայության ժամկետները և մաշվածության մեթոդները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջի դրությամբ և, անհրաժեշտության դեպքում, ճշգրտվում առաջընթաց:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

2.3.10 Վարձակալություն

Որոշելու համար, արդյոք, համաձայնությունը համարվում է կամ իր մեջ պարունակում է վարձակալություն, պետք է ուշադրություն դարձնել էությանը համաձայնության սկզբի դրությամբ՝ արդյոք համաձայնության կատարումը կախված է որոշակի ակտիվի կամ ակտիվների օգտագործումից, թե համաձայնությունը փոխանցում է ակտիվը օգտագործելու իրավունքը, նույնիսկ, եթե այդ իրավունքը բացահայտորեն նշված չէ համաձայնությունում:

ՖՀՄԿ 4.6

ՖՀՄԿ 4.17,
ՖՀՄԿ 1.99

Մինչև 2010թ. հունվարի 1-ը տեղի ունեցած համաձայնությունների համար սկզբնական ամսաթիվ է հանդիսանում 2010թ. հունվարի 1-ը համաձայն ՖՀՄԿ 1-ի:

Մեկնաբանություն

ՖՀՄԿ 1-ը թույլ է տալիս առաջին անգամ որդեգրողին որոշել, թե արդյոք ՖՀՄԿ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ առկա համաձայնությունը պարունակում է վարձակալություն այդ ամսաթվի դրությամբ առկա փաստերի և հանգամանքների հիման վրա:

Եթե առաջին անգամ որդեգրողը որոշում է վարձակալության առկայությունը՝ համաձայն նախկին ՀՀՀՄ-ի, և այդ որոշման արդյունքները համապատասխանում են ՖՀՄԿ 4-ի և ՀՀՄԿ 17-ի պահանջներին, ապա առաջին անգամ որդեգրողը կարող է այդ որոշումն օգտագործել ՖՀՄԿ-ները որդեգրելու ժամանակ, նույնիսկ եթե որոշման ամսաթիվը տարբեր է ՖՀՄԿ 4-ով պահանջվող ամսաթվից:

Խումբը որպես վարձակալ

Ֆինանսական վարձակալությունը, որը Խմբին փոխանցում է վարձակալված ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները, կապիտալացվում է վարձակալության մեկնարկի ամսաթվին վարձակալված գույքի իրական արժեքով կամ, եթե ավելի փոքր է, նվազագույն վարձակալական վճարների ներկա արժեքով: Վարձավճարները բաշխվում են ֆինանսական ծախսերի և վարձակալական պարտավորությունների նվազեցմանը այնպես, որ ստացվի հաստատուն տոկոսադրույք պարտավորությունների մնացորդի նկատմամբ: Ֆինանսական ծախսերը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ֆինանսական ծախսեր հոդվածում:

ՀՀՄԿ 17.8
ՀՀՄԿ 17.20
ՀՀՄԿ 17.25

ՀՀՄԿ 17.27

Վարձակալված գույքի համար հաշվարկվում է մաշվածություն ակտիվի օգտակար ծառայության ընթացքում: Այն դեպքում, երբ չկա ողջամիտ հավաստիացում, որ Խումբը վարձակալության ժամկետի ավարտին կստանա սեփականության իրավունք, ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի գնահատված օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության ժամկետից նվազագույնով:

ՀՀՄԿ 17.33

Գործառնական վարձակալության գծով վճարումները ճանաչվում են որպես գործառնական ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով վարձակալական ժամկետի ընթացքում:

Խումբը որպես վարձատու

Գույքի վարձակալությունը, երբ ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները չեն փոխանցվում վարձակալին, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության գծով բանակցությունների ընթացքում առաջացող սկզբնավորման ուղղակի ծախսումները գումարվում են վարձակալված ակտիվի հաշվեկշռային արժեքին և ճանաչվում վարձակալական ժամկետի ընթացքում այնպես, ինչպես վարձակալական եկամուտը: Պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես հասույթ այն ժամանակաշրջանում, որում դրանք վաստակվում են:

ՀՀՄԿ 17.8
ՀՀՄԿ 17.52

2.3.11 Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, և որոնց անհրաժեշտ է ժամանակի զգալի հատված նախատեսված օգտագործմանը կամ վաճառքին պատրաստ լինելու համար, կապիտալացվում են որպես տվյալ ակտիվի սկզբնական արժեքի մաս: Փոխառության մնացած բոլոր ծախսումները ծախսագրվում են այն ժամանակաշրջանում, որում առաջանում են: Փոխառության ծախսումները բաղկացած են տոկոսից և այլ ծախսումներից, որը կազմակերպությունը կրում է՝ կապված փոխառու միջոցների ստացման հետ:

ՀՀՄԿ 23.8

ՀՀՄԿ 23.27,
ՖՀՄԿ 1. 723

Խումբը կապիտալացնում է բավարարող բոլոր ակտիվների փոխառության այն ծախսումները, որոնց կառուցումը սկսվել է 2010թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

2.3.12 Ներդրումային գույք

Ներդրումային գույքը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով՝ ներառյալ գործարքի ծախսումները:	ՀՀՄՍ 40.20
Սկզբնական ճանաչումից հետո ներդրումային գույքը հաշվառվում է իրական արժեքով, որն արտացոլում է հաշվետու ամսաթվի դրությամբ շուկայական պայմանները: Ներդրումային գույքի իրական արժեքի փոփոխությունից օգուտները և վնասները ներառվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որում առաջանում են: Իրական արժեքները գնահատվում են տարեկան կտրվածքով հավատարմագրված արտաքին անկախ գնահատողի կողմից՝ կիրառելով Գնահատման միջազգային ստանդարտների կոմիտեի կողմից առաջարկվող գնահատման մոդելը:	ՀՀՄՍ 40.33 ՀՀՄՍ 40.75(ա) ՀՀՄՍ 40.35
Ներդրումային գույքն ապաճանաչվում է, երբ այն օտարվում է, կամ երբ այդ ներդրումային գույքը դուրս է գալիս շահագործումից և այդ օտարումից ոչ մի ապագա տնտեսական օգուտ չի ակնկալվում: Ակտիվի գծով օտարումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի միջև տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ապաճանաչման ժամանակաշրջանում:	ՀՀՄՍ 40.66 ՀՀՄՍ 40.69
Ներդրումային գույքից կամ ներդրումային գույքին կատարվում են վերադասակարգումներ միայն այն դեպքում, երբ դրա օգտագործման եղանակի մեջ փոփոխություն է տեղի ունեցել: Ներդրումային գույքից դեպի սեփականատիրոջ կողմից զբաղեցված գույք փոխանցման դեպքում հետագա հաշվառման համար ելակետային արժեքը փոփոխության ամսաթվի դրությամբ իրական արժեքն է: Եթե սեփականատիրոջ կողմից զբաղեցված գույքը դառնում է ներդրումային, Խումբը հաշվառում է նման գույքը հիմնական միջոցների հաշվառման քաղաքականության համաձայն մինչև փոփոխության ամսաթիվը:	ՀՀՄՍ 40.57 ՀՀՄՍ 40.60 ՀՀՄՍ 40.61

Մեկնաբանություն

Խումբը նախընտրել է հողամասերն ու շինությունները հաշվառել իրական արժեքով համաձայն ՀՀՄՍ 16-ի և ներդրումային գույքն իրական արժեքով համաձայն ՀՀՄՍ 40-ի:

ՀՀՄՍ 16-ը և ՀՀՄՍ 40-ը թույլ են տալիս, որ հիմնական միջոցները և ներդրումային գույքը հաշվառվեն սկզբնական արժեքով՝ նվազեցված կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Այսպիսի դեպքերում կպահանջվի սկզբնական արժեքի և մաշվածության դրույքների մասին լրացուցիչ բացահայտումներ: Բացի այդ, ՀՀՄՍ 40-ը կպահանջի Ծանոթագրության տեսքով բացահայտում սկզբնական արժեքով հաշվառված ներդրումային գույքի իրական արժեքի վերաբերյալ: Այդ իսկ պատճառով, ընկերությունները, այնուամենայնիվ, ստիպված կլինեն որոշել իրական արժեքը:

2.3.13 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել առանձին, սկզբնապես չափվում են ինքնարժեքով:

Ձեռնարկատիրական միավորումներում ձեռքբերված ոչ նյութական ակտիվների սկզբնական արժեքն իրենից ներկայացնում է ձեռքբերման պահի դրությամբ իրական արժեքը: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցված կուտակված մաշվածություն կամ արժեզրկումից կուտակված կորուստներ, եթե կան այդպիսիք: Սեփական ռեսուրսների հաշվին ստեղծված ոչ նյութական ակտիվները, բացի կապիտալացված մշակման ծախսումներից, չեն կապիտալացվում և ծախսերն արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն տարում, երբ ծախսն առաջանում է:

Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունները գնահատվում են որպես որոշակի կամ անորոշ:

Որոշակի օգտակար ծառայություն ունեցող ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են օգտակար տնտեսական ծառայության ժամկետի ընթացքում և գնահատվում է դրանց արժեզրկումը, եթե առկա են հայտանիշներ, որ ոչ նյութական ակտիվը կարող է արժեզրկված լինել: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվի ամորտիզացիայի ժամկետը և ամորտիզացիայի մեթոդը վերանայվում են նվազագույնը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ակնկալվող օգտակար ծառայության ժամկետի կամ ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտների սպառման մոդելի փոփոխությունները հաշվառվում են՝ փոփոխելով համապատասխանաբար ամորտիզացիոն ժամկետը կամ մեթոդը, և դիտվում են որպես հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվի ամորտիզացիայի ծախսը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այն ծախսերի դասում, որը համապատասխանում է ոչ նյութական ակտիվի գործառնական նշանակությանը:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

2.3.13 Ոչ նյութական ակտիվներ (շարունակություն)

ՀՀՄՍ 38.107
ՀՀՄՍ 38.108
ՀՀՄՍ 38.109

Անորոշ օգտակար ծառայություն ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, սակայն տարեկան ստուգվում է դրանց արժեքը կամ առանձին կամ դրամաստեղծ միավորի մակարդակով: Անորոշ ժամկետի գնահատումը վերանայվում է յուրաքանչյուր տարի՝ որոշելու արդյոք անորոշ ժամկետը շարունակվում է ողջամիտ մնալ: Եթե ոչ, ապա օգտակար ծառայության ժամկետը փոփոխվում և դառնում է որոշակի առաջընթաց կիրառմամբ:

ՀՀՄՍ 38.113

Ոչ նյութական ակտիվի ապաճանաչումից օգուտները կամ վնասները չափվում են որպես ակտիվի օտարումից զուտ ներհոսքի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ ակտիվն ապաճանաչվում է:

Հետազոտության և մշակման ծախսումներ

ՀՀՄՍ 38.54
ՀՀՄՍ 38.57

Հետազոտության ծախսումները ծախսագրվում են առաջանալուն պես: Մշակման ծախսումները առանձին ծրագրերի գծով ճանաչվում են որպես ոչ նյութական ակտիվ, երբ Խումբը կարող է ցույց տալ հետևյալը.

- ▶ ոչ նյութական ակտիվն այնպիսի ավարտուն վիճակի հասցնելու տեխնիկական իրագործելիությունը, որպեսզի այն մատչելի լինի օգտագործման կամ վաճառքի համար,
- ▶ ոչ նյութական ակտիվն ավարտին հասցնելու և այն օգտագործելու կամ վաճառելու իր մտադրությունը,
- ▶ այն, թե ինչպես է ոչ նյութական ակտիվն առաջացնելու հնարավոր ապագա տնտեսական օգուտներ,
- ▶ ակտիվը ավարտուն վիճակի հասցնելու համար ռեսուրսների առկայությունը,
- ▶ մշակմանը վերագրելի ծախսումներն արժանահավատորեն չափելու իր կարողությունը:

ՀՀՄՍ 38.74

Մշակման ծախսումների որպես ակտիվ սկզբնական ճանաչումից հետո կիրառվում է սկզբնական արժեքի մոդելը, որը պահանջում է, որպեսզի ակտիվը հաշվառվի սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեքի մասնաբաժնի կորուստները: Ակտիվի ամորտիզացիան սկսվում է, երբ մշակումն ավարտվում է և ակտիվը դառնում է օգտագործման համար մատչելի: Այն ամորտիզացվում է ակնկալվող ապագա օգուտների ստացման ժամանակաշրջանի ընթացքում: Ամորտիզացիան ներկայացվում է վաճառքի ինքնարժեքում: Մշակման ընթացքում ակտիվի արժեքը կարող է ստուգվում է տարեկան:

ՀՀՄՍ 36.10(ա)

Արտոնագրեր և լիցենզիաներ

ՀՀՄՍ 38.122(ա)

Արտոնագրերը տրամադրվել են 10 տարի ժամկետով համապատասխան պետական մարմնի կողմից՝ ժամկետի ավարտին նորացման հնարավորությամբ: Մտավոր սեփականության գծով լիցենզիաները տրվում են 5-ից 10 տարի ժամկետով՝ կախված լիցենզիաների առանձնահատկությունից:

Խմբի լիցենզիաները ընձեռում են նորացման հնարավորություն՝ կախված այն փաստից, թե արդյոք Խումբը համապատասխանում է լիցենզիաների պայմաններին, և կարող է նորացվել Խմբի համար չնչին գումարով կամ անվճար (լրացուցիչ տեղեկությունները ներկայացված են Ծան. 15-ում): Ներկայումս այդպիսի լիցենզիաները գնահատվում են որպես անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող:

Խմբի ոչ նյութական ակտիվների հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը ունի հետևյալ տեսքը՝

	Լիցենզիաներ	Արտոնագրեր	Մշակման ծախսեր
Օգտակար ծառայության ժամկետ	Անորոշ	Որոշակի	Որոշակի
Կիրառվող ամորտիզացիայի մեթոդ	Չի ամորտիզացվում	Արտոնագրի ժամկետի ընթացքում ամորտիզացվում է գծային մեթոդով	Ամորտիզացվում է գծային մեթոդով համապատասխան ծրագրին վերաբերող ակնկալվող ապագա վաճառքի ժամանակաշրջանի ընթացքում
Ներստեղծված կամ ձեռքբերված	Ձեռքբերված	Ձեռքբերված	Ներստեղծված

ՀՀՄՍ 38.118 (ա)(բ)

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

2.3.14 Ֆինանսական գործիքներ՝ սկզբնական ճանաչում և հետագա չափում

i) Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչումը և չափումը

ՀՀՄՍ 39-ի գործողության ոլորտում ընկած ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, փոխառություններ և դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ կամ, համապատասխանության դեպքում, արդյունավետ հեջում որպես հեջավորման գործիքներ նախատեսված ածանցյալ գործիքներ: Խումբը որոշում է ֆինանսական ակտիվի դասակարգումը սկզբնական ճանաչման ժամանակ:

ՖՀՄՍ 7.21
ՀՀՄՍ 39.9

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով գումարած՝ գործարքի ծախսումները, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներից:

ՀՀՄՍ 39.9
ՀՀՄՍ 39.38

Այն ֆինանսական ակտիվների գնումը կամ վաճառքը, որը պահանջում է ակտիվների մատակարարում շուկայում գործող կարգավորմամբ կամ գործարար սովորույթով սահմանված ժամանակահատվածում (կանոնավոր կերպով առավաճառք) ճանաչվում է առևտրի ամսաթվին, այսինքն՝ այն օրը, երբ Խումբը պարտավորվում է գնել կամ վաճառել ակտիվը:

Խմբի ֆինանսական ակտիվները ներառում են դրամական միջոցները և կարճաժամկետ ավանդները, առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, փոխառությունները և այլ դեբիտորական պարտքերը, գնանշվող և չգնանշվող ֆինանսական գործիքները և ածանցյալ ֆինանսական գործիքները:

Հետագա չափումը

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը կախված է ֆինանսական ակտիվի դասից ըստ ստորև ներկայացվածի.

Ֆինանսական ակտիվներ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ և ֆինանսական ակտիվներ, որոնք սկզբնապես նախատեսվել են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող, եթե դրանք ձեռք են բերվել մոտ ժամանակում վաճառելու կամ հետ գնվելու նպատակով: Այս դասը ներառում է այն ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք նախատեսված չեն որպես հեջավորման գործիքներ հեջավորման հարաբերություններում՝ ինչպես դա սահմանված է ՀՀՄՍ 39 ստանդարտով: Ածանցյալ գործիքները, ներառյալ առանձին պարունակվող ածանցյալները ևս դասակարգված են որպես առևտրական նպատակներով պահվող, եթե դրանք չեն նախատեսված որպես արդյունավետ հեջավորման գործիքներ: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ հաշվառվում են իրական արժեքով, իսկ իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ֆինանսական ծախս կամ ֆինանսական եկամուտ:

ՀՀՄՍ 39.9
ՀՀՄՍ 39.46

ՀՀՄՍ 39. 40-14
ՀՀՄՍ 39.55(ա)

Խումբը սկզբնական ճանաչման ժամանակ չի նախատեսել որևէ ֆինանսական ակտիվ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Խումբը գնահատում է առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները, բացառությամբ ածանցյալ գործիքների, որոշելու արդյոք մոտ ապագայում վաճառելու նպատակը դեռ տեղի ունի: Երբ Խումբը հնարավորություն չի ունենում վաճառել այդ ֆինանսական ակտիվները ակտիվ շուկայի բացակայության պատճառով, և տեսանելի ապագայում դրանք վաճառելու ղեկավարության մտադրությունը էապես փոխվում է, Խումբը կարող է վերադասակարգել այդ ֆինանսական ակտիվները հազվադեպ դեպքերում:

ՀՀՄՍ 39.10
ՀՀՄՍ 39.11
ՀՀՄՍ 39.50-50Դ

Վերադասակարգումը փոխառությունների կամ դեբիտորական պարտքերի, վաճառքի համար մատչելի կամ մինչև մարման ժամկետը պահվող ակտիվների կախված է ակտիվի բնույթից: Այս գնահատումը չի ազդում այն ֆինանսական ակտիվների վրա, որոնք սկզբնապես նախատեսվել են որպես ֆինանսական ակտիվ՝ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող՝ օգտագործելով նախատեսման պահին այդ դասակարգման հնարավորությունը:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

2.3.14 Ֆինանսական գործիքներ՝ սկզբնական ճանաչում և հետագա չափում (շարունակություն)

Հիմնական պայմանագրերում ներառված պարունակվող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ և գրանցվում են իրական արժեքով, եթե դրանց տնտեսական բնութագրերը և ռիսկերը սերտորեն կապված չեն հիմնական պայմանագրերի բնութագրերին և ռիսկերին և հիմնական պայմանագրերը չեն պահվում առևտրական նպատակներով կամ չեն նախատեսվում որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով գործիքներ: Այս պարունակվող ածանցյալ գործիքները չափվում են իրական արժեքով, իսկ իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Պահատան վերանայումը տեղի է ունենում միայն, եթե առկա է փոփոխություն պայմանագրի պայմաններում, որն էապես փոխում է դրամական հոսքերը:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառությունները և դեբիտորական պարտքերը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են ֆիքսված կամ որոշակի վճարումներով, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում: Սկզբնական չափումից հետո այդպիսի ֆինանսական ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանելով արժեզրկումը: Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ձեռքբերման ժամանակ ցանկացած զեղչ կամ հավելվածար, ինչպես նաև վճարներ կամ ծախսումներ, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի մաս: Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված ամորտիզացիան ներառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ֆինանսական եկամուտներում: Արժեզրկումից առաջացած կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ֆինանսական ծախսերում:

ՀՀՄՍ 39.9
ՀՀՄՍ 39.46(ա)
ՀՀՄՍ 39.56

Միջև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Ֆիքսված կամ որոշակի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես միջև մարման ժամկետը պահվող, երբ էություն ունի մտադրություն և հնարավորություն դրանք պահելու միջև մարման: Սկզբնական չափումից հետո միջև մարման ժամկետը պահվող ներդրումները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ նվազեցնելով արժեզրկումը: Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ձեռքբերման ցանկացած զեղչ կամ հավելվածար, ինչպես նաև վճարներ կամ ծախսումներ, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս: Արդյունավետ տոկոսադրույքի ամորտիզացիան ներառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ֆինանսական եկամուտ: Արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ֆինանսական ծախս: Խումբը չի ունեցել միջև մարման ժամկետը պահվող ներդրումներ 2011 և 2010թթ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարիներին:

ՀՀՄՍ 39.9
ՀՀՄՍ 39.56
ՀՀՄՍ 39.46(բ)

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումները ներառում են բաժնային և պարտքային գործիքներ: Վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնային ներդրումները այն ներդրումներն են, որոնք չեն դասակարգվել որպես առևտրական նպատակներով պահվող կամ նախատեսվել որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Այս դասի պարտքային գործիքները այն գործիքներն են, որոնց կազմակերպությունը նախատեսում է պահել անորոշ ժամկետով և որոնք կարող են վաճառվել՝ ելնելով իրացվելիության անհրաժեշտությունից կամ շուկայական պայմանների փոփոխությունից:

ՀՀՄՍ 39.9
ՀՀՄՍ 39.46
ՀՀՄՍ 39.55(բ)
ՀՀՄՍ 39.67

Սկզբնական ճանաչումից հետո վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումները հետագայում չափվում են իրական արժեքով, չիրացված օգուտները և վնասները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում՝ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով պահուստում այնքան ժամանակ, մինչև ներդրումն ապաճանաչվի, որի դեպքում կուտակված օգուտը կամ վնասը ճանաչվում է այլ գործառնական եկամուտներում, կամ ներդրումը որոշվի որպես արժեզրկված, որի դեպքում կուտակված վնասը վերադասակարգվում է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով պահուստից ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ֆինանսական ծախսերին: Վաճառքի համար մատչելի պարտատոմսերի տոկոսային եկամուտը հաշվարկվում է արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի միջոցով և ճանաչվում շահույթում կամ վնասում:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

2.3.14 Ֆինանսական գործիքներ՝ սկզբնական ճանաչում և հետագա չափում (շարունակություն)

Խումբը գնահատում է վաճառքի համար մատչելի իր ֆինանսական ակտիվները՝ որոշելու, արդյոք, մոտ ապագայում դրանք վաճառելու հնարավորությունը և մտադրությունը դեռևս տեղին է: Երբ Խումբը չի կարողանում վաճառել այդպիսի ֆինանսական ակտիվները ակտիվ շուկայի բացակայության պատճառով և տեսանելի ապագայում դրանք վաճառելու դեկավարության մտադրությունը եսպես փոխվում է, Խումբը կարող է վերադասակարգել այդ ֆինանսական ակտիվները հազվադեպ դեպքերում: Փոխառություններ և դեբիտորական պարտքեր վերադասակարգումը թույլատրվում է, երբ ֆինանսական ակտիվները համապատասխանում են փոխառությունների և դեբիտորական պարտքերի սահմանմանը և Խումբն ունի մտադրություն և հնարավորություն պահելու այդ ակտիվները տեսանելի ապագայում կամ մինչև մարում: Մինչև մարման ժամկետը պահվող վերադասակարգումը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ Խումբն ունի հնարավորություն և մտադրություն այդ ակտիվները համապատասխանաբար պահելու:

ՀՀՄՍ 39.50Ե
ՀՀՄՍ 39.50Զ

Վաճառքի համար մատչելի դասից վերադասակարգված ֆինանսական ակտիվների համար ցանկացած նախկին օգուտ կամ վնաս, որը ճանաչվել էր սեփական կապիտալում, ամորտիզացվում է շահույթում կամ վնասում ներդրման մնացած ժամկետի ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքը: Նոր ամորտիզացված արժեքի և ակնկալվող դրամական հոսքերի միջև ցանկացած տարբերություն և ամորտիզացվում է ակտիվի մնացած ժամկետի ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքը: Եթե ակտիվը հետագայում որոշվում է որպես արժեզրկված, ապա սեփական կապիտալում հաշվառված գումարը վերադասակարգվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը (կամ, եթե կիրառելի է ֆինանսական ակտիվի մասը կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

ՖՀՄՍ 7.21

- ▶ ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու իրավունքի ժամկետն ավարտված է,
- ▶ Խումբը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը կամ փոխանցման համաձայնագրի համաձայն պարտավորվում է վճարել ստացված բոլոր դրամական հոսքերը առանց էական ուշացման երրորդ կողմին տարանցիկ համաձայնությամբ, և, կա՛մ (ա) Խումբը փոխանցել է ակտիվի գծով ըստ էության բոլոր ռիսկերը և օգուտները, կա՛մ (բ) Խումբը ո՛չ փոխանցել է և ո՛չ էլ պահպանում է ակտիվի գծով ըստ էության բոլոր ռիսկերը և օգուտները, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

ՀՀՄՍ 39.17(ա)
ՀՀՄՍ 39.18(բ)

Այն դեպքում, երբ Խումբը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը կամ կնքել է տարանցիկ փոխանցման համաձայնագիր, և ո՛չ փոխանցել ու ո՛չ էլ պահպանում է ակտիվի գծով ըստ էության բոլոր ռիսկերը և օգուտները, և չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ակտիվը հաշվառվում է Խմբի շարունակվող ներգրավվածությանը համապատասխան:

ՀՀՄՍ 39.20(ա)
ՀՀՄՍ 39.20(գ)
ՀՀՄՍ 39.18(բ)

Տվյալ դեպքում Խումբը նաև ճանաչում է դրան համապատասխան պարտավորություն: Փոխանցված ակտիվը և համապատասխան պարտավորությունը չափվում են Խմբի մոտ պահպանվող իրավունքները և պարտականությունները ճիշտ արտացոլող հիմունքով:

ՀՀՄՍ 39.30(ա)

Երբ շարունակվող ներգրավվածությունը ձեռք է բերում երաշխիքի ձև, ապա փոխանցված ակտիվը չափվում է ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեքից և Խմբից պահանջվող հնարավոր առավելագույն հատուցման գումարից նվազագույնով:

ii) Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Խումբը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ իրականացնում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի՝ արժեզրկված լինելու անկողմնակալ վկայության գնահատում: Ֆինանսական ակտիվը կամ ակտիվների խումբը համարվում են արժեզրկված այն և միայն այն դեպքում, եթե կա արժեզրկման անկողմնակալ վկայության, որպես ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձությունների («կորուստներ վկայող իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվից կամ ակտիվների խմբից ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել: Արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել վարկառուի կամ վարկառուների խմբի զգալի ֆինանսական դժվարությունները, տոկոսագումարների և մայր գումարների վճարման ուշացումը կամ չվճարումը, այն հավանականությունը, որ տեղի կունենա սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմավորում, ինչպես նաև դիտարկվող տեղեկատվությունն ակնկալվող ապագա դրամական հոսքերի չափերի նվազման վերաբերյալ, օրինակ՝ տնտեսական պայմանների փոփոխություն, որոնք կարող են հանգեցնել ձախողումների:

ՀՀՄՍ 39.58
ՀՀՄՍ 39.59
ՖՀՄՍ 7.Բ5(գ)

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

2.3.14 Ֆինանսական գործիքներ՝ սկզբնական ճանաչում և հետագա չափում (շարունակություն)

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների համար, Խումբն ի սկզբանե գնահատում է արժեքով լինելու հայտանիշները անհատապես՝ Էական ակտիվների համար, կամ խմբային՝ բոլոր ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես Էական չեն համարվում: Եթե Խումբը որոշում է, որ անհատապես գնահատված ֆինանսական ակտիվի համար չկա արժեքկման անկողմնակալ վկայություն, անկախ այն հանգամանքից, Էական է այն, թե ոչ, ապա այդ ակտիվը ներառում է համանման վարկային ռիսկերի բնութագրիչներ ունեցող ֆինանսական ակտիվների խմբում և գնահատում է դրանց արժեքով լինելը խմբային հիմունքով: Ակտիվները, որոնց արժեքով լինելը գնահատվում է անհատական հիմունքով և որոնց նկատմամբ ճանաչվում են արժեքկմանից կորուստներ, չպետք է գնահատվեն խմբային հիմունքով:

ՀՀՄՍ 39.63
ՀՀՄՍ 39.64

Արժեքով լինելու անկողմնակալ վկայության առկայության դեպքում արժեքկմանից վնասը ակտիվի հաշվեկշռային արժեքի և դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (հաշվի չառնելով դեռևս չկրած ապագա պարտքային կորուստները) ներկա արժեքի տարբերությունն է: Ակնկալվող ապագա դրամական հոսքերի ներկա արժեքը զեղչվում է ֆինանսական ակտիվների սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Եթե վարկն ունի փոփոխական տոկոսադրույք, ցանկացած արժեքկման կորուստ գնահատելու համար որպես զեղչման դրույք օգտագործվում է ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքը:

ՀՀՄՍ 39.40Ռ84
ՖՀՄՍ 7.16
ՖՀՄՍ 7.Բ5(դ)(i)
ՖՀՄՍ 7.Բ5(դ)(ii)
ՀՀՄՍ 39.65
ՀՀՄՍ 39.40Ռ93

Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեքկման պահուստի հաշվի միջոցով, իսկ արժեքկմանից ծախսն արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Տոկոսային եկամուտները շարունակում են հաշվեկշռվել նվազեցված հաշվեկշռային արժեքից՝ օգտագործելով արժեքկման կորուստը հաշվելու նպատակով ապագա դրամական հոսքերը զեղչելու տոկոսադրույքը: Տոկոսային եկամուտները արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ֆինանսական եկամուտ: Վարկերը, համապատասխան պահուստների հետ միասին, դուրս են գրվում, եթե ապագայում չկա վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն օգտագործվել են կամ փոխանցվել Խմբին: Եթե հաջորդող տարում գնահատված արժեքկման ավելանում կամ նվազում է արժեքկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեքկմանից կորուստը ավելացվում կամ նվազեցվում է՝ ճշգրտելով պահուստի հաշիվը: Եթե հետագա դուրսգրումը ավելի ուշ վերականգնվում է, ապա վերականգնված գումարն արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ֆինանսական ծախսերի նվազեցում:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումներ

Խումբը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին գնահատում է, թե արդյոք առկա է անկողմնակալ վկայություն վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումների կամ ներդրումների խմբերի արժեքկման մասին:

ՀՀՄՍ 39.67
ՀՀՄՍ 39.68
ՀՀՄՍ 39.69

Վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնային ներդրումների դեպքում անկողմնակալ վկայությունը ներդրման իրական արժեքի Էական կամ շարունակական նվազում է իր սկզբնական արժեքից: «Էական» լինելը գնահատվում է ներդրման սկզբնական արժեքի նկատմամբ, իսկ «շարունակական» լինելը գնահատվում է այն ժամանակաշրջանի համար, որի ընթացքում իրական արժեքը ցածր է եղել սկզբնական արժեքից: Եթե կա արժեքկման հայտանիշ, ապա ձեռքբերման արժեքի և ընթացիկ իրական արժեքի տարբերությունը՝ նվազեցված դրա գծով ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված նախկին արժեքկմաններով, համարվում է ընթացիկ արժեքկման և տեղափոխվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներից ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Բաժնային գործիքների գծով արժեքկման կորուստները չեն հակադարձվում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության միջոցով. արժեքկմանից հետո իրական արժեքի աճն ուղղակիորեն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Վաճառքի համար մատչելի պարտքային գործիքների դեպքում արժեքկմանը գնահատվում է նույն սկզբունքով, ինչպես և ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համար: Սակայն արժեքկման գումարը ամորտիզացված արժեքի և ընթացիկ իրական արժեքի տարբերությունն է՝ նվազեցված դրա գծով ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված նախկին արժեքկմաններով:

ՖՀՄՍ 7.16
ՀՀՄՍ 39.40Ռ93
ՀՀՄՍ 39.70

Ապագա տոկոսային եկամուտը շարունակվում է հաշվեկշռվել՝ հիմնվելով ակտիվի նվազեցված հաշվեկշռային արժեքի վրա՝ օգտագործելով արժեքկման կորուստի չափման նպատակով ապագա դրամական հոսքերը զեղչելու տոկոսադրույքը: Տոկոսային եկամուտը հաշվառվում է որպես ֆինանսական եկամտի մաս: Եթե հաջորդող տարում պարտքային գործիքի իրական արժեքը աճի և այդ աճը օբյեկտիվորեն վերագրվի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արժեքկման կորուստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեքկման կորուստը հակադարձվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության միջոցով:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

2.3.14 Ֆինանսական գործիքներ՝ սկզբնական ճանաչում և հետագա չափում (շարունակություն)

iii) Ֆինանսական պարտավորություններ

Սկզբնական ճանաչումը և չափումը

ՀՀՄՍ 39-ի գործողության ոլորտում գտնվող ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, վարկեր և փոխառություններ, կամ համապատասխանության դեպքում ածանցյալ գործիքներ՝ նախատեսված որպես հեջավորման գործիք արդյունավետ հեջում: Խումբը դասակարգում է ֆինանսական պարտավորությունը սկզբնական ճանաչման ժամանակ:

ՖՀՄՍ 7.21
ՀՀՄՍ 39.43
ՀՀՄՍ 39.56

Բոլոր ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ վարկերի ու փոխառությունների պարագայում՝ ներառյալ ուղղակի վերագրելի գործարքի ծախսումները:

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, բանկային օվերդրաֆտները, վարկերը և փոխառությունները, ֆինանսական երաշխավորության պայմանագրերը և ածանցյալ ֆինանսական գործիքները:

Հետագա չափումը

Ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը կախված է դասակարգումից ըստ ստորև ներկայացվածի.

Ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորությունները և այն ֆինանսական պարտավորությունները, որոնք սկզբնական ճանաչման ժամանակ նախատեսվել են որպես չափվող իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով:

ՀՀՄՍ 39.9
ՀՀՄՍ 39.47(ա)
ՀՀՄՍ 39.55(ա)

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող, եթե դրանք ձեռք են բերվել մոտ ապագայում վաճառելու նպատակով: Այս դասը ներառում է այն ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք նախատեսված չեն որպես հեջավորման գործիքներ հեջավորման հարաբերություններում՝ ինչպես դա սահմանված է ՀՀՄՍ 39 ստանդարտով: Առանձնացված պարունակվող ածանցյալ գործիքները նույնպես դասակարգված են որպես վաճառքի համար պահվող, եթե դրանք չեն նախատեսվել որպես արդյունավետ հեջավորման գործիքներ:

Առևտրական նպատակներով պահվող պարտավորությունների գծով օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

ՀՀՄՍ 39.47

ՀՀՄՍ 39.56

Խումբը չի նախատեսել որևէ ֆինանսական պարտավորություն սկզբնական ճանաչման ժամանակ որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Վարկեր և փոխառություններ

Սկզբնական ճանաչումից հետո տոկոսային վարկերն ու փոխառությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ պարտավորություններն ապաճանաչվում են, ինչպես նաև արդյունավետ տոկոսադրույքով ամորտիզացնելիս:

Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ձեռքբերման ժամանակ ցանկացած զեղչ կամ հավելավճար, ինչպես նաև վճարներ կամ ծախսումներ, որոնք հանդիսանում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս: Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված ամորտիզացիան ներառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ֆինանսական ծախսեր հոդվածում:

Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Խմբի կողմից թողարկված ֆինանսական երաշխավորության պայմանագրերը այն պայմանագրերն են, ըստ որոնց պահանջվում է կատարել վճարում փոխհատուցելու պարտատիրոջ վնասները, որոնք առաջացել են այն պատճառով, որ տվյալ պարտատերը չի կատարել վճարում պարտքային գործիքի պայմանների համաձայն: Ֆինանսական երաշխավորության պայմանագիրը սկզբնապես ճանաչվում է որպես պարտավորություն իրական արժեքով՝ ճշգրտված երաշխավորության թողարկմանը ուղղակիորեն վերագրելի գործարքի ծախսումներով: Հետագայում պարտավորությունը չափվում է հետևյալ երկու մեթոդություններից առավելագույնով՝ հաշվետու ամսաթվի դրությամբ ներկա պարտավորությունը մարելու համար անհրաժեշտ ծախսի լավագույն գնահատական և սկզբնապես ճանաչված գումար՝ նվազեցված կուտակված ամորտիզացիայով:

ՀՀՄՍ 39.47(գ)
ՀՀՄՍ 39.9
ՀՀՄՍ 39.14

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

2.3.14 Ֆինանսական գործիքներ՝ սկզբնական ճանաչում և հետագա չափում (շարունակություն)

Ապաճանաչում

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ այն մարվում է, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա՝ ՀՀՄՍ 39.39
ուժի մեջ լինելու ժամկետը: ՀՀՄՍ 39.41

Նույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորության փոխարինումը այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել է գործող պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա պետք է հին պարտավորությունը ապաճանաչել և նոր պարտավորություն ճանաչել, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ձևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: ՀՀՄՍ 39.40

iv) Ֆինանսական գործիքների հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և գուտ գումարը ներկայացվում է համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում այն և միայն այն դեպքում, երբ գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավական հիմք, և գոյություն ունի դրանք գուտ հիմունքով մարելու, կամ միաժամանակ ակտիվներն իրացնելու և պարտավորությունները մարելու մտադրություն: ՀՀՄՍ 32.42

v) Ֆինանսական գործիքների իրական արժեքը

Ակտիվ շուկայում շրջանառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին որոշվում է շուկայական գներին կամ դիլերների գնային առաջարկների համաձայն (գնման գինը երկար դիրքի համար և վաճառքի գինը կարճ դիրքի համար) առանց հաշվի առնելու գործարքի ծախսումները: ՀՀՄՍ 39.48u
ՖՀՄՍ 7.27

Ակտիվ շուկայում չշրջանառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշվում է համապատասխան գնահատման մեթոդների կիրառման միջոցով: Նման մեթոդները կարող են ներառել՝ վերջերս տեղի ունեցած «անկախ կողմերի միջև» շուկայական գործարքների օգտագործումը, նմանատիպ մեկ այլ գործիքի ընթացիկ իրական արժեքին հղումը, զեղչված դրամական հոսքերի վերլուծությունը կամ գնահատման այլ մեթոդներ:

Ֆինանսական գործիքների իրական արժեքների վերլուծությունը և դրանց չափման այլ մանրամասներ ներկայացված են Ծանոթագրություն 16-ում:

2.3.15 Ածանցյալ ֆինանսական գործիքները և հեջի հաշվառումը

Սկզբնական ճանաչումը և հետագա չափումը

ՀՀՄՍ 39.43
ՖՀՄՍ 7.21

Խուճաբ օգտագործում է հետևյալ ածանցյալ ֆինանսական գործիքները՝ արժույթային ֆորվարդ պայմանագրեր, տոկոսային սվոպեր և ապրանքային ֆորվարդ պայմանագրեր՝ հեջավորելու արտարժույթային, տոկոսադրույքի և ապրանքների գների հետ կապված ռիսկերը համապատասխանաբար: Նման ածանցյալ ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով այն ժամանակ, երբ ածանցյալ պայմանագիրը կնքվում է և հետագայում վերաչափվում են իրական արժեքով: Ածանցյալ գործիքները ճանաչվում են որպես ֆինանսական ակտիվներ դրական իրական արժեքի դեպքում և որպես ֆինանսական պարտավորություններ, երբ իրական արժեքը բացասական է:

Գնման ապրանքային պայմանագրերի իրական արժեքները, որոնք բավարարում են ՀՀՄՍ 39-ով սահմանված ածանցյալ գործիքի սահմանմանը, ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վաճառքի ինքնարժեքում:

Ածանցյալ գործիքների իրական արժեքների փոփոխություններից առաջացող ցանկացած օգուտ կամ վնաս ուղղակիորեն արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ դրամական հոսքերի հեջերի արդյունավետ մասի, որը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Հեջավորումը հաշվառելու նպատակով հեջերը դասակարգվում են որպես՝

- ▶ իրական արժեքի հեջեր, երբ հեջավորվում են ճանաչված ակտիվի կամ պարտավորության կամ ընկերության չճանաչված կայուն պարտավորվածության իրական արժեքների փոփոխության ենթարկվածությունը (բացառությամբ արտարժույթային ռիսկի), ՀՀՄՍ 39.86(ա)
ՀՀՄՍ 36.86(բ)
- ▶ դրամական միջոցների հոսքերի հեջեր, երբ հեջավորվում են դրամական միջոցների հոսքերի տատանումներին ենթարկվածությունը, որոնք կամ վերագրվում են ճանաչված ակտիվի կամ պարտավորության, կամ առավել հավանական կանխատեսված գործարքի որոշակի ռիսկին, կամ ընկերության չճանաչված կայուն պարտավորվածությունում արտարժույթային ռիսկին, ՀՀՄՍ 39.86(գ)
- ▶ արտերկրյա ստորաբաժանումում գուտ ներդրման հեջեր:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

2.3.15 Ածանցյալ ֆինանսական գործիքները և հեջի հաշվառումը (շարունակություն)

Հեջավորման փոխհարաբերության սկզբին Խուլմբը պաշտոնապես սահմանում և փաստաթղթերով ձևակերպում է հեջավորման փոխհարաբերություն, որի նկատմամբ Խուլմբը ցանկանում է կիրառել հեջի հաշվառումը: Ինչպես նաև հեջի գծով ռիսկի կառավարման նպատակներն ու ռազմավարությունը: Փաստաթղթերը ներառում են հեջավորման գործիքի, հեջավորված գործիքի կամ գործարքի, հեջավորված ռիսկի բնույթի որոշակիացումը, և այն, ինչպես կազմակերպությունը կգնահատի հեջավորման գործիքի իրական արժեքի փոփոխության արդյունավետությունը՝ հաշվանցելու հեջավորված հոդվածի իրական արժեքի փոփոխության կամ հեջավորված ռիսկին վերագրվող դրամական միջոցների հոսքի ենթարկվածությունը: Նման հեջերը ակնկալվում է, որ կունենան իրական արժեքի կամ դրամական հոսքերի փոփոխությունների հակադարձման մեծապես արդյունավետություն և շարունակական հիմունքով գնահատվում են որոշելու, թե արդյոք դրանք իրականում մեծապես արդյունավետ էին այն ֆինանսական հաշվետվությունների ժամանակաշրջաններում, որոնք համար դրանք նախատեսված էին:

ՀՀՄՍ 39.55(ա)
ՀՀՄՍ 39.88

Հեջերը, որոնք համապատասխանում են հաշվառման հստակ չափանիշներին, հաշվառվում են հետևյալ կերպ՝

Իրական արժեքի հեջավորում

Տոկոսադրույքը հեջավորող ածանցյալ գործիքի իրական արժեքում փոփոխությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ֆինանսական ծախսերում: Հեջավորված ռիսկին վերաբերող հեջավորվող հոդվածի իրական արժեքի փոփոխությունը հաշվառվում է որպես հեջավորվող հոդվածի հաշվեկշռային արժեքի մաս և միաժամանակ ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ֆինանսական ծախս:

ՀՀՄՍ 39.89

ՀՀՄՍ 39.92

Ամորտիզացված արժեքով հաշվառվող հոդվածների իրական արժեքով հեջերի հաշվեկշռային արժեքի ցանկացած ճշգրտում ամորտիզացվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության միջոցով հեջի մնացած ժամկետի ընթացքում: Արդյունավետ տոկոսադրույքով ամորտիզացիան կարող է սկսվել այն պահից, երբ ճշգրտումը կատարվում է և ոչ ուշ, քան հեջավորված հոդվածը դադարում է ճշգրտվել հեջավորվող ռիսկին վերագրվող իրական արժեքի փոփոխություններով:

Եթե հեջավորվող հոդվածը ապաճանաչվում է, ապա չամորտիզացվող իրական արժեքը ամփոփապես ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Երբ ընկերության չճանաչված կայուն պարտավորվածությունը սահմանված է որպես հեջավորվող հոդված, ապա հեջավորվող ռիսկին վերագրվող կայուն պարտավորվածության իրական արժեքի հետագա կուտակային փոփոխությունը ճանաչվում է որպես ակտիվ կամ պարտավորություն, իսկ համապատասխան օգուտը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

ՀՀՄՍ 39.93

Խուլմբն ունի տոկոսային սվոպ, որն օգտագործվում է որպես 8.25% հաստատուն տոկոսադրույքով ապահովված վարկի իրական արժեքի փոփոխության ենթարկվածության հեջավորում: Մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 16-ում:

Դրամական միջոցների հոսքերի հեջավորում

Հեջավորման գործիքից օգուտի կամ վնասի արդյունավետ մասն ուղղակիորեն ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքների դրամական միջոցների հոսքերի հեջավորման պահուստ, իսկ ցանկացած ոչ արդյունավետ մաս միանգամից ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ գործառնական ծախսերում:

ՀՀՄՍ 39.95

ՀՀՄՍ 39.97

ՀՀՄՍ 39.100

ՀՀՄՍ 39.98

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված գումարները տեղափոխվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն, երբ հեջավորված գործարքը ազդեցություն ունի շահույթի կամ վնասի վրա, օրինակ՝ երբ ճանաչվում է հեջավորված հոդվածի գծով ֆինանսական եկամուտը կամ ֆինանսական ծախսը կամ, երբ կանխատեսված վաճառքը տեղի է ունենում: Երբ հեջավորված հոդվածը հանդիսանում է ոչ ֆինանսական ակտիվի կամ ոչ ֆինանսական պարտավորության սկզբնական արժեքի մաս, ապա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված գումարները տեղափոխվում են ոչ ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական հաշվեկշռային արժեք:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

2.3.15 Ածանցյալ ֆինանսական գործիքները և հեջի հաշվառումը (շարունակություն)

Եթե այլևս չի ակնկալվում, որ կանխատեսված գործարքը կամ կայուն պարտավորվածությունը տեղի կունենա, ապա սեփական կապիտալում նախկինում ճանաչված կուտակված օգուտը կամ վնասը տեղափոխվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Եթե հեջավորման գործիքի ժամկետը լրանում է, կամ այն վաճառվում, դադարեցվում կամ իրագործվում է առանց երկարաձգելու կամ փոխարինելու, կամ կազմակերպությունը չեղյալ է համարում նախատեսված հեջավորումը, ապա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում նախկինում ճանաչված կուտակված ցանկացած օգուտ կամ վնաս մնում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում այնքան ժամանակ, մինչև կանխատեսված գործարքը կամ կայուն պարտավորվածությունը ազդեցություն կունենա շահույթի կամ վնասի վրա:

ՀՀՄՍ 39.101

Խումբը կանխատեսված գործարքներում և կայուն պարտավորվածություններում արտարժույթային ռիսկին ենթարկվածությունը հեջավորելու համար օգտագործում է արժույթային ֆորվարդ պայմանագրեր, ինչպես նաև ապրանքային ֆորվարդ պայմանագրեր ապրանքների գների տատանումներին ենթարկվածությունը հեջավորելու համար: Մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 16-ում:

Ջուտ ներդրումների հեջավորում

Արտերկրյա ստորաբաժանումում զուտ ներդրման հեջը, ներառյալ զուտ ներդրման մաս հաշվառվող դրամական հոդվածների հեջը հաշվառվում է դրամական միջոցների հոսքերի հեջերի նման: Հեջավորող գործիքների օգուտները կամ վնասները, որոնք վերաբերում են հեջի արդյունավետ մասին, ճանաչվում են որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ, իսկ ոչ արդյունավետ մասի գծով օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Արտերկրյա ստորաբաժանումների օտարման դեպքում սեփական կապիտալում ներառված այդպիսի ցանկացած կուտակված օգուտները կամ վնասները տեղափոխվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն:

ՀՀՄՍ 39.102

Խումբն օգտագործում է վարկը որպես արտերկրյա դուստր կազմակերպություններում իր ներդրումների արտարժույթային ռիսկին ենթարկվածության հեջավորում: Մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 16-ում:

Ընթացիկ և ոչ ընթացիկ դասակարգում

Որպես արդյունավետ հեջավորման գործիքներ չնախատեսված ածանցյալ գործիքները դասակարգվում են ընթացիկ կամ ոչ ընթացիկ կամ առանձնացվում են ընթացիկ և ոչ ընթացիկ մասերի՝ փաստերի և հանգամանքների վրա հիմնվելով (օրինակ՝ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը)։

ՀՀՄՍ 1.60

- ▶ Երբ Խումբն ունի ածանցյալ գործիք, որը պահելու է որպես տնտեսական հեջ (և չի կիրառում հեջի հաշվառում) հաշվետու ամսաթվից հետո 12-ից ավել ամիսների ընթացքում, ապա ածանցյալ գործիքը դասակարգվում է որպես ոչ ընթացիկ (կամ առանձնացվում ընթացիկ և ոչ ընթացիկ մասերի) դրամ վերաբերող հոդվածի դասակարգմանը համապատասխան,
- ▶ այն պարունակվող ածանցյալ գործիքները, որոնք սերտորեն կապված չեն ֆինանսական գործիքների հիմնական պայմանագրերին, դասակարգվում են հիմնական պայմանագրերով նախատեսված դրամական միջոցների հոսքերին համապատասխան,
- ▶ որպես հեջավորման գործիքներ նախատեսված ածանցյալ գործիքները, որոնք նաև արդյունավետ են, դասակարգվում են հեջավորված հոդվածի դասակարգմանը համապատասխան: Ածանցյալ գործիքը բաժանվում է ընթացիկ և ոչ ընթացիկ մասերի, եթե այդ տրոհումը կարող է արժանահավատորեն իրականացվել:

2.3.16 Պաշարներ

ՀՀՄՍ 2.36(ա)

ՀՀՄՍ 2.9

ՀՀՄՍ 2.10

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Յուրաքանչյուր արտադրանքի ներկա գտնվելու վայր և վիճակին հասցնելու հետ կապված ծախսումները հաշվառվում են հետևյալ կերպ.

Հումք՝

ՀՀՄՍ 2.25

- ▶ գնման արժեքով առաջին մուտք առաջին ելք սկզբունքով,

ՀՀՄՍ 2.12

ՀՀՄՍ 2.13

Պատրաստի և անավարտ արտադրանք

- ▶ ուղղակի հումքի, աշխատանքային ծախսումների և արտադրական վերադիրների համամասնությամբ՝ ելնելով արտադրական հզորությունների նորմալ մակարդակից, բացառությամբ՝ փոխառությամբ ծախսումների:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

2.3.15 Ածանցյալ ֆինանսական գործիքները և հեջի հաշվառումը (շարունակություն)

Պաշարների սկզբնական արժեքը ներառում է համապատասխան հումքի ձեռքբերման գծով դրամական միջոցների հոսքերի հեջավորման օգուտների և վնասների տեղափոխումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքներից:

ՀՀՄՍ 39.98(բ)

ՀՀՄՍ 2.6

Իրացման զուտ արժեքը կազմակերպության սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման ենթադրվող ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները:

2.3.17 Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Խումբը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատում է, արդյոք, առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե առկա է այդպիսի հայտանիշ կամ երբ անհրաժեշտ է իրականացնել ակտիվի տարեկան արժեզրկման ստուգում, ապա Խումբը գնահատում է ակտիվի փոխհատուցվող գումարը: Ակտիվի փոխհատուցվող գումարն ակտիվի կամ դրամաստեղծ միավորի իրական արժեքից՝ հանած վաճառքի համար անհրաժեշտ ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնն է, և որոշվում է առանձին ակտիվի համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվը չի առաջացնում դրամական միջոցների ներհոսքեր, որոնք մեծապես անկախ են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից առաջացող դրամական միջոցների ներհոսքերից: Այն դեպքում, երբ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է վերջինիս փոխհատուցվող գումարը, ակտիվը համարվում է արժեզրկված և արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Օգտագործման արժեքի գնահատման ժամանակ դրամական միջոցների գնահատված հոսքերը գեղչվում են ներկա արժեքի՝ օգտագործելով գեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և տվյալ ակտիվին հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները՝ առանց հաշվի առնելու հարկային ազդեցությունը: Վաճառքի ծախսումներով նվազեցված իրական արժեքը որոշելիս հաշվի են առնվում վերջին շուկայական գործարքները, եթե այդպիսիք կան: Այն դեպքում, երբ այդպիսի գործարքներ չեն կարող որոշվել, օգտագործվում է համապատասխան գնահատման մոդել: Այս հաշվարկները հիմնվում են գնահատման գործակիցների, հրապարակայնորեն գնանշվող դուստր կազմակերպությունների բաժնետոմսերի շուկայական գների և այլ առկա իրական արժեքի ցուցանիշների վրա:

ՀՀՄՍ 36.6

ՀՀՄՍ 36.9

ՀՀՄՍ 36.66

ՀՀՄՍ 36.59

ՀՀՄՍ 36.30

ՀՀՄՍ 36.55

ՀՀՄՍ 36.25

ՀՀՄՍ 36.33

Խումբն իր արժեզրկման հաշվարկները հիմնավորում է մանրամասն բյուջեով և կանխատեսումներով, որոնք պատրաստվում են առանձին՝ Խմբի յուրաքանչյուր դրամաստեղծ միավորի համար, որին բաշխված են առանձին ակտիվներ: Այս բյուջեները և կանխատեսումները սովորաբար ընդգրկում են հինգ տարվա ժամանակաշրջան: Ավելի երկար ժամանակահատվածների համար հաշվարկվում է երկարաժամկետ աճի գործակից, որը կիրառվում է հինգ տարուց հետո ակնկալվող ապագա դրամական հոսքերի նկատմամբ:

ՀՀՄՍ 36.60

Շարունակական գործունեությանը վերաբերող արժեզրկման կորուստը՝ ներառյալ պաշարների արժեզրկումը, ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արժեզրկված ակտիվի գործառնությանը համապատասխան ծախսային հոդվածում, բացառությամբ նախկինում վերագնահատված հիմնական միջոցների, որոնց վերագնահատումը արտացոլվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Տվյալ պարագայում արժեզրկումը, որը չի գերազանցում նախկին վերագնահատման մնացորդը, նույնպես ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

ՀՀՄՍ 36.110

ՀՀՄՍ 36.114

ՀՀՄՍ 36.117

ՀՀՄՍ 36.119

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ բոլոր ակտիվների համար, բացառությամբ գուղվիլի, գնահատվում է կա արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի նախկինում ճանաչված արժեզրկման կորուստները կարող են պակասել կամ այլևս չլինել: Եթե գոյություն ունեն նման հայտանիշեր, ապա Խումբը գնահատում է ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը: Նախկինում որպես արժեզրկման կորուստ ճանաչված գումարը հակադարձվում է միայն այն դեպքում, երբ առկա է ակտիվի փոխհատուցվող գումարը որոշելու համար վերջին արժեզրկման կորուստը ճանաչելուց հետո օգտագործված ենթադրությունների փոփոխություն: Հակադարձումը սահմանափակված է այնպես, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի փոխհատուցվող գումարը կամ մաշվածությունից զտված այն հաշվեկշռային արժեքը, որը կլիներ, եթե նախորդ տարիներում արժեզրկումից կորուստներ չլինեին: Այդպիսի հակադարձումը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ վերագնահատված արժեքով հաշվառվող ակտիվի, որի դեպքում հակադարձումը կհաշվառվի որպես վերագնահատումից աճ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

2.3.17 Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում (շարունակություն)

Առանձնահատուկ ակտիվների արժեզրկումը ստուգելիս կիրառվում են նաև հետևյալ չափանիշները.

ՀՀՄՍ 36.10(բ)

Գուղվիլ

Գուղվիլի արժեզրկումը ստուգվում է տարեկան կտրվածքով (դեկտեմբերի 31-ի դրությամբ), ինչպես նաև, երբ հանգամանքները ցույց են տալիս, որ հաշվեկշռային արժեքը կարող է արժեզրկված լինել:

ՀՀՄՍ 36.104

Գուղվիլի արժեզրկումը որոշվում է փոխհատուցվող գումարի գնահատման միջոցով այն դրամաստեղծ միավորի (կամ դրամաստեղծ միավորների խմբի) համար, որին գուղվիլը վերաբերում է: Եթե դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը ավելի քիչ է, քան դրա հաշվեկշռային արժեքը, ապա ճանաչվում է արժեզրկման կորուստ: Գուղվիլի գծով արժեզրկման կորուստները չեն կարող հակադարձվել ապագա ժամանակաշրջաններում:

ՀՀՄՍ 36.124

Ոչ նյութական ակտիվներ

Անորոշ օգտակար ծառայությամբ ոչ նյութական ակտիվների արժեզրկումը ստուգվում է տարեկան կտրվածքով, դեկտեմբերի 31-ի դրությամբ, անհատապես կամ դրամաստեղծ միավորի մակարդակով, ինչպես նաև այն դեպքում, երբ հանգամանքները ցույց են տալիս, որ հաշվեկշռային գումարը կարող է արժեզրկված լինել:

ՀՀՄՍ 36.10(ա)

Մեկնաբանություն

ՀՀՄՍ 36.96-ը թույլ է տալիս՝ գուղվիլի և անորոշ օգտակար ծառայություն ունեցող ոչ նյութական ակտիվների արժեզրկման տարեկան ստուգումն իրականացնել տարվա ընթացքում ցանկացած պահին, պայմանով, որ այն յուրաքանչյուր տարի իրականացվում է միևնույն պահին: Տարբեր գուղվիլների և ոչ նյութական ակտիվների արժեզրկման ստուգումը կարող է իրականացվել տարբեր ժամանակահատվածներում:

ՖՀՄՍ 1-ը չի նախատեսում ազատումներ հիմնական միջոցների, որոշակի ժամկետով ոչ նյութական ակտիվների և անորոշ ժամկետով ոչ նյութական ակտիվների արժեզրկման գնահատման համար: Հետևաբար, առաջին անգամ որդեգրողից պահանջվում է որոշել՝ առկա է արդյոք արժեզրկման հայտանիշ կամ որևէ նախկին արժեզրկման հայտանիշի հակադարձում այդ ակտիվների համար: Եթե առկա են արժեզրկման հայտանիշեր կամ հակադարձման հայտանիշեր, ապա ՀՀՄՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտով պետք է իրականացվի արժեզրկման ստուգում և որոշվի փոխհատուցվող գումարը, այնուհետև ճանաչվի արժեզրկումը կամ արժեզրկման հակադարձումը:

Երբ առաջին անգամ որդեգրողն օգտվում է ՖՀՄՍ 3-ը հետընթաց կիրառելու ՖՀՄՍ 1-ի ազատումից, ապա ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ պահանջվում է ստուգել գուղվիլը արժեզրկման տեսանկյունից ՀՀՄՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտին համապատասխան (ՖՀՄՍ 1.94(է)(ii)): Գուղվիլի արժեզրկման ստուգումը և ցանկացած լրացուցիչ արժեզրկման ճանաչում պետք է հիմնված լինի ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ գոյություն ունեցող պայմանների վրա: Այնուամենայնիվ, կարևոր է նշել, որ ՖՀՄՍ 1.94(ը)-ը թույլ չի տալիս կատարել գուղվիլի հաշվեկշռային արժեքի այլ ճշգրտումներ ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ, բացի ՖՀՄՍ 1.94(է)-ի ճշգրտումներից, որոնք վերաբերում են գուղվիլի արժեզրկման ստուգմանը կամ ոչ նյութական ակտիվների որոշ վերադասակարգումներին: Այսպիսով, առաջին անգամ որդեգրողին չի թույլատրվում հակադարձել որևէ նախկին ՀՀՄՍ-ներով գուղվիլի արժեզրկում:

Նախկին ՀՀՄՍ-ների համաձայն ձեռնարկատիրական գործունեության միավորման ամսաթվից սկսած կազմակերպությունը կարող էր ամորտիզացնել ոչ նյութական ակտիվները, բացառությամբ գուղվիլի: Երբ այդ ամորտիզացիան չի համապատասխանում ՖՀՄՍ-ներին, այն ճշգրտվում է՝ ՖՀՄՍ-ներին համապատասխանեցնելու նպատակով: Ճշգրտված հաշվեկշռային արժեքի նկատմամբ կիրառվում է ՖՀՄՍ-ներին համապատասխան արժեզրկումը ստուգելու պահանջները:

ՖՀՄՍ 1-ը պահանջում է բացահայտում, որը կպահանջեր ՀՀՄՍ 36-ը, այն դեպքում, երբ կազմակերպությունը ճանաչում կամ հակադարձում է արժեզրկումից որևէ կորուստ ՖՀՄՍ-ների համապատասխան առաջին անգամ ֆինանսական վիճակի մասին սկզբնական հաշվետվությունը պատրաստելու ժամանակ:

2.3.18 Դրամական միջոցներ և կարճաժամկետ ավանդներ

Դրամական միջոցները և կարճաժամկետ ավանդները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներառում են դրամական միջոցները բանկում և դրամարկղում, ինչպես նաև կարճաժամկետ ավանդները, որոնց մարման ժամկետը երեք ամսից պակաս է:

ՀՀՄՍ 7.6

ՀՀՄՍ 7.7

ՀՀՄՍ 7.46

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն պատրաստելու նպատակով դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները, վերոնշյալ կարճաժամկետ ավանդները՝ նվազեցված բանկային օվերդրաֆտների մնացորդներով:

Մեկնաբանություն

Խումբը ներառել է բանկային օվերդրաֆտները դրամական միջոցներում և դրանց համարժեքներում, քանի որ դրանք համարվում են Խմբի դրամական միջոցների կառավարման բաղկացուցիչ մաս:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

2.3.19 Փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր

Փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերը բաժանվում են պարտավորությունների և սեփական կապիտալի տարրերի՝ կախված պայմանագրի պայմաններից:

ՖՀՄՄ 7.21
ՀՀՄՄ 32.18
ՀՀՄՄ 32.28
ՀՀՄՄ 32.35
ՀՀՄՄ
32.40Ռ31(ա)

Փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերի թողարկման դեպքում պարտավորության մասի իրական արժեքը որոշվում է՝ օգտագործելով նմանատիպ չփոխարկվող պարտատոմսերի շուկայական տոկոսադրույքները: Այս գումարը դասակարգվում է որպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ (զուտ գործարքի ծախսումներից) այնքան ժամանակ, մինչև այն փոխարկվում կամ մարվում է:

Մուտքերի մնացած մասը բաշխվում է ճանաչված և սեփական կապիտալում ներառված փոխարկման օպցիոնին: Շահութահարկով ճշգրտված գործարքի ծախսումները նվազեցվում են սեփական կապիտալից: Փոխարկման օպցիոնի հաշվեկշռային արժեքը հաջորդ տարիներին չի վերաչափվում:

ՀՀՄՄ 32.38

Գործարքի ծախսումները բաշխվում են փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերի գծով պարտավորությունների և սեփական կապիտալի տարրերի միջև՝ գործիքների սկզբնական ճանաչման պահին պարտավորությունների և սեփական կապիտալի տարրերի համամասնությամբ:

2.3.20 Հետզնված բաժնետոմսեր

Հետզնված բաժնային գործիքները ճանաչվում են սկզբնական արժեքով և նվազեցվում սեփական կապիտալից: Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում խմբի բաժնային գործիքների գնման, վաճառքի, թողարկման կամ չեղյալ հայտարարելու դեպքում օգուտ կամ վնաս չի ճանաչվում: Եթե տեղի է ունեցել վերաթողարկում, ապա ստացված հատուցման և հաշվեկշռային արժեքների միջև ցանկացած տարբերություն ճանաչվում է եմիսիոն եկամտում: Հետզնված բաժնետոմսերի ձայնի իրավունքը գրոյացվում է խմբի համար և այդ գծով շահաբաժին չի վճարվում: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում իրագործված բաժնետոմսի օպցիոնները մարվում են հետզնված բաժնետոմսերի հաշվին:

ՀՀՄՄ 32.33

2.3.21 Պահուստներ

Ընդհանուր

Պահուստները ճանաչվում են, երբ խումբն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտավորություն որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և այդ պարտավորությունը կարելի է արժանահավատորեն չափել: Երբ խումբն ակնկալում է, որ պահուստն ամբողջությամբ կամ դրա մի մասը կփոխհատուցվի, օրինակ՝ ապահովագրական պայմանագրի շրջանակներում, փոխհատուցման գումարը ճանաչվում է որպես առանձին ակտիվ, բայց միայն այն դեպքում, երբ փոխհատուցումը ըստ էության որոշակի է: Ցանկացած պահուստին վերաբերող ծախս ներկայացվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ զուտ ցանկացած փոխհատուցումից:

ՀՀՄՄ 37.14

Եթե դրամի ժամանակային արժեքն էական է, պահուստները զեղչվում են՝ օգտագործելով նախքան հարկումը ընթացիկ դրույքաչափը, որն, ըստ անհրաժեշտության, արտահայտում է պարտավորությանը հատուկ ռիսկերը: Եթե կիրառվում է զեղչում, ապա ժամանակի անցնելու հետևանքով պահուստի աճը ճանաչվում է ֆինանսական ծախսերում:

ՀՀՄՄ 19.133

Երաշխիքների գծով պահուստներ

Երաշխիքային սպասարկման ծախսումների գծով պահուստները ճանաչվում են, երբ ապրանքը վաճառվում է կամ ծառայությունները մատուցվում են: Սկզբնական ճանաչումը հիմնվում է պատմական փորձի վրա: Երաշխիքների գծով նախնական գնահատված ծախսումները վերանայվում են տարեկան կտրվածքով:

Վերակազմավորման պահուստներ

Վերակազմավորման պահուստները ճանաչվում են միայն այն դեպքում, երբ պահուստի ընդհանուր ճանաչման չափանիշները բավարարված են: Բացի այդ, խումբը պետք է ունենա գործունեության կամ դրա մի հատվածին վերաբերող մանրամասն մշակված պաշտոնական նախագիծ, որը վերաբերում է աշխատակիցների քանակին և գտնվելու վայրին, որոնց վրա վերակազմավորումը ազդեցություն կունենա, վերակազմավորմանը վերաբերող ծախսերի մանրամասն գնահատմանը և համապատասխան ժամանակացույցին: Վերակազմավորման շրջանակներում ներառված մարդիկ ունեն հիմնավոր սպասումներ, որ վերակազմավորումն իրականացվում է կամ դրա իրականացումն արդեն նախաձեռնվել է:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

2.3.21 Պահուստներ (շարունակություն)

Ապագործարկման պարտավորություններ

Ապագործարկման ծախսումների գծով պահուստն առաջացել է հակահրդեհային նյութերի արտադրության արտադրական սարքավորումների շինարարությունից: Ապագործարկման ծախսումները ներկայացված են պարտավորությունները մարելու ակնկալվող ծախսումների ներկա արժեքով՝ կիրառելով գնահատված դրամական հոսքերը, և ճանաչվում են որպես այդ ակտիվի ինքնարժեքի մի մաս: Դրամական հոսքերը զեղչվում են նախքան հարկումը ընթացիկ դրույքաչափով, որն արտացոլում է ապագործարկման պարտավորությանը հատուկ ռիսկերը: Ջեղչման հետադարձումը ծախսագրվում է առաջնալու պահին և ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ֆինանսական ծախս: Ապագործարկման ապագա սպասվող ծախսումները վերանայվում են տարեկան կտրվածքով և համապատասխանաբար ճշգրտվում: Ապագա սպասվող ծախսումների կամ կիրառված զեղչման դրույքի փոփոխությունները ավելացնում կամ նվազեցնում են ակտիվի ինքնարժեքը:

ՀՀՄՍ 16.16(գ)
ՀՀՄՍ 37.45
ՀՀՄՍ 37.47
ՖՀՄՄԿ 1.8
ՀՀՄՍ 37.59
ՖՀՄՄԿ 1.5

Ջերմոցային գազերի արտանետում

Խումբը որոշ Եվրոպական երկրներում ունի անվճար արտանետման իրավունքներ որպես Եվրոպական միության արտանետումների առևտրի ծրագրի արդյունք: Իրավունքները ստացվում են տարեկան կտրվածքով և դրա դիմաց Խումբը պետք է վճարի իր իրավունքից ավել փաստացի արտանետումների համար: Խումբն ընդունել է զուտ պարտավորությունների մոտեցումը արտանետման շնորհիվ իրավունքների նկատմամբ: Հետևաբար, պահուստը միայն ճանաչվում է, երբ փաստացի արտանետումը ավել է լինում արտանետման շնորհիվ իրավունքներից: Արտանետման գծով ծախսումները ճանաչվում են այլ գործառնական ծախսերում: Եթե արտանետման իրավունքները զնվում են այլ կողմերից, ապա դրանց սկզբնական արժեքները դիտարկվում են որպես փոխհատուցման իրավունքներ՝ այդպիսով համապատասխանեցնելով վերջիններիս արտանետման պարտավորություններին, և վերաչափվում են իրական արժեքով: Իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

ՀՀՄՍ 8.10

Մեկնաբանություն

ՖՀՄՄԿ 3 «Արտանետման իրավունքներ» մեկնաբանությունը չեղյալ է հայտարարվել 2005թ. հունիսին, քանի որ ՀՀՄՍ-ն մշակում էր ուղեցույց արտանետման իրավունքների հաշվառման համար: Հատուկ ստանդարտի բացակայության պայմաններում դեկավարությունը պետք է մշակի տեղին և արժանահավատ հաշվապահական հաշվառման քաղաքականություն:

Խումբը կիրառել է զուտ պարտավորությունների մոտեցումը համաձայն ՀՀՄՍ 20.23-ի: Այնուամենայնիվ, արտանետման իրավունքները կարող են նաև ճանաչվել որպես ոչ նյութական ակտիվ իրենց իրական արժեքով ՀՀՄՍ 38-ով նախատեսված բոլոր բացահայտումներով:

Էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների թափոններ (ԷԷՍԹ)

ՖՀՄՄԿ 6

Խումբը հանդիսանում է էլեկտրական սարքավորումների մատակարար և ենթարկվում «Էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների թափոնների» վերաբերյալ ԵՄ հրահանգներին: Հրահանգը տարբերակում է տնային տնտեսություններին վաճառված սարքավորումների թափոնների կառավարումը նախքան այն ժամկետը (պատմական թափոններ), որը որոշվում է յուրաքանչյուր անդամ երկրի կողմից, և այդ ժամկետից հետո վաճառքները (Նոր թափոններ): Պատմական թափոնների կառավարման գծով ակնկալվող ծախսումների պահուստը ճանաչվում է, երբ Խումբը մասնակցում է շուկայում յուրաքանչյուր անդամ երկրի կողմից սահմանված չափման ժամանակաշրջանի ընթացքում, և երբ այդ ծախսումները կարող են արժանահավատորեն չափվել: Տվյալ ծախսումները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այլ գործառնական ծախսերում:

Նոր թափոնների ակնկալվող ծախսումների գծով պահուստը ճանաչվում է, երբ հրահանգներին համապատասխանող ապրանքները վաճառվում են և դրանց լուծարման ծախսումները կարող են արժանահավատորեն չափվել: Ապաճանաչում տեղի է ունենում այն ժամանակ, երբ պարտավորությունը մարվում է, փոխանցվում է կամ պարտավորության ժամկետը լրանում է: Տվյալ ծախսումները ճանաչվում են որպես վաճառքի ինքնարժեքի մի մաս:

Տնային տնտեսությունները չհանդիսացող կազմակերպություններին վաճառված սարքավորումների գծով պահուստը ճանաչվում է, երբ Խումբը դառնում է թափոնների կառավարման ծախսումների պատասխանատու, իսկ ծախսումները համապատասխանաբար ճանաչվում են այլ գործառնական ծախսերում կամ վաճառքի ինքնարժեքում:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

2.3.21 Պահուստներ (շարունակություն)

Ձեռնարկատիրական գործունեության միավորումներում ճանաչված պայմանական պարտավորությունների պահուստ

ՖՀՄՍ 3.56

Ձեռնարկատիրական գործունեության միավորումում ճանաչված պայմանական պարտավորության պահուստը սկզբնապես չափվում է իրական արժեքով: Հետագայում այն չափվում է հետևյալ արժեքներից առավելագույնով՝

- ▶ պահուստների վերոնշյալ ընդհանուր պահանջներին համապատասխան ճանաչման ենթակա գումար (ՀՀՄՍ 37), կամ
- ▶ սկզբնապես ճանաչված գումար՝ հանած ՀՀՄՍ 18 «Հասույթ» ստանդարտի համաձայն ճանաչված կուտակված ամորտիզացիան:

2.3.22 Թոշակներ և այլ հետաշխատանքային հատուցումներ

ՀՀՄՍ 19.64
ՀՀՄՍ 19.92
ՀՀՄՍ 19.93Ա

Խումբը կիրառում է երկու տեսակ թոշակային սահմանված հատուցումների պլան, որոնցից յուրաքանչյուրը պահանջում է կատարել վճարումներ առանձին կառավարվող հիմնադրամներին: Խումբը նաև համաձայնել է մատուցել որոշակի լրացուցիչ հետաշխատանքային բուժօգնության հատուցումներ ԱՄՆ-ում գտնվող ավագ մասնագետ աշխատակիցներին: Այս հատուցումները չեն ֆինանսավորվում: Հատուցումների տրամադրման ծախսումները սահմանված հատուցումների պլանների շրջանակներում գնահատվում են յուրաքանչյուր պլանի համար առանձին՝ օգտագործելով նախատեսված հատուցման միավորի մեթոդը: Երկու հատուցումների պլանների գծով ակտուարային օգուտները կամ վնասները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ամբողջությամբ այն ժամանակաշրջանում, որում դրանք արտացոլվել են: Նման ակտուարային օգուտները և վնասները միանգամից ճանաչվում են չբաշխված շահույթում և չեն վերադասակարգվում հետագա ժամանակաշրջանների շահույթում կամ վնասում:

ՀՀՄՍ 19.93Դ

ՀՀՄՍ 19.96

Անցյալ ծառայության ծախսերը ճանաչվում են որպես ծախս գծային մեթոդով մինչև երաշխավորված դառնալը միջին ժամանակահատվածի ընթացքում: Անցյալ ծառայության արժեքները ճանաչվում են միանգամից, եթե թոշակային պլանի ներդրման կամ փոփոխություններից անմիջապես հետո հատուցումներն արդեն երաշխավորված են:

Սահմանված հատուցումների ակտիվները կամ պարտավորությունները բաղկացած են սահմանված հատուցումների պարտավորությունների ներկա արժեքից (օգտագործելով բարձրորակ կորպորատիվ պարտատոմսերի զեղչման դրույքը ինչպես նկարագրված է Ծանոթագրություն 3-ում)՝ հանած անցյալ ծառայության արժեքը և պլանի այն ակտիվների իրական արժեքը, որոնցից մարվում են պարտավորությունները: Պլանի ակտիվներն այն ակտիվներն են, որոնք պահվում են աշխատողների երկարաժամկետ հատուցումների հիմնադրամների և որակավորված ապահովագրական պոլիսների կողմից: Պլանի ակտիվները հասանելի չեն Խմբի կրեդիտորներին և չեն կարող ուղղակիորեն վճարվել Խմբին: Իրական արժեքը հիմնվում է շուկայական գնի մասին տեղեկատվության վրա, իսկ գնանշվող արժեթղթերի դեպքում՝ այն առաջարկվող հրապարակված գինն է: Ցանկացած ճանաչված սահմանված հատուցումների ակտիվի գումար սահմանափակված է այն գումարով, որը ներկայացնում է ցանկացած անցյալ ծառայությունների արժեքը և ցանկացած տնտեսական օգուտների ներկա արժեքը, որոնք հասանելի են պլանից փոխհատուցումների կամ պլանում ապագա վճարումների նվազեցումների տեսքով:

ՀՀՄՍ 19.54
ՀՀՄՍ 19.7

ՀՀՄՍ 19.58Ա

Սահմանված հատուցումների պլանների գծով Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունն է ճանաչել ակտուարային օգուտները և վնասները ամբողջությամբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում այն ժամանակաշրջանում, որում առաջանում են համաձայն ՀՀՄՍ 19.93Ա պարագրաֆի: Այսպիսով, Խումբը ճանաչել է բոլոր կուտակված չճանաչված ակտուարային օգուտները և վնասները ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ: Մանրամասները բացահայտված են Ծանոթագրություն 2.4-ում:

2.3.23 Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գործարքներ

ՖՀՄՍ 2.44

Խմբի աշխատակիցները (ներառյալ՝ ղեկավար աշխատակազմը) ստանում են վարձատրություն բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գործարքների տեսքով, որի համաձայն աշխատակիցները մատուցում են ծառայություններ բաժնային գործիքների դիմաց (բաժնային գործիքների միջոցով մարվող գործարքներ): Գործունեության զարգացման խմբում աշխատող աշխատակիցներին շնորհվում են բաժնետոմսերի գնի աճից օգտվելու իրավունքներ, որոնք կարող են մարվել միայն կանխիկով (դրամական միջոցներով մարվող գործարքներ):

ՖՀՄՍ 2.13Ա

Այն պարագայում, երբ թողարկվում են բաժնային գործիքներ, և կազմակերպության կողմից որպես հատուցում ստացված ապրանքները կամ ծառայություններն ամբողջությամբ կամ դրանց մի մասը որոշելի չէ, ապա ստացած (կամ ստացվելիք) ոչ որոշելի ապրանքները կամ ծառայությունները չափվում են որպես բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների իրական արժեքի և որոշելի ապրանքների կամ ծառայությունների իրական արժեքի միջև տարբերություն՝ տրամադրման ամսաթվի դրությամբ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

2.3.23 Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գործարքներ (շարունակություն)

Բաժնային գործիքներով մարվող գործարքներ

Բաժնային գործիքներով մարվող գործարքների ծախսերը կապիտալի այլ պահուստների համապատասխան աճի հետ միասին ճանաչվում են սեփական կապիտալում այն ժամանակաշրջանների ընթացքում, որում կատարվում են գործունեության և/կամ ծառայության կից պայմանները: Բաժնային գործիքներով մարվող գործարքների գծով կուտակված ծախսը ճանաչվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում՝ մինչև իրավունքի առաջացման ամսաթիվը՝ արտացոլելով իրավունքի առաջացման ժամկետի նվազեցումը և Խմբի լավագույն գնահատականներով որոշված վերջնական իրագործվող բաժնային գործիքների քանակը: Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ծախսը կամ ծախսի նվազեցումն իրենից ներկայացնում է կուտակված ծախսի շարժն այդ ժամանակաշրջանի սկզբի և վերջի դրությամբ, որը ճանաչվում է աշխատակիցների հատուցումների գծով ծախսերում (Ծան. 9.6):

\$ՀՄՍ 2.7
\$ՀՄՍ 2.19
\$ՀՄՍ 2.20
\$ՀՄՍ 2.21

Վերջնական իրավունք չառաջացնող պարզատրումների համար ծախս չի առաջանում, բացառությամբ բաժնային գործիքներով մարվող գործարքների, որտեղ իրավունքի առաջացումը պայմանավորված է շուկայական կամ իրավունք չառաջացնող պայմաններից, որոնք դիտարկվում են որպես իրավունք առաջացնող՝ անկախ նրանից, արդյոք շուկայական կամ իրավունք չառաջացնող պայմանները բավարարված են թե ոչ՝ համարելով, որ գործունեության և/կամ ծառայության պայմանները բավարարված են:

\$ՀՄՍ 2.27
\$ՀՄՍ 2.27u
\$ՀՄՍ 2.21

Երբ բաժնային գործիքներով մարվող գործարքի պարզատրման պայմանները փոխվում են, ապա ճանաչված նվազագույն ծախսը այն ծախսն է, որը կլիներ, եթե պայմանները փոփոխված չլիներին և եթե պարզատրման նախնական պայմանները բավարարվեին: Լրացուցիչ ծախսը ճանաչվում է ցանկացած այլ փոփոխության համար, որն ավելացնում է բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գործարքի ընդհանուր իրական արժեքը կամ այլապես շահավետ է աշխատակցի համար, և չափվում է փոփոխության ամսաթվի դրությամբ:

\$ՀՄՍ 2.28
\$ՀՄՍ 2. F42- P
44

Եթե բաժնային գործիքներով մարվող պարզատրումները հայտարարվել են չեղյալ, ապա դրանք հաշվառվում են այնպես, ինչպես իրավունքները առաջացել են չեղյալ հայտարարելու ամսաթվի դրությամբ, իսկ ցանկացած պարզատրման գծով դեռևս չճանաչված ծախսը միանգամից ճանաչվում է: Այն ներառում է ցանկացած պարզատրում, որի գծով իրավունքի չառաջացման պայմանները՝ կազմակերպության կամ աշխատողի վերահսկողության շրջանակներում, չեն բավարարվում: Այնուամենայնիվ, եթե նոր պարզատրումը փոխարինվում է չեղյալ հայտարարված պարզատրմամբ և սահմանված է որպես փոխարինող պարզատրում այն տրամադրելու ամսաթվի դրությամբ, ապա չեղյալ հայտարարված և նոր պարզատրումները հաշվառվում են այնպես, ինչպես եթե փոփոխությունը տեղի ունենար սկզբնական պարզատրման մեջ (ինչպես նկարագրված է նախորդ պարագրաֆում): Բաժնային գործիքներով մարվող պարզատրումների չեղյալ բոլոր հայտարարումները հաշվառվում է միևնույն ձևով:

ՀՀՄՍ 33.45
\$ՀՄՍ 2.7

Դեռևս չիրագործված օպցիոնների նոսրացնող ազդեցությունը արտացոլվում է լրացուցիչ բաժնետոմսերի նոսրացումում նոսրացված մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի հաշվարկում (այլ մանրամասները ներկայացված են Ծան. 12-ում):

Դրամական միջոցներով մարվող գործարքներ

Դրամական միջոցներով մարվող գործարքները սկզբնապես չափվում են իրական արժեքով տրամադրման ամսաթվի դրությամբ՝ օգտագործելով բինոմիալ մոդելը, որոնց մանրամասները ներկայացված են Ծան. 27-ում: Տվյալ իրական արժեքը ծախսագրվում է մինչև իրավունքի ծագման ժամկետը համապատասխան պարտավորության ճանաչման հետ զուգահեռ: Պարտավորությունը չափվում է իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում մինչև մարման ժամկետը ներառյալ, իսկ իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են աշխատակիցների հատուցումների գծով ծախսերում (տես՝ Ծան. 9.6):

\$ՀՄՍ 2.30
\$ՀՄՍ 2.32
\$ՀՄՍ 2.33

2.4 \$ՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրումը

Մեկնաբանություն

Ֆինանսական հաշվետվություններին կից այս ծանոթագրությունը ներկայացնում է \$ՀՄՍ-ներին անցնելու բացատրության մի տարբերակ, որն ընկերությունը կարող է ընտրել իր բացատրությունը ներկայացնելու նպատակով: Ներկայացված ձևը հիմնված է \$ՀՄՍ 1-ի Օրինակ 11-ի վրա: Այնուամենայնիվ, տվյալ օրինակում առաջարկված բացատրության ձևաչափը նպատակ չի հետապնդում և չի նկարագրում առաջին անգամ որդեգրելու հետ կապված բոլոր հնարավոր ճշգրտումները, որոնք ընկերությունները պետք է բացահայտեն:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.4 ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրումը (շարունակություն)

ՀՀՄՍ 1.23

2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա սույն ֆինանսական հաշվետվությունները առաջին ֆինանսական հաշվետվություններն են, որոնք Խումբը պատրաստել է ՖՀՄՍ-ներին համապատասխան: Նախորդ հաշվետու ժամանակաշրջանների, ներառյալ 2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները Խումբը պատրաստել է տեղական համընդհանուր ընդունված հաշվապահական ստանդարտների (տեղական ՀՀՀՄ) համաձայն:

Հետևաբար, Խումբը պատրաստել է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվություններ, որոնք կիրառվում են 2011թ.-ի դեկտեմբերի 31-ին կամ այդ ժամկետից հետո ավարտվող հաշվետու ժամանակաշրջանների նկատմամբ՝ 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտվող տարվա համար համեմատական ժամանակաշրջանների տվյալների հետ միասին այնպես, ինչպես նկարագրված է հաշվապահական հաշվառման քաղաքականությունում: Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Խմբի ֆինանսական վիճակի մասին սկզբնական հաշվետվությունը պատրաստվել է 2010թ.-ի հունվարի 1-ի՝ Խմբի կողմից ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ: Սույն Ծանոթագրությունում բացատրվում են 2010թ.-ի հունվարի 1-ի դրությամբ տեղական ՀՀՀՄ-ներով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը և 2010թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտվող տարվա տեղական ՀՀՀՄ-ներով նախկինում թողարկված ֆինանսական հաշվետվությունների՝ Խմբի կողմից վերահաշվարկման հիմնական ճշգրտումները:

Կիրառված ազատումները

ՖՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրումը» ստանդարտը առաջին անգամ որդեգրողներին ազատում է որոշակի ՖՀՄՍ-ների հետընթաց կիրառումից:

Խումբը կիրառել է հետևյալ ազատումները՝

- ▶ ՖՀՄՍ 3 «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ» ստանդարտը չի կիրառվել այն դուստր կազմակերպությունների ձեռքբերումների նկատմամբ, որոնք տեղի են ունեցել մինչև 2010թ.-ի հունվարի 1-ը և համաձայն ՖՀՄՍ-ների համարվում են ձեռնարկատիրական գործունեություն կամ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում մասնակցություն: Այս ազատման կիրառումը նշանակում է, որ ձեռքբերման ամսաթվի դրությամբ համապատասխան ակտիվների և պարտավորությունների պայմանական սկզբնական արժեքները, որոնք պետք է ճանաչվեն ՖՀՄՍ-ների համաձայն, հանդիսանում են տեղական ՀՀՀՄ-ների համաձայն սահմանված հաշվեկշռային արժեքները: Ձեռքբերման ամսաթվից հետո չափումն իրականացվում է ՖՀՄՍ-ներին համապատասխան: ՖՀՄՍ-ների համաձայն ճանաչման չափանիշներին չբավարարող ակտիվներն ու պարտավորությունները բացառվում են ֆինանսական վիճակի մասին ՖՀՄՍ-ներով սկզբնական հաշվետվությունից: Խումբը չի ճանաչել կամ բացառել նախկինում ճանաչված գումարները՝ որպես ՖՀՄՍ-ների համաձայն ճանաչման պահանջների արդյունք:

ՖՀՄՍ 1.91
ՖՀՄՍ 1.94(բ)-
(գ)

ՖՀՄՍ 1.94(է)-
(ը)

ՖՀՄՍ 1-ը ֆինանսական վիճակի մասին ՖՀՄՍ-ներով սկզբնական հաշվետվությունում պահանջում է նաև օգտագործել տեղական ՀՀՀՄ-ներով ճանաչված գույքի վրա հաշվեկշռային արժեքը (հաշվի առնելով գույքի վրա արժեզրկման և ոչ նյութական ակտիվների ճանաչման կամ ապաճանաչման ճշգրտումները): ՖՀՄՍ 1-ի համաձայն, Խումբը, ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ, իրականացրել է գույքի վրա արժեզրկման ստուգում: 2010թ.-ի հունվարի 1-ի դրությամբ գույքի վրա արժեզրկված չի եղել:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ

2.4 ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրումը (շարունակություն)

Մեկնաբանություն

Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ (ՖՀՄՍ 1-ի Հավելված Գ)

ՖՀՄՍ 1-ը թույլ է տալիս առաջին անգամ որդեգրողին որոշել հետընթաց չկիրառելի ՖՀՄՍ 3-ը մինչև ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթիվը տեղի ունեցած ձեռնարկատիրական գործունեության միավորումների նկատմամբ: Սակայն, դա չի նշանակում, որ այդպիսի ձեռնարկատիրական գործունեության միավորումներին վերաբերող բոլոր գումարները կարող են տեղափոխվել ֆինանսական վիճակի մասին սկզբնական հաշվետվություն, ընդհակառակը՝ նախկին ՀՀՀՄ-ներով ճանաչված ակտիվների և պարտավորությունների նկատմամբ կարող են պահանջվել որոշակի ճշգրտումներ: Օրինակ, ՖՀՄՍ 1-ում մանրամասն նկարագրվում է, թե գույքի ինչպիսի ճշգրտումներ են պահանջվում ազատումները կիրառելու դեպքում (ներառյալ՝ գույքի արժեզրկման հետ կապված ճշգրտումները):

Եթե առաջին անգամ որդեգրողը չի օգտագործում տվյալ ազատումը և վերաներկայացնում է որևէ ձեռնարկատիրական գործունեության միավորում ՖՀՄՍ 3-ի համաձայն, ապա այն պետք է վերաներկայացնի բոլոր հետագա ձեռնարկատիրական գործունեության միավորումները և պետք է կիրառի ՀՀՀՄ 27 (2008թ. -ին փոփոխված) ստանդարտը՝ նույն ամսաթվից սկսած:

ՖՀՄՍ 3-ը սահմանում է «ձեռնարկատիրական գործունեության միավորման» բացառիկ սահմանում: Այդ պատճառով, հնարավոր է, որ այն գործարքները, որոնք չեն համապատասխանում ձեռնարկատիրական գործունեության միավորմանը ՖՀՄՍ-ների համաձայն (օրինակ՝ ակտիվների ձեռքբերման գործարքներ), նախկին ՀՀՀՄ-ների համաձայն հաշվառվել են որպես ձեռնարկատիրական գործունեության միավորումներ: Հետևաբար, առաջին անգամ որդեգրողը պետք է վերաներկայացնի ցանկացած գործարք, որն այն հաշվառել է որպես ձեռնարկատիրական գործունեության միավորում նախկինում կիրառվող ՀՀՀՄ-ների համաձայն, սակայն չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում ՖՀՄՍ-ների համաձայն:

Ձեռնարկատիրական գործունեության միավորումների նկատմամբ ազատումը կարող է կիրառվել նաև նախկին ժամանակաշրջաններում ձեռքբերված ասոցիացված կազմակերպություններում ներդրումների և համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների նկատմամբ: Այնուամենայնիվ, եթե առաջին անգամ որդեգրողը նախընտրում է վերաներկայացնել ձեռնարկատիրական գործունեության միավորումները հետընթաց, ապա այն պետք է նաև վերաներկայացնի ասոցիացված կազմակերպություններում ներդրումների և համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների ձեռքբերման բոլոր այն գործարքները, որոնք տեղի են ունեցել հետընթաց վերահաշվարկման ամսաթվից սկսած:

- ▶ Խումբը հետընթաց չի կիրառել ՀՀՀՄ 21-ը ձեռնարկատիրական գործունեության միավորումներից առաջացող գույքի և իրական արժեքի ճշգրտումների նկատմամբ, որոնք տեղի են ունեցել մինչև ՖՀՄՍ-ների անցման ամսաթիվը: Իրական արժեքի նման ճշգրտումները և գույքի հաշվառվում են որպես մայր կազմակերպության ակտիվներ կամ պարտավորություններ, և ոչ թե որպես ձեռք բերված կազմակերպության ակտիվներ և պարտավորություններ: Այսպիսով, այդ ակտիվներն ու պարտավորությունները կամ արդեն արտահայտված են մայր կազմակերպության ֆունկցիոնալ արժույթով կամ արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածներ են և, հետևաբար, ոչ մի հետագա փոխարժեքային տարբերություններ չեն առաջանում: ՖՀՄՍ 1.92

Մեկնաբանություն

Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ՝ արտարժույթի փոխանակում իրական արժեքի ճշգրտումների և գույքի դեպքում (ՖՀՄՍ 1.92)

ՖՀՄՍ 1-ը նախատեսում է ՀՀՀՄ 21-ի հետընթաց կիրառման գծով ոչ պարտադիր ազատում այն ձեռնարկատիրական գործունեության միավորումներից առաջացող իրական արժեքի ճշգրտումների և գույքի նկատմամբ, որոնք առաջացել են մինչև ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթիվը: Եթե մայր կազմակերպությունը չի կիրառում ՀՀՀՄ 21-ը հետընթաց այդպիսի ճշգրտումների նկատմամբ, ապա այն դիտարկում է դրանք որպես սեփական ակտիվներ և պարտավորություններ և ոչ ձեռք բերվողի ակտիվներ և պարտավորություններ: Հետևաբար, այդ գույքի և իրական արժեքի ճշգրտումները կա՛մ ներկայացված են կազմակերպության ֆունկցիոնալ արժույթով, կա՛մ արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածներ են, որոնք արտացոլվում են նախկին ՀՀՀՄ-ներին համապատասխան կիրառված փոխարժեքով: Սույն ոչ պարտադիր ազատումը թույլ է տալիս առաջին անգամ որդեգրողին օգտվել անցումային դրույթներից, որոնք օգտագործվում են ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստող կազմակերպությունների կողմից՝ ՀՀՀՄ 21-ի տվյալ փոփոխությունն առաջին անգամ կիրառելիս:

- ▶ Ներդրումային գույք չհանդիսացող հողատարածքը և շենքերը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվառվել են տեղական ՀՀՀՄ-ների համաձայն 2008թ. -ի դեկտեմբերի 31-ին իրականացված գնահատման հիման վրա: Խումբը նախընտրել է այդ արժեքները դիտարկել որպես այդ ակտիվների ելակետային արժեքներ, քանի որ վերագնահատման ամսաթվի դրությամբ դրանք համադրելի էին իրական արժեքների հետ: ՖՀՄՍ 1.76

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

2.4 ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրումը (շարունակություն)

Մեկնաբանություն

Ելակետային արժեք՝ նախկինում կիրառվող ՀՀՄՍ-ների համաձայն վերագնահատում (ՖՀՄՍ 1.76)

Հետևյալ ակտիվների գծով նախկին ՀՀՄՍ-ների համաձայն վերագնահատումը կարող է կիրառվել որպես ելակետային արժեք՝ պայմանով, որ վերագնահատման ամսաթվի դրությամբ վերագնահատումը կարող է համադրվել ՖՀՄՍ-ների համաձայն իրական, սկզբնական կամ ամորտիզացված արժեքների հետ՝ ճշգրտված, օրինակ, ընդհանուր և հատուկ գների ինդեքսի փոփոխություններն արտացոլելու նպատակով.

- ▶ Հիմնական միջոցների միավոր,
- ▶ Սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումային գույք,
- ▶ Ոչ նյութական ակտիվներ, որոնք բավարարում են՝ (ա) ՀՀՄՍ 38-ի ճանաչման չափանիշներին և (բ) ՀՀՄՍ 38-ի վերագնահատման չափանիշներին:

- ▶ Հիմնական միջոցների որոշ միավորներ ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ չափվել են իրական արժեքներով: ՖՀՄՍ 1.75

Մեկնաբանություն

Ելակետային արժեք՝ հիմնական միջոցների իրական արժեք (ՖՀՄՍ 1.75)

Առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրող ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ կարող է հիմնական միջոցների միավորները չափել իրական արժեքով: Կարևոր է նշել, որ ՖՀՄՍ-ներից այս ոչ պարտադիր ազատումը դիտարկում է հիմնական միջոցների միավորները, այլ ոչ՝ ակտիվների դասերը և դասակարգումը: ՀՀՄՍ 16-ը չի նշում ճանաչման նպատակով չափման միավորների սահմանում, այսինքն՝ այն, ինչը կարող է հանդիսանալ հիմնական միջոցների միավոր: Հետևաբար, կազմակերպությանը հատուկ հանգամանքներից ելնելով, ճանաչման չափանիշներն օգտագործելուց անհրաժեշտ է կիրառել դատողություն: Այսպիսով, առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրող կազմակերպությունը կարող է կիրառել ելակետային արժեքի ազատումը կա՛մ մի քանի, կա՛մ բոլոր ակտիվների նկատմամբ:

- ▶ Խումբը նախընտրել է բացահայտել հետևյալ գումարները առաջընթաց՝ ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվից սկսած (ՖՀՄՍ-ները սովորաբար պահանջում են բացահայտել համապատասխան գումարները ընթացիկ և նախորդ չորս տարեկան ժամանակաշրջանների համար): (ա) սահմանված վճարումներով պլանի գծով պարտավորությունների ներկա արժեքը, պլանի ակտիվների իրական արժեքը և պլանում հավելուրդը կամ պակասուրդը, և (բ) փորձի վրա հիմնված ճշգրտումներ, որոնք առաջանում են պլանի պարտավորություններից և պլանի ակտիվներից: ՖՀՄՍ 1.711

Մեկնաբանություն

Աշխատակիցների հատուցումներ (ՖՀՄՍ 1.711)

ՀՀՄՍ 19.120Ա(Ժգ) ստանդարտը պահանջում է բացահայտել ընթացիկ և նախորդ չորս տարեկան ժամանակաշրջանների սահմանված վճարումներով պլանի գծով տեղեկատվությունը: Առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրողը կարող է նախընտրել կիրառել այս բացահայտումը առաջընթաց՝ ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվից սկսած (այսինքն՝ տրամադրել բացահայտում միայն ընթացիկ և համեմատական ժամանակաշրջանների համար): Խումբը նախընտրել է ճանաչել բոլոր ակտուարային օգուտներն ու վնասներն այն ժամանակ, երբ դրանք առաջանում են (ՀՀՄՍ 19.93): Եթե Խումբը ՀՀՄՍ 19.92-ի համաձայն նախընտրել կիրառել «միջանցքի» մոտեցումը և հետաձգել ակտուարային օգուտներն ու վնասները ապագայում ճանաչելու նպատակով, այն հնարավորություն կունենար անցնելու ամսաթվի դրությամբ զրոյացնել կուտակված բոլոր ակտուարային օգուտներն ու վնասները:

- ▶ Արտերկրյա բոլոր ստորաբաժանումների մասով արժույթի վերահաշվարկման կուտակային տարբերությունները համարվում են հավասար գրոյի 2010թ. -ի հունվարի 1-ի դրությամբ: ՖՀՄՍ 1.713

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.4 ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրումը (շարունակություն)

Մեկնաբանություն

Վերահաշվարկման կուտակային տարբերություններ (ՖՀՄՍ 1.7-13)

Առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրող կարող է չհետևել ՀՀՄՍ 21 ստանդարտի՝ արտերկրյա ստորաբաժանումների մասով վերահաշվարկման կուտակային տարբերությունները ճանաչելու պահանջներին (այսինքն՝ այնպիսի վերահաշվարկման կուտակային տարբերություններ, որոնք գոյություն են ունեցել ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ): Եթե առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրողը կիրառում է այս ազատումը, ապա.

(ա) արտերկրյա բոլոր ստորաբաժանումների վերահաշվարկման կուտակային տարբերությունները ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ համարվում են հավասար զրոյի,

և

(բ) ցանկացած արտերկրյա ստորաբաժանման հետագա օտարումից առաջացող օգուտը կամ վնասը պետք է բացառի մինչև ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվին առաջացած վերահաշվարկման տարբերությունները և պետք է ներառի դրանից հետո առաջացած վերահաշվարկման տարբերությունները:

Տվյալ ոչ պարտադիր ազատումը կիրառվում է վերահաշվարկման բոլոր կուտակային տարբերությունների նկատմամբ, որոնք առաջացել են արտերկրյա ստորաբաժանումների վերահաշվարկման արդյունքում, ներառյալ՝ համապատասխան հեջավորման օգուտները կամ վնասները: Համապատասխանաբար, մենք գտնում ենք, որ այս ոչ պարտադիր ազատումն ամբողջությամբ տեղին է կիրառել զուտ ներդրումների հեջավորման, ինչպես նաև դրանց հիմքում ընկած օգուտների և վնասների նկատմամբ:

- ▶ ՖՀՄՍ 2 «Բաժնետոմսերի վրա հիմնված վճարում» ստանդարտը չի կիրառվել բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գործարքների գծով բաժնային այն գործիքների նկատմամբ, որոնք տրամադրվել են 2002թ. Նոյեմբերի 7-ին կամ մինչև այդ ամսաթիվը, ոչ էլ կիրառվել է 2002թ. Նոյեմբերի 7-ից հետո տրամադրված բաժնային գործիքների նկատմամբ, որոնց նկատմամբ իրավունքները շնորհվել են մինչև 2010թ. հունվարի 1-ը: Դրամական միջոցներով մարվող բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գործարքների գծով խումբը չի կիրառել ՖՀՄՍ 2-ը այն պարտավորությունների հանդեպ, որոնք մարվել են մինչև 2010թ. հունվարի 1-ը: ՖՀՄՍ 1.72

Մեկնաբանություն

Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գործարքների գծով ազատումներ (ՖՀՄՍ 1.72)

Առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրող կազմակերպությանը խրախուսվում, բայց չի պարտադրվում կիրառել ՖՀՄՍ 2-ը բաժնային այն գործիքների նկատմամբ, որոնք տրամադրվել են 2002թ. Նոյեմբերի 7-ին կամ մինչև այդ ամսաթիվը, ինչպես նաև 2002թ. Նոյեմբերի 7-ից հետո տրամադրված բաժնային գործիքների նկատմամբ, որոնց համար իրավունքները շնորհվել են մինչև հետևյալ ամսաթվերից ամենաուշը. (ա) ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթիվ և (բ) 2005թ. հունվարի 1: Այնուամենայնիվ, եթե առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրող կազմակերպությունը նախընտրել է կիրառել ՖՀՄՍ 2-ը այդպիսի բաժնային գործիքների նկատմամբ, ապա այն կարող է դա անել, միայն եթե կազմակերպությունը իրապարակախորհեն բացահայտել է այդ բաժնային գործիքների իրական արժեքը ՖՀՄՍ 2-ում սահմանված չափման ամսաթվի դրությամբ: ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ դեռևս չմարված տրամադրված բաժնային գործիքների համար, որոնց նկատմամբ ՖՀՄՍ 2-ը չի կիրառվել, առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրող կազմակերպությունը պետք է բացահայտի այնպիսի տեղեկատվություն, որը ֆինանսական հաշվետվությունները օգտագործողներին հնարավորություն կտա հասկանալ գոյություն ունեցող բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գործարքների ընտրված և տևողությունը (ՖՀՄՍ 2-ի 44 և 45 պարբերություններ):

Եթե առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրող կազմակերպությունը փոփոխում է այն բաժնային գործիքների տրամադրման ժամկետները կամ պայմանները, որոնց նկատմամբ ՖՀՄՍ 2-ը չի կիրառվել, ապա կազմակերպությունը չպետք է կիրառի ՖՀՄՍ 2-ի համապատասխան պահանջները, եթե փոփոխությունը տեղի է ունեցել ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվից առաջ:

- ▶ Խումբը կիրառել է ՖՀՄՍ 4 «Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում» ՖՀՄՍ 1.79 մեկնաբանության անցումային դրույթները և գնահատել է բոլոր համաձայնությունները անցման ամսաթվի դրությամբ գործող պայմանների համաձայն:

Մեկնաբանություն

Վարձակալություն (ՖՀՄՍ 1.79-1.90)

ՖՀՄՍ 1-ը առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրող կազմակերպությանը թույլ է տալիս որոշել, արդյոք, ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ առկա համաձայնությունը պարունակում է վարձակալություն այդ ամսաթվի դրությամբ առկա փաստերի և հանգամանքների հիման վրա:

Եթե առաջին անգամ որդեգրողը համաձայն նախկին ՀՇՀՄ-ների համաձայնության մեջ վարձակալության առկայության վերաբերյալ կատարում է նույն որոշումը, ինչպես պահանջում են ՖՀՄՍ 4 և ՀՀՄՍ 17 ստանդարտները, ապա առաջին անգամ որդեգրողը կարող է օգտագործել նման սահմանման արդյունքները ՖՀՄՍ-ներին անցնելիս, նույնիսկ եթե հայտանիշերի առկայության սահմանման ամսաթիվը տարբերվում է ՖՀՄՍ 4 մեկնաբանության պահանջներից:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

2.4 ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրումը (շարունակություն)

ՖՀՄՍ 1.723

- ▶ Խումբը կիրառել է ՀՀՄՍ 23 «Փոխառության ծախսումներ» ստանդարտի անցումային դրույթները և կապիտալացրել է ակտիվների գծով այն փոխառության ծախսումները, որոնց շինարարությունը սկսվել է ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ կամ այդ ամսաթվից հետո:

Մեկնաբանություն

Փոխառության ծախսումներ (ՖՀՄՍ 1.723)

ՖՀՄՍ 1-ը տրամադրում է ոչ պարտադիր ազատում, որը կազմակերպությանը թույլ է տալիս կիրառել ՀՀՄՍ 23-ի անցումային դրույթները: ՀՀՄՍ 23-ի փոփոխությունը չի պահանջում ամբողջական վերաներկայացում ստանդարտն առաջին անգամ կիրառելիս: Դրա փոխարեն կազմակերպությունները պետք է սկսեն կապիտալացնել որակավորվող ակտիվների փոխառության ծախսումները, որոնց կապիտալացման մեկնարկի ամսաթիվը սկսվում է 2009թ. հունվարի 1-ին (կամ 2009թ. հունվարի 1-ից հետո) կամ ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ՝ կախված, թե որ ամսաթիվն է հանդիսանում ավելի ուշը: Այնուամենայնիվ, առաջին անգամ ՖՀՄՍ-ները որդեգրողը կարող է ընտրել ցանկացած ամսաթիվ մինչև հետևյալ ամսաթվերից ամենաուշը. 2009թ. հունվարի 1-ը կամ ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթիվը և կիրառել ՀՀՄՍ 23-ը բոլոր որակավորվող ակտիվների նկատմամբ, որոնց կապիտալացման մեկնարկի ամսաթիվը այդ ամսաթվին է կամ դրանից հետո: Սա նշանակում է, որ ստանդարտն ուժի մեջ մտնելու ամսաթվի դրությամբ անավարտ որակավորվող ակտիվներ ունեցող կազմակերպությունը ունի ընտրություն՝

- ▶ չկապիտալացնել արդեն կառուցման գործընթացում գտնվող ակտիվների փոխառության ծախսումները, և սկսել կապիտալացնել ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվից հետո կապիտալացման ենթակա ակտիվների փոխառության ծախսումները: Այն կպահանջի նախկին ՀՀՀՄՍ-ների շրջանակներում համապատասխան ակտիվների արժեքում ներառված կապիտալացված տոկոսի հակադարձում կամ
- ▶ կապիտալացնել բոլոր որակավորվող ակտիվների փոխառության ծախսումները՝ կիրառելով փոփոխված ստանդարտն ավելի վաղ ամսաթվից (ՀՀՄՍ 23.28):

Տվյալ հրատարակությունը պատրաստելու դրությամբ ՀՀՄՍԽ-ը ՖՀՄՍ 1-ի համար պլանավորում է առաջարկել պարզաբանումներ, որոնց համաձայն առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրող կազմակերպությունը ՀՀՄՍ 23-ը կիրառելու ամսաթվից սկսած՝

- ▶ պարտադրված չէ վերաներկայացնել փոխառության ծախսումների այն մասը, որը կապիտալացվել է նախկին ՀՀՀՄՍ-ների համաձայն և այդ ամսաթվի դրությամբ ներառվել ակտիվների հաշվեկշռային արժեքում,
- ▶ պետք է հաշվառի այդ ամսաթվից հետո առաջացած փոխառության ծախսումները, ներառյալ այն ծախսումները, որոնք առաջացել են ՀՀՄՍ 23-ի համաձայն որակավորվող ակտիվների կառուցման գործընթացում:

Քանի որ հետևյալը պարզաբանում է ՖՀՄՍ 1-ի պահանջները, մեր կարծիքով, առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրողը ներկայումս կարող է նախընտրել կիրառել վերոնշյալ մեկնաբանումներից յուրաքանչյուրը: ՀՀՄՍԽ-ն ցանկանում է այս պարզաբանումը ներկայացնել որպես «Տարեկան բարեփոխումներ նախագծի» մաս: Համապատասխան փոփոխությունը կատարելուց հետո կպահանջվի կիրառված հաշվառման մեթոդի պարզաբանում:

ՀՀՄՍ 23-ը սահմանում է փոխառության ծախսումները որպես փոխարժեքային տարբերություններ ներառող, որոնք առաջանում են արտարժույթով փոխառություններից՝ այնքանով, որքանով դրանք դիտվում են որպես տոկոսների գծով ծախսումների ճշգրտում: Խումբը ներառում է նաև փոխառություններին ուղղակիորեն վերագրվող փոխարժեքային տարբերությունները որպես կապիտալացման ենթակա տոկոսային ծախսերի ճշգրտում, եթե այդ գումարները նշանակալի են: Բացի այդ, հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կընդլայնվի փոխարժեքային տարբերությունները սահմանելու Խմբի մոտեցումը ներառելու համար:

Խումբը կշարունակել ծախսագրել կառուցման նախագծերին վերաբերող փոխառության ծախսումները, որոնք մեկնարկվել են մինչև 2010թ.-ի հունվարի 1-ը: Սակայն, նման ծախսումներ նախքան այդ ամսաթիվը չեն առաջացել:

- ▶ Խումբը 2010թ.-ի հունվարի 1-ի դրությամբ առկա չզննանշվող բաժնային գործիքները նախատեսել է որպես «վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ»:

ՖՀՄՍ 1.719(ա)

Մեկնաբանություն

Նախկինում ճանաչված ֆինանսական գործիքների դասի սահմանում (ՖՀՄՍ 1.719)

ՖՀՄՍ 1-ը նախատեսում է ոչ պարտադիր ազատում, որն առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրողներին ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ թույլ է տալիս նախատեսել ֆինանսական ակտիվները և պարտավորությունները որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող կամ վաճառքի համար մատչելի: Խումբը բաժնային չզննանշվող գործիքները նախատեսել է որպես վաճառքի համար մատչելի: Նախատեսման պահից սկսած ՀՀՄՍ 39-ի չափման պահանջները կիրառվում են հետընթաց: Ֆինանսական գործիքների որպես «վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ» հետընթաց նախատեսումը կազմակերպությունից պահանջում է, որ առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրողը ճանաչի իրական արժեքի կուտակային փոփոխությունները որպես սեփական կապիտալի առանձին տարր ՖՀՄՍ-ներով ֆինանսական վիճակի մասին սկզբնական հաշվետվությունում և տեղափոխի իրական արժեքի կուտակված այդ փոփոխությունները շահույթի կամ վնասի կազմում ակտիվի հետագա օտարման կամ արժեզրկման ժամանակ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ

2.4 ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրումը (շարունակություն)

Մեկնաբանություն

ՖՀՄՍ 1-ը նաև պարունակում է հետևյալ ոչ պարտադիր ազատումները, որոնք չեն կիրառվել Խմբի կողմից, սակայն մանրամասն ներկայացվում են «2011թ. ՖՀՄՍ-ների կիրառում» ուղեցույցի մեջ:

Ապահովագրական պայմանագրեր (ՖՀՄՍ 1.74)

Առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրողը կարող է կիրառել ՖՀՄՍ 4 ստանդարտի անցումային դրույթները: Ստանդարտը սահմանափակում է ապահովագրության պայմանագրերի մասով հաշվապահական հաշվառման քաղաքականությունը փոփոխելու ապահովագրողի իրավունքը «միայն այն դեպքում, երբ փոփոխությունը ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը ավելի տեղին է դարձնում օգտագործողների կողմից տնտեսական որոշումներ կայացնելու նպատակով և ոչ պակաս արժանահավատ կամ ավելի արժանահավատ և ոչ պակաս տեղին օգտագործողների կողմից տնտեսական որոշումներ կայացնելու նպատակով»:

Ապահովագրողը պետք է գնահատի ֆինանսական տեղեկատվության տեղին և արժանահավատ լինելը ՀՀՄՍ 8 ստանդարտի չափանիշների համաձայն: ՖՀՄՍ 4-ը նույնպես նախատեսում է որոշակի տեղեկատվության հետընթաց ամբողջական բացահայտումից ազատում, օրինակ՝ վնասների աճի վերաբերյալ տեղեկատվություն:

Ելակետային արժեք՝ ներդրումային գույք կամ ոչ նյութական ակտիվներ (ՖՀՄՍ 1.77)

Հիմնական միջոցների իրական արժեքի կամ վերագնահատված արժեքի որպես ելակետային արժեք ընտրությունը կարող է կիրառվել սկզբնական արժեքով չափվող ներդրումային գույքի և ոչ նյութական ակտիվների վրա, որոնք բավարարում են ՀՀՄՍ 38-ի ճանաչման և վերագնահատման պահանջներին:

Ելակետային արժեք՝ իրադարձություններով պայմանավորված (ՖՀՄՍ 1.78)

Այնպիսի իրադարձություններով պայմանավորված ելակետային արժեքը, ինչպիսիք են մասնավորեցումը կամ առաջնային հանրային առաջարկը, կարող է կիրառվել որպես ակտիվների և պարտավորությունների ելակետային արժեք իրադարձության ամսաթվի դրությամբ՝ այն պայմանով, որ իրադարձությունը տեղի է ունեցել մինչև կազմակերպության ՖՀՄՍ-ներով ֆինանսական վիճակի մասին սկզբնական հաշվետվության պատրաստման ամսաթիվը: Իրադարձության ամսաթվին հաջորդող ժամանակաշրջաններում ակտիվների և պարտավորությունների չափման համար կիրառվում են ՖՀՄՍ-ներ:

Ելակետային արժեք՝ նավթային և գազային ակտիվներ (ՖՀՄՍ 1.78A)

Առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրողները, որոնք նախկին ՀՀՀՄՍ-ների շրջանակներում նավթային և գազային գույքի հետախուզման և մշակման ծախսումները մշակման և արտադրության փուլերում հաշվառում են այնպիսի ծախսումային կենտրոններում, որոնք ընդգրկում են ընդարձակ աշխարհագրական տարածքներում գտնվող ամբողջ գույքը, կարող են ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ նավթային և գազային ակտիվների չափման համար ընտրել հետևյալ հիմքը՝

(ա) հետախուզման և գնահատման ակտիվները կազմակերպության նախկին ՀՀՀՄՍ-ների շրջանակներում որոշված գումարով, և

(բ) մշակման կամ արտադրության փուլերում գտնվող ակտիվները կազմակերպության նախկին ՀՀՀՄՍ-ների շրջանակներում ծախսումային կենտրոնի համար որոշված գումարով: Կազմակերպությունը պետք է այդ գումարը ծախսումային կենտրոնների հիմքում ընկած ակտիվների վրա բաշխի համամասնորեն՝ ըստ տվյալ ամսաթվի դրությամբ դրանց պաշարների ծավալների կամ պաշարների արժեքների:

«Բ» ենթակետի ազատումը կիրառող առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրողը պետք է բացահայտի այն փաստն ու մեթոդը, որի հիման վրա բաշխվել են նախկին ՀՀՀՄՍ-ների շրջանակներում սահմանված հաշվեկշռային արժեքները:

Նավթային և գազային ակտիվներում փոխհատուցվող արժեքից ավել չափվող ելակետային արժեքներից խուսափելու նպատակով այն նավթային և գազային ակտիվները, որոնք չափվել են այդ ազատումը կիրառելով, պետք է ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ ստուգվեն արժեզրկման համար:

Ելակետային արժեք՝ կարգավորվող սակագներով գործունեությունում օգտագործվող ակտիվներ (ՖՀՄՍ 1.78Բ)

Կարգավորվող սակագներով գործունեություն ունեցող առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրողը կարող է ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ որպես ելակետային արժեք օգտագործել հիմնական միջոցների հոդվածների և ոչ նյութական ակտիվների նախկին ՀՀՀՄՍ-ներով ճանաչված հաշվեկշռային արժեքները, որոնք ներառում են կարգավորվող սակագներով պայմանավորված ճշգրտումները: ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրողը ՀՀՄՍ 36-ի համաձայն պետք է կատարի արժեզրկման ստուգում բոլոր այն հոդվածների համար, որոնց նկատմամբ կիրառվել է ազատումը:

Աշխատակիցներին հատուցումներ (ՖՀՄՍ 1.710)

Համաձայն նախկին ՀՀՀՄՍ-ների՝ չճանաչված ակտուարային օգուտների կամ վնասների համար առաջին անգամ որդեգրողը կարող է նախընտրել ճանաչել բոլոր կուտակային ակտուարային օգուտներն ու վնասները բոլոր աշխատակիցներին հատուցումների պլաններին համար ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ: Այն թույլատրելի է, նույնիսկ եթե ապագայում առաջացող ակտուարային օգուտների և վնասների համար կազմակերպությունը կկիրառի «միջանցքի» մոտեցումը:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.4 ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրումը (շարունակություն)

Մեկնաբանություն

Դուստր կազմակերպություններում, համատեղ վերահսկվող և ասոցիացված կազմակերպություններում ներդրումներ (ՖՀՄՍ 1.Դ14-15)

ՖՀՄՍ-ների համապատասխան պատրաստված առաջին առանձին ֆինանսական հաշվետվություններում ներառված ֆինանսական վիճակի մասին սկզբնական հաշվետվությունում առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրող կազմակերպությունը, որը հետագայում դուստր կազմակերպություններում, համատեղ վերահսկվող և ասոցիացված կազմակերպություններում ներդրումները կչափի սկզբնական արժեքով, կարող է այդպիսի ներդրումները չափել սկզբնական արժեքով (ՀՀՄՍ 27-ի համաձայն սահմանված) կամ ելակետային արժեքով (նախկին ՀՀՄՍ-ներով իրական արժեք կամ հաշվեկշռային արժեք):

Դուստր կազմակերպությունների, ասոցիացված կազմակերպությունների և համատեղ ձեռնարկումների ակտիվներ և պարտավորություններ (ՖՀՄՍ 1.Դ16-17)

Եթե դուստր կազմակերպությունը դառնում է առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրող ավելի ուշ, քան իր մայր կազմակերպությունը, դուստր կազմակերպությունը պետք է իր ֆինանսական հաշվետվություններում չափի իր ակտիվները և պարտավորությունները կա՛մ մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված գումարով (բացառությամբ՝ համախմբման նպատակով իրականացված ճշգրտումների), կա՛մ ՖՀՄՍ 1-ի համաձայն սահմանված գումարով:

Եթե կազմակերպությունը դառնում է առաջին անգամ որդեգրող ավելի ուշ, քան նրա դուստր կազմակերպությունը (կամ ասոցիացված կազմակերպությունը կամ համատեղ ձեռնարկումը), կազմակերպությունը պետք է իր համախմբված ֆինանսական հաշվետվություններում չափի դուստր կազմակերպության (կամ ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման) ակտիվները և պարտավորությունները նույն հաշվեկշռային արժեքներով, ինչ դուստր կազմակերպության (կամ ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման) ֆինանսական հաշվետվություններում՝ կատարելով համախմբման և բաժնեմասնակցության մեթոդով հաշվառման ճշգրտումները, ինչպես նաև այն ձեռնարկատիրական միավորման արդյունքների գծով ճշգրտումները, որի արդյունքում կազմակերպությունը ձեռք է բերել դուստր կազմակերպությունը:

Բաղադրյալ ֆինանսական գործիքներ (ՖՀՄՍ 1.Դ18)

Եթե պարտավորության բաղադրիչն այլևս ուժի մեջ չէ ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ, ապա առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրող գործիքի պարտավորության և սեփական կապիտալի բաժիններն առանձնացնելու նպատակով կարող է ՀՀՄՍ 32-ը հետընթաց չկիրառել:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքով չափումը (ՖՀՄՍ 1.Դ20)

Առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրողը կարող է ՀՀՄՍ 39-ի «առաջին օրվա շահույթի» գծով պահանջները կիրառել հետևյալ եղանակներից որևէ մեկով.

- ▶ առաջընթաց՝ 2002թ. հոկտեմբերի 25-ից հետո ձեռնարկված գործարքների նկատմամբ, կամ
- ▶ առաջընթաց՝ 2004թ. հունվարի 1-ից հետո ձեռնարկված գործարքների նկատմամբ:

Որպեսզի առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրողը ազատվի այդպիսի գործարքների վերահաշվարկից, ՀՀՄՍ-ն 2010թ. դեկտեմբերին հրապարակեց փոփոխություններ, որոնք վերացնում են վերոնշյալ հաստատված ամսաթվերը՝ փոխարինվելով ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվով: Համապատասխանաբար, փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո, առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրողը կարող է կիրառել ՀՀՄՍ 39-ի՝ (կամ ՖՀՄՍ 9) պահանջները «առաջին օրվա շահույթի կամ վնասի» նկատմամբ առաջընթաց այն գործարքների համար, որոնք առաջացել են ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ կամ այդ ամսաթվից հետո: Այսպիսով, եթե առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրող կազմակերպությունը որոշում է չկիրառել ՀՀՄՍ 39-ի՝ (կամ ՖՀՄՍ 9) պահանջները «առաջին օրվա շահույթի կամ վնասի» նկատմամբ հետընթաց, ապա մինչև անցման ամսաթվից տեղի ունեցած գործարքները հետընթաց չեն վերահաշվարկվում:

Կազմակերպությունները պետք է կիրառեն նշված փոփոխությունները 2011թ. հուլիսի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է:

Հիմնական միջոցների արժեքում ներառված ապագործարկման գծով պարտավորություններ (ՖՀՄՍ 1.Դ21-Դ21Ա)

Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ հիմնական միջոցի սկզբնական արժեքը ներառում է հիմնական միջոցի ապատեղակայման, քանդման և իր զբաղեցրած տեղանքի վերականգնման սկզբնապես գնահատված ծախսումների գումարը, որոնց գծով կազմակերպության պարտականությունը առաջանում է կա՛մ միավորի ձեռքբերման ժամանակ, կա՛մ միավորի որոշակի ժամանակաշրջանում օգտագործման հետևանքով, որի նպատակը տարբեր է, քան այդ ժամանակաշրջանի ընթացքում պաշարների արտադրությունը:

Կազմակերպությունը հաշվառում է ապագործարկման գծով պարտավորությունների փոփոխությունները ՖՀՄՍ 4 1-ին համապատասխան, որը պահանջում է ապագործարկման և շրջակա միջավայրի վերականգնման կամ նման այլ պարտավորությունների որոշակի փոփոխությունները ճանաչել որպես ակտիվի սկզբնական արժեքի ավելացում կամ պակասեցում:

ՖՀՄՍ 1-ը նախատեսում է ոչ պարտադիր ազատում ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվից առաջ տեղի ունեցած փոփոխությունների գծով և սահմանում է այլընտրանքային մոտեցման հնարավորություն, եթե կիրառվում է այդ ազատումը:

Ապագործարկման գծով պարտավորությունները ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ չափվում են ՀՀՄՍ 37-ի համաձայն, իսկ պարտավորության առաջին անգամ առաջանալու ամսաթվի դրությամբ ակտիվի արժեքում գումարի գնահատումը կատարվում է ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.4 ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրումը (շարունակություն)

Մեկնաբանություն

Եթե առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրողը նավթային և գազային ակտիվների արտադրության և մշակման փուլերի համար օգտագործում է ելակետային արժեքը (ՖՀՄՍ 178Ա(բ)), ապա այդ կազմակերպության համար նախատեսվում է ևս մեկ ոչ պարտադիր ազատում: Ապագործարկման պարտավորությունը չափվում է ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ, և այդ գումարի և նախկին ՀՀՀՍ-ներով հաշվեկշռային արժեքի միջև ցանկացած տարբերություն ճանաչվում է չբաշխված շահույթում:

ՖՀՄՍ 12-ի համաձայն հաշվառվող ֆինանսական ակտիվներ կամ ոչ նյութական ակտիվներ (ՖՀՄՍ 1.722)

Երբ անհնար է ՖՀՄՍ 12-ի հետընթաց կիրառումը, ապա առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրող կազմակերպությունը կարող է կիրառել ՖՀՄՍ 12-ի անցումային դրույթները, որոնք թույլ են տալիս արժեզրկման համար ստուգված ֆինանսական և ոչ նյութական ակտիվների նախկին հաշվեկշռային արժեքներն օգտագործել որպես դրանց հաշվեկշռային արժեքներ ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ:

Հաճախորդներից ստացված ակտիվներ (ՖՀՄՍ 1.724)

Առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրողը կարող է կիրառել ՖՀՄՍ 18-ը առաջընթաց 2009թ. հուլիսի 1-ին կամ ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվին՝ կախված, թե որն է հանդիսանում ավելի ուշը: Այնուամենայնիվ, առաջին անգամ որդեգրողը կարող է կիրառել ՖՀՄՍ 18-ը մինչև ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթիվը՝ այդ ամսաթվին կամ դրանից հետո հաճախորդներից ստացված ակտիվների համար:

Բաժնային գործիքների միջոցով ֆինանսական պարտավորությունների մարումը (ՖՀՄՍ 1.725)

Առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրողը կարող է կիրառել ՖՀՄՍ 19-ը 2010թ. հուլիսի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան բոլոր ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է:

Էական գերսղած (ՖՀՄՍ 1.726)

Այն կազմակերպությունները, որոնք չեն կարողացել ներկայացնել ՖՀՄՍ-ներով ֆինանսական հաշվետվություններ էական գերսղածի պատճառով դիտարկվում են նույն կերպ, ինչպես առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրողները և կարող են ՖՀՄՍ-ներով իրենց առաջին ֆինանսական հաշվետվություններում օգտագործել իրական արժեքը որպես ելակետային արժեք այն ակտիվների և պարտավորությունների համար, որոնց վրա ազդել է էական գերսղածը: Կազմակերպությունը պետք է կիրառի համապատասխան փոփոխությունները 2011թ. հուլիսի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է:

Ֆինանսական գործիքների վերաբերյալ տեղեկատվության բացահայտում (ՖՀՄՍ 1.Ե3)

2010թ. հունվարին թողարկվել են ՖՀՄՍ 1-ի փոփոխությունները՝ «Առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրող կազմակերպության համար ՖՀՄՍ 7-ի համաձայն բացահայտվող համեմատական տեղեկատվության սահմանափակ կիրառման իրավունքով կամավոր ազատում»: Առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրողները կարող են օգտագործել նույն անցումային դրույթները, ինչպես կազմակերպությունները, որոնք արդեն իրենց ֆինանսական հաշվետվությունները պատրաստում են ՖՀՄՍ-ների համաձայն: Այդ անցումային դրույթները ներառված են ՖՀՄՍ 7-ի փոփոխությունների մեջ՝ «Ֆինանսական գործիքների վերաբերյալ բացահայտումների բարելավումներ» տեքստում: Այս ազատումը նախատեսված է մինչև 2009թ. դեկտեմբերի 1-ը ավարտվող համեմատական բոլոր ժամանակաշրջանների համար:

Կազմակերպությունները պետք է կիրառեն այս փոփոխությունները 2010թ. հուլիսի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է համապատասխան տեղեկատվության բացահայտման պայմանով: Խումբը չի օգտագործել տվյալ փոփոխությունները, քանի որ ՖՀՄՍ-ներով իր ֆինանսական վիճակի մասին սկզբնական հաշվետվությունը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ է:

ՖՀՄՍ 1-ը նաև պարունակում է հետևյալ պարտադիր ազատումները այլ ՖՀՄՍ-ների հետընթաց կիրառման համար, որոնք մանրամասն ներկայացված են մեր կողմից հրապարակված «ՖՀՄՍ-ների կիրառում 2011թ.» տեղեկատուի մեջ:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում (ՖՀՄՍ 1.Բ2-3)

Առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրող կազմակերպությունը պետք է ՀՀՄՍ 39 ստանդարտով նախատեսված ապաճանաչման պահանջները առաջընթաց կիրառի 2004թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո տեղի ունեցող գործարքների համար: Համապատասխանաբար, եթե առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրող կազմակերպությունը նախկին ՀՀՀՍ-ների համաձայն ապաճանաչել է ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ կամ ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ մինչև 2004թ. հունվարի 1-ը տեղի ունեցած գործարքի արդյունքում, այն չպետք է այդ ակտիվներն ու պարտավորությունները ճանաչի ըստ ՖՀՄՍ-ների (եթե միայն դրանք չեն բավարարում ճանաչման չափանիշներին ավելի ուշ տեղի ունեցած գործարքի կամ իրադարձության արդյունքում): Եթե առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրող կազմակերպությունը որոշել է հետընթաց կիրառել ՀՀՄՍ 39-ի ապաճանաչման չափանիշները կազմակերպության կողմից ընտրված ամսաթվից սկսած, ապա կարող է այդպես անել միայն, եթե անցյալ գործարքների արդյունքում ապաճանաչվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների նկատմամբ ՀՀՄՍ 39-ի կիրառման համար անհրաժեշտ տեղեկատվությունը ստացվել է այդ գործարքների մասով սկզբնական հաշվապահական հաշվառում իրականացնելու ժամանակ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

2.4 ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրումը (շարունակություն)

Մեկնաբանություն

Առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրողներին նման գործարքների հետընթաց վերահաշվարկից ազատելու նպատակով 2010թ. դեկտեմբերին ՀՀՄՍ-ն թողարկել է փոփոխություններ վերոնշյալ ֆիքսված ամսաթվերը հեռացնելու և այդ ամսաթվերը ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվով փոխարինելու նպատակով: Համապատասխանաբար, փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո, առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրող կազմակերպությունը կարող է կիրառել ՀՀՄՍ 39-ի (կամ ՖՀՄՍ 9) ապաճանաչման դրույթները առաջընթաց այն գործարքների համար, որոնք տեղի են ունեցել ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվին կամ դրանից հետո: Այդ պատճառով, եթե առաջին անգամ որդեգրողը նախընտրում է չկիրառել ՀՀՄՍ 39-ը (կամ ՖՀՄՍ 9) հետընթաց ապաճանաչման գործարքների համար, ապա ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվից առաջ տեղի ունեցած գործարքները չեն վերաներկայացվում հետընթաց:

Կազմակերպությունները փոփոխությունները պետք է կիրառեն 2011թ. հուլիսի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է:

Հեջի հաշվառում (ՖՀՄՍ 1.Բ4-6)

Կազմակերպությունները չեն կարող արտացոլել հեջավորման այնպիսի հարաբերություն, որը ՀՀՄՍ 39-ի համաձայն չի որակվում որպես հեջի հաշվառում: Սակայն, եթե կազմակերպությունը նախկին ՀՀՄՍ-ների համաձայն դասակարգել է զուտ դիրքը որպես հեջավորված հոդված, այն կարող է դասակարգել այդ զուտ դիրքի բաղկացուցիչ առանձին հոդվածը որպես հեջավորված հոդված ոչ ուշ, քան ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվին: Մինչև ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվով կատարված գործարքները չպետք է հետընթաց սահմանվեն որպես հեջավորման հարաբերություն:

Չվերահսկող բաժնեմասեր (ՖՀՄՍ 1.Բ7)

ՀՀՄՍ 27-ի հետևյալ պահանջները կիրառվում են առաջընթաց՝ ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվից սկսած (պայմանով, որ ՖՀՄՍ 3-ը չի կիրառվում հետընթաց նախորդ ժամանակաշրջանների ձեռնարկատիրական գործունեության միավորումների նկատմամբ)։

- ▶ ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունքները վերագրվում են չվերահսկող բաժնեմասերին, նույնիսկ, եթե դրա արդյունքում չվերահսկող բաժնեմասերն ունենում են բացասական մնացորդ,
- ▶ մայր կազմակերպության սեփականության բաժնեմասի փոփոխությունները հաշվառվում են որպես կազմակերպության սեփականատերերի հետ գործարքներ,
- ▶ դուստր կազմակերպության նկատմամբ վերահսկողության կորստի հաշվառման դեպքում կիրառվում է ՀՀՄՍ 27-ը:

Գնահատումներ

ՖՀՄՍ 1.14

2010թ. հունվարի 1-ի և 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գնահատումները համապատասխանում են այդ ամսաթվերի դրությամբ այն գնահատումներին, որոնք արվել են տեղական ՀՀՄՍ-ների համաձայն (հաշվապահական հաշվառման քաղաքականությունում տարբերությունների ճշգրտումներից հետո), բացառությամբ՝ հետևյալ հոդվածների, որոնց համար տեղական ՀՀՄՍ-ների համաձայն գնահատումներ չեն պահանջվել։

- ▶ թոշակային և այլ հետաշխատանքային հատուցումներ,
- ▶ բաժնեմասի վրա հիմնված վճարումների գործարքներ,
- ▶ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ՝ չգնանշված բաժնային գործիքներ:

ՖՀՄՍ 1.16

Խմբի կողմից կիրառված գնահատումները՝ այդ գումարները ՖՀՄՍ-ներին համապատասխան ներկայացնելու նպատակով, արտացոլում են 2010թ. հունվարի 1-ի, ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի և 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պայմանները:

Մեկնաբանություն

ՖՀՄՍ-ների, ինչպես նաև այլ ՀՀՄՍ-ների կիրառումը, պահանջում է գնահատումների օգտագործում: ՖՀՄՍ 1-ի համաձայն կազմակերպությանը կարող է անհրաժեշտ լինել սահմանել ՖՀՄՍ-ների համաձայն գնահատումներ ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ, ինչը չի պահանջվել այդ ամսաթվի դրությամբ նախկին ՀՀՄՍ-ների շրջանակներում: ՀՀՄՍ 10-ին համապատասխանելու նպատակով, ՖՀՄՍ-ի համաձայն սահմանված այդ գնահատումները պետք է արտացոլեն ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ գոյություն ունեցող պայմաններին: Մասնավորապես, ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ շուկայական գների, տոկոսադրույքների կամ արտարժույթի փոխանակման դրույքների գնահատումները պետք է արտացոլեն այդ ամսաթվի դրությամբ շուկայական պայմանները: Ուշադրություն պետք է դարձնել նախկին ՀՀՄՍ-ներով կիրառված այն գնահատումներին, որոնք ՖՀՄՍ-ների շրջանակներում ևս պահանջվում են և ճշգրտել քաղաքականության տարբերությունները, այլ ոչ թե ճշգրտել նախկին ՀՀՄՍ-ներով գնահատումները:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.4 ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրումը (շարունակություն)

Խմբի սեփական կապիտալի համաձայնեցումը 2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ (ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթիվ)

Ծան.	ՖՀՄՍ 2010թ.			ՖՀՄՍ 1.23, 24(ա)(i), 25	
	Տեղական ՀՀՀՄ	Վերաշափում ներ	հունվարի 1-ի դրությամբ		
	000, եվրո	000, եվրո	000, եվրո		
Ակտիվներ					
Ոչ ընթացիկ ակտիվներ					
Հիմնական միջոցներ	Ժբ, Ժգ, Ժդ	19,475	910	20,385	ՖՀՄՍ 1.76
Ներդրումային գույք		7,091	-	7,091	
Գործարկման ծախսումներ	Ա	300	(300)	-	ՖՀՄՍ 1.10(բ) ՖՀՄՍ 1.10(բ), ՖՀՄՍ 1.94(գ)
Ոչ նյութական ակտիվներ	Զ	2,114	-	2,114	ՖՀՄՍ 1.94(գ)
Ասոցիացված կազմակերպությունում ներդրումներ		600	-	600	
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	Բ	3,269	150	3,419	ՖՀՄՍ 1.719(ա)
Հետաձգված հարկային ակտիվներ		321	-	321	ՖՀՄՍ 1.10(ա)
		<u>33,170</u>	<u>760</u>	<u>33,930</u>	
Ընթացիկ ակտիվներ					
Պաշարներ		27,151	-	27,151	
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	Գ	24,399	1,138	25,537	ՖՀՄՍ 1.10(դ)
Կանխավճարներ		226	-	226	
Այլ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	Դ	-	137	137	
Դրամական միջոցներ և կարճաժամկետ ավանդներ	Ժե	11,066	-	11,066	
		<u>62,842</u>	<u>1,275</u>	<u>64,117</u>	
Ակտիվներ՝ դասակարգված որպես վաճառքի համար պահվող		-	-	-	
		<u>62,842</u>	<u>1,275</u>	<u>64,117</u>	
Ընդամենը ակտիվներ		96,012	2,035	98,047	
Սեփական կապիտալ և պարտավորություններ					
Սեփական կապիտալ					
Թողարկված կապիտալ		19,388	-	19,388	
Էմիսիոն եկամուտ		-	-	-	
Հետզնված բաժնետոմսեր		(774)	-	(774)	
Կապիտալի այլ պահուստներ	Ժ	228	338	566	ՖՀՄՍ 1.72
Չբաշխված շահույթ		25,112	(1,579)	23,533	ՖՀՄՍ 1.11
Սեփական կապիտալի այլ տարրեր	Բ, Դ, Ժա	(160)	288	128	ՖՀՄՍ 1.713(ա)
Վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբի պահուստներ		-	-	-	
		<u>43,794</u>	<u>(953)</u>	<u>42,841</u>	
Ընդամենը մայր կազմակերպության բաժնետերերին վերագրելի սեփական կապիտալ		43,992	(943)	43,049	
Չվերահսկող բաժնեմաս		198	10	208	
Ընդամենը սեփական կապիտալ		43,992	(943)	43,049	
Ոչ ընթացիկ պարտավորություններ					
Տոկոսային վարկեր և փոխառություններ		19,436	-	19,436	
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ		-	-	-	
Պահուստներ	Ը	185	(125)	60	ՖՀՄՍ 1.10(բ)
Պետական շնորհներ		1,300	-	1,300	
Հետաձգված եկամուտ		174	-	174	
Աշխատակիցներին հատուցումների գծով պարտավորություններ	Է	-	2,074	2,074	ՖՀՄՍ 1.10(ա)
Այլ պարտավորություններ		212	-	212	
Հետաձգված հարկային պարտավորություններ	Ժբ	(227)	1,507	1,279	ՖՀՄՍ 1.10(ա)
		<u>21,080</u>	<u>3,456</u>	<u>24,535</u>	
Ընթացիկ պարտավորություններ		21,080	3,456	24,535	
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	Ե	21,348	(749)	20,600	ՖՀՄՍ 1.10(բ)
Տոկոսային վարկեր և փոխառություններ		4,555	-	4,555	
Այլ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ	Դ	32	271	303	
Պետական շնորհներ		150	-	150	
Հետաձգված եկամուտ		190	-	190	
Շահութահարկի գծով պարտավորություններ		4,625	-	4,625	
Պահուստներ		40	-	40	
		<u>30,940</u>	<u>(478)</u>	<u>30,463</u>	
Վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներին ուղղակիորեն վերագրելի պարտավորություններ		-	-	-	
		<u>30,940</u>	<u>(478)</u>	<u>30,463</u>	
Ընդամենը պարտավորություններ		52,020	2,978	54,998	
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		96,012	2,035	98,047	

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.4 ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրումը (շարունակություն)

Խմբի սեփական կապիտալի համաձայնեցում 2010 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

Ծան.	ՖՀՄՍ 2010թ. հունվարի 1-ի դրությամբ			ՖՀՄՍ 1.23, 24(ա)(ii), 25	
	Տեղական ՀՀՀՄ	Վերաչափու մներ	000, եվրո		
Ակտիվներ					
Ոչ ընթացիկ ակտիվներ					
Հիմնական միջոցներ	ժբ, ժգ, ժդ	24,992	819	25,811	ՖՀՄՍ 1.76
Ներդրումային գույք		7,983	-	7,983	
Գործարկման ծախսումներ	Ա	200	(200)	-	ՖՀՄՍ 1.10(բ)
Ոչ նյութական ակտիվներ	Զ	2,461	-	2,461	
Ասոցիացված կազմակերպությունում ներդրումներ		681	-	681	
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	Բ	3,491	125	3,616	ՖՀՄՍ 1.10(դ)
Հետաձգված հարկային ակտիվներ		365	-	365	ՖՀՄՍ 1.10(ա)
		<u>40,173</u>	<u>744</u>	<u>40,917</u>	
Ընթացիկ ակտիվներ					
Պաշարներ		25,489	-	25,489	
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	Գ	23,212	1,078	24,290	ՖՀՄՍ 1.10(դ)
Կանխավճարներ		165	-	165	
Այլ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	Դ	-	153	153	ՖՀՄՍ 1.10(ա), ՖՀՄՍ 1.Բ4
Դրամական միջոցներ և կարճաժամկետ ավանդներ	Ժե	14,916	-	14,916	
		<u>63,782</u>	<u>1,231</u>	<u>65,013</u>	
Ակտիվներ՝ դասակարգված որպես վաճառքի համար պահվող		-	-	-	
		<u>63,782</u>	<u>1,231</u>	<u>65,013</u>	
Ընդամենը ակտիվներ		103,955	1,975	105,930	
Սեփական կապիտալ և պարտավորություններ					
Սեփական կապիտալ					
Թողարկված կապիտալ		19,388	-	19,388	
Էմիսիոն եկամուտ		80	-	80	
Հետգնված բաժնետոմսեր		(654)	-	(654)	
Կապիտալի այլ պահուստներ	Ժ	294	570	864	ՖՀՄՍ 1.72
Չբաշխված շահույթ		30,574	(1,719)	28,855	ՖՀՄՍ 1.11 ՖՀՄՍ 1.10(ա), (դ), ՖՀՄՍ 1.Բ4
Սեփական կապիտալի այլ տարրեր	Բ, Դ, ժա	(275)	293	18	
Վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբի պահուստներ		-	-	-	
Ընդամենը մայր կազմակերպության բաժնետերերին վերագրելի սեփական կապիտալ		49,407	(856)	48,551	
Չվերահսկող բաժնեմաս		728	12	740	
Ընդամենը սեփական կապիտալ		50,135	(844)	49,291	
Ոչ ընթացիկ պարտավորություններ					
Տոկոսային վարկեր և փոխառություններ		22,203	-	22,203	
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ		-	-	-	
Պահուստներ	Ը	202	(125)	77	ՖՀՄՍ 1.10(բ)
Պետական շտրիներ		1,400	-	1,400	
Հետաձգված եկամուտ		165	-	165	
Աշխատակիցների հատուցումների գծով պարտավորություններ	Է	-	2,494	2,494	ՖՀՄՍ 1.10(ա)
Այլ պարտավորություններ		232	-	232	
Հետաձգված հարկային պարտավորություններ	ժբ	(31)	1,278	1,247	ՖՀՄՍ 1.10(ա)
		<u>24,171</u>	<u>3,647</u>	<u>27,818</u>	
Ընթացիկ պարտավորություններ					
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	Ե	22,363	(1,082)	21,281	ՖՀՄՍ 1.10(բ)
Տոկոսային վարկեր և փոխառություններ		2,775	-	2,775	
Այլ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ	Դ	49	254	303	
Պետական շտրիներ		151	-	151	
Հետաձգված եկամուտ		200	-	200	
Շահութահարկի գծով պարտավորություններ		4,013	-	4,013	
Պահուստներ		98	-	98	
		<u>29,649</u>	<u>(828)</u>	<u>28,821</u>	
Վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներին ուղղակիորեն վերագրելի պարտավորություններ		-	-	-	
		<u>29,649</u>	<u>(828)</u>	<u>28,821</u>	
Ընդամենը պարտավորություններ		53,820	2,819	56,639	
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		103,955	1,975	105,930	

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ

2.4 ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրումը (շարունակություն)

Խմբի 2010 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների համաձայնեցում

Ծան.	ՖՀՄՍ 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			ՖՀՄՍ 1.23, 24(բ), 25	
	Տեղական ՀՀՀՍ 000, եվրո	Վերաչափու մներ 000, եվրո	Պրոյեկտային 000, եվրո		
Շարունակական գործունեություն					
Ապրանքների վաճառք	Գ	172,924	(60)	172,864	ՖՀՄՍ 1.10(դ)
Ծառայությունների մատուցում		16,537	-	16,537	
Հասույթ «Գուդ բոնուսների» մարումից		1,125	-	1,125	
Վարձակալությունից եկամուտ		1,377	-	1,377	
Հասույթ		191,963	(60)	191,903	
Վաճառքի ինքնարժեք	ժբ, ժգ, ժդ	(155,177)	(91)	(155,268)	
Համախառն շահույթ		36,786	(151)	36,635	
Այլ գործառնական եկամուտ		2,548	-	2,548	
Վաճառքի և բաշխման ծախսեր	Է	(12,983)	(19)	(13,002)	
Վարչական ծախսեր	Ժ	(13,250)	(232)	(13,482)	
Այլ գործառնական ծախսեր	Ս	(806)	100	(706)	ՖՀՄՍ 1.10(բ)
Գործառնական շահույթ		12,295	(302)	11,993	
Ֆինանսական ծախսեր		(1,223)	-	(1,223)	
Ֆինանսական եկամուտ		211	-	211	
Անոցիացված կազմակերպության շահույթի բաժնետնաս		81	-	81	
Շարունակական գործունեությունից շահույթ նախքան շահութահարկը		11,364	(302)	11,062	
Շահութահարկի գծով ծախս	ժբ	(3,544)	112	(3,432)	ՖՀՄՍ 1.10(ա)
Շարունակական գործունեությունից հաշվետու տարվա շահույթ		7,820	(190)	7,630	
Ընդհատված գործունեությունից հաշվետու տարվա վնաս շահութահարկից հետո		(188)	-	(188)	
Հաշվետու տարվա շահույթ		7,632	(190)	7,442	
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ					
Արտերկրյա ստորաբաժանման գործառնությունների վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերություններ		(117)	-	(117)	
Դրամական միջոցների հոսքերի հեջավորման զուտ շարժ	Դ	-	33	33	ՖՀՄՍ 1.10(ա), ՖՀՄՍ 1.Բ4
Շահութահարկի ազդեցություն	ժբ	-	(10)	(10)	ՖՀՄՍ 1.10(ա)
		-	23	23	
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով զուտ (վնաս)/ օգուտ	Բ	3	(25)	(22)	ՖՀՄՍ 1.10(դ)
Շահութահարկի ազդեցություն	ժբ	(1)	7	6	ՖՀՄՍ 1.10(ա)
		2	(18)	(16)	
Սահմանված վճարումներով հատուցումների պլանների գծով ակտուարային օգուտ/ (վնաս)	Է	-	(401)	(401)	ՖՀՄՍ 1.10(ա),
Շահութահարկի ազդեցություն	ժբ	-	120	120	ՖՀՄՍ 1.10(ա)
		-	(281)	(281)	
Հաշվետու տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ՝ զուտ հարկերից		(115)	(276)	(391)	
Հաշվետու տարվա ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ՝ զուտ հարկերից		7,517	(466)	7,051	

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

2.4 ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրումը (շարունակություն)

Մեկնաբանություն

Կազմակերպության ՖՀՄՍ-ներով առաջին ֆինանսական հաշվետվություններում ընդունելի չէր լինի հղում ներառել խմբի ավելի վաղ հրապարակված որևէ փաստաթղթին, որը կպարունակեր ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն և համապատասխան ծանոթագրություններ, քանի որ ՖՀՄՍ 1-ը պահանջում է այդպիսի տեղեկատվության բացահայտումը ներառել ՖՀՄՍ-ներով առաջին ֆինանսական հաշվետվություններում: Այնուամենայնիվ, կազմակերպությունները պետք է իմանան, որ պարտավոր չեն կրկնել ՖՀՄՍ-ների համապատասխան բացահայտվող ամբողջ լրացուցիչ տեղեկատվությունը յուրաքանչյուր միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում յուրաքանչյուր միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի համար առաջին հաշվետու տարվա շրջանակներում, որի համար պատրաստվում է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունը (ՖՀՄՍ 1.32-33): Ֆինանսական վիճակի մասին սկզբնական հաշվետվությունը և սեփական կապիտալի ու ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունքների կից համաձայնեցումները ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ պարտադիր են միայն առաջին միջանկյալ և առաջին տարեկան ֆինանսական հաշվետվությունների համար: Դրանց ներկայացումը պարտադիր չի երկրորդ և երրորդ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների համար, որոնք պահանջում են միայն սեփական կապիտալի և ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունքների համաձայնեցումներ համապատասխան եռամսյակի համար:

Առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրող կազմակերպությունը ՖՀՄՍ-ներ որդեգրելու տարում պետք է իր միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում ապահովի ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանը հասկանալու համար էական իրադարձությունների և գործարքների վերաբերյալ բավարար տեղեկատվություն: Քանի որ առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրողը նախկինում չի թողարկել ՖՀՄՍ-ներով տարեկան ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթ, ապա ՖՀՄՍ-ներով միջանկյալ հաշվետվություններում անհրաժեշտ կլինի բացահայտել ավելի շատ տեղեկատվություն, քան դա սովորաբար պահանջվում է ՀՀՄՍ 34-ի համաձայն պատրաստված միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների համար:

2010թ. -ի հունվարի 1-ի և 2010թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ սեփական կապիտալի և 2010թ. -ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունքների համաձայնեցում

ՀՀՄՍ 1.23, 25

Ա Գործարկման ծախսումներ

ՀՀՄՍ 1.10(բ)

Տեղական ՀՀՄՍ-ների համաձայն խումբը կապիտալացրել է Նոր դուստր կազմակերպությունների հիմնադրման ծախսումները և հաշվարկել մաշվածություն գծային մեթոդով հինգ տարվա ընթացքում: Քանի որ նման ծախսումները չեն բավարարում ՖՀՄՍ-ների համաձայն ակտիվի ճանաչմանը, այս ակտիվն ապաճանաչվում է՝ համապատասխան գումարը ներառելով չբաշխված շահույթի կազմում:

Բ Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

ՀՀՄՍ 1.10(դ)
ՀՀՄՍ
1.19(ա),
ՀՀՄՍ 1.29

Տեղական ՀՀՄՍ-ների համաձայն խումբը չգնանշվող բաժնետոմսերում ներդրումները հաշվառել է որպես սկզբնական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ: ՖՀՄՍ-ների համաձայն խումբն այդ ներդրումները դասակարգել է որպես վաճառքի համար մատչելի: ՖՀՄՍ-ները պահանջում են վաճառքի համար մատչելի ներդրումները չափել իրական արժեքով: ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ այդ ակտիվների իրական արժեքը կազմել է 1,040,000 եվրո, իսկ նախկինում կիրառվող տեղական ՀՀՄՍ-ներով հաշվեկշռային արժեքը՝ 890,000 եվրո: Գործիքի իրական արժեքի և տեղական ՀՀՄՍ-ներով հաշվեկշռային արժեքի միջև 150,000 եվրո գումարի տարբերությունը ճանաչվել է որպես սեփական կապիտալի առանձին տարր վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների ֆոնդի կազմում, հանած՝ համապատասխան հետաձգված հարկերը:

Գ Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

ՀՀՄՍ 1.10(դ)

Տեղական ՀՀՄՍ-ների համաձայն դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը բաղկացած է կրած վնասների որոշակի գումարից և ակնկալվող ապագա վնասների ընդհանուր գումարից: ՖՀՄՍ-ները թույլ չեն տալիս ակնկալվող ապագա վնասների գծով ճանաչել արժեզրկում, այդ պատճառով պահուստի գումարը վերականգնվել է՝ համապատասխան գումարը ներառելով չբաշխված շահույթում 2010թ. հունվարի 1-ի դրությամբ: 2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա շահույթի վրա ազդեցությունը ևս ճանաչվել է ՖՀՄՍ-ների համաձայն սահմանված տարվա շահույթում:

Դ Այլ ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

ՀՀՄՍ 1.10(ա),
ՀՀՄՍ 1.Բ4

Արտարժույթային ֆորվարդ պայմանագրերի իրական արժեքը ճանաչվում է ՖՀՄՍ-ների համաձայն և չէր ճանաչվել տեղական ՀՀՄՍ-ների համաձայն: Տեղական ՀՀՄՍ-ների շրջանակներում որպես հեջավորման գործիք նախատեսված պայմանագրերը ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ նախատեսվել են որպես հեջավորման գործիք կա՝ մ ակնկալվող ապագա վաճառքների դրամական հոսքերի հեջում, որի նկատմամբ խումբն ունի պայմանագրային պարտավորություն, կա՝ մ բարձր հավանականություն ունեցող մատակարարներից ակնկալվող գնումների դրամական հոսքերի հեջում: Համապատասխան ճշգրտումները ճանաչվել են որպես սեփական կապիտալի առանձին տարր դրամական միջոցների հոսքերի հեջավորման պահուստում:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ

2.4 ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրումը (շարունակություն)

Ե Առևտրային և այլ կոնցիտորական պարտքեր

ՖՀՄՍ 1.10(բ)

Տեղական ՀՀՀՄ-ների համաձայն առաջարկված շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, որին դրանք վերաբերում են՝ անկախ հայտարարման ամսաթվից: ՖՀՄՍ-ների համաձայն առաջարկված շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, որում հայտարարվել կամ վճարվել են կազմակերպության կողմից (որպես կանոն, երբ որոշումը հաստատվում է բաժնետերերի կողմից ընդհանուր ժողովում): Խմբի պարագայում շահաբաժինների հայտարարումը տեղի է ունենում հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո: Այսպիսով, այդ շահաբաժինների գծով ճանաչված պարտավորությունը ապաճանաչվել է՝ համապատասխան գումարը ներառելով չբաշխված շահույթի կազմում:

Զ Ոչ նյութական ակտիվներ

ՖՀՄՍ 1.10(բ),
ՖՀՄՍ 1.94(գ)

Տեղական ՀՀՀՄ-ների համաձայն Խումբը ճանաչում էր 57,000 եվրո գումարի անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվներ: Այդ ակտիվները պայմանավորված էին ձեռնարկատիրական գործունեության միավորումով, սակայն ՖՀՄՍ-ների համաձայն չեն բավարարում որպես առանձին ակտիվ ճանաչման չափանիշներին: Այս ոչ նյութական ակտիվները ՖՀՄՍ-ներին անցնելու ժամանակ վերադասակարգվել են գույքի կազմում: Գույքի ներառված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվության «Ոչ նյութական ակտիվներ» հոդվածում:

Է Սահմանված վճարումներով պլանի գծով պարտավորություններ

ՖՀՄՍ 1.10(ա)

Տեղական ՀՀՀՄ-ների համաձայն Խումբը ճանաչել է իր թոշակային պլաններին վերաբերող ծախսերը դրամարկղային սկզբունքի հիման վրա: Ըստ ՖՀՄՍ-ների՝ թոշակային պարտավորությունները ճանաչվում են ակտուարային մեթոդի հիման վրա: Թոշակային պարտավորությունները ճանաչվել են՝ համապատասխան գումարը ներառելով չբաշխված շահույթի կազմում:

Ը Պահուստներ

ՖՀՄՍ 1.10(բ)

Տեղական ՀՀՀՄ-ների համաձայն գլխամասի գործունեության կրճատման համար ստեղծվել է վերականգնվող գծով պահուստ: Այս գումարը չի բավարարում ՀՀՄՍ 37-ի համաձայն որպես պարտավորություն ճանաչման պայմաններին, այդ պատճառով գումարն ապաճանաչվել է՝ համապատասխան գումարը ներառելով չբաշխված շահույթի կազմում:

Թ Հետաձգված հարկ

ՖՀՄՍ 1.10(ա)

ՖՀՄՍ-ներին անցնելու համար կատարված ճշգրտումները հանգեցնում են համապատասխան ժամանակավոր տարբերությունների առաջացմանը: Ըստ Ծան. 2.3-ում ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության դրույթների՝ Խումբը պետք է հաշվառի այդ տարբերությունները: Հետաձգված հարկի գծով ճշգրտումները ճանաչվել են դրանց հիմքում ընկած գործարքներից կա՝ չբաշխված շահույթում, կա՝ որպես սեփական կապիտալի առանձին տարր:

Ժ Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ

ՖՀՄՍ 1.10(ա)

Տեղական ՀՀՀՄ-ների համաձայն Խումբը որպես ծախս ճանաչել է միայն երկարաժամկետ խրախուսման պլանների արժեքը: ՖՀՄՍ-ները պահանջում են համապատասխան գնահատման մոդելի միջոցով սահմանված բաժնետոմսերի օպցիոնների իրական արժեքը հաշվետվություններում ճանաչել իրավունքի շրոհման ժամանակաշրջանի ընթացքում: 232,000 եվրո գումարի լրացուցիչ ծախս ճանաչվել է 2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա շահույթում կամ վնասում: 338,000 եվրո գումարի բաժնետոմսերի օպցիոնները, որոնք տրամադրվել են մինչև 2010թ. հունվարի 1-ը, սակայն որոնց գծով իրավունքներ դեռևս չեն տրամադրվել, ճանաչվել են որպես սեփական կապիտալի տարր՝ համապատասխան ճշգրտումների հետ միասին չբաշխված շահույթում 2010թ. հունվարի 1-ի դրությամբ:

Ժա Արտարժույթի վերահաշվարկ

ՖՀՄՍ 1.713(ա)

Համաձայն տեղական ՀՀՀՄ-ների Խումբը ճանաչել է արտերկրյա ստորաբաժանումների վերահաշվարկման տարբերությունները սեփական կապիտալի առանձին տարրում: Արտերկրյա ստորաբաժանումներին վերաբերող արտարժույթի վերահաշվարկի կուտակված տարբերությունները 2010թ. հունվարի 1-ի դրությամբ պայմանականորեն սահմանվել են որպես զրո: Համապատասխան ճշգրտումները ճանաչվել են չբաշխված շահույթում:

Ժբ Հիմնական միջոցներ

ՖՀՄՍ 1.75

Խումբը ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ հիմնական միջոցների որոշ միավորներ նախընտրել է չափել իրական արժեքով: ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ 540,000 եվրո գումարի աճը (2010թ. դեկտեմբերի 31՝ 486,000 եվրո) ճանաչվել է հիմնական միջոցներում: Այս գումարը նույնպես ճանաչվել է չբաշխված շահույթի կազմում:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

2.4 ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրումը (շարունակություն)

Ժգ Հիմնական միջոցների մաշվածություն

ՖՀՄՍ 1.10(դ),
ՀՀՄՍ 16.43

ՀՀՄՍ 16-ը պահանջում է հիմնական միջոցների էական տարրերի մաշվածության առանձին հաշվարկ: Ինչպես նկարագրված է Ծան.2.3.9-ում տեխնիկական գնման գծով ծախսերը կապիտալացվում են և դրանց գծով հաշվարկվում է առանձին մաշվածություն մինչև հաջորդ տեխնիկական գնումը ընկած ժամանակաշրջանի ընթացքում: ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ հիմնական միջոցների էական տարրերի մաշվածության առանձին հաշվարկից ելնելով ճանաչվել է 620,000 եվրո գումարի ավելի քան հիմնական միջոցներում (2010թ. դեկտեմբերի 31՝ 558,000 եվրո)՝ գուտ կուտակված մաշվածությունից: Այս գումարը նույնպես ճանաչվել է չբաշխված շահույթի կազմում:

Ժդ Հիմնական միջոցների արժեզրկում

Տեղական ՀՀՄՍ-ների համաձայն երկարաժամկետ օգտակար ծառայություն ունեցող ակտիվները ստուգվում էին ըստ արժեզրկման հայտանիշների առկայության, երբ դեպքերը կամ իրադարձությունների փոփոխությունները ցույց են տալիս, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող էր գերազանցել օգտագործումից և վերջնական օտարումից ակնկալվող չգեղչված դրամական միջոցների հոսքերը: Արժեզրկման հայտանիշների առկայությունը գնահատելու նպատակով ակտիվները խմբավորվել են ամենացածր մակարդակում, որոնց համար որոշելի դրամական միջոցների հոսքերը անկախ էին այլ ակտիվների դրամական միջոցների հոսքերից: Եթե ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը գերազանցեր այդ ակտիվների խմբի ակնկալվող չգեղչված դրամական միջոցների հոսքերը, ապա արժեզրկումից վնասը կհաշվարկվեր որպես այդ ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքի և իրական արժեքի տարբերություն: Ինչպես նկարագրվում է Ծանոթագրություն 2.3.17-ում, ՖՀՄՍ-ների համաձայն դրամական միջոցների հոսքեր չառաջացնող ակտիվների արժեզրկումը, որոնք հիմնականում անկախ են այլ ակտիվների կամ ակտիվների խմբի դրամական միջոցների հոսքերից, գնահատվում են դրամաստեղծ միավորի մակարդակով՝ ելնելով դրամաստեղծ միավորի փոխհատուցվող արժեքից:

ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ մեթոդոլոգիայի փոփոխության արդյունքում Խումբը սահմանել է, որ դրամաստեղծ միավոր հանդիսացող Խմբի «հակահրդեհային սարքավորումների» հաշվետու սեզոնի մաս կազմող արտադրական ընկերության փոխհատուցվող գումարը ավելի քիչ էր, քան իր հաշվեկշռային արժեքը: Փոխհատուցվող գումարը հիմնված էր դրամաստեղծ միավորի օգտագործման արժեքի վրա՝ կիրառելով նախքան հարկումը 8% զեղչման դրույքաչափ: Արդյունքում, 2010թ. հունվարի 1-ի դրությամբ ճանաչվել է 250,000 եվրո գումարի արժեզրկման վնաս: Այս գումարը ևս ներառվել է չբաշխված շահույթում: Բացի այդ, 2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա մաշվածությունը նվազել է 25,000 եվրոյով:

Ժե Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Տեղական ՀՀՄՍ-ներից ՖՀՄՍ-ներին անցումը էական ազդեցություն չի ունեցել դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության վրա:

Մեկնաբանություն

Եթե ՖՀՄՍ-ներին անցնելու ընթացքում հայտնաբերվում են սխալներ, որոնք թույլ են տրվել նախկին ՀՀՄՍ-ները կիրառելիս, ապա սեփական կապիտալի կամ համապարփակ ֆինանսական արդյունքների ցանկացած ճշգրտում համաձայնեցման մեջ պետք է արտացոլվի որպես սխալների ճշգրտում և ոչ ՖՀՄՍ-ներին անցնելու ճշգրտում:

3. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ղեկավարությունից պահանջում է կիրառել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հասույթի, ծախսերի, ակտիվների և պարտավորությունների գումարների և պայմանական պարտավորությունների բացահայտման վրա հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Այնուամենայնիվ, տվյալ ենթադրությունների և գնահատականների անորոշությունը կարող է հանգեցնել այնպիսի արդյունքների, որոնք կպահանջեն էական ճշգրտում ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքների նկատմամբ ապագա ժամանակաշրջաններում:

Դատողություններ

Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառելիս ղեկավարությունը կատարել է հետևյալ դատողությունները, որոնք ունեցել են առավել էական ազդեցություն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների նկատմամբ:

ՀՀՄՍ 1.122

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

3. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ (շարունակություն)

Գործառնական վարձակալության գծով պարտավորվածություններ՝ Խումբը որպես վարձատու

Խումբը կնքել է գույքի վարձակալության առևտրային պայմանագրեր իր ներդրումային գույքի պորտֆելում: Խումբը համաձայնությունների ժամկետների և պայմանների գնահատման արդյունքում որոշել է, որ այն պահպանում է գույքի հետ կապված բոլոր էական ռիսկերն ու օգուտները և հաշվառում է տվյալ պայմանագրերը որպես գործառնական վարձակալություն:

Ընդհատված գործունեություն

2011թ. մարտի 1-ին Տնօրենների խորհուրդը հայտարարեց իր որոշումը օտարելու ռետինի արտադրության սեգմենտը՝ «Հոզ» ընկերությունը, որի հետևանքով այն դասակարգվել է որպես վաճառքի համար պահվող օտարման խումբ: Խորհուրդը գտնում է, որ դուստր կազմակերպությունը բավարարում է վաճառքի համար պահվող դասակարգմանը այդ ամսաթվի դրությամբ հետևյալ պատճառներով՝

- ▶ «Հոզ» կազմակերպությունը մատչելի է անմիջապես վաճառքի համար և կարող է վաճառվել հնարավոր գնորդներին իր ընթացիկ վիճակում,
- ▶ Խորհուրդն ունի «Հոզ» ընկերության վաճառքի ծրագիր և վարում է նախնական բանակցություններ հնարավոր գնորդի հետ: Եթե այդ բանակցությունների արդյունքում վաճառք տեղի չունենա, ապա մի շարք այլ հնարավոր գնորդներ արդեն որոշվել են,
- ▶ Խորհուրդն ակնկալում է, որ բանակցությունները և վաճառքը կավարտվեն մինչև 2012թ. փետրվարի 29-ը:

ՖՀՄՍ 5.7
ՖՀՄՍ 5.8

Ընդհատված գործունեության վերաբերյալ մանրամասները ներկայացված են Ծան. 11-ում:

Հատուկ նշանակության կազմակերպությունների համախմբում

2011թ. փետրվարին Խումբը և երրորդ կողմի գործընկերը հիմնել են կազմակերպություն, որը պետք է հողատարածք ձեռք բերի, կառուցի և շահագործի արտադրական հզորություններ հակահրդեհային սարքավորումների անվտանգությունը ստուգելու նպատակով: Խումբն այդ կազմակերպությունում ունի 20% բաժնեմաս: Այնուամենայնիվ, Խումբն ունի մեծամասնական ներկայացուցչություն կազմակերպության տնօրենների խորհրդում և պետք է հաստատի բոլոր հիմնական գործառնական որոշումները: Երբ սկսվեն գործառնականությունները, դրանք կօգտագործվեն միայն Խմբի կողմից: Տվյալ փաստերից և իրավիճակներից ելնելով, ղեկավարությունը եզրակացրել է, որ Խումբը վերահսկում է այդ կազմակերպությունը, այդ իսկ պատճառով համախմբում է այդ կազմակերպությունն իր ֆինանսական հաշվետվություններում: Բացի այդ, Խումբն արդյունավետորեն երաշխավորում է երրորդ կողմի օգուտները: Երրորդ կողմի գործընկերոջ բաժնեմասը գրանցված է որպես երկարաժամկետ վարկ և ներդրումների գծով շահույթը՝ որպես տոկոսային ծախս:

Գնահատումներ և ենթադրություններ

Հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ ապագային վերաբերող կարևոր ենթադրությունները և անորոշության գնահատման այլ կարևոր աղբյուրները, որոնք պարունակում են էական ռիսկ ճշգրտելու ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները հաջորդ ֆինանսական տարում, նկարագրված են ստորև: Խումբը հիմնել է իր ենթադրությունները և գնահատումները համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ առկա տվյալների հիման վրա: Ապագա զարգացումների վերաբերյալ գոյություն ունեցող հանգամանքները և ենթադրությունները, այնուամենայնիվ, կարող են փոխվել Խմբի վերահսկողությունից դուրս շուկայական փոփոխությունների կամ այլ հանգամանքների հետևանքով: Նման փոփոխությունները արտացոլվում են ենթադրություններում, երբ դրանք առաջանում են:

ՀՀՄՍ 1.125

Հիմնական միջոցների և ներդրումային գույքի վերագնահատում

Խումբը հաշվառում է իր ներդրումային գույքն իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ճանաչելով ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Բացի այդ, Խումբը հողատարածքները և շենքերը չափում է վերագնահատված արժեքներով՝ իրական արժեքի փոփոխությունները ճանաչելով այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Խումբը ներգրավել է անկախ գնահատող մասնագետների՝ որոշելու 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքները: Ներդրումային գույքի համար գնահատող կիրառել է գնահատման այնպիսի մեթոդ, որը հիմնվում է զեղչված դրամական միջոցների հոսքերի վրա, քանի որ տվյալ բնույթի գույքի համար բացակայում է շուկայական համեմատական տեղեկատվություն:

Ներդրումային գույքի սահմանված իրական արժեքն ամենազգայունն է գնահատված շահութաբերության, ինչպես նաև երկարաժամկետ պարապորդի գործակցի նկատմամբ: Ներդրումային գույքի իրական արժեքի որոշման համար օգտագործված հիմնական ենթադրությունները նկարագրված են Ծան. 14-ում:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

3. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ (շարունակություն)

Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Արժեզրկումն ամկա է, երբ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա փոխհատուցվող գումարը, որը հանդիսանում է վաճառքի համար անհրաժեշտ ծախսումներով նվազեցված իրական արժեքից և իր օգտագործման արժեքից առավելագույնը: Վաճառքի համար անհրաժեշտ ծախսումներով նվազեցված իրական արժեքի հաշվարկները հիմնված են նմանատիպ ակտիվների «անկախ կողմերի միջև գործարքներում» վաճառքի պարտավորեցնող գործարքների ամկա տվյալների կամ ակտիվի օտարմանը ուղղակիորեն վերագրվող ծախսումներով նվազեցված դիտարկելի շուկայական գների վրա: Օգտագործման արժեքի հաշվարկը հիմնված է գեղչված դրամական միջոցների հոսքերի մոդելի վրա: Դրամական միջոցների հոսքերը վերցվում են հաջորդող հինգ տարիների բյուջեից և չեն ներառում վերակազմավորման գործառնությունը, որի նկատմամբ Խումբը դեռևս չունի պարտավորվածություն կամ նշանակալի ապագա ներդրումները, որոնք կընդարձակեն ստուգվող դրամաստեղծ միավորների ակտիվների գործունեության արդյունքները: Փոխհատուցվող գումարը հանդիսանում է առավել զգայուն գեղչված դրամական միջոցների հոսքերի համար կիրառվող գեղչման տոկոսադրույքի, ինչպես նաև ակնկալվող դրամական ներհոսքերի և էքստրապոլյացիայի նպատակներով կիրառվող աճի տեմպի նկատմամբ: Տարբեր դրամաստեղծ միավորների փոխհատուցվող գումարը որոշելու համար կիրառվող հիմնական ենթադրությունները՝ ներառյալ զգայունության վերլուծությունը ներկայացված է Ծան. 17-ում:

Բաժնետոմսի վրա հիմնված վճարումների գծով գործարքներ

Խումբն աշխատակիցներին բաժնետոմսերով մարվող գործարքների սկզբնական արժեքը չափում է տրամադրման ամսաթվի դրությամբ բաժնային գործիքների իրական արժեքից ելնելով: Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներով գործարքների իրական արժեքի գնահատումը պահանջում է ավելի համապատասխան գնահատման մոդելի որոշում, որը կախված է տրամադրման ժամկետներից և պայմաններից: Տվյալ գնահատումը նաև պահանջում է գնահատման մոդելներում ավելի համապատասխան տվյալների որոշում՝ ներառյալ բաժնետոմսի օպցիոնի ակնկալվող ժամկետը, փոփոխականությունը, շահաբաժնի շահութաբերությունը և դրանց վերաբերյալ կատարված ենթադրությունները: Բաժնետոմսի վրա հիմնված գործարքների իրական արժեքի որոշման համար կիրառվող ենթադրությունները և մոդելները բացահայտված են Ծան. 27-ում:

Հարկեր

Գոյություն ունեն անորոշություններ, որոնք վերաբերում են հարկային կարգավորման երկակի մեկնաբանության, ՀՀՄՍ 12.88
ՀՀՄՍ 1.125 հարկային օրենսդրության փոփոխություններին և ապագա հարկվող շահույթի գումարին և ժամկետին: Լայնամասշտաբ միջազգային բիզնես հարաբերությունների և գոյություն ունեցող պայմանագրային համաձայնությունների երկարաժամկետ բնույթի ու բարդության հետևանքով փաստացի տվյալների և կատարված ենթադրությունների կամ այդ ենթադրությունների ապագա փոփոխությունների միջև տարբերությունները կարող են հանգեցնել արդեն ճանաչված հարկերի գծով եկամուտների և ծախսերի ապագա ճշգրտումների: Ողջամիտ գնահատումների հիման վրա Խումբը ստեղծում է պահուստներ իր գործունեության իրականացման համապատասխան տարածաշրջանների հարկային մարմինների կողմից իրականացված աուդիտի հնարավոր արդյունքների համար: Այդ պահուստների գումարը հիմնված է տարբեր գործունեության, ինչպիսիք են նախորդ հարկային ստուգման արդյունքները և հարկվող կազմակերպության ու հարկային մարմինների կողմից տարբեր հարկային մեկնաբանությունները: Մեկնաբանությունների նման տարբերությունները կարող են առաջանալ տարբեր խնդիրներից՝ կախված Խմբի ընկերության գործունեության վայրի պայմաններից: Քանի որ Խումբը գնահատում է դատավեճերի և հարկերի գծով ապագա դրամական արտահոսքերը քիչ հավանական, ուստի պայմանական պարտավորություն չի առաջացել:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են բոլոր չօգտագործված հարկային վնասների համար այնքանով, որքանով հավանական է, որ ամկա կլինի հարկվող շահույթ, որի նկատմամբ այդ վնասները կարող են օգտագործվել: Էական կառավարչական դատողություններ կպահանջվեն որոշելու այն հետաձգված հարկային ակտիվների գումարները, որոնք կարող են ճանաչվել՝ կախված ապագա հարկվող շահույթների մակարդակից և ժամկետներից, ինչպես նաև ապագա հարկային պլանավորման ռազմավարությունից:

Խումբն ունի փոխանցվող հարկային վնաս, որը կազմում է 427,000 եվրո (2010թ.՝ 1,198,000 եվրո, 2010թ. հունվարի 1՝ 1,494,000 եվրո): Տվյալ վնասները վերաբերում են այն դուստր կազմակերպություններին, որոնք ունեն վնասների պատմություն, դրանց ժամկետները չեն լրանում և չեն կարող օգտագործվել Խմբի այլ կազմակերպությունների հարկվող շահույթը հաշվանցելու նպատակով: Դուստր կազմակերպությունը չունի հարկային ժամանակավոր տարբերություններ և հարկային պլանավորման որևէ ամկա հնարավորություններ, որոնք կարող են մասնակիորեն աջակցել տվյալ հետաձգված հարկային ակտիվների ճանաչմանը:

Եթե Խումբը կարողանար ճանաչել բոլոր չճանաչված հետաձգված հարկային ակտիվները, ապա շահույթը կավելանար 128,000 եվրոյով: Հարկերի վերաբերյալ մանրամասները բացահայտված են Ծան. 10-ում:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

3. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ (շարունակություն)

Թոշակային հատուցումներ

Սահմանված հատուցումների թոշակային պլանները, այլ հետաշխատանքային առողջապահական հատուցումները և թոշակային պարտավորությունների ներկա արժեքը որոշվում են՝ կիրառելով ակտուարային գնահատումներ: Ակտուարային գնահատումը ներառում է տարբեր ենթադրությունների կիրառում, որոնք կարող են տարբերվել ապագայում փաստացի զարգացումներից: Դրանք ներառում են զեղչման դրույքի, ապագա աշխատավարձի աճի, մահացության մակարդակի և ապագա թոշակների աճի վերաբերյալ գնահատականների որոշումները: Գնահատման բարդության, տվյալ ենթադրությունների և դրանց երկարաժամկետ բնույթի հետևանքով սահմանված հատուցումների գծով պարտավորությունները առավել զգայուն են այդ ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ: Բոլոր ենթադրությունները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ:

Համապատասխան զեղչման դրույքը որոշելիս ղեկավարությունը հաշվի է առնում նվազագույնը AA վարկանիշ ունեցող համապատասխան արժույթով կորպորատիվ պարտատոմսերի տոկոսադրույքները՝ սահմանված հատուցումների պարտավորության ակնկալվող տևողությանը համապատասխան էքստրապոլացված մարումներով: Տվյալ պարտատոմսերը հետագայում վերանայվում են որակական տեսանկյունից և խոշոր կրեդիտային սփրեդեր (սփրեդ, որի դեպքում վաճառված օպցիոնը ավելի թանկ է գնված օպցիոնից) ունեցողները բացառվում են պարտատոմսերի բազմությունից, որոնց վրա հիմնվում է զեղչման դրույքը, քանի որ դրանք չեն ներկայացնում բարձրորակ պարտատոմսեր:

Մահացության մակարդակը հիմնվում է տվյալ երկրի հասարակությանը մատչելի մահացության աղյուսակների վրա: Աշխատավարձի և թոշակի ապագա բարձրացումները հիմնված են համապատասխան երկրի ակնկալվող գնաճի ապագա դրույքների վրա:

Ենթադրությունների վերաբերյալ մանրամասները ներկայացված են Ծան. 26-ում:

Պայմանական հատուցումների իրական արժեքի չափում

Ձեռնարկատիրական գործունեության միավորումներից առաջացող պայմանական հատուցումները չափվում են ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրական արժեքով՝ որպես ձեռնարկատիրական գործունեության միավորման մաս: Եթե պայմանական հատուցումը բավարարում է ածանցյալ գործիքի՝ հետևաբար նաև ֆինանսական պարտավորության սահմանմանը, ապա հետագայում այն վերաչափվում է իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Իրական արժեքը որոշվում է զեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա: Տվյալ առանցքային ենթադրությունը հաշվի է առնում գործունեության կատարողականի որոշակի նպատակակետային ցուցանիշների նվաճման հավանականությունը և զեղչման դրույքը:

Որպես «Էքստինգուիշեր Լիմիթեդ»-ի ձեռքբերման գնի բաշխման մաս, Խումբն առանձնացրել է պայմանական հատուցման տարր, որը ձեռքբերման ամսաթվի դրությամբ ունեցել է 714,000 եվրո իրական արժեք: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը վերաչափել է այդ հատուցման արժեքը մինչև 1,071,500 եվրո և դասակարգել որպես այլ ֆինանսական պարտավորություն (տես՝ Ծան. 5-ը և 16-ը):

Ֆինանսական գործիքների իրական արժեք

Եթե ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվառվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը հնարավոր չէ ստանալ ակտիվ շուկաներից, ապա դրանց իրական արժեքը որոշվում է՝ օգտագործելով գնահատման մեթոդներ, ներառյալ զեղչված դրամական հոսքերի մոդելը: Այս մոդելների սկզբնական տվյալները հնարավորության դեպքում վերցվում են դիտարկելի շուկաներից: Եթե չկան այդպիսի տվյալներ, ապա իրական արժեքը որոշելու համար կիրառվում է դատողություն: Դատողությունները ներառում են այնպիսի տվյալների դիտարկում, ինչպես օրինակ իրացվելիության ռիսկը, պարտքային ռիսկը և տատանումները: Այս գործոնների վերաբերյալ ենթադրությունների փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ հաշվառվող ֆինանսական գործիքների իրական արժեքների վրա (տես՝ Ծան. և 16.4-ը):

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

3. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ (շարունակություն)

Մշակման ծախսումներ

Մշակման ծախսումները կապիտալացվում են հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան՝ նշված Ծան. 2.3-ում: Ծախսումների նախնական կապիտալացումը հիմնված է ղեկավարության դատողությունների վրա՝ կապված տեխնոլոգիական և տնտեսական իրագործելիության հաստատման հետ, երբ ապրանքի մշակման նախագիծը հասել է նախանշված նպատակին՝ նախագծի կառավարման մոդելի համաձայն: Կապիտալացմանը ենթակա գումարների որոշման ժամանակ ղեկավարությունը անում է ենթադրություններ նախագծի ակնկալվող ապագա դրամական միջոցների ստացման, կիրառվող գեղջման դրույքների և օգուտների ստացման ժամանակաշրջանի վերաբերյալ: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապիտալացված մշակման ծախսումների հաշվեկշռային արժեքը կազմել է 2,178,000 եվրո (2010թ.՝ 1,686,000 եվրո, 2010թ. հունվարի 1՝ 1,420,000 եվրո):

Տվյալ գումարը ներառում է հակահրդեհային նորարարական համակարգի գծով մշակումներում նշանակալի ներդրումները: Նախքան շուկայում ներկայացնելը անհրաժեշտ է ձեռք բերել կարգավորող մարմինների կողմից թողարկված համապատասխան անվտանգության հավաստագիր: Ապրանքի նորարարական բնույթից ելնելով՝ գոյություն ունի անորոշություն այդ հավաստագիրը ձեռք բերելու գծով: Այնուամենայնիվ, Խումբը վստահ է, որ կստանա հավաստագիրը:

Ապագործարկման պահուստ

Որպես 2011թ.-ին «Էքստինգուիշեր Լիմիթեդ»-ի ձեռքբերումից ակտիվների և պարտավորությունների որոշակիացման և չափման մաս, Խումբը ճանաչել է ապագործարկման պարտավորությունների պահուստ, որոնք վերագրվում են «Էքստինգուիշեր Լիմիթեդ»-ի սեփականություն հանդիսացող գործարանին: Պահուստի իրական արժեքը որոշելիս օգտագործվում են ենթադրություններ և գնահատումներ՝ կապված գեղջման դրույքների, հիմնական միջոցների ապամոնտաժման գծով ակնկալվող ծախսումների և այդ ծախսումների ակնկալվող ժամանակահատվածի վերաբերյալ: Պահուստի հաշվեկշռային արժեքը 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1,221,000 եվրո (2010թ.՝ 0):

Եթե հաշվարկում կիրառվող նախքան հարկումը գեղջման տոկոսադրույքները լինեին գնահատվածից 10%-ով ավել, ապա պահուստի հաշվեկշռային արժեքը կլիներ 94,000 եվրոյով քիչ:

ԷԷՍԹ-ի գծով պահուստ

Խումբն էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների թափոնների (ԷԷՍԹ) շուկայում մասնակցության գծով ճանաչում է պարտավորությունների պահուստ Ծան. 2.3-ում ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն: Խումբը շուկայում մասնակցության մակարդակի վերաբերյալ կատարել է կանխատեսում հիմնվելով պատմական թափոնների, շուկայում մասնակցության սպասվող մակարդակի, թափոնացված ապրանքների որակի և լուծարման ակնկալվող ծախսումների վրա: Ապագա թափոնների գծով Խումբը կատարել է ենթադրություններ ըստ շուկայում ապրանքների ծառայության ժամկետների, կառուցվածքի և օտարման ծախսումների: ԷԷՍԹ-ի գծով պահուստի հաշվեկշռային արժեքը 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 149,000 եվրո (2010թ.՝ 53,000 եվրո, 2010թ. հունվարի 1՝ 31,000 եվրո):

Հատույթի ճանաչում՝ հաճախորդների խրախուսման ծրագրի «Գուդ բոնուսներ»

Խումբը գնահատել է «Գուդ բոնուսներ» ծրագրի շրջանակներում տրամադրված բոնուսների իրական արժեքը՝ կիրառելով վիճակագրական մեթոդներ: Մոդելում մոտեքային տվյալները ներառում են ակնկալվող մարման դրույքների վերաբերյալ ենթադրությունները, ապագայում մարման ենթակա ապրանքների ամբողջությունը և հաճախորդների նախընտրությունները: Քանի որ ծրագրի շրջանակներում թողարկված բոնուսների ժամկետները չեն ավարտվում նման գնահատումները ենթակա են էական անորոշության: Չմարված բոնուսների գծով պարտավորությունները 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են մոտավորապես 416,000 եվրո (2010թ.՝ 365,000 եվրո, 2010թ. հունվարի 1՝ 364,000 եվրո):

Մեկնաբանություն

ՀՀՄՍ 1.125-ը պահանջում է, որ կազմակերպությունը ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս բացահայտի կիրառված էական դատողությունները և էական գնահատումները, որոնք պարունակում են գնահատման անորոշության բարձր աստիճան: Բացահայտման պահանջները ավելին են, քան արդեն գոյություն ունեցող որոշ այլ ՀՀՄՍ-ներում, օրինակ՝ ՀՀՄՍ 37-ում:

Այս բացահայտումները ֆինանսական հաշվետվություններում ներկայացնում են տեղեկատվության շատ կարևոր աղբյուր, քանի որ դրանք ընդգծում են ֆինանսական հաշվետվությունների այն հատվածները, որոնք տեսանելի ապագայում հակված են փոփոխությունների: Այդ իսկ պատճառով ներկայացված ցանկացած տեղեկատվություն պետք է լինի բավականին մանրամասն՝ ֆինանսական հաշվետվություններ կարդացողին օգնելու հասկանալ էական հնարավոր փոփոխությունների ազդեցությունը:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

4. Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ

Թողարկված, բայց մինչև Խմբի ֆինանսական հաշվետվությունների թողարկման ամսաթիվը ուժի մեջ չմտած ստանդարտները ներկայացված են ստորև: Խումբն ակնկալում է, որ ցանկում ներկայացված թողարկված ստանդարտները և մեկնաբանություններն ազդեցություն կունենան Խմբի բացահայտումների, ֆինանսական վիճակի կամ արդյունքների վրա, երբ դրանք կիրառվեն ապագայում: Խումբը նախատեսում է կիրառել այդ ստանդարտներն այն ժամանակ, երբ դրանք ուժի մեջ կմտնեն:

ՀՀՄՍ 8.30
ՀՀՄՍ 8.31(դ)

ՀՀՄՍ 12 «Շահութահարկ»՝ հիմքում գտնվող ակտիվի վերականգնում

Փոփոխությունը պարզաբանել է իրական արժեքով չափվող ներդրումային գույքի հետաձգված հարկի որոշումը: Փոփոխությունը ներկայացնում է հերքվող ենթադրություն այն մասին, որ ՀՀՄՍ 40-ի համաձայն իրական արժեքի մոդելով չափվող ներդրումային գույքի հետաձգված հարկը պետք է որոշվի գույքի հաշվեկշռային արժեքը վաճառքով փոխհատուցելու հիմունքով: Բացի այդ, լրացումը ներկայացնում է հետևյալ պահանջը՝ ՀՀՄՍ 16-ի համաձայն վերագնահատման մոդելի արժեքով չափվող մշակվածության չենթարկվող ակտիվի հետաձգված հարկը միշտ չափվում է ակտիվի վաճառքի հիմքի վրա: Լրացումը ուժի մեջ է մտնում 2012թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ 7 «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ»՝ ապաճանաչման բացահայտման գծով ընդլայնված պահանջներ

Փոփոխությունը պահանջում է լրացուցիչ բացահայտում այն ֆինանսական ակտիվների վերաբերյալ, որոնք փոխանցվել՝ սակայն չեն ապաճանաչվել, որպեսզի Խմբի ֆինանսական հաշվետվություններ օգտագործողները հնարավորություն ունենան հասկանալ այդ ոչ ապաճանաչված ակտիվների և դրանց հետ կապված պարտավորությունների հարաբերությունները: Բացի այդ, լրացումը պահանջում է ապաճանաչված ակտիվներում շարունակական ներգրավվածության վերաբերյալ բացահայտումներ, որպեսզի օգտագործողներին թույլ տա գնահատել կազմակերպության ապաճանաչված ակտիվներում շարունակական ներգրավվածության բնույթը և դրա հետ կապված ռիսկերը: Փոփոխությունը ուժի մեջ է մտնում 2011թ. հուլիսի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Փոփոխությունն ազդեցություն ունի միայն բացահայտման վրա և չի ազդում Խմբի ֆինանսական վիճակի կամ գործունեության վրա:

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ՝ դասակարգումը և չափումը»

ՖՀՄՍ 9-ի թողարկումը արտացոլում է ՀՀՄՍ-ի աշխատանքների առաջին փուլը ՀՀՄՍ 39-ը փոխարինելու ուղղությամբ և կիրառվում է ՀՀՄՍ 39-ում սահմանված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման նկատմամբ: Ստանդարտը ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Հետագա փուլերում ՀՀՄՍ-ն կանդրադառնա հեջավորման հաշվառմանը և ֆինանսական ակտիվների արժեզրկմանը: Այս նախագծի ավարտը ակնկալվում է, որ տեղի կունենա 2011թ. -ի ընթացքում: ՖՀՄՍ 9-ի առաջին փուլի կիրառումը ազդեցություն կունենա Խմբի ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման վրա, բայց չի ազդի ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման վրա: Խումբը կհաշվարկի ազդեցությունը այլ փուլերի հետ միասին, երբ դրանք թողարկվեն և կներկայացնի ընդհանուր պատկերը:

Մեկնաբանություն

ՀՀՄՍ 8.30-ը պահանջում է բացահայտել այն ստանդարտները, որոնք հրապարակվել, բայց դեռ ուժի մեջ չեն մտել և որոնք ներկայացնում են հայտնի կամ ողջամիտ գնահատելի տեղեկատվություն, որպեսզի օգտագործողները հնարավորություն ունենան գնահատել նման ֆՀՄՍ-ներ կիրառելու ազդեցությունը կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա: Հետևաբար, Խումբը թվարկել է բոլոր այն ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել, և որոնք ողջամտորեն ակնկալվում է, որ ազդեցություն կունենան (անտեսելով այն փոփոխությունները, որոնք ոչ մի ազդեցություն չեն ունենա, ինչպես օրինակ ՀՀՄՍ 34-ը):

Առաջին անգամ ֆՀՄՍ-ներ որդեգրող կարող է կիրառել թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտն իր ֆՀՄՍ-ներով առաջին տարեկան ֆինանսական հաշվետվություններում՝ պայմանով, որ ստանդարտը թույլ է տալիս վաղ կիրառում: Կազմակերպությունները կարող են կիրառել այս մոտեցումը՝ նվազեցնելու հաշվապահական ստանդարտների փոփոխությունների քանակը ֆՀՄՍ-ների անցնելուն անմիջապես հաջորդող տարում:

Նշենք, որ վերոնշյալ բացահայտումը հիմնված է 2011թ. մարտի 31-ի դրությամբ թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտների վրա:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

5. Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ և չվերահսկող բաժնեմասերի ձեռքբերում

Ձեռքբերումներ 2011 թ.-ում

«Էքստինգուիշեր Լիմիթեդ»-ի ձեռքբերումը

2011 թ. մայիսի 1-ին Խումբը ձեռք է բերել «Էքստինգուիշեր Լիմիթեդ»-ի քվեարկող բաժնետոմսերի 80%-ը, որոնք գնանշված չեն արժեթղթերի շուկայում: Կազմակերպությունը գտնվում է Եվրոլենդում և մասնագիտացած է կրակապաշտպան սարքավորումների արտադրության մեջ: Խումբը ձեռք է բերել «Էքստինգուիշեր Լիմիթեդ» կազմակերպությունը, քանի որ այն էականորեն ընդլայնում է հակահրդեհային սեգմենտի իր հաճախորդներին տրամադրվող ապրանքների տեսականին:

\$ՀՄՍ 3.59
\$ՀՄՍ 3.Բ64(ա)
\$ՀՄՍ 3.Բ64(բ)
\$ՀՄՍ 3.Բ64(դ)
\$ՀՄՍ 3.Բ64(զ)

Խումբը ձեռքբերված ընկերությունում չվերահսկող բաժնեմասը նախընտրել է չափել իրական արժեքով:

Ձեռքբերված ակտիվներ և ստանձնած պարտավորություններ

«Էքստինգուիշեր Լիմիթեդ»-ի որոշելի ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը ձեռքբերման ամսաթվի դրությամբ կազմել է՝

	Ձեռքբերման պահին ճանաչված իրական արժեք	
	<small>\$ՀՄՍ 3.Բ64(թ) ՀՀՄՍ 7.40(դ)</small>	
	000, Եվրո	
Ակտիվներ		
Հիմնական միջոցներ (Ծան. 13)	7,042	
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	230	<small>ՀՀՄՍ 7.40(զ)</small>
Առևտրային դեբիտորական պարտքեր	1,736	
Պաշարներ	3,578	
Արտոնագրեր և լիցենզիաներ (Ծան. 15)	1,200	
	13,786	
Պարտավորություններ		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	(2,542)	
Պայմանական պարտավորությունների պահուստ (Ծան. 23)	(380)	
Անբարենպաստ գործառնական վարձակալության գծով պահուստ (Ծան. 23)	(400)	
Վերակազմավորման գծով պահուստ (Ծան. 23)	(500)	
Ապագործարկման ծախսումների գծով պահուստ (Ծան. 23)	(1,200)	
Հետաձգված հարկային պարտավորություններ	(1,511)	
	(6,553)	
	7,233	
Ընդամենը որոշելի գույտ ակտիվներ իրական արժեքով		
Իրական արժեքով չափվող չվերահսկող բաժնեմաս	(1,547)	<small>\$ՀՄՍ 3.Բ64(ժե)(i)</small>
Ձեռքբերումից առաջացող գույզվիլ (Ծան. 15)	2,231	
Ձեռքբերման դիմաց փոխանցված հատուցում		7,917

Առևտրային դեբիտորական պարտքերի իրական արժեքը կազմում է 1,736,000 Եվրո: Առևտրային դեբիտորական պարտքերի համախառն գումարը 1,754,000 Եվրո է: Առևտրային դեբիտորական պարտքերը չեն արժեզրկվել, և ակնկալվում է, որ պայմանագրային գումարները կհավաքագրվեն:

\$ՀՄՍ 3.Բ64(ե)

Նախքան ձեռքբերումը «Էքստինգուիշեր Լիմիթեդ»-ը որոշել էր դադարեցնել որոշ ապրանքատեսակների արտադրությունը (մանրամասները ներկայացված են Ծան. 23-ում): Ճանաչված վերակազմավորման պահուստը «Էքստինգուիշեր Լիմիթեդ»-ի ներկա պարտավորությունն էր անմիջապես ձեռնարկատիրական գործունեության միավորումից առաջ: Վերակազմավորման պլանի իրագործումը պայմանավորված չէր Խմբի կողմից այն ձեռք բերելու հետ:

2,231,000 Եվրո գույզվիլը ներառում է ակնկալվող սիներգիզմի գումարը, որն առաջանում է ձեռքբերումից և հաճախորդների ցուցակից, որն առանձին չի ճանաչվում: Գույզվիլն ամբողջությամբ բաշխված է հակահրդեհային սեգմենտի վրա: Ձեռքբերման պայմանագրային պայմաններից ելնելով՝ հաճախորդների ցուցակը հնարավոր չի առանձնացնել, այդ իսկ պատճառով այն չի համապատասխանում ոչ նյութական ակտիվ ճանաչվելու պահանջներին ՀՀՄՍ 38 «Ոչ նյութական ակտիվներ» ստանդարտի համաձայն: Ճանաչված գույզվիլը չի նվազեցվի շահութահարկի հաշվարկման նպատակով:

\$ՀՄՍ 3.Բ64(ժա)

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

5. Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ և չվերահսկող բաժնեմասերի ձեռքբերում (շարունակություն)

380,000 եվրո պայմանական պարտավորության պահուստը սահմանվել է ձեռքբերման ամսաթվի դրությամբ՝ առաջանալով այն մատակարարի պահանջից, որի կողմից մատակարարված ապրանքները մերժվել են, և Խումբը հրաժարվել էր կատարել վճարում ապրանքների սահմանված բնութագրերից շեղման պատճառով: Պահանջը դատական գործընթացի առարկա է և ակնկալվում է, որ կավարտվի 2012թ.-ի վերջին: Հաշվետու ամսաթվի դրությամբ պայմանական պարտավորության պահուստը վերագնահատվել է սահմանվել է 400,000 եվրո, որը հիմնված է ակնկալվող հնարավոր արդյունքների վրա (տես՝ Ծան. 23): Ծախսը ճանաչվել է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

ՖՀՄՍ 3.Բ64(դ)
ՖՀՄՍ 3.56(ա)

«Էքստինգուիշեր Լիմիթեդ»-ի չվերահսկող բաժնեմասի իրական արժեքը գնահատվել է՝ կիրառելով գեղչված եկամտի մոտեցումը: «Էքստինգուիշեր Լիմիթեդ»-ն արժեթղթերի շուկայում չգնանշված ընկերություն է, այդ իսկ պատճառով շուկայական տեղեկատվություն չկա: Իրական արժեքի գնահատումը հիմնված է հետևյալ տվյալների վրա՝

ՖՀՄՍ 3.Բ64
(ժե)(ii)

- ▶ ենթադրվող 14% գեղչման դրույք,
- ▶ վերջնական գումար, որը հաշվարկվում է՝ ելնելով ոլորտի երկուսից չորս տոկոս սանդղակում տատանվող երկարաժամկետ կայուն աճի տեմպի վրա, որն օգտագործվել է ապագա տարիների եկամուտը որոշելու նպատակով,
- ▶ վերաներդրման գործակիցը սահմանվել է եկամտի 60% -ի չափով:

Ձեռքբերումից հետո «Էքստինգուիշեր Լիմիթեդ»-ն ունեցել է 17,857,000 եվրո հասույթ և ապահովել 750,000 եվրո Խմբի մինչև հարկումը զուտ շահույթ: Եթե միավորումը տեղի ունենար տարվա սկզբին, շարունակական գործունեությունից հասույթը կլիներ 222,582,000 եվրո, իսկ Խմբի շարունակական գործունեությունից շահույթը կլիներ 12,285,000 եվրո:

ՖՀՄՍ 3.Բ64
(գ)(i)
ՖՀՄՍ 3.Բ64
(ժե)(ii)

Ձեռքբերման դիմաց հատուցում

Թողարկված բաժնետոմսեր՝ իրական արժեքով
Պայմանական հատուցման գծով պարտավորություն

Ընդամենը հատուցում

000, եվրո
7,203
714
7,917

ՖՀՄՍ 3.Բ64
(գ)(iv)
ՖՀՄՍ 3.Բ64
(գ)(iii)
ՀՀՄՍ 7.40(ա)

Ձեռքբերման արդյունքում առաջացած դրամական հոսքերի վերլուծություն՝

Ձեռքբերման գծով գործարքի ծախսումներ (ներառված գործառնական գործունեությունից դրամական հոսքերում)
Դուստր կազմակերպության հետ ձեռքբերված զուտ դրամական միջոցներ (ներառված ներդրումային գործունեությունից դրամական հոսքերում)
Բաժնետոմսերի թողարկման գծով գործարքի ծախսումներ (ներառված ներդրումային գործունեությունից դրամական հոսքերում՝ զուտ հարկերից)

Ձեռքբերումից զուտ դրամական հոսքեր

000, եվրո
(600)
230
(32)
(402)

ՀՀՄՍ 7.40(գ)

Խումբը թողարկել է 2,500,000 սովորական բաժնետոմսեր որպես «Էքստինգուիշեր Լիմիթեդ»-ի 80% բաժնեմասի ձեռքբերման դիմաց հատուցում: Բաժնետոմսերի իրական արժեքը Խմբի բաժնետոմսերի հրապարակվող գինն է ձեռքբերման ամսաթվի դրությամբ, որը կազմել է 2.88 եվրո յուրաքանչյուր բաժնետոմսի համար: Հետևաբար, տրամադրված հատուցման իրական արժեքը 7,203,000 եվրո է:

ՖՀՄՍ 3.Բ64
(գ)(iv)

600,000 եվրո գործարքի ծախսումները ծախս են ճանաչվել և ներառվել են վարչական ծախսերում: Բաժնային գործիքների թողարկման 32,000 եվրո կազմող համապատասխան ծախսումները ուղղակիորեն վերագրվել են սեփական կապիտալին որպես բացասական էմիսիոն եկամուտ:

ՖՀՄՍ 3.Բ64
(գ)(iv)
ՖՀՄՍ
3.Բ64(ժգ)

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ

5. Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ և չվերահսկող բաժնեմասերի ձեռքբերում (շարունակություն)

Պայմանական հատուցում

«Էքստինգուիշեր Լիմիթեդ»-ի նախկին սեփականատիրոջ հետ կնքած ձեռքբերման պայմանագրում կար պայմանական հատուցման գծով համաձայնություն: Պայմանագրի համաձայն «Էքստինգուիշեր Լիմիթեդ»-ի նախկին սեփականատիրոջ օգտին կվճարվի լրացուցիչ դրամական միջոցներ՝

ՖՀՄՍ 3.Բ64
(է)(ii)

ա) 675,000 եվրո, եթե կազմակերպության նախքան հարկումը շահույթը կազմի 1,000,000 եվրո ձեռքբերման ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում, կամ

ՖՀՄՍ 3.Բ64
(է)(iii)
ՖՀՄՍ 3.Բ64
(է)(i)

բ) 1,125,000 եվրո, եթե կազմակերպության նախքան հարկումը շահույթը կազմի 1,500,000 եվրո ձեռքբերման ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում:

Ձեռքբերման ամսաթվի դրությամբ պայմանական հատուցումը գնահատվել է 714,000 եվրո:

ՖՀՄՍ 3.58 (բ)(i)

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Էքստինգուիշեր Լիմիթեդ»-ի գործունեության հիմնական ցուցանիշները հստակորեն ցույց են տալիս, որ կազմակերպությունը կունենա (ա) կետում նշված շահույթը և հավանական է, որ (բ) կետում նշված շահույթը նույնպես կնվաճվի բիզնեսի ընդլայնման և իրականացված սիներգիկ շնորհիվ: Այսպիսով, պայմանական հատուցման իրական արժեքը ճշգրտվել է՝ փոփոխությունները արտացոլվելով շահույթում կամ վնասում:

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պայմանական հատուցումը աճել է 357,500 եվրոյով և կազմել 1,071,500 եվրո կատարված ենթադրությունների փոփոխության հետևանքով, որն արտացոլում է գեղչված կանխիկ վճարումների իրական արժեքը (տես՝ Ծան. 3): Իրական արժեքի այս ճշգրտումը ճանաչվել է վարչական ծախսերում:

Մեկնաբանություն

Պայմանական հատուցման դասակարգումը պահանջում է առանձին փաստերի և հանգամանքների վերլուծություն: Այն կարող է դասակարգվել որպես սեփական կապիտալ կամ որպես ֆինանսական պարտավորություն ՀՀՄՍ 32 և ՀՀՄՍ 39-ի համաձայն, որպես պահուստ ՀՀՄՍ 37-ի համաձայն կամ այլ ՖՀՄՍ-ներին համաձայն, որոնցից յուրաքանչյուրը կհանգեցնի սկզբնական ճանաչման և հետագա չափման տարբեր մեթոդների: Խումբն ուսումնասիրել է պայմանական հատուցման բնույթը և այն դասակարգել որպես ֆինանսական պարտավորություն, քանի որ Խումբն ունի վաճառողին դրամական միջոցներ վճարելու պայմանագրային պարտավորություն (ՀՀՄՍ 32.11): Հետևաբար, տվյալ պարտավորությունը պետք է վերաչափվի իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ (ՖՀՄՍ 3.58(բ)(i)):

Որպես ձեռնարկատիրական գործունեության միավորման մաս աշխատակիցներին կամ իրենց բաժնեմասերը վաճառող բաժնետերերին պայմանական վճարումները համարվում են միավորված կազմակերպությունում առանցքային աշխատակիցներին պահելու հաճախ օգտագործվող մեթոդ: Այդպիսի պայմանական վճարումների բնույթը, այնուամենայնիվ, հարկավոր է վերլուծել յուրաքանչյուր դեպքի համար առանձին, քանի որ ոչ բոլոր վճարումներն են համապատասխանում պայմանական հատուցման չափանիշներին և, հետևաբար, հաշվառվում են որպես առանձին գործարք: Օրինակ՝ այն պայմանական վճարումները, որոնք չեն վերաբերում աշխատակցի կողմից ծառայության մատուցմանը, դիտարկվում են որպես պայմանական հատուցում, մինչդեռ պայմանական վճարումները, որոնք չեղյալ են համարվում աշխատանքային պայմանագրի դադարեցման ժամանակ, դիտարկվում են որպես վարձատրություն: Տվյալ հարցի վերաբերյալ մանրամասն ուղեցույցերը ներկայացված են ՖՀՄՍ 3-ի Բ54-ից Բ55 պարբերություններում:

Երբ առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրողներն ընտրում են ՖՀՄՍ 1-ի ձեռնարկատիրական գործունեության միավորումների գծով ՖՀՄՍ 3-ի ամբողջական հետընթաց կիրառումից ազատումը, պետք է հիշել, որ իրենք դեռ պարտավոր են ճանաչել նախկին ձեռնարկատիրական գործունեության միավորումներին վերաբերող ցանկացած պայմանական հատուցման իրական արժեքը ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ, եթե դրանք չեն ճանաչվել նախկին ՀՀՄՍ-ների շրջանակներում: Պատճառն այն է, որ ՖՀՄՍ 1-ի ձեռնարկատիրական գործունեության միավորումների գծով ազատումը չի պարունակում հատուկ ցուցումներ, որ այն չեղյալ է հայտարարում ՀՀՄՍ 32-ի, ՀՀՄՍ 37-ի և ՀՀՄՍ 39-ի պահանջները, և կազմակերպությունը պայմանական հատուցումները հաշվառում է այս ստանդարտներից մեկով կամ մի քանիսով:

«Լայթբալբ Լիմիթեդ»-ում լրացուցիչ բաժնեմասի ձեռքբերում

2011թ. հոկտեմբերի 1-ին Խումբը ձեռք է բերել «Լայթբալբ Լիմիթեդ»-ի քվեարկության իրավունք ունեցող բաժնետոմսերից լրացուցիչ 7.4% բաժնեմաս՝ ավելացնելով սեփական բաժնեմասը մինչև 87.4%: 325,000 եվրո դրամական հատուցում վճարվել է չվերահսկող բաժնեմասերի բաժնետերերին: «Լայթբալբ Լիմիթեդ»-ի գուտակտիվների հաշվեկշռային արժեքը (բացառությամբ՝ սկզբնական ձեռքբերումից ճանաչված գուղվիլը) ձեռքբերման ամսաթվի դրությամբ կազմել է 1,824,000 եվրո, իսկ լրացուցիչ ձեռքբերված մասնակցության հաշվեկշռային արժեքը՝ 135,000 եվրո: Հատուցման և ձեռքբերված մասնակցության հաշվեկշռային արժեքների միջև 190,000 եվրո տարբերությունը ճանաչվել է սեփական կապիտալի չբաշխված շահույթում:

ՀՀՄՍ 27.30
ՀՀՄՍ 27.41(ե)

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

5. Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ և չվերահսկող բաժնեմասերի ձեռքբերում (շարունակություն)

Ձեռքբերումներ 2010թ. ընթացքում

2010թ. դեկտեմբերի 1-ին Խումբը ձեռք է բերել «Լայթբալբ Լիմիթեդ»-ի քվեարկության իրավունք ունեցող բաժնետոմսերի 80%-ը: Կազմակերպությունը գտնվում է Եվրոլենդում և մասնագիտացված է լամպերի արտադրության և վաճառքի մեջ:

\$ՀՄՍ 3.59
\$ՀՄՍ 3.Բ64(ա)
\$ՀՄՍ 3.Բ64(բ)
\$ՀՄՍ 3.Բ64(գ)
\$ՀՄՍ 3.Բ64(դ)

Խումբը ձեռք է բերել «Լայթբալբ Լիմիթեդ»-ը էլեկտրոնիկայի սեգմենտում իր ապրանքների տեսականին ընդլայնելու նպատակով:

«Լայթբալբ Լիմիթեդ»-ի որոշելի ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը ձեռքբերման ամսաթվի դրությամբ կազմել է՝

	Ձեռքբերման պահին ճանաչված իրական արժեք	
	000, Եվրո	
	<i>\$ՀՄՍ 3.Բ64(թ)</i>	
	<i>ՀՀՄՍ 7.40(դ)</i>	
Ակտիվներ		
Հողամասեր և շենքեր (Ծան. 13)	1,280	
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	50	<i>ՀՀՄՍ 7.40(գ)</i>
Առևտրային դեբիտորական պարտքեր	853	
Պաշարներ	765	
	2,948	
Պարտավորություններ		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	(807)	
Հետաձգված հարկային պարտավորություն	(380)	
Երաշխիքային սպասարկման գծով պահուստ	(50)	
	(1,237)	
Ընդամենը որոշելի զուտ ակտիվներ իրական արժեքով	1,711	
Չվերահսկող բաժնեմաս՝ չափվող ձեռք բերվողի որոշելի զուտ ակտիվների համամասնությամբ (20%)	(342)	<i>\$ՀՄՍ 3.Բ64(զ)(i)</i>
Ձեռքբերված զուտ ակտիվներ	1,369	
Ձեռքբերումից առաջացող գուդվիլ (Ծան. 15)	131	
Գնման դիմաց փոխանցված հատուցում	1,500	
Ձեռքբերումից դրամական հոսքեր		
Ձեռքբերված դուստր կազմակերպության դրամական միջոցներ	50	<i>\$ՀՄՍ 3.Բ64(զ)(i), ՀՀՄՍ 7.40(գ)</i>
Վճարված դրամական միջոցներ	(1,500)	<i>\$ՀՄՍ 3.Բ64(զ)(i), ՀՀՄՍ 7.40(ա), (բ)</i>
Զուտ դրամական արտահոսքեր	(1,450)	

Առևտրային դեբիտորական պարտքերի իրական արժեքը կազմում է 853,000 Եվրո, որը մոտավոր հավասար է դրանց համախառն հաշվեկշռային արժեքին: Առևտրային դեբիտորական պարտքերը չեն արժեզրկվել, և ակնկալվում է, որ պայմանագրային գումարներն ամբողջությամբ կհավաքագրվեն:

\$ՀՄՍ 3.Բ64(ը)

131,000 Եվրո գումարի չափով գուդվիլը կազմում է ձեռքբերումից ակնկալվող դրական ազդեցության իրական արժեքը: Գուդվիլն ամբողջությամբ բաշխվում է էլեկտրոնային սարքավորումների սեգմենտին: Ճանաչված գուդվիլը չի նվազեցվում շահութահարկի հաշվարկման նպատակով:

\$ՀՄՍ 3.Բ64(ե)

\$ՀՄՍ 3.Բ64(ի)

Ձեռքբերման ամսաթվից (2010թ. դեկտեմբերի 1) մինչև 2010թ. դեկտեմբերի 31-ը «Լայթբալբ Լիմիթեդ»-ի նախքան հարկումը զուտ շահույթը Խմբի շարունակական գործունեությունից շահույթի մեջ կազմել է 20,000 Եվրո, իսկ հասույթը՝ 450,000 Եվրո: Եթե միավորումը տեղի ունենար տարվա սկզբին, ապա Խմբի շարունակական գործունեությունից հասույթը կկազմեր 198,078,000 Եվրո, իսկ 2010թ. համար Խմբի շարունակական գործունեությունից շահույթը կկազմեր 7,850,000 Եվրո:

\$ՀՄՍ 3.Բ64

(զ)(i)

\$ՀՄՍ 3.Բ64

(զ)(ii)

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

5. Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ և չվերահսկող բաժնեմասերի ձեռքբերում (շարունակություն)

Մեկնաբանություն

ՖՀՄՍ 1-ը պարունակում է ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվից առաջ տեղի ունեցած ձեռնարկատիրական գործունեության միավորումների վերաներկայացումից ոչ պարտադիր ազատում: Այնուամենայնիվ, այս ազատումը չի տարածվում այն ձեռնարկատիրական գործունեության միավորումների վրա, որոնք տեղի են ունեցել ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվից հետո, բայց համեմատելի ժամանակաշրջանի ընթացքում: Այսպիսով, համեմատելի ժամանակաշրջանում ձեռնարկատիրական գործունեության միավորումները վերաներկայացվել են՝ ՖՀՄՍ 3-ին համապատասխանեցնելու նպատակով:

6. Համատեղ ձեռնարկումում մասնակցություն

Խումբն ունի 50% բաժնեմաս «Շաուերս Լիմիթեդ»-ում, որը համատեղ վերահսկվող կազմակերպություն է: Այն ՀՀՄՍ 31.56
գտնվում է Եվրոլենդում և արտադրում է հակահրդեհային սարքավորումներ: ՀՀՄՍ 31.57

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում համամասնորեն համախմբված Խմբի բաժինը համատեղ վերահսկվող ձեռնարկման ակտիվներում և պարտավորություններում 2011թ. դեկտեմբերի 31-ի և 2010թ. դեկտեմբերի 31-ի և 2010թ. հունվարի 1-ի դրությամբ, ինչպես նաև եկամուտներում և ծախսերում 2011թ. դեկտեմբերի 31-ի և 2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարիների համար ներկայացված են ստորև.

	2011թ. 000, Եվրո	2010թ. 000, Եվրո	2010թ. հունվարի 1-ի դրությամբ 000, Եվրո	ՀՀՄՍ 31.56
Համատեղ ձեռնարկման ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում մասնաբաժին՝				
Ընթացիկ ակտիվներ	1,613	1,404	1,507	
Ոչ ընթացիկ ակտիվներ	1,432	1,482	1,445	
Ընթացիկ պարտավորություններ	(112)	(551)	(450)	
Ոչ ընթացիկ պարտավորություններ	(510)	(500)	(505)	
Մեփական կապիտալ	2,423	1,835	1,997	
Համատեղ ձեռնարկման հասույթում և եկամտում մասնաբաժին՝				
Հասույթ	30,047	29,438		
Վաճառքի ինքնարժեք	(27,244)	(26,710)		
Վարչական ծախսեր	(1,319)	(1,293)		
Ֆինանսական ծախսեր	(102)	(100)		
Շահույթ նախքան շահութահարկը	1,382	1,335		
Շահութահարկի գծով ծախս	(794)	(778)		
Շարունակական գործունեությունից հաշվետու տարվա շահույթ	588	557		

2011 և 2010թթ. դեկտեմբերի 31-ի և 2010թ. հունվարի 1-ի դրությամբ համատեղ ձեռնարկումը չունի պայմանական պարտավորություններ կամ կապիտալ ներդրումների իրականացման գծով պարտավորվածություններ:

ՀՀՄՍ 31.54
ՀՀՄՍ 31.55

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

7. Ներդրում ասոցիացված կազմակերպությունում

Խումբն ունի 25% բաժնեմաս «Փաուեր Կորկս Լիմիթեդ»-ում, որը գտնվում է Եվրոլենդում և էլեկտրաջանակների համար արտադրում է հակահրդեհային սարքավորումներ: ՀՀՄՍ 28.37(ա)

«Փաուեր Կորկս Լիմիթեդ»-ը մասնավոր կազմակերպություն է, որի արժեթղթերը գնանշված չեն բորսայում: Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ամփոփ ֆինանսական տեղեկատվություն «Փաուեր Կորկս Լիմիթեդ»-ում Խմբի ներդրման վերաբերյալ՝ ՀՀՄՍ 28.37(ե)

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո	2010թ. հունվարի 1-ի դրությամբ 000, եվրո
Ասոցիացված կազմակերպության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում մասնաբաժին՝			<i>ՀՀՄՍ 28.37(բ)</i>
Ընթացիկ ակտիվներ	1,631	1,581	1,500
Ոչ ընթացիկ ակտիվներ	3,416	3,207	3,126
Ընթացիկ պարտավորություններ	(1,122)	(976)	(920)
Ոչ ընթացիկ պարտավորություններ	(3,161)	(3,131)	(3,106)
Սեփական կապիտալ	764	681	600
Ասոցիացված կազմակերպության հասույթում և եկամտում մասնաբաժին՝			
Հասույթ	8,323	8,160	
Շահույթ	83	81	
Ներդրման հաշվեկշռային արժեք	764	681	600

8. Սեզմենտների վերաբերյալ տեղեկատվություն

Կառավարչական նպատակներով Խումբը բաժանվել է գործառնական սեզմենտների՝ ելնելով իր կողմից արտադրվող ապրանքներից և մատուցվող ծառայություններից և բաղկացած է հետևյալ երեք հաշվետու սեզմենտներից. ՀՀՄՍ 1.138
ՖՀՄՍ 8.22(ա)
ՖՀՄՍ 8.22(բ)

- ▶ Հակահրդեհային սարքավորումների սեզմենտ, որն արտադրում և տեղադրում է հակահրդեհային սարքավորումներ, կրակմարիչներ, կրակապաշտպան սարքավորումներ:
- ▶ Էլեկտրոնիկայի սեզմենտ, որը մատակարարում է էլեկտրոնային սարքավորումներ պաշտպանության ոլորտին, ավիացիային, էլեկտրաէներգիայի անվտանգության շուկաներին և տնային տնտեսություններին: Տվյալ սեզմենտը առաջարկում է ապրանքներ և ծառայություններ էլեկտրոնիկայի, անվտանգության, ջերմային և էլեկտրական էներգիայի ոլորտներին:
- ▶ Ներդրումային գույքի սեզմենտ, որը վարձակալության է հանձնում Խմբի սեփականություն հանդիսացող գրասենյակներ և արտադրական տարածքներ, որոնք չեն օգտագործվում Խմբի կողմից:

Վերոնշյալ հաշվետու սեզմենտների ձևավորման նպատակներով գործառնական սեզմենտները չեն միավորվել:

Ղեկավարությունը առանձին-առանձին է իրականացնում յուրաքանչյուր ստորաբաժանման գործունեության գործառնական արդյունքների մոնիտորինգ ռեսուրսների տեղաբաշխման վերաբերյալ որոշումներ կայացնելու և սեզմենտների գործունեության արդյունքների գնահատման նպատակով: Սեզմենտների գործունեության արդյունքները գնահատվում են գործառնական շահույթի կամ վնասի հիման վրա և գնահատումն իրականացվում է համախմբված ֆինանսական հաշվետվություններում գործառնական շահույթի և վնասի գնահատմանը համապատասխան: Այնուամենայնիվ, Խմբի ֆինանսական գործունեությունը (ներառյալ՝ ֆինանսական ծախսերը և եկամուտները) և շահութահարկը դիտարկվում են ամբողջ Խմբի տեսանկյունից և չեն բաշխվում ըստ գործառնական սեզմենտների: ՖՀՄՍ 8.28(բ)
ՀՀՄՍ 8.27(ա)

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

8. Սեզմենտների վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)

Գործառնական սեզմենտների միջև գործարքների գները սահմանվում են «անկախ կողմերի» գործարքների հիմունքով, այնպես ինչպես երրորդ կողմերի հետ նմանատիպ գործարքներում:

2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար	Հակահրդեհային սարքավորումներ	Էլեկտրոնիկա	Ներդրումային գույք	Ընդամենը սեզմենտներ	Ճշգրտումներ և բացառումներ	Համախմբված	
	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	
Հասույթ							
Արտաքին հաճախորդներ	139,842	69,263	1,404	210,509	–	210,509	ՖՀՄՍ 8.23(ա)
Միջսեզմենտային	–	7,465	–	7,465	(7,465)	–	ՖՀՄՍ 8.23(բ)
Ընդամենը հասույթ	139,842	76,728	1,404	217,974	(7,465)	210,509	
Ֆինանսական արդյունքներ							
Մաշվածություն և ամորտիզացիա	(3,533)	(389)	–	(3,922)	–	(3,922)	ՖՀՄՍ 8.23(ե)
Գուդվիլի արժեզրկում (Ծան. 17)	–	(200)	–	(200)	–	(200)	ՖՀՄՍ 8.23(ե)
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների արժեզրկում (Ծան. 9.3)	(111)	–	–	(111)	–	(111)	
Ասոցիացված կազմակերպությունում շահույթի բաժնեմաս (Ծան. 7)	83	–	–	83	–	83	ՖՀՄՍ 8.23(զ)
Սեզմենտի շահույթ Գործառնական ակտիվներ	10,475	2,968	321	13,764	(1,859)	11,905	ՖՀՄՍ 8.23
Գործառնական պարտավորություններ	58,696	44,814	18,592	122,102	18,926	141,028	ՖՀՄՍ 8.23
Այլ բացահայտումներ	18,309	7,252	4,704	30,265	46,163	76,428	ՖՀՄՍ 8.23
Այլ բացահայտումներ							
Ասոցիացված կազմակերպությունում ներդրումներ	764	–	–	764	–	764	ՖՀՄՍ 8.24(ա)
Կապիտալ ծախսումներ	18,849	2,842	1,216	22,907	–	22,907	ՖՀՄՍ 8.24(բ)

Միջսեզմենտային հասույթները բացառվում են համախմբման ժամանակ և արտացոլվում «ճշգրտումներ և բացառումներ» սյունյակում: Բոլոր այլ ճշգրտումներն ու բացառումները արտացոլված են հետագայում մանրամասն ներկայացվող համաձայնեցումներում:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

8. Սեզմենտների վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)

2010թ.

դեկտեմբերի

31-ին ավարտվող տարվա համար

	Հակահրդեհային սարքավորումներ	Էլեկտրոնիկա	Ներդրումային գույք	Ռետինե սարքավորումներ (ընդհատված գործունեություն)	Ընդամենը սեզմենտներ	Ճշգրտումներ և բացառումներ	Համախմբված	
	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	
Հասույթ								
Արտաքին հաճախորդներ	123,905	66,621	1,377	45,206	237,109	(45,206)	191,903	\$ՀՄՍ 8.23(ա)
Միջսեզմենտային Ընդամենը հասույթ	–	7,319	–	–	7,319	(7,319)	–	\$ՀՄՍ 8.23(բ)
	123,905	73,940	1,377	45,206	244,428	(52,525)	191,903	
Ֆինանսական արդյունքներ								
Մաշվածություն և ամորտիզացիա	(2,784)	(472)	–	324	(2,932)	(324)	(3,256)	\$ՀՄՍ 8.23(ե)
Հիմնական միջոցների արժեզրկում (Ծան. 13)	(301)	–	–	–	(301)	–	(301)	\$ՀՄՍ 8.23(թ)
Լսողիացված կազմակերպությունում շահույթի բաժնետնաս (Ծան. 7)	81	–	–	–	81	–	81	\$ՀՄՍ 8.23(է)
Սեզմենտի շահույթ	6,449	5,396	314	326	12,485	(1,423)	11,062	\$ՀՄՍ 8.23
Գործառնական ակտիվներ	41,711	40,409	9,887	11,712	103,719	2,211	105,930	\$ՀՄՍ 8.23
Գործառնական պարտավորություններ	8,015	4,066	1,688	12,378	26,147	30,492	56,639	\$ՀՄՍ 8.23
Այլ բացահայտումներ								
Լսողիացված կազմակերպությունում ներդրումներ	681	–	–	–	681	–	681	\$ՀՄՍ 8.24(ա)
Կասկիտալ ծախսումներ	5,260	4,363	1,192	–	10,815	–	10,815	\$ՀՄՍ 8.24(բ)

2010թ.

հունվարի 1-ի դրությամբ

	Հակահրդեհային սարքավորումներ	Էլեկտրոնիկա	Ներդրումային գույք	Ռետինե սարքավորումներ (ընդհատված գործունեություն)	Ընդամենը սեզմենտներ	Ճշգրտումներ և բացառումներ	Համախմբված	
	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	
Գործառնական ակտիվներ	39,289	36,341	9,152	11,140	95,922	2,125	98,047	\$ՀՄՍ 8.23
Գործառնական պարտավորություններ	6,993	3,965	1,520	12,353	24,832	30,166	54,998	\$ՀՄՍ 8.23

Այլ

բացահայտումներ

Լսողիացված կազմակերպությունում ներդրումներ

	600	–	–	–	600	–	600	\$ՀՄՍ 8.24(ա)
--	-----	---	---	---	-----	---	-----	---------------

Մեկնաբանություն

Խմբի գլխավոր գործառնական որոշումներ կայացնողները պարբերաբար վերանայում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացված այլ հոդվածները, մասնավորապես՝ հիմնական միջոցների մաշվածությունը և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան, ակտիվների արժեզրկումը և Լսողիացված կազմակերպություններում շահույթի բաժնետնասը:

Դեկլարությունը գտնում է, որ այդ գումարները արտացոլում են ներքին վերահսկողության որոշ ընթացակարգերի արդյունավետությունը, ինչպես նաև որոշակի գործարքների ճշտությունը և արդյունավետությունը:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

8. Սեզմենտների վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)

ՖՀՄՍ 8.28

Ճշգրտումներ և բացառումներ

Ֆինանսական եկամուտները և ծախսերը, ֆինանսական ակտիվների իրական արժեքների փոփոխությունների գծով օգուտները և վնասները չեն բաշխվում առանձին սեզմենտներին, քանի որ դրանց հիմքում ընկած գործիքները կառավարվում են խմբային մակարդակով:

Ընթացիկ հարկերը, հետաձգված հարկերը և որոշակի ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները չեն բաշխվում այդ սեզմենտներին, քանի որ դրանք ևս կառավարվում են խմբային մակարդակով:

Կապիտալ ծախսումները բաղկացած են հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և ներդրումային գույքի ավելացումներից՝ ներառյալ ձեռքբերված դուստր կազմակերպությունների ակտիվները: Միջսեզմենտային հատկությունները բացառվում են համախմբման ժամանակ:

Շահույթի համաձայնեցում

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո
Սեզմենտների շահույթ	13,764	12,485
Ֆինանսական եկամուտ	336	211
Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխության գծով զուտ վնաս	(652)	–
Ֆինանսական ծախսեր	(1,366)	(1,223)
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով զուտ իրացված օգուտներ (բացառում)	(2)	–
Միջսեզմենտային վաճառքներ (բացառում)	(175)	(85)
Ընդհատված գործունեությունից օգուտ	–	(326)
Խմբի շահույթ	11,905	11,062

Ակտիվների համաձայնեցում

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո	2010թ. հունվարի 1-ի դրությամբ 000, եվրո
Սեզմենտի գործառնական ակտիվներ	122,102	103,719	95,922
Հետաձգված հարկային ակտիվներ	383	365	321
Վարկեր՝ տրված ասոցիացված կազմակերպությանը	200	–	–
Վարկեր՝ տրված տնօրեններին	13	8	8
Պարտատոմսեր	3,674	1,685	1,659
Ածանցյալ գործիքներ	1,102	153	137
Վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ	13,554	–	–
Խմբի գործառնական ակտիվներ	141,028	105,930	98,047

Պարտավորությունների համաձայնեցում

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո	2010թ. հունվարի 1-ի դրությամբ 000, եվրո
Սեզմենտի գործառնական պարտավորություններ	30,265	26,147	24,832
Հետաձգված հարկային պարտավորություններ	3,072	1,247	1,279
Ընթացիկ հարկերի գծով կրեդիտորական պարտքեր	3,963	4,013	4,625
Վարկեր	20,538	22,334	21,469
Փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր	2,778	2,644	2,522
Ածանցյալ գործիքներ	2,687	254	271
Վաճառքի համար պահվող դասակարգված պարտավորություններ	13,125	–	–
Խմբի գործառնական պարտավորություններ	76,428	56,639	54,998

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

8. Սեզմենտի վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)

Աշխարհագրական տեղեկատվություն
Հասույթ արտաքին հաճախորդներին

ՖՀՄՍ 8.33(ա)

	2011թ.	2010թ.
	000, եվրո	000, եվրո
Եվրոլենդ	158,285	142,022
Միացյալ Նահանգներ	52,224	49,881
Համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության համաձայն ընդամենը հասույթ	210,509	191,903

Վերոնշյալ հասույթի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հաճախորդների գտնվելու վայրին համապատասխան: ՖՀՄՍ 8.33(ա)

Հակահրդեհային սարքավորումների սեզմենտի հասույթը ներառում է մեկ հաճախորդից ստացված հասույթը, որը կազմել է 25,521,000 եվրո (2010թ.՝ 21,263,000 եվրո): ՖՀՄՍ 8.34

Ոչ ընթացիկ ակտիվներ

	2011թ.	2010թ.	2010թ. հունվարի 1-ի դրությամբ
	000, եվրո	000, եվրո	000, եվրո
Եվրոլենդ	40,023	29,004	24,350
Միացյալ Նահանգներ	9,300	7,251	5,240
Ընդամենը	49,323	36,255	29,590

ՖՀՄՍ 8.33(բ)

Ոչ ընթացիկ ակտիվները տվյալ արդյունակում ներկայացված են նպատակներով բաղկացած են հիմնական միջոցներից, ներդրումային գույքից և ոչ նյութական ակտիվներից:

Մեկնաբանություն

Տոկոսային եկամուտների և տոկոսային ծախսերի մասին տեղեկատվությունը չի բացահայտվել ըստ սեզմենտների, քանի որ այդ հոդվածները դիտարկվում են խմբի մակարդակով և չեն տրամադրվում գործառնական սեզմենտների վերաբերյալ գլխավոր գործառնական որոշումներ կայացնողներին: Գործառնական սեզմենտների ակտիվների և պարտավորությունների գծով բացահայտումներ պահանջվում են միայն այն դեպքում, երբ նման տեղեկատվություն տրամադրվում է գլխավոր գործառնական որոշում կայացնողներին: Խումբը տրամադրում է տեղեկատվություն գլխավոր գործառնական որոշում կայացնողներին գործառնական ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ: Մնացած գործառնականությունները (օրինակ՝ գանձապետական գործառնություն), որոնք մնացած այլ գործառնականությունների հետ միասին արտացոլված են «ճշգրտումներում և բացառումներում» իրենցից առանձին գործառնական սեզմենտ չեն ներկայացնում:

Խմբի ներքին հաշվետվությունները նախատեսված են կազմելու ՖՀՄՍ-ների համաձայն: Սեզմենտների վերաբերյալ բացահայտումները կարող էին ավելի մանրամասն լինել, եթե ներքին հաշվետվությունները պատրաստված լինեին ՖՀՄՍ-ներից տարբեր ստանդարտներով: Տվյալ դեպքում ներքին հաշվետվությունների և արտաքին օգտագործողների համար պատրաստվող հաշվետվությունների հոդվածների միջև անհրաժեշտ կլինեին պատրաստել համաձայնեցումներ:

ՖՀՄՍ 8-ը չունի ընդհատված գործունեություն դասակարգված գործառնական սեզմենտների գծով բացահայտումների վերաբերյալ հատուկ պահանջներ: Այդ իսկ պատճառով կազմակերպությունը պարտավոր չի տրամադրել այդպիսի սեզմենտների վերաբերյալ տեղեկատվություն այնքան ժամանակ, մինչև դրանք չբավարարեն որպես վաճառքի համար պահվող դասակարգման չափանիշներին: Այնուամենայնիվ, կազմակերպությունը կարող է շարունակել ներկայացնել այդպիսի սեզմենտների վերաբերյալ տեղեկատվություն այնքան ժամանակ, քանի դեռ այն բավարարում է գործառնական սեզմենտի սահմանմանը: Խումբը նախընտրել է շարունակել ներկայացնել սեզմենտների վերաբերյալ տեղեկատվություն նախորդ տարվա համար: Հաշվետու տարում ընդհատված գործունեությունը բացառվել է ներկայացվել է համաձայնեցման հոդվածների կազմում:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ

9. Այլ եկամուտներ/ծախսեր և ճշգրտումներ

9.1 Այլ գործառնական եկամուտներ

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո	
Պետական շնորհներ (Ծան. 24)	1,053	541	ՀՀՄՍ 20.39(p)
Հիմնական միջոցների օտարումից զուտ օգուտներ	532	2,007	ՀՀՄՍ 1.97
	1,585	2,548	

Պետական շնորհները ստացվել են որոշակի հիմնական միջոցներ ձեռք բերելու նպատակով: Տվյալ շնորհների գծով չբավարարված պայմաններ կամ պայմանականություններ չկան: ՀՀՄՍ 20.39(q)

9.2 Այլ գործառնական ծախսեր

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո	
Կլանումից պաշտպանվելու գծով ծախսեր	(579)	(31)	ՀՀՄՍ 1.97
ԷԷՍԹ-ի գծով ծախսեր (Ծան. 23)	(102)	(22)	ՀՀՄՍ 1.97
Ուղղակի գործառնական ծախսեր (ներառյալ՝ վերանորոգումը և պահպանումը), որոնք առաջացել են վարձակալության տրված ներդրումային գույքից	(101)	(353)	ՀՀՄՍ 40.75 (q)(ii)
Ներդրումային գույքի իրական արժեքի փոփոխություն (Ծան. 14)	(306)	(300)	ՀՀՄՍ 1.97
Որպես դրամական հոսքերի հեջ նախատեսված ապրանքային ֆորվարդ պայմանագրերի անարդյունավետություն	(65)	-	ՖՀՄՍ 7.24(p)
Ընդամենը այլ գործառնական ծախսեր	(1,153)	(706)	

Կլանումից պաշտպանվելու գծով ծախսերը մրցակցի կողմից միակողմանի շահի հետապնդող կլանման փորձը կանխելու վերաբերյալ խորհրդատվություն ստանալու գծով ծախսեր են: Մրցակիցը կլանման գծով հետագա քայլեր չի ձեռնարկել:

Որպես դրամական հոսքերի հեջավորում սահմանված ապրանքային ֆորվարդ պայմանագրերի անարդյունավետությունը առաջացել է էլեկտրոնիկայի սարքավորումների սեզոնականացման:

9.3 Ֆինանսական ծախսեր

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո	
Վարկերի և փոխառությունների գծով տոկոսներ	(1,172)	(1,182)	
Ֆինանսական ծախսեր ֆինանսական վարձակալության և ապառիկով ակտիվների գնման պայմանագրերի գծով	(40)	(40)	
Ընդամենը տոկոսային ծախսեր	(1,212)	(1,222)	ՖՀՄՍ 7.20(p) ՖՀՄՍ 7.20(ե)
Վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնային գնանշվող գործիքների արժեզրկումից վնաս (Ծան. 16.1)	(111)	-	
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով զուտ վնաս	(1,502)	-	ՖՀՄՍ 7.20(ա)
Պահուստների գծով զեղչերի հետադարձման արդյունք (Ծան. 23)	(43)	(1)	ՀՀՄՍ 37.60
Ընդամենը ֆինանսական ծախսեր	(2,868)	(1,223)	

9.4 Ֆինանսական եկամուտ

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո	
Ասոցիացված կազմակերպությանը տրամադրված վարկից տոկոսային եկամուտ (Ծան. 29)	20	-	
Վաճառքի համար մատչելի ներդրումներից տոկոսային եկամուտ	316	211	
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքի փոփոխությունից օգուտներ	850	-	ՀՀՄՍ 1.85 ՖՀՄՍ 7.20(ա)(i)
Ընդամենը ֆինանսական եկամուտ	1,186	211	ՖՀՄՍ 7.20(բ)

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

9. Այլ եկամուտներ/ծախսեր և ճշգրտումներ (շարունակություն)

9.3 և 9.4 Ծանոթագրություններում ներառված շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զուտ վնասը վերագրվում է արտարժույթային ֆորվարդ պայմանագրերին, որոնք չեն բավարարում հեջավորման հաշվառման պայմաններին կամ պարունակվող ածանցյալ գործիքներ են, որոնք առանձնացվել էին հիմնական պայմանագրերից:

Մեկնաբանություն

Ֆինանսական եկամտի և ֆինանսական ծախսի սահմանումները տրված չեն \$ՀՄՍ-ներում: Որոշ երկրներ սահմանափակում են որոշակի եկամուտների և ծախսերի ներառումը այդ հոդվածներում (օրինակ՝ սահմանափակվում են միայն տոկոսային եկամուտներով և ծախսերով), մինչդեռ որոշ երկրներ թույլ են տալիս լրացուցիչ հոդվածների ներառումը:

9.5 Մաշվածություն, ամորտիզացիա, փոխարժեքային տարբերություններ և ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում ներառված պաշարների ինքնարժեք

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո	ՀՀՄՍ 1.104
Վաճառքի ինքնարժեքում ներառված՝			
Մաշվածություն	3,520	2,800	
Հիմնական միջոցների արժեզրկում (Ծան. 13)	–	301	ՀՀՄՍ 36.126(ա)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա և արժեզրկում (Ծան. 15)	325	174	
Ջուտ փոխարժեքային տարբերություններ	(65)	(40)	ՀՀՄՍ 21.52(ա)
Երաշխիքային սպասարկման պահուստներ (Ծան. 23)	106	52	
Որպես ծախս ճանաչված պաշարների արժեք	150,283	131,140	ՀՀՄՍ 2.36(դ)
Վարչական ծախսերում ներառված՝			
Մաշվածություն	277	282	
Նվազագույն վարձակալական վճարներ՝ ճանաչված որպես գործառնական վարձակալության գծով ծախս	250	175	ՀՀՄՍ 17.35(գ)

9.6 Աշխատակիցներին հատուցումների գծով ծախսեր

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո	ՀՀՄՍ 1.104
Աշխատավարձ	38,205	38,050	
Սոցիալական ապահովագրության գծով ծախսեր	3,854	3,837	
Թոշակային ծախսեր (Ծան. 26)	1,395	1,361	
Հետաշխատանքային հատուցումներ, բացառությամբ թոշակային հատուցումները (Ծան. 26)	153	113	
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գծով ծախսեր (Ծան. 27)	412	492	ՖՀՄՍ 2.51(ա)
ԸՆդամենը աշխատակիցների վարձատրության գծով ծախսեր	44,019	43,853	

9.7 Հետազոտության և մշակման ծախսումներ

Հետազոտության և մշակման ծախսումները ճանաչվել են որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և ֆինանսական տարվա ընթացքում կազմում են 2,235,000 եվրո (2010թ.՝ 1,034,000 եվրո):

ՀՀՄՍ 38.126

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

9. Այլ եկամուտներ/ծախսեր և ճշգրտումներ (շարունակություն)

9.8 Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների տարրեր

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո	
Դրամական միջոցների հոսքերի հեջավորում՝			
Տարվա ընթացքում առաջացած օգուտներ/(վնասներ)			
Արժույթային ֆորվարդ պայմանագրեր	(218)	(379)	
Ապրանքային ֆորվարդ պայմանագրեր	(915)	-	
Շահույթում կամ վնասում ներառված օգուտների վերադասակարգման գծով ճշգրտումներ	401	412	ՀՀՄՍ 1.97 ՖՀՄՍ 7.23(դ)
	(732)	33	
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ՝			
Տարվա ընթացքում առաջացած օգուտներ/(վնասներ)	(58)	(22)	
Շահույթում կամ վնասում ներառված վնասների վերադասակարգման գծով ճշգրտումներ	(2)	-	ՀՀՄՍ 1.92 ՖՀՄՍ 7.20(ա)(ii)
		(22)	

Մեկնաբանություն

Ծանոթագրություն 9.8-ի նպատակն է տրամադրել այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացված զուտ հոդվածների վերլուծություն: Այս վերլուծությունը չի վերաբերում այլ համապարփակ ֆինանսական արդյունքների այլ հոդվածներին, քանի որ դրանք երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմում կամ վերադասակարգման գծով ճշգրտումներ տեղի չեն ունեցել:

10. Շահութահարկ

2011 և 2010թթ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարիների շահութահարկի գծով ծախսի հիմնական տարրերն են՝ ՀՀՄՍ 12.79

Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո	
Ընթացիկ շահութահարկ՝			
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	3,732	3,901	ՀՀՄՍ 12.80(ա)
Նախորդ տարվա ընթացիկ շահութահարկի գծով ճշգրտումներ	(18)	(129)	ՀՀՄՍ 12.80(բ)
Հետաձգված հարկ՝			
Ժամանակավոր տարբերությունների առաջացմանը և հակադարձմանը վերաբերող	179	(340)	ՀՀՄՍ 12.80(գ)
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլված շահութահարկի գծով ծախս	3,893	3,432	

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

ՀՀՄՍ 12.81(ա)

Հետաձգված հարկ, որը վերաբերվում է ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված հոդվածներին՝

Դրամական միջոցների հոսքերի հեջավորման գործիքների վերազնահատումից զուտ օգուտ/(վնաս)	220	(10)
Չիրացված օգուտ/(վնաս) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով	18	6
Հողատարածքների և շենքերի վերազնահատումից զուտ վնաս	(254)	-
Ջուտ ներդրումների հեջավորումից զուտ վնաս	(83)	-
Ջուտ (վնաս)/ օգուտ ակտուարային օգուտների և վնասների գծով	(94)	120
Ուղղակիորեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքների կազմում արտացոլված շահութահարկի գծով ծախս	(193)	116

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

10. Շահութահարկ (շարունակություն)

2011 և 2010թթ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարիների շահութահարկի գծով ծախսի և Եվրոլենդում գործող հարկային դրույքաչափով բազմապատկված հաշվապահական շահույթի միջև համեմատությունը ներկայացված է ստորև՝

ՀՀՄՍ 12.81
(գ)(i)

	2011թ.	2010թ.
	000, եվրո	000, եվրո
Շարունակական գործունեությունից հաշվապահական շահույթ նախքան հարկումը	11,905	11,062
Ընդհատված գործունեությունից շահույթ/(վնաս) նախքան հարկումը	213	(193)
Հաշվապահական շահույթ նախքան շահութահարկը	12,118	10,869
Եվրոլենդի սահմանված շահութահարկի դրույքաչափ 30% (2010թ.՝ 30%)	3,635	3,261
Նախորդ տարվա ընթացիկ շահութահարկի գծով ճշգրտումներ	(18)	(44)
Հարկերից ազատված պետական շնորհներ	(316)	(162)
Նախկինում չճանաչված հարկային վնասների օգտագործում	(231)	(89)
Շահութահարկի նպատակով չնվազեցվող ծախսեր		
Գուդվիլի արժեզրկում	60	-
«Էքստինգուիշեր Լիմիթեդ»-ի ձեռքբերման ժամանակ ճանաչված պայմանական պարտավորության գումարի փոփոխություն	107	-
Այլ չնվազեցվող ծախսեր	121	145
ԱՄՆ-ում ավելի բարձր հարկային դրույքաչափերի ազդեցությունը	528	316
Շահութահարկի 31% արդյունավետ դրույքով (2010թ.՝ 32%)	3,886	3,427
Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում արտացոլված շահութահարկի գծով ծախս	3,893	3,432
Ընդհատված գործունեությանը վերագրելի շահութահարկ	(7)	(5)
	3,886	3,427

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ

10. Շահութահարկ (շարունակություն)

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը վերաբերում է հետևյալ հոդվածներին՝

	Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն			Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն		ՀՀՄՍ 12.81(է)(i)
	2011թ.	2010թ.	2010թ. հունվարի 1-ի դրությամբ	2011թ.	2010թ.	ՀՀՄՍ 12.81(է)(ii)
	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	
Հարկային նպատակներով արագացված մաշվածություն	(2,359)	(634)	(411)	491	(157)	
Ներդրումային գույքի իրական արժեքի վերազնահատում	(1,330)	(1,422)	(1,512)	(92)	(90)	
Հողատարածքների և շենքերի իրական արժեքի վերազնահատում	(304)	(50)	(50)	–	–	
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի վերազնահատում	(21)	(39)	(45)	–	–	
Հեջավորված վարկի իրական արժեքի վերազնահատում	(11)	–	–	11	–	
Ջուտ ներդրումների հեջավորումից զուտ օգուտ	(83)	–	–	–	–	
Հետաշխատանքային բժշկական հատուցումներ	102	59	26	(43)	(33)	
Թոշակներ	685	689	596	(90)	27	
Տոկոսադրույքի սվոպի (իրական արժեքի հեջավորում) իրական արժեքի վերազնահատում	11	–	–	(11)	–	
Դրամական միջոցների հոսքերի հեջավորման վերազնահատում	(25)	30	40	–	–	
Վաճառքի համար մատչելի չգնանշված պարտքային գործիքների արժեքը	27	–	–	(27)	–	
Հետաձգված հասույթ հաճախորդների խրախուսման ծրագրերի գծով	71	65	54	(6)	(11)	
Փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր	91	55	23	(36)	(32)	
Ապագա հարկվող եկամտի նկատմամբ հաշվանցմանը ենթակա վնասներ	383	365	321	(18)	(44)	
Հետաձգված հարկային ծախս / (եկամուտ)				179	(340)	
Հետաձգված հարկային զուտ ակտիվներ / (պարտավորություններ)	(2,763)	(882)	(958)			
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված որպես՝						
Հետաձգված հարկային ակտիվներ	383	365	321			
Հետաձգված հարկային պարտավորություններ՝ շարունակական գործունեություն	(3,072)	(1,247)	(1,279)			
Հետաձգված հարկային պարտավորություններ՝ ընդհատված գործունեություն	(74)	–	–			
Հետաձգված հարկային զուտ պարտավորություններ	(2,763)	(882)	(958)			

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ

10. Շահութահարկ (շարունակություն)

Հետաձգված հարկային զուտ պարտավորությունների համաձայնեցում

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո
Հունվարի 1-ի դրությամբ սկզբնական մնացորդ	(882)	(958)
Շահութային կամ վնասում ճանաչված հաշվետու ժամանակաշրջանի հարկային եկամուտ / (ծախս)	(179)	340
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված հաշվետու ժամանակաշրջանի հարկային եկամուտ / (ծախս)	(193)	116
Ընդհատված գործունեություն	2	-
Ձեռնարկատիրական գործունեության միավորումներում ձեռքբերված հետաձգված հարկեր	(1,511)	(380)
	(2,763)	(882)

Դեկտեմբերի 31-ի դրությամբ վերջնական մնացորդ

Մեկնաբանություն

Թեև ՀՀՄՍ 1 կամ ՀՀՄՍ 12 ստանդարտներով հետաձգված հարկային զուտ պարտավորության համաձայնեցումը պարտադիր չէ, այն կարող է օգտակար լինել հաշվետվությունը ընթերցողի համար:

Խումբը հաշվանցում է հարկային ակտիվները և պարտավորությունները միայն այն դեպքում, եթե այն ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորություններով հաշվանցելու, և հետաձգված հարկային ակտիվները և հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են միևնույն հարկային մարմնի կողմից գանձվող շահութահարկին: ՀՀՄՍ 12.73

Խումբն ունի 427,000 եվրո (2010թ.՝ 1,198,000 եվրո, 2010թ. հունվարի 1՝ 1,494,000 եվրո) հարկային վնասներ, որոնք առաջացել են Եվրոյենդում և ենթակա են հաշվանցման անորոշ ժամկետի ընթացքում այն ընկերությունների ապագա հարկվող շահույթներից, որոնցում վնասները առաջացել են: Հետաձգված հարկային ակտիվները չեն ճանաչվել այդ վնասների նկատմամբ, քանի որ դրանք չեն կարող օգտագործվել Խմբի այլ ընկերություններում հարկվող շահույթը հաշվանցելու նպատակով և առաջացել են որոշակի ժամանակահատվածում վնաս ունեցող դուստր կազմակերպություններում: Խումբը գնահատել է եզրակացրել է, որ հնարավոր չի լինի վերականգնել հետաձգված հարկային ակտիվները 2011թ. «Էքստիմեյթներ Լիմիթեդ»-ի ձեռքբերման արդյունքում առկա հարկային վնասների նկատմամբ: Դուստր կազմակերպությունը չունի որևէ հարկվող ժամանակավոր տարբերություն կամ հարկային պլանավորման առկա հնարավորություններ, որոնք կարող էին մասամբ ծառայել այդ վնասների ճանաչմանը որպես հետաձգված հարկային ակտիվներ: Եթե Խումբը կարողանար ճանաչել բոլոր չճանաչված հետաձգված հարկային ակտիվները, ապա շահույթը կաճեր 128,000 եվրոյով: ՀՀՄՍ 12.81(ե)

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չի ունեցել հետաձգված հարկային պարտավորություն (2010թ.՝ զրո, 2010թ. հունվարի 1՝ զրո) այն հարկերի գծով, որոնք ենթակա կլինեն վճարման որոշակի դուստր կազմակերպությունների, ասոցիացված կազմակերպությունների, համատեղ ձեռնարկումների չբաշխված շահույթների գծով: Խումբը որոշել է, որ իր դուստր կազմակերպությունների, համատեղ ձեռնարկումների կամ ասոցիացված կազմակերպությունների գծով չբաշխված շահույթը չի բաշխվի տեսանելի ապագայում, քանի որ՝

- i) Խումբն ունի պայմանավորվածություն ասոցիացված կազմակերպության հետ առանց Խմբի նախնական համաձայնության շահույթները չբաշխելու վերաբերյալ: Հաշվետու ամսաթվի դրությամբ մայր կազմակերպությունը չի նախատեսում տալ նման համաձայնություն,
- ii) Խմբի համատեղ ձեռնարկումը չի կարող բաշխել իր շահույթները մինչև չունենա համատեղ ձեռնարկման բոլոր մասնակիցների համաձայնությունները: Մայր կազմակերպությունը չի նախատեսում տալ նման համաձայնություն հաշվետու ամսաթվի դրությամբ:

Դուստր կազմակերպություններում, ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում ներդրումների գծով ժամանակավոր տարբերությունները, որոնք գծով հետաձգված հարկային պարտավորություն չի ճանաչվել, կազմում են 1,745,000 եվրո (2010թ.՝ 1,458,000 եվրո, 2010թ. հունվարի 1՝ 1,325,000 եվրո): ՀՀՄՍ 12.82Ա

Խմբի կողմից բաժնետերերին շահաբաժնի վճարումը 2011 և 2010թթ. շահութահարկի գծով ծախս չի առաջացրել:

Մեկնաբանություն

ՀՀՄՍ 1.61-ը պահանջում է, որ կազմակերպությունը առանձին բացահայտի այն գումարները, որոնք փոխհատուցումը կամ մարումը ակնկալվում է հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա կամ 12 ամսից ավել ժամանակահատվածում՝ բոլոր այն հոդվածների համար, որոնց կազմում ներառված են այդպիսի գումարներ: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները այդպիսի հոդվածների օրինակներ են: Սակայն, ՀՀՄՍ 1.56 -ը չի թույլատրում հետաձգված հարկի տարբերը ներկայացնել որպես ընթացիկ հոդվածներ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

11. Ընդհատված գործունեություն

2011թ. մարտի 1-ին Խումբը հայտարարել է Տնօրենների խորհրդի՝ «Հոգ Լիմիթեդ»-ը վաճառելու որոշումը: «Հոգ Լիմիթեդ»-ի առևտրային գործունեությունն իրականացվում էր արտադրության դժվար կանխատեսելի միջավայրում և ղեկավարությունը դժվարանում էր այդ սեգմենտում ապահովել իրական աճ և շահութաբերություն: «Հոգ Լիմիթեդ»-ի վաճառքը պետք է ավարտվի 2012թ. փետրվարի 28-ին. 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վաճառքի գծով վերջնական բանակցությունները դեռ չէին ավարտվել: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հոգ Լիմիթեդ»-ը դասակարգվել է վաճառքի համար պահվող օտարման խումբ և որպես ընդհատված գործունեություն: «Հոգ Լիմիթեդ»-ի գործունեության արդյունքները ներկայացված են ստորև՝

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո	ՖՀՄՄ 5.33(p)(i) ՖՀՄՄ 5.34
Հասույթ	42,809	45,206	
Ծախսեր	(41,961)	(44,880)	
Համախառն շահույթ	848	326	
Ֆինանսական ծախսեր	(525)	(519)	
Մինչև իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումները վերաչափումից առաջացած արժեզրկման վնաս (Ծան. 13)	(110)	-	ՖՀՄՄ 5.33 (p)(iii)
Ընդհատված գործունեությունից շահույթ/(վնաս) նախքան հարկերը	213	(193)	
Շահութահարկ՝			
Նախքան հարկումը ընթացիկ շահույթին/(վնասին) վերաբերող	5	5	ՀՀՄՄ 12.81(ը)(ii)
Մինչև իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումները վերաչափմանը վերաբերող (հետաձգված հարկ)	2	-	ՀՀՄՄ 12.81(ը)(i)
Ընդհատված գործունեության հաշվետու տարվա շահույթ / (վնաս)	220	(188)	

«Հոգ Լիմիթեդ»-ի ակտիվների և պարտավորությունների հիմնական դասերը, որոնք դասակարգված են որպես վաճառքի համար պահվող դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են ստորև՝

	2011թ. 000, եվրո	ՖՀՄՄ 5.38 ՖՀՄՄ 5.40
Ակտիվներ		
Ոչ նյութական ակտիվներ (Ծան. 15)	135	
Հիմնական միջոցներ (Ծան. 13)	4,637	
Դեբիտորական պարտքեր	6,980	
Չգնանշվող բաժնային գործիքներ	508	
Դրամական միջոցներ և կարճաժամկետ ավանդներ (Ծան. 20)	1,294	
Վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ	13,554	
Պարտավորություններ		
Կրեդիտորական պարտքեր	(7,242)	
Հետաձգված հարկային պարտավորություններ	(74)	
Տոկոսային պարտավորություններ (Ծան. 16)	(5,809)	
Վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներին անմիջապես վերագրելի պարտավորություններ	(13,125)	
Օտարման խմբին վերագրելի զուտ ակտիվներ	429	
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներառված՝		
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով պահուստ	66	ՖՀՄՄ 5.38
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների պահուստի գծով հետաձգված հարկ	(20)	
Որպես վաճառքի համար պահվող օտարման խմբի գծով պահուստ	46	

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

11. Ընդհատված գործունեություն (շարունակություն)

«Հոգ Լիմիթեդ»-ի դրամական միջոցների զուտ հոսքեր՝

ՖՀՄՍ 5.33(գ)

	2011թ.	2010թ.
	000, եվրո	000, եվրո
Գործառնական գործունեություն	(1,999)	3,293
Ներդրումային գործունեություն	-	-
Ֆինանսավորման գործունեություն	(436)	(436)
Դրամական միջոցների զուտ (արտահոսք)/ներհոսք	(2,435)	2,857

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ՝

ՀՀՄՍ 33.68

Բազային շահույթ/(վնաս) հաշվետու տարվա ընդհատված գործունեությունից	0.01 եվրո	(0.01 եվրո)
Նոսրացված շահույթ/(վնաս) հաշվետու տարվա ընդհատված գործունեությունից	0.01 եվրո	(0.01 եվրո)

Տոկոսային պարտավորություններն իրենցից ներկայացնում են ֆիքսված տոկոսադրույքով 5,809,000 եվրո կազմող բանկային վարկեր, որոնց արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 7.5%: Վարկը պետք է ամբողջությամբ մարվի 2016թ. հունվարի 1-ին:

Հիմնական միջոցների արժեզրկում

ՀՀՄՍ 36.130

«Հոգ Լիմիթեդ»-ը որպես ընդհատված գործունեություն դասակարգելուց անմիջապես առաջ իրականացրել է որոշ հիմնական միջոցների փոխհատուցվող արժեքի գնահատում, որի հետևանքով արժեզրկման գծով վնաս չի հայտնաբերվել: Դասակարգման արդյունքում՝ ճանաչվել է 110,000 եվրո արժեզրկման գծով վնաս (77,000 եվրո՝ առանց հարկերի)՝ նվազեցնելու օտարման խմբում գտնվող ակտիվների հաշվեկշռային արժեքը մինչև իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումները: Արժեզրկումը ճանաչվել է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Ընդհատված գործունեությունից հաշվետու տարվա շահույթ/(վնաս)» հոդվածում: Հիմնական միջոցների իրական արժեքը գնահատելու նպատակով իրականացվել է անկախ գնահատում, որը հիմնված է նույն ոլորտում նմանատիպ ակտիվների հետ վերջին շրջանում տեղի ունեցած գործարքների տեղեկատվության վրա:

ՖՀՄՍ 5.33
(ա)(iii)

Մեկնաբանություն

ՖՀՄՍ 5-ը առանձնացնում է որոշակի բացահայտումներ, որոնք պահանջվում են ընդհատված գործունեության և վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվների համար: 2009թ. ապրիլին ՀՀՄՍ-ն թողարկեց ՖՀՄՍ-ների բարեփոխումների երկրորդ ժողովածուն, որտեղ պարզաբանվում է, որ այլ ՖՀՄՍ-ներում պահանջվող բացահայտումները չեն կիրառվում վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվների և ընդհատված գործունեության նկատմամբ, բացառությամբ՝ երբ այլ ՖՀՄՍ-ներում հստակորեն հղում է տրված վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներին և ընդհատված գործունեությանը:

Խումբը նախընտրել է ընդհատված գործունեությունից մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթը ներկայացնել Ծանոթագրություններում: Այլապես, Խումբը կարող էր սովորաբար գումարները ներկայացնել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

12. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը հաշվարկվում է՝ սովորական բաժնետոմսերի բաժնետերերին վերագրելի հաշվետու տարվա զուտ շահույթը բաժանելով տարվա ընթացքում առկա շրջանառվող սովորական բաժնետոմսերի միջին կշռված քանակին:

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացած շահույթը հաշվարկվում է՝ սովորական բաժնետոմսերի բաժնետերերին վերագրելի հաշվետու տարվա զուտ շահույթը (փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերի գծով տոկոսագումարը ճշգրտելուց հետո) բաժանելով տարվա ընթացքում առկա շրջանառվող սովորական բաժնետոմսերի միջին կշռված քանակի և այն սովորական բաժնետոմսերի միջին կշռված քանակի գումարին, որոնք կթողարկվեն բոլոր նոսրացնող պոտենցիալ սովորական բաժնետոմսերը սովորական բաժնետոմսերի փոխարկելիս:

Հետևյալ աղյուսակը արտացոլում է եկամուտների և բաժնետոմսերի քանակի վերաբերյալ տեղեկատվություն, որն օգտագործվել է մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային և նոսրացված շահույթները հաշվարկելու նպատակով՝

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

12. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ (շարունակություն)

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո	
Շարունակական գործունեությունից մայր կազմակերպության սովորական բաժնետոմսերի բաժնետերերին վերագրելի զուտ շահույթ	7,724	7,391	
Ընդհատված գործունեությունից մայր կազմակերպության սովորական բաժնետոմսերի բաժնետերերին վերագրելի շահույթ/(վնաս)	220	(188)	
Մայր կազմակերպության սովորական բաժնետոմսերի բաժնետերերին վերագրելի զուտ շահույթ՝ բազային շահույթի հաշվարկի համար	7,944	7,203	ՀՀՄՍ 33.70(ա)
Փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերի գծով տոկոսներ	247	238	
Մայր կազմակերպության սովորական բաժնետոմսերի բաժնետերերին վերագրելի զուտ շահույթ՝ ճշգրտված նոսրացման ազդեցությունով	8,191	7,441	ՀՀՄՍ 33.70(ա)
	2011թ. Հազար	2010թ. Հազար	ՀՀՄՍ 33.70(բ)
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը հաշվարկելու նպատակով սովորական բաժնետոմսերի միջին կշռված քանակ *	20,797	19,064	
Նոսրացման ազդեցությունը՝ Բաժնետոմսերի օպցիոններ	112	177	
Փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր	833	833	
Սովորական բաժնետոմսերի միջին կշռված քանակ՝ ճշգրտված նոսրացման ազդեցությունով *	21,742	20,074	

* Բաժնետոմսերի միջին կշռված քանակը հաշվի է առնում տարվա ընթացքում սեփական հետգնված բաժնետոմսերի քանակի փոփոխության միջին կշռված ազդեցությունը:

ՀՀՄՍ 33.70(դ)

Հաշվետու ամսաթվի և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ամսաթվի միջև ընկած ժամանակահատվածում սովորական բաժնետոմսերի կամ հնարավոր սովորական բաժնետոմսերի հետ գործարքներ չեն իրականացվել:

Ընդհատված գործունեությունից մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթը հաշվարկելու նպատակով (տես՝ Ծան. 11), բազային և նոսրացած շահույթների հաշվարկների համար սովորական բաժնետոմսերի միջին կշռված քանակը համապատասխանում է նախորդ աղյուսակի տվյալներին: Հետևյալ աղյուսակում ներկայացված է օգտագործված շահույթի/ (վնասի) գումարները՝

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո
Ընդհատված գործունեությունից մայր կազմակերպության սովորական բաժնետոմսերի բաժնետերերին վերագրելի զուտ շահույթ/(վնաս)՝ մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային և նոսրացած շահույթների հաշվարկման նպատակով	220	(188)

Մեկնաբանություն

Թեև \$ՀՄՍ-ները չեն պահանջում, սակայն առաջին անգամ \$ՀՄՍ-ներ որդեգրողները կարող են ներկայացնել մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի փոփոխությունների վերաբերյալ բացատրություն կամ համաձայնեցում՝ որպես լրացուցիչ տեղեկատվություն՝ օգնելու բաժնետերերին հասկանալ \$ՀՄՍ-ներին անցնելու հետևանքով ֆինանսական հաշվետվություններում փոփոխությունները: \$ՀՄՍ 1-ը պահանջում է, որ \$ՀՄՍ-ներին համապատասխանելու նպատակով կատարված հիմնական ճշգրտումների հետ մեկտեղ նախկին ՀՀՀՄ-ների համաձայն ներկայացված ցանկացած տեղեկատվություն հստակորեն ներկայացվի որպես \$ՀՄՍ-ներին ոչ համապատասխան պատրաստված:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

13. Հիմնական միջոցներ

	Հողատարածք և շենքեր	Անավարտ շինարարություն	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը	ՀՀՄՄ 1.78(ա) ՀՀՄՄ 16.73(ե) ՀՀՄՄ 16.73(դ)
	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	
Սկզբնական կամ վերագնահատված արժեքը					
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	7,727	–	24,602	32,329	
Ավելացումներ	1,587	–	6,235	7,822	
Դուստր կազմակերպությունների ձեռքբերում (Ծան. 5)	1,280	–	–	1,280	
Օտարումներ	(347)	–	(49)	(396)	
Փոխարժեքային ճշգրտումներ	10	–	26	36	
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	10,257	–	30,814	41,071	
Ավելացումներ	1,612	4,500	4,543	10,655	
Դուստր կազմակերպությունների ձեռքբերում (Ծան. 5)	2,897	–	4,145	7,042	
Օտարումներ	–	–	(4,908)	(4,908)	
Ընդհատված գործունեություն (Ծան. 11)	(3,044)	–	(3,980)	(7,024)	
Վերագնահատումներ	846	–	–	846	
Փոխանցում*	(102)	–	–	(102)	ՀՀՄՄ 16.35
Փոխարժեքային տարբերություններ	30	–	79	109	
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,496	4,500	30,693	47,689	
Մաշվածություն և արժեզրկում					
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	–	–	11,944	11,944	
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	354	–	2,728	3,082	
Արժեզրկում (Ծան. 9.5)	–	–	301	301	
Օտարումներ	(35)	–	(49)	(84)	
Փոխարժեքային ճշգրտումներ	5	–	12	17	
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	324	–	14,936	15,260	
Հաշվետու տարվա մաշվածության ծախս **	500	–	3,297	3,797	
Օտարումներ	–	–	(3,450)	(3,450)	
Ընդհատված գործունեություն (Ծան. 11)	(183)	–	(2,094)	(2,277)	
Փոխանցում*	(102)	–	–	(102)	
Փոխարժեքային տարբերություններ	20	–	30	50	
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	559	–	12,719	13,278	
Զուտ հաշվեկշռային արժեք					
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	11,937	4,500	17,974	34,411	
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,933	–	15,878	25,811	
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	7,727	–	12,658	20,385	

* Փոխանցումները վերաբերում են վերագնահատման ամսաթվի դրությամբ կուտակված մաշվածությանը, որը բացառվել է վերագնահատված ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից:

** Հաշվետու տարվա մաշվածության մեջ ներառված է 110,000 եվրո արժեզրկման վնասը (տես` Ծան. 11):

2010թ. արժեզրկման վնասը կազմել է 301,000 եվրո և ներկայացնում է հակահիդեհային սեգմենտում որոշ հիմնական միջոցների արժեքի նվազեցում մինչև փոխհատուցվող գումարը: Վնասը ճանաչվել է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Վաճառքի ինքնարժեք» հոդվածում: Փոխհատուցվող գումարը հաշվարկվել է օգտագործման արժեքի հիման վրա և սահմանվել դրամաստեղծ միավորի մակարդակով: Դրամաստեղծ միավորը բաղկացած է Եվրոլենդում հիմնված «Սփրինկլերս Լիմիթեդ»-ի և «Շաուերս Լիմիթեդ»-ի ակտիվներից, որոնք գտնվում են Եվրոլենդում և համապատասխանաբար հանդիսանում Խմբի դուստր կազմակերպություն և համատեղ վերահսկվող կազմակերպություն: Դրամաստեղծ միավորի օգտագործման արժեքը որոշելու նպատակով դրամական միջոցների հոսքերը գեղջվել են 12.4% տոկոսադրույքով (նախքան հարկումը զեղչման դրույք):

ՀՀՄՄ
36.126(ա)

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

13. Հիմնական միջոցներ (շարունակություն)

Կապիտալացված փոխառության ծախսումներ

Խումբը 2011թ. փետրվարին սկսել է հակահրդեհային սարքավորումների անվտանգությունը ստուգող արտադրամասի նոր համալիրի շինարարություն: Շինարարությունը ակնկալվում է ավարտել 2012թ. փետրվարին: Հակահրդեհային սարքավորումների անվտանգությունը ստուգող համալիրի հաշվեկշռային արժեքը 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 3 միլիոն եվրո (2010թ.՝ գրո, 2010թ. հունվարի 1՝ գրո): Հակահրդեհային սարքավորումների անվտանգությունը ստուգող ֆինանսավորում է երրորդ կողմը համատեղ գործունեության պայմանագրի շրջանակներում:

ՀՀՄՍ
36.126(ա)
ՀՀՄՍ 23.26(ա)
ՀՀՄՍ 23.26(բ)

Կապիտալացված փոխառության ծախսումները 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում կազմել են 303,000 եվրո (2010թ.՝ գրո, 2010թ. հունվարի 1՝ գրո): Կապիտալացման ենթակա փոխառության ծախսումների գումարը որոշելու համար օգտագործված դրույքը կազմել է 11%, որն իրենից ներկայացնում է հատուկ փոխառության գծով արդյունավետ տոկոսադրույքը:

Ֆինանսական վարձակալություն և շինարարության մեջ գտնվող ակտիվներ

Ֆինանսական վարձակալության և ապառիկ գնումների պայմանագրերի շրջանակներում ձեռքբերված հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1,178,000 եվրո (2010թ.՝ 1,486,000 եվրո, 2010թ. հունվարի 1՝ 1,432,000 եվրո): Ֆինանսական վարձակալության և ապառիկ գնումների պայմանագրերի շրջանակներում հիմնական միջոցների ավելացումները տարվա ընթացքում կազմել են 45,000 եվրո (2010թ.՝ 54,000 եվրո): Վարձակալված ակտիվները և ապառիկով ձեռքբերված ակտիվները հանդիսանում են որպես գրավ ֆինանսական վարձակալության և ապառիկ գնումների պայմանագրերի համապատասխան պարտավորությունների գծով:

ՀՀՄՍ 17.31(ա)
ՀՀՄՍ 7.43

ՀՀՄՍ 16.74(ա)

ՀՀՄՍ 16.74(ա)

7,400,000 եվրո հաշվեկշռային արժեք ունեցող (2010թ.՝ 5,000,000 եվրո, 2010թ. հունվարի 1՝ 4,500,000 եվրո) հողատարածքները և շենքերը հանդիսանում են առաջնահերթ գրավի առարկա՝ Խմբի երկու բանկային վարկերը ապահովելու նպատակով (Ծան. 16):

ՀՀՄՍ 16.74(բ)

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցներում ներառված է նաև 1,500,000 եվրո գումարի նոր հակահրդեհային սարքավորում (2010թ.՝ գրո, 2010թ. հունվարի 1՝ գրո), որը վերաբերում է շինարարության ընթացքում գտնվող արտադրամասի կառուցման ծախսումներին: Շինարարության մեջ գտնվող երկու սարքավորումները կձանաչվեն «Հողատարածքներ և շինություններ» հոդվածում ավարտից հետո:

Հողատարածքների և շենքերի վերազնահատում

Խումբը հողատարածքների և շենքերի չափման համար օգտագործում է վերազնահատման մոդելը: Հողատարածքների և շենքերի իրական արժեքները որոշելու նպատակով Խումբը դիմել է «Չարթերդ Սրվեյրս ընդ Քո» լիցենզավորված գնահատող ընկերությանը:

ՀՀՄՍ
16.77(ա)(է)

Իրական արժեքը որոշվել է հիմնվելով շուկայական տեղեկատվության վրա: Գնահատումը հիմնված է ակտիվ շուկայում գործող գների վրա, որոնք ճշգրտվել են ըստ հիմնական միջոցների հատկանիշների, գտնվելու վայրի կամ վիճակի: Վերջին վերազնահատումը տեղի է ունեցել 2011թ. հունվարի 31-ին: Նախորդ վերազնահատումը կատարվել է 2008թ. հունվարի 31-ին (տես Ծան. 2.4-ը):

Եթե հողատարածքները և շենքերը չափվեին պատմական արժեքի մեթոդով, ապա հաշվեկշռային արժեքները կունենային հետևյալ տեսքը՝

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո	2010թ. հունվարի 1-ի դրությամբ 000, եվրո
Սկզբնական արժեք	11,650	10,257	7,727
Կուտակված մաշվածություն և արժեզրկում	(520)	(324)	–
Զուտ հաշվեկշռային արժեք	11,130	9,933	7,727

ՀՀՄՍ 16.77(ե)

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

14. Ներդրումային գույք

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո	ՀՀՄՍ 40.76
Սկզբնական մնացորդ հունվարի 1-ի դրությամբ	7,983	7,091	
Ավելացումներ (հետագա ծախսումներ)	1,216	1,192	
Իրական արժեքի ճշգրտումից զուտ վնաս	(306)	(300)	
Վերջնական մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,893	7,983	

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո	ՀՀՄՍ 40.75(գ)
Ներդրումային գույքից ստացված վարձակալական եկամուտ	1,404	1,377	
Վարձակալական եկամուտ առաջացնող ուղղակի գործառնական ծախսեր (ներառյալ՝ վերանորոգում և պահպանում)	(101)	(353)	
Վարձակալական եկամուտ չառաջացնող ուղղակի գործառնական ծախսեր (ներառված վաճառքի ինքնարժեքում)	(37)	(127)	
Իրական արժեքով հաշվառվող ներդրումային գույքից զուտ շահույթ	1,266	897	

Խումբը չունի որևէ սահմանափակում իր ներդրումային գույքի իրացման ուղղությամբ, ինչպես նաև պայմանագրային պարտավորություններ ներդրումային գույքի գնման, կառուցման կամ կատարելագործման կամ ներդրումային գույքի վերանորոգման, պահպանման և բարելավման գծով:

ՀՀՄՍ 40.75(ե)
ՀՀՄՍ 40.75(ը)
ՀՀՄՍ 40.75(դ)
ՀՀՄՍ 40.75(ե)

Ներդրումային գույքը հաշվառվում է իրական արժեքով, որը որոշվել է «Չարթերդ Սրվեյրս ընդ Քո» լիցենզավորված գնահատման ընկերության կողմից 2011 և 2010թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: «Չարթերդ Սրվեյրս ընդ Քո» ընկերությունը հանդիսանում է տվյալ տեսակի ներդրումային գույք գնահատելու փորձագետ: Գույքի իրական արժեքը չի որոշվել շուկայական տեղեկատվության հիման վրա՝ գույքի բնույթից ելնելով և համեմատական տվյալների բացակայության պատճառով: Փոխարենը՝ Գնահատման միջազգային ստանդարտների կոմիտեի առաջարկների համաձայն կիրառվել է գնահատման մոդել: Գնահատումն իրականացնելու նպատակով օգտագործվել են հետևյալ մուտքային տվյալները՝

	2011թ.	2010թ.	ՀՀՄՍ 40.75(դ)
Եկամտաբերություն (%)	6 – 7%	5 – 6%	
Գնաճի մակարդակ (%)	3.5%	3%	
Երկարատև ժամանակի ընթացքում դատարկ տարածքների մասնաբաժին (%)	9%	5%	
Վարձավճարների իրական դրույքների երկարաժամկետ աճ (%)	3%	4%	

Մեկնաբանություն

Խումբը նախընտրել է գնահատել ներդրումային գույքն իրական արժեքով ՀՀՄՍ 40 ստանդարտի համաձայն: ՀՀՄՍ 40-ը թույլ է տալիս ներդրումային գույքը հաշվառել պատմական արժեքով՝ նվազեցնելով մաշվածության և արժեզրկման գծով պահուստները: Եթե Խումբը ներդրումային գույքը հաշվառեր սկզբնական արժեքով, ապա սկզբնական արժեքի հիմունքների և մաշվածության դրույքների (ինչպես հիմնական միջոցների դեպքում է) վերաբերյալ տեղեկատվությունը պետք է բացահայտեր իրական արժեքի բացահայտումների հետ միասին, ներառյալ իրական արժեքները որոշելու համար կիրառված մեթոդները և էական ենթադրությունները:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

15. Ոչ նյութական ակտիվներ

	Մշակման ծախսումներ	Արտոնագրեր և լիցենզիաներ	Գույվիլ	Ընդամենը	ՀՀՄՄ 38.118(գ) ՀՀՄՄ 38.118(ե)
	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	
Սկզբնական արժեք					
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	1,585	635	119	2,339	
Ավելացումներ – (ներքին մշակումներ)	390	–	–	390	
Դուստր կազմակերպության ձեռքբերում (Ծան. 5)	–	–	131	131	
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,975	635	250	2,860	
Ավելացումներ – (ներքին մշակումներ)	587	–	–	587	
Դուստր կազմակերպության ձեռքբերում (Ծան. 5)	–	1,200	2,231	3,431	
Ընդհատված գործունեություն (Ծան. 11)	–	(138)	–	(138)	
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,562	1,697	2,481	6,740	
Ամորտիզացիա և արժեզրկում					
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	165	60	–	225	
Ամորտիզացիա	124	50	–	174	
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	289	110	–	399	
Ամորտիզացիա	95	30	–	125	
Արժեզրկում (Ծան. 17)	–	–	200	200	
Ընդհատված գործունեություն (Ծան. 11)	–	(3)	–	(3)	
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	384	137	200	721	
Զուտ հաշվեկշռային արժեք					
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,178	1,560	2,281	6,019	
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,686	525	250	2,461	
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	1,420	575	119	2,114	

Խումբն իրականացնում է երկու հիմնական գիտահետազոտական նախագծեր հակահիդրոէկային անվտանգության ոլորտում՝ հրդեհի բացահայտման և մարման համակարգերի կատարելագործում, ինչպես նաև ավտոմեքենաներում և ինքնաթիռներում օգտագործվող կրակապաշտպան սարքավորումների կատարելագործում: Էլեկտրոնային սարքավորումների ոլորտում Խմբի հետազոտության և մշակման գործունեությունը կենտրոնացել է անվտանգության ապահովման սարքավորումների մշակման վրա, որոնք կառավարվում են ինտերնետային ցանցի միջոցով: Հետազոտության և մշակման բոլոր այն ծախսումները, որոնք ենթակա չէին կապիտալացման, ճանաչվել են վարչական ծախսերում (Ծան. 9.7):

ՀՀՄՄ
38.118(դ)

Հաշվետու տարվա ընթացքում ձեռքբերում

Ձեռնարկատիրական գործունեության միավորումների միջոցով ձեռքբերված ոչ նյութական ակտիվներն իրենցից ներկայացնում են արտոնագրեր և լիցենզիաներ: Այս արտոնագրերը համապատասխան պետական մարմնի կողմից տրամադրվել են նվազագույնը 10 տարի ժամկետով, մինչդեռ լիցենզիաները ձեռք են բերվել ժամկետի վերջում երկարացնելու հնարավորությամբ՝ որոշ հավելվածարով կամ անվճար: Քանի որ նախկինում ձեռքբերված լիցենզիաները երկարացվել են, Խումբը որոշել է այս ոչ նյութական ակտիվները ճանաչել որպես անորոշ օգտակար ծառայություն ունեցող: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ստուգվել է տվյալ ակտիվների արժեզրկումը (Ծան. 17):

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

16. Այլ ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

16.1 Այլ ֆինանսական ակտիվներ

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո	2010թ. հունվարի 1-ի դրությամբ 000, եվրո	ՖՀՄՄ 7.6 ՖՀՄՄ 7.8
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական գործիքներ				
Դրամական միջոցների հոսքերի հեջավորում Արտարժույթի փոխանակման ֆորվարդ պայմանագրեր	252	153	137	
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ				
Որպես հեջավորում չնախատեսված ածանցյալ գործիքներ Արտարժույթի փոխանակման ֆորվարդ պայմանագրեր	640	-	-	
Պարունակվող ածանցյալ գործիքներ	210	-	-	
Ընդամենը իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	1,102	153	137	
Փոխառություններ և դեբիտորական պարտքեր				
Մուրհակներ	3,674	1,685	1,659	
Ատոցիացված կազմակերպությանը տրված վարկեր	200	-	-	
Տուօրեններին տրված վարկեր	13	8	8	
Ընդամենը փոխառություններ և դեբիտորական պարտքեր	3,887	1,693	1,667	
Վաճառքի համար մատչելի ներդրումներ				
Չգնանշվող բաժնետոմսեր	1,163	1,023	1,040	
Գնանշվող բաժնետոմսեր	337	300	334	
Գնանշվող պարտատոմսեր	612	600	378	
Ընդամենը վաճառքի համար մատչելի ներդրումներ	2,112	1,923	1,752	
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	7,101	3,769	3,556	
Ընդամենը ընթացիկ	551	153	137	
Ընդամենը ոչ ընթացիկ	6,550	3,616	3,419	

Վաճառքի համար մատչելի ներդրումներ՝ չգնանշվող բաժնային գործիքներ

Խումբն ունի չվերահսկող բաժնեմաս (2%-ից 9%) այն կազմակերպություններում, որոնց հետ համագործակցել է հետազոտություն իրականացնելիս: Չգնանշվող բաժնետոմսերի իրական արժեքը որոշվել է դրամական միջոցների հոսքերի գեղջման մոդելի միջոցով: Գնահատումը ղեկավարությունից պահանջում է մոդելի սկզբնական տվյալների (ներառյալ՝ պարտքային ռիսկի և փոփոխականության) վերաբերյալ որոշակի ենթադրություններ: Տարբեր գնահատումների հավանականությունը որոշակի սահմանում կարելի է ողջամտորեն կանխատեսել, և այն օգտագործվել է ղեկավարության կողմից չգնանշվող բաժնային գործիքների իրական արժեքը որոշելիս: Ղեկավարությունը սահմանել է, որ եթե գնահատման մոդելում որպես նախնական տվյալներ օգտագործվեին հնարավոր այլ տարբերակներ, իրական արժեքը կնվազեր 24,000 եվրոյով (2010թ.՝ 25,000 եվրո, 2010թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 18,000 եվրո)՝ եթե ենթադրությունները լինեին ավելի քիչ բարենպաստ, և իրական արժեքը կաճեր 21,000 եվրոյով (2010թ.՝ 22,000 եվրո, 2010թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 16,000 եվրո)՝ ավելի նպաստավոր ենթադրությունների դեպքում:

ՖՀՄՄ 7.27
ՀՀՄՄ 39.40A
74-79(գ)

ՖՀՄՄ 7.27A(ե)

Վաճառքի համար մատչելի ներդրումներ՝ գնանշվող պարտքային և բաժնային գործիքներ

Խումբն ունի ներդրումներ շուկայում գնանշվող բաժնային և պարտքային գործիքներում: Գնանշվող պարտքային և բաժնային գործիքների իրական արժեքը որոշվում է ակտիվ շուկայում հրապարակվող գնանշումների հիման վրա:

ՖՀՄՄ 7.27

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

16. Այլ ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

16.1 Այլ ֆինանսական ակտիվներ (շարունակություն)

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումների արժեզրկում

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումների համար Խումբը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատում է, արդյոք, գոյություն ունեն ներդրման կամ ներդրումների խմբի արժեզրկման անկողմնակալ վկայություններ: Վաճառքի համար մատչելի բաժնային ներդրումների պարագայում արժեզրկման անկողմնակալ վկայությունը ներառում է ներդրման իրական արժեքի նշանակալի և երկարաժամկետ նվազումն իր սկզբնական արժեքից: «Նշանակալի» և «երկարաժամկետ» սահմանումները պահանջում են դատողություններ: Դատողություններ կատարելիս Խումբը այլ գործոնների հետ միասին գնահատում է բաժնետոմսի գների պատմական շարժը, այն ժամանակահատվածը, որի ընթացքում ներդրման սկզբնական արժեքը չի գերազանցել իրական արժեքը, և այդ տարբերությունը:

ՀՀՄՍ 39.58
ՀՀՄՍ 39.67
ՀՀՄՍ 39.68
ՀՀՄՍ 39.69

Տվյալ չափանիշների հիման վրա Խումբը վաճառքի համար մատչելի ներդրումների՝ գնանշվող պարտքային գործիքների գծով ճանաչել է 88,000 եվրո արժեզրկում, իսկ վաճառքի համար մատչելի ներդրումների՝ գնանշվող բաժնային գործիքների գծով 23,000 եվրո արժեզրկում, որոնք ճանաչվել են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ֆինանսական ծախսերում (Ծան. 9.3):

16.2 Այլ ֆինանսական պարտավորություններ

	2011թ.	2010թ.	2010թ. հունվարի 1-ի դրությամբ	ՖՀՄՍ 7.6 ՖՀՄՍ 7.8
	000, եվրո	000, եվրո	000, եվրո	
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ				
Պայմանական հատուցում (Ծան. 5)	1,072	-	-	
Իրական արժեքի հեջավորում				
Տոկոսային սվոպեր	35	-	-	
Որպես հեջավորում չնախատեսված ածանցյալ գործիքներ				
Արտարժույթի փոխանակման ֆորվարդ պայմանագրեր	720	-	-	
Պարունակվող ածանցյալ գործիքներ	782	-	-	
Ընդամենը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ	2,609	-	-	
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ				
Դրամական միջոցների հոսքերի հեջավորում				
Արտարժույթի փոխանակման ֆորվարդ պայմանագրեր	170	254	271	
Ապրանքային ֆորվարդ պայմանագրեր	980	-	-	
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ	1,150	254	271	
Ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական պարտավորություններ				
Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր	87	49	32	
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող այլ ֆինանսական պարտավորություններ	87	49	32	
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	3,846	303	303	
Ընդամենը ընթացիկ	3,040	303	303	
Ընդամենը ոչ ընթացիկ	806	-	-	

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

16. Այլ ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

16.2 Այլ ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

Պայմանական հատուցում

«Էքստինգուիշեր Լիմիթեդ»-ի նախկին սեփականատիրոջ հետ կնքված գնման պայմանագրի շրջանակներում ձեռք էր բերվել համաձայնություն պայմանական հատուցման վերաբերյալ: Հատուցման չափը կախված է 12 ամսվա ընթացքում «Էքստինգուիշեր Լիմիթեդ»-ի նախքան հարկումը շահույթից: Ձեռքբերման ամսաթվի դրությամբ հատուցման իրական արժեքը կազմում էր 714,000 եվրո, որը ճշգրտվել է 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բյուջեով նախատեսվածից գործունեության ավելի բարձր արդյունքների շնորհիվ և կազմել 1,071,500 եվրո: Հատուցումը ենթակա է վերջնական չափման և վճարման նախկին սեփականատերերին 2011թ. ապրիլի 30-ին: Հատուցման գծով այլ հետագա նշանակալի փոփոխություններ չեն ակնկալվում:

Մեկնաբանություն

ՖՀՄՍ 7.7-ը պահանջում է տեղեկատվության բացահայտում, որը հնարավորություն կընձեռի ֆինանսական հաշվետվություններ օգտագործողներին գնահատել ֆինանսական գործիքների նշանակությունը ֆինանսական վիճակի և գործունեության տեսանկյունից: Այնուամենայնիվ, ստանդարտը չի սահմանում որևէ հատուկ մանրամասների բացահայտման պահանջներ: Զանի որ Խումբն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ունի տարբեր ֆինանսական ակտիվների, պարտավորությունների և ածանցյալ գործիքների նշանակալի գումար, այն որոշել է ֆինանսական հաշվետվություններ օգտագործողներին ներկայացնել մանրամասն տեղեկատվություն ֆինանսական տարբեր գործիքների և դրանց իրական արժեքների վերաբերյալ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

16. Այլ ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

16.2 Այլ ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

Տոկոսային վարկեր և փոխառություններ

Տոկոսադրույք %	Մարման ժամկետ	2011թ.	2010թ.	2010թ.	ՖՀՄՄ 7.7
		2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո	հունվարի 1- ի դրությամբ 000, եվրո	
Ընթացիկ տոկոսային վարկեր և փոխառություններ					
Ֆինանսական վարձակալության և ապահովված ակտիվների գնման պայմանագրերի գծով պարտավորություններ (Ծան. 30)					
7.8	2012թ.	83	51	47	
EURIBOR + 1.0	Ցպահանջ	966	2,650	2,750	
Այլ ընթացիկ վարկեր					
1,500,000 եվրո վարկ (2010թ.՝ 1,400,000 եվրո)					
EURIBOR + 0.5	2012թ. նոյեմբերի 1	1,411	–	–	
EURIBOR + 0.5	2011թ. մարտի 31	–	74	1,758	
Ընդամենը ընթացիկ տոկոսային վարկեր և փոխառություններ					
		2,460	2,775	4,555	
Ոչ ընթացիկ տոկոսային վարկեր և փոխառություններ					
Ֆինանսական վարձակալության և ապահովված ակտիվների գնման պայմանագրերի գծով պարտավորություններ (Ծան. 30)					
7.8	2013-2014թթ.	905	943	938	
8%	2013-2019թթ.	3,374	3,154	3,154	
8.25% ապահովված 3,600,000 ԱՄՆ դոլարի վարկ					
*LIBOR + 0.2	2017թ. մայիսի 31	2,246	–	–	
LIBOR + 2.0	2017թ. հուլիսի 31	3,479	3,489	3,489	
Այլ ոչ ընթացիկ վարկեր					
1,500,000 եվրո բանկային վարկ (2010թ.՝ 1,400,000 եվրո)					
EURIBOR + 0.5	2012թ. նոյեմբերի 1	–	1,357	1,357	
2,750,000 եվրո բանկային վարկ (2010թ.՝ 2,500,000 եվրո)					
EURIBOR + 1.1	2014-2016թթ.	2,486	2,229	2,229	
EURIBOR + 0.5	2015թ. մարտի 31	2,078	2,078	2,078	
7.5	2016թ. հունվարի 1	–	5,809	3,164	
Հատուկ նշանակության կազմակերպությունում գործընկերոջից ստացված վարկ					
11.00	2014թ.	3,000	–	–	
EURIBOR + 1.1	2015թ. հունիսի 30	510	500	505	
		18,078	19,559	16,914	
Փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր					
Փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր					
11.65	2013-2014թթ.	2,778	2,644	2,522	
Ընդամենը ոչ ընթացիկ տոկոսային վարկեր և փոխառություններ					
		20,856	22,203	19,436	

* ներառյալ համապատասխան տոկոսային սվոպի ազդեցությունը:

Մեկնաբանություն

ՖՀՄՄ 7.7-ը պահանջում է տեղեկատվության բացահայտում, որը հնարավորություն կընձեռի ֆինանսական հաշվետվություններ օգտագործողներին գնահատել ֆինանսական գործիքների նշանակությունը ֆինանսական վիճակի և գործունեության տեսանկյունից: Այնուամենայնիվ, ստանդարտը չի սահմանում որևէ հատուկ մանրամասների բացահայտման պահանջներ: Զանի որ Խումբն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ունի տոկոսային վարկերի և փոխառությունների նշանակալի գումար, այն որոշել է ֆինանսական հաշվետվություններ օգտագործողներին ներկայացնել մանրամասն տեղեկատվություն արդյունավետ տոկոսադրույքի, ինչպես նաև վարկերի մարման վերաբերյալ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

16. Այլ ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

16.2 Այլ ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

Բանկային օվերդրաֆտներ

ՖՀՄՍ 7.7

Բանկային օվերդրաֆտները ապահովված են Խմբի կարճաժամկետ ավանդներով:

1,500,000 եվրո կազմող բանկային վարկ

Տվյալ վարկը ապահովված չէ և ենթակա է վճարման ամբողջությամբ 2012թ. նոյեմբերի 1-ին:

8% տոկոսադրույքով պարտատոմսեր

8% տոկոսադրույքով պարտատոմսերը ենթակա են վճարման տարեկան 350,000 եվրո հավասարաչափ մարումներով սկսած 2013թ. հունվարի 1-ից:

8.25% տոկոսադրույքով ապահովված վարկ

Վարկն ապահովված է առաջնահերթ գրավ հանդիսացող Խմբի հողատարածքի և շենքերի մի մասով, որոնց հաշվեկշռային արժեքը կազմում է 2,400,000 եվրո (2010թ.՝ գրո, 2010թ. հունվարի 1՝ գրո):

Ապահովված բանկային վարկ

Տվյալ վարկը ստացվել է վեց տարի ժամկետով՝ բազմակի օգտագործման հնարավորությամբ: Վարկը ենթակա է մարման հաշվետու ամսաթվից հետո 12 ամիսների ընթացքում, սակայն դասակարգվել է որպես երկարաժամկետ, քանի որ Խումբը հնարավորություն ունի և ակնկալում է օգտագործել բազմակի օգտագործման վարկը վերաֆինանսավորելու իրավունքը: Վերաֆինանսավորման հնարավորությունը գործում է մինչև 2017թ. հուլիսի 31-ը: Մարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 3,500,000 եվրո: Վարկն ապահովված է առաջնահերթ գրավ հանդիսացող Խմբի հողատարածքների և շենքերի մի մասով, որոնց հաշվեկշռային արժեքը կազմում է 5,000,000 եվրո (2010թ.՝ 5,000,000 եվրո, 2010թ. հունվարի 1՝ 4,500,000 եվրո):

ՀՀՄՍ 1.73

2,750,000 եվրո կազմող բանկային վարկ

Հաշվետու ժամանակաշրջանում Խումբը տվյալ վարկային պայմանագրի շրջանակներում ավելացրել է փոխառության գումարը 250,000 եվրոյով: Տվյալ վարկը ենթակա է մարման հետևյալ ամսաթվերին՝ 1,250,000 եվրո 2014թ. դեկտեմբերի 31-ին և 1,500,000 եվրո 2016թ. դեկտեմբերի 31-ին:

2,200,000 եվրո կազմող բանկային վարկ

Տվյալ վարկը ապահովված չէ և ենթակա է ամբողջությամբ մարման 2015թ. մարտի 31-ին: 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վճարման ենթակա գումարը կազմում էր 74,000 եվրո և մարվել է 2011թ. մարտի 31-ին:

Համատեղ ձեռնարկման վարկում բաժին

Այս վարկը վերաբերում է համատեղ ձեռնարկման 1,020,000 եվրո կազմող բանկային վարկի Խմբի 50% բաժնին (2010թ.՝ 1,000,000 եվրո, 2010թ. հունվարի 1՝ 1,010,000 եվրո) և ենթակա է ամբողջությամբ մարման 2015թ. հունիսի 30-ին:

Հատուկ նշանակության կազմակերպությունում գործընկերոջից ստացված վարկ

2011թ. փետրվարին Խումբը և երրորդ կողմ հանդիսացող գործընկերը հիմնել են հատուկ նշանակության կազմակերպություն՝ հակահրդեհային սարքավորումների անվտանգությունը փորձարկող համալիր ձեռք բերելու, կառուցելու և ղեկավարելու նպատակով: 2011թ. գործընկերը հակահրդեհային սարքավորումների անվտանգության փորձարկման համալիրի ձեռքբերման և կառուցման համար տրամադրել է մոտավորապես 2.7 միլիոն եվրո և պարտավորվում է տրամադրել ևս 1 միլիոն եվրո հետագա յուրաքանչյուր երկու տարիների ընթացքում նախագիծը ավարտելու նպատակով: Ակնկալվում է, որ կառուցումը կավարտվի 2012թ. և կկազմի մոտավորապես 5 միլիոն եվրո: Համալիրը շահագործման հանձնելուց սկսած գործընկերն իրավունք ունի ստանալու 22% եկամուտ շրջանառության մեջ գտնվող բաժնետոմսերից: Չորրորդ ժամանակաշրջանի վերջում գործընկերը իրավունք ունի ստանալու ներդրված կապիտալի 100%-ը: Արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 11%, իսկ ներդրված գումարի հաշվեգրված տոկոսները 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 303,000 եվրո:

Փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր

2011 և 2010թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկվել է 2,500,000 հատ փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր: Յուրաքանչյուր բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1 եվրո և բաժնետոմս տիրապետողի ցանկությամբ կարող է փոխարկվել Խմբի մայր կազմակերպության սովորական բաժնետոմսերի 2014թ. հունվարի 1-ին՝ մեկ սովորական բաժնետոմսը երեք արտոնյալ բաժնետոմսերի դիմաց համամասնությամբ: Ցանկացած արտոնյալ չփոխարկված բաժնետոմս կզնվի 2017թ. դեկտեմբերի 31-ին յուրաքանչյուրի դիմաց վճարելով 1.20 եվրո: Արտոնյալ բաժնետոմսերի գծով հաշվեգրվում է շահաբաժին տարեկան 7% տոկոսադրույքով, որը ենթակա է վճարման համապատասխան ժամանակաշրջանի վերջում կիսամյակը մեկ անգամ՝ հունիսի 30-ին և դեկտեմբերի 31-ին: Շահաբաժինների նկատմամբ իրավունքները կուտակային չեն: Լուծարման դեպքում սովորական բաժնետոմսերի գծով վճարումներն իրականացվում են արտոնյալ բաժնետոմսերի գծով վճարումներից հետո:

ՀՀՄՍ
1.79(ա)(v)

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

16. Այլ ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

16.3 Հեջավորում և ածանցյալ գործիքներ

Որպես հեջավորման գործիք չնախատեսված ածանցյալ գործիքներ

ՖՀՄՄ 7.22

Խումբն օգտագործում է արտարժույթով արտահայտված փոխառություններ և արժույթային ֆորվարդ պայմանագրեր՝ որոշ գործառնական ռիսկերին ենթարկվածությունը կառավարելու նպատակով: Այդպիսի արժույթային ֆորվարդ պայմանագրերը նախատեսված չեն որպես դրամական միջոցների հոսքերի, իրական արժեքների կամ զուտ ներդրումների հեջավորում, և կնքվում են արժույթային գործառնական ռիսկ ունեցող ժամանակաշրջանների համար, որը սովորաբար կազմում է 1-ից 24 ամիս:

Դրամական միջոցների հոսքերի հեջավորում

Արտարժույթային ռիսկ

ՖՀՄՄ 7.23(ա)

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, Խումբն ունեցել է արտարժույթի փոխանակման ֆորվարդ պայմանագրեր՝ նախատեսված հեջավորելու Միացյալ Նահանգների հաճախորդներին ապագա ակնկալվող վաճառքները, որոնց գծով Խումբը կանխատեսում է գործարքների բարձր հավանականություն: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը նաև ունի արտարժույթի փոխանակման ֆորվարդ պայմանագրեր, որոնք նախատեսված են հեջավորելու Միացյալ Թագավորության մատակարարներից ապագա ակնկալվող գնումները, որոնց համար Խումբն ունի պայմանագրային պարտավորություն: Արտարժույթի փոխանակման ֆորվարդ պայմանագրերը օգտագործվում են կազմակերպության պայմանագրային պարտավորությունների արտարժույթային ռիսկը հեջավորելու նպատակով:

2010թ. դեկտեմբերի 31-ի և 2010թ. հունվարի 1-ի դրությամբ Խումբն ուներ արտարժույթի փոխանակման ֆորվարդ պայմանագրեր նախատեսված հեջավորելու Միացյալ Նահանգների հաճախորդներին ապագա ակնկալվող վաճառքները, որոնց գծով Խումբը կանխատեսում է գործարքների բարձր հավանականություն: 2010թ. դեկտեմբերի 31-ի և 2010թ. հունվարի 1-ի դրությամբ Խումբը նաև ուներ արտարժույթի փոխանակման ֆորվարդ պայմանագրեր՝ նախատեսված հեջավորելու Միացյալ Թագավորության մատակարարներից ապագա ակնկալվող գնումները, որոնց գծով Խումբը կանխատեսում է գործարքների բարձր հավանականություն: Արտարժույթի փոխանակման ֆորվարդ պայմանագրերը օգտագործվում են բարձր հավանականություն ունեցող գործարքների արտարժույթային ռիսկը հեջավորելու նպատակով:

	2011թ.		2010թ.		2010թ. հունվարի 1-ի դրությամբ	
	Պարտավոր		Պարտավոր		Պարտավոր	
	Ակտիվներ	ույթություններ	Ակտիվներ	ույթություններ	Ակտիվներ	ույթություններ
	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո
Արտարժույթային ֆորվարդ պայմանագրեր						
Իրական արժեք	252	(170)	153	(254)	137	(271)

Արտարժույթային ֆորվարդ պայմանագրերի ժամկետները սահմանվել են այնպես, որ համընկնեն պայմանագրային պարտավորությունների ժամկետների հետ: Բարձր հավանականություն ունեցող գործարքները, որոնց նկատմամբ կիրառվել է հեջավորման հաշվառում, բայց որոնք տեղի չեն ունեցել, բացակայում են: Հեջավորման անարդյունավետության էական տարր չի գրանցվել, որը կպահանջեր ձևաչափում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Պայմանական գումարները ներկայացված են Ծան. 31-ում:

ՖՀՄՄ 7.24(բ)

ՖՀՄՄ 7.23(գ)

2012թ. հունվարին ակնկալվող ապագա վաճառքների դրամական միջոցների հոսքերի հեջավորումը գնահատվել է որպես մեծապես արդյունավետ, իսկ 252,000 եվրո չիրացված զուտ օգուտները 76,000 եվրո հետաձգված հարկային պարտավորության հետ միասին ձևաչափել են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

16. Այլ ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

16.3 Հեջավորում և ածանցյալ գործիքներ (շարունակություն)

2012թ. փետրվարին և մարտին ակնկալվող ապագա գնումների դրամական միջոցների հոսքերի հեջավորումը նույնպես գնահատվել է որպես մեծապես արդյունավետ, և 2011թ. դեկտեմբերի 31-ին տվյալ պայմանագրերին վերաբերող 170,000 եվրո չիրացված վնասը 51,000 եվրո հետաձգված հարկային ակտիվի հետ միասին ճանաչվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: ՖՀՄՄ 7.23(գ)

ՖՀՄՄ 7.23(գ)

2010թ. դեկտեմբերի վերջին 2011թ. առաջին եռամսյակում ակնկալվող ապագա վաճառքների դրամական միջոցների հոսքերի հեջավորումը գնահատվել է որպես մեծապես արդյունավետ և տվյալ պայմանագրերին վերաբերող 153,000 եվրո չիրացված օգուտը 46,000 եվրո հետաձգված հարկային պարտավորության հետ միասին ներառվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: 2011թ. առաջին եռամսյակում ակնկալվող ապագա գնումների դրամական միջոցների հոսքերի հեջավորումը նույնպես գնահատվել է որպես մեծապես արդյունավետ և տվյալ պայմանագրերին վերաբերող 254,000 եվրո չիրացված վնասը 76,000 եվրո հետաձգված հարկային ակտիվի հետ միասին ներառվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

2010թ. հունվարի 1-ի դրությամբ 2010թ. առաջին եռամսյակում ակնկալվող ապագա վաճառքների դրամական միջոցների հոսքերի հեջավորումը գնահատվել է որպես մեծապես արդյունավետ և տվյալ պայմանագրերին վերաբերող 137,000 եվրո չիրացված օգուտը և 41,000 եվրո հետաձգված հարկային պարտավորության հետ միասին ներառվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: 2010թ. առաջին եռամսյակում ակնկալվող ապագա գնումների դրամական միջոցների հոսքերի հեջավորումը նույնպես գնահատվել է որպես մեծապես արդյունավետ և տվյալ պայմանագրերին վերաբերող 271,000 եվրո չիրացված վնասը 81,000 եվրո հետաձգված հարկային ակտիվի հետ միասին ներառվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: ՖՀՄՄ 7.23(գ)

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներից տեղափոխված և հեջավորվող հոդվածների հաշվեկշռային արժեքում ներառված գումարները 2011 և 2010թթ. էական չեն: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում մնացած գումարները կմարվեն, թողնելով ազդեցություն 2012թ. ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում 82,000 եվրո օգուտ: ՖՀՄՄ 7.23(դ)

ՖՀՄՄ 7.23(ե)

ՖՀՄՄ 7.23(ա)

Ապրանքների գների փոփոխության ռիսկ

Խումբը պարբերաբար ձեռք է բերում պղինձ, քանի որ էլեկտրոնային սեգմենտում էլեկտրոնային սարքավորումների արտադրության գործառնական գործունեությունը պահանջում է պղինձի մշտական մատակարարում: Վերջին 12 ամիսների ընթացքում պղինձի գնի փոփոխականության աճը հանգեցրեց ապրանքային ֆորվարդ պայմանագրերի կնքման որոշմանը:

Տնօրենների խորհրդի կողմից հաստատված ռիսկերի կառավարման ռազմավարության համաձայն 2011թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտած պայմանագրերը ակնկալում են նվազեցնել դրամական միջոցների հոսքերի պղինձի գնի տատանումներին վերագրվող փոփոխականությունը պղինձի բարձր հավանականություն ունեցող կանխատեսված ձեռքբերման նկատմամբ: Պայմանագրերը սահմանված են հեջավորելու պղինձի գնման գնի փոփոխականությունը 3-ից 12 ամիս ժամանակահատվածի ընթացքում՝ հիմնվելով առկա գնման պայմանագրերի վրա: Խումբը որպես հեջավորվող ռիսկ նախատեսել է միայն ապրանքի ընդհանուր գնման գնի «սփոթ» բաղադրիչի փոփոխությունը: Այսինքն՝ հեջավորման հարաբերություններից բացառվում են ապրանքային ֆորվարդ պայմանագրերի ֆորվարդային բաղադրիչները: Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ֆինանսական ծախսերում արտացոլված ֆորվարդային բաղադրիչների իրական արժեքի փոփոխությունը հաշվետու տարվա ընթացքում էական չի եղել:

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված ապրանքային ֆորվարդ պայմանագրերի իրական արժեքը կազմում էր 980,000 եվրո պարտավորություն: Հաշվետու տարվա ընթացքում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ գործառնական ծախսերում ներառված անարդյունավետ մասը կազմել է 65,000 եվրո (տես՝ Ծան. 9.2): Հեջավորման կուտակված արդյունավետ մասը, որը կազմում է 915,000 եվրո, արտացոլվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

16. Այլ ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

16.3 Հեջավորում և ածանցյալ գործիքներ (շարունակություն)

Իրական արժեքի հեջավորում

2011թ. դեկտեմբերի 31-ին Խումբն ունեցել է տոկոսադրույքի սվոպ համաձայնություն 3,600,000 ԱՄՆ դոլար պայմանական արժեքով (2,246,000 եվրո) (2010թ.՝ զրո, 2010թ. հունվարի 1՝ զրո), որի համաձայն Խումբը ստանում է վճար 8.25% հաստատուն տոկոսադրույքով և վճարում փոփոխական տոկոսադրույքով՝ LIBOR+0.2% պայմանական գումարից: Սվոպն օգտագործվում է 8.25% տոկոսադրույքով Խմբի ապահովված վարկի իրական արժեքի փոփոխություններին ենթարկվածությունը հեջավորելու նպատակով:

ՖՀՄՍ 7.22
ՖՀՄՍ 7.24(ա)

Տոկոսադրույքի սվոպի իրական արժեքի նվազումը 35,000 եվրոյով (2010թ.՝ զրո) ճանաչվել է ֆինանսական ծախսերում և հաշվանցվել բանկային փոխառությունների նմանատիպ օգուտով: 2011թ. ճանաչված անարդյունավետությունը էական չի եղել:

Արտերկրյա ստորաբաժանումներում զուտ ներդրումների հեջավորում

2011թ. դեկտեմբերի 31-ին վարկերում ներառված 3,600,000 ԱՄՆ դոլար (2,246,000 եվրո, ներառյալ՝ վերոնշյալ տոկոսային սվոպի ազդեցությունը) կազմող փոխառությունը նախատեսված էր որպես Միացյալ Նահանգներում «Վայրվորկս ԻՆԿ.» և «Սփրինկլերս ԻՆԿ.» դուստր կազմակերպություններում զուտ ներդրումների հեջավորում: Փոխառությունը օգտագործվում էր այդ ներդրումների ԱՄՆ դոլարի արտարժույթի փոխանակման ռիսկին ենթարկվածությունը հեջավորելու նպատակով: Այս փոխառությունների վերահաշվարկից օգուտները և վնասները արտացոլված են սեփական կապիտալում և հաշվանցում են դուստր կազմակերպություններում զուտ ներդրումների վերահաշվարկման օգուտները և վնասները: 2011 և 2010թթ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարիների ընթացքում անարդյունավետություն չի գրանցվել:

ՖՀՄՍ 7.22

ՖՀՄՍ 7.24(գ)

Պարունակվող ածանցյալ գործիքներ

2011թ. Խումբը կնքել է երկարաժամկետ վաճառքի պայմանագրեր Շվեյցարիայի և Նորվեգիայի հաճախորդների հետ: Պայմանագրերում նախատեսված վաճառքի գները հաստատուն են և սահմանված են կանադական դոլարով: Պայմանագրերը պահանջում են ֆիզիկական մատակարարում և կապիվ են ապրանք մատակարարելու նպատակներով՝ ըստ գնորդների ակնկալվող վաճառքի պահանջների: Տվյալ պայմանագրերը ներառում են արտարժույթի փոխանակման պարունակվող ածանցյալ գործիքներ, որոնք պետք է առանձնացվեն հիմնական պայմանագրերից:

ՀՀՄՍ
39.401-33(դ)

ՀՀՄՍ
39.401-33(ե)

Խումբը Հարավային Աֆրիկայի և Ռուսաստանի մի քանի մատակարարների հետ կնքել է արույրի և քրոմի (որոնց համար գոյություն ունի ակտիվ շուկա) գնման պայմանագրեր: Տվյալ պայմանագրերի գնման գները կապված են էլեկտրաէներգիայի գների հետ: Պայմանագրերը ներառում են պարունակվող ապրանքային սվոպեր, որոնք պահանջում են առանձնացում հիմնական պայմանագրերից:

Վերոնշյալ պարունակվող արտարժույթային և ապրանքային ածանցյալ գործիքները առանձնացվել են և հաշվառվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Պարունակվող ածանցյալ գործիքների հաշվեկշռային արժեքը 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 210,000 եվրո (այլ ֆինանսական ակտիվներ) և 782,000 եվրո (այլ ֆինանսական պարտավորություններ) (2010թ.՝ երկուսն էլ զրո, 2010թ. հունվարի 1՝ երկուսն էլ զրո): Շահույթի կամ վնասի ազդեցությունը համապատասխանաբար արտացոլվում է ֆինանսական եկամուտներում և ֆինանսական ծախսերում:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

16. Այլ ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

16.4 Իրական արժեքներ

Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված Խմբի ֆինանսական գործիքների հաշվեկշռային և իրական արժեքի համեմատությունը ներկայացված է ստորև.

ՖՀՄՍ 7.25
ՖՀՄՍ 7.26

	Հաշվեկշռային արժեք			Իրական արժեք		
	2011թ. 000, Եվրո	2010թ. 000, Եվրո	2010թ. հունվարի 1-ի	2011թ. 000, Եվրո	2010թ. 000, Եվրո	2010թ. հունվարի 1-ի
			դրությամբ 000, Եվրո			դրությամբ 000, Եվրո
Ֆինանսական ակտիվներ						
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	27,672	24,290	25,537	27,672	24,290	25,537
Այլ ֆինանսական ակտիվներ						
Փոխառություններ և այլ դեբիտորական պարտքեր	3,887	1,693	1,667	3,887	1,693	1,667
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումներ	2,112	1,923	1,752	2,112	1,923	1,752
Արտարժույթի փոխանակման ֆորվարդ պայմանագրեր	640	–	–	640	–	–
Պարունակվող ածանցյալ գործիքներ	210	–	–	210	–	–
Արդյունավետ հեջավորման ածանցյալ գործիքներ	252	153	137	252	153	137
Դրամական միջոցներ և կարճաժամկետ ավանդներ	17,112	14,916	11,066	17,112	14,916	11,066
Ընդամենը	51,885	42,975	40,159	51,885	42,975	40,159

Ֆինանսական պարտավորություններ

Տոկոսային վարկեր և փոխառություններ						
Ֆինանսական վարձակալության և ապառիկով ակտիվների գնման պայմանագրերի գծով պարտավորություններ	(988)	(994)	(985)	(1,063)	(1,216)	(1,217)
Լողացող տոկոսադրույքով փոխառություններ*	(12,210)	(9,727)	(11,416)	(12,210)	(9,727)	(11,416)
Հաստատուն տոկոսադրույքով փոխառություններ	(6,374)	(8,963)	(6,318)	(6,374)	(8,963)	(6,318)
Փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր	(2,778)	(2,644)	(2,522)	(2,778)	(2,644)	(2,522)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	(19,556)	(21,281)	(20,599)	(19,556)	(21,281)	(20,600)
Բանկային օվերդրաֆտներ	(966)	(2,650)	(2,750)	(966)	(2,650)	(2,750)
Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր	(87)	(49)	(32)	(87)	(49)	(32)
Պայմանական հատուցում	(1,072)	–	–	(1,072)	–	–
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Արտարժույթի փոխանակման ֆորվարդ պայմանագրեր	(720)	–	–	(720)	–	–
Պարունակվող ածանցյալ գործիքներ	(782)	–	–	(782)	–	–
Արդյունավետ հեջավորման ածանցյալ գործիքներ	(1,185)	(254)	(271)	(1,185)	(254)	(271)
Ընդամենը	(46,718)	(46,562)	(44,893)	(46,793)	(46,784)	(45,126)

* Ներառում է 8.25% տոկոսադրույքով ապահովված վարկեր, որոնք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ճշգրտված տոկոսադրույքի փոփոխության ռիսկի հեջավորման արդյունքում իրական արժեքի փոփոխություններով:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

16. Այլ ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

16.4 Իրական արժեքներ (շարունակություն)

ՖՀՄՄ 7.27

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը ներառված է այն գումարով, որով գործիքը կարող էր փոխանակվել ընթացիկ գործարքում պատրաստական կողմերի միջև, որը բացառում է պարտադրված վաճառքը կամ լուծարումը:

Իրական արժեքները գնահատելու համար օգտագործվել են հետևյալ մեթոդները ու ենթադրությունները.

- ▶ Դրամական միջոցների և կարճաժամկետ ավանդների, առևտրային դեբիտորական պարտքերի, առևտրային կրեդիտորական պարտքերի և այլ ընթացիկ պարտավորությունների իրական արժեքները մոտավոր հավասար են իրենց հաշվեկշռային արժեքներին, քանի որ այդ գործիքները կմարվեն մոտ ապագայում:
- ▶ Երկարաժամկետ հաստատում և լողացող տոկոսադրույքներով դեբիտորական պարտքերը/ փոխառությունները Խմբի կողմից գնահատվում են՝ ելնելով այնպիսի ցուցանիշներից, ինչպիսիք են տոկոսադրույքները, երկրի հատուկ ռիսկային գործոնները, հաճախորդների անհատական վարկունակությունը և ֆինանսավորվող նախագծերի ռիսկային բնութագրերը: Տվյալ գնահատման հիման վրա դեբիտորական պարտքերի ակնկալվող վնասների գծով ստեղծվում են պահուստներ: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պահուստներով նվազեցված տվյալ դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքները էականորեն չեն տարբերվում հաշվարկված իրական արժեքներից:
- ▶ Չգնանշվող պարտատոմսերի իրական արժեքը սահմանվում է ելնելով հաշվետու ամսաթվի դրությամբ հայտարարված գնանշումներից: Չգնանշվող գործիքների, բանկային վարկերի, այլ ֆինանսական պարտավորությունների, ֆինանսական վարձակալությամբ ստանձնած պարտավորությունների և այլ ոչ ընթացիկ պարտավորությունների իրական արժեքները գնահատվում են՝ զեղչելով ապագա դրամական միջոցների հոսքերը և կիրառելով նմանատիպ պայմաններով, պարտքային ռիսկով և մինչև մարումը մնացած նմանատիպ ժամկետներով վարկերի ընթացիկ տոկոսադրույքները:
- ▶ Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանվել է ակտիվ շուկայում գնանշումներից ելնելով, եթե այդպիսիք գոյություն ունեն:
- ▶ Չգնանշվող վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքները գնահատվում են՝ օգտագործելով համապատասխան գնահատման մոդելներ:
- ▶ Խումբն ածանցյալ ֆինանսական գործիքներով իրականացնում է գործառնություններ տարբեր գործընկերների՝ հիմնականում ներդրումային վարկանիշ ունեցող ֆինանսական կազմակերպությունների հետ: Գնահատման մոդելների միջոցով գնահատված ածանցյալ գործիքները, որոնք օգտագործում են շուկայում դիտարկվող ելակետային տվյալներ, հիմնականում հանդիսանում են տոկոսային սվոպեր, արտարժույթի փոխանակման ֆորվարդ պայմանագրեր և ապրանքային ֆորվարդ պայմանագրեր: Ամենահաճախ կիրառվող գնահատման մոդելները ներառում են ֆորվարդ գների սահմանման մոդելները և սվոպ մոդելները, որոնցում օգտագործվում են ներկա արժեքի հաշվարկները: Մոդելներում օգտագործվում են տարբեր ելակետային տվյալներ, ներառյալ՝ գործընկերների վարկունակության վերաբերյալ տեղեկությունները, սփոթ-փոխարժեքները և արտարժույթի ֆորվարդ փոխարժեքները, ինչպես նաև տոկոսադրույքի կորերը և հիմքում ընկած ապրանքների ֆորվարդ գների կորերը:

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շուկայական տեղեկատվության հիման վրա սահմանված ածանցյալ ակտիվների դիրքը ներկայացված է պարտքային ռիսկի գնահատված ճշգրտումով նվազեցված, որը վերաբերում է ածանցյալ գործիքի գծով գործընկերոջ կողմից պարտավորությունները չկատարելու ռիսկին: Գործընկերոջ պարտքային ռիսկի փոփոխությունները էական ազդեցություն չեն ունեցել որպես հեջավորման գործիքներ նախատեսված ածանցյալ գործիքների հեջավորման արդյունավետության և իրական արժեքով արտացոլված այլ ֆինանսական գործիքների վրա:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

16. Այլ ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

16.4 Իրական արժեքներ (շարունակություն)

Իրական արժեքի հիերարխիա

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքները ներկայացված են ստորև.

Խումբը ֆինանսական գործիքների իրական արժեքի որոշման և բացահայտման համար օգտագործում է հետևյալ հիերարխիան՝ ըստ գնահատման մոդելների.

I մակարդակ. ակտիվ շուկաներում համանման ակտիվների կամ պարտավորությունների գնանշումներ (չճշգրտվող);

II մակարդակ. այլ գնահատման մոդելներ, որոնց համար բոլոր ելակետային տվյալները, որոնք էական ազդեցություն են ունենում հաշվետվությունում արտացոլվող իրական արժեքի գումարի վրա, ուղղակի թե անուղղակի կերպով դիտարկելի են:

III մակարդակ. գնահատման մոդելներ, որոնք օգտագործում են այնպիսի ելակետային տվյալներ, որոնք էական ազդեցություն են ունենում հաշվետվությունում արտացոլվող իրական արժեքի գումարի վրա, սակայն դիտարկելի չեն:

Իրական արժեքով չափվող ակտիվներ

	2011թ. դեկտեմբերի 31	I մակարդակ	II մակարդակ	III մակարդակ	\$ՀՄՄ 7.27Ա
	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	
<i>Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝</i>					
Արտարժույթի փոխանակման ֆորվարդ պայմանագրեր՝ հեջավորող	252	–	252	–	
Արտարժույթի փոխանակման ֆորվարդ պայմանագրեր՝ չհեջավորող	640	–	640	–	
Պարունակվող ածանցյալ գործիքներ	210	–	210	–	
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ					
Բաժնետոմսեր	1,500	337	–	1,163	
Պարտատոմսեր	612	612	–	–	

Իրական արժեքով չափվող պարտավորություններ

	2011թ. դեկտեմբերի 31	I մակարդակ	II մակարդակ	III մակարդակ
	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո
<i>Իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ՝</i>				
Արտարժույթի փոխանակման ֆորվարդ պայմանագրեր՝ հեջավորող	170	–	170	–
Ապրանքային ֆորվարդ պայմանագրեր	980	–	980	–
Տոկոսային սվոպեր	35	–	35	–
Արտարժույթի փոխանակման ֆորվարդ պայմանագրեր՝ չհեջավորող	720	–	720	–
Պարունակվող ածանցյալ գործիքներ	782	–	782	–

2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող հաշվետու տարվա ընթացքում իրական արժեքի հիերարխիայի I և II մակարդակների միջև փոխանցումներ չեն իրականացվել:

\$ՀՄՄ 7.27Բ(բ)
\$ՀՄՄ 7.27Բ(գ)

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

16. Այլ ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

16.4 Իրական արժեքներ (շարունակություն)

2010թ. հունվարի 1-ի դրությամբ Խմբի իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները ներկայացված են ստորև.

Իրական արժեքով չափվող ակտիվներ

	2010թ. դեկտեմբերի 31	I	II	III	\$ՀՄՄ 7.27Ա
	000, եվրո	մակարդակ 000, եվրո	մակարդակ 000, եվրո	մակարդակ 000, եվրո	
<i>Իրական արժեքով չափվող կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ`</i>					
Արտարժույթի փոխանակման ֆորվարդ պայմանագրեր` հեջավորող	153	–	153	–	
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ					
Բաժնետոմսեր	1,323	300	–	1,023	
Պարտատոմսեր	600	600	–	–	

Իրական արժեքով չափվող պարտավորություններ

	2010թ. դեկտեմբերի ի 31	I	II	III
	000, եվրո	մակարդակ 000, եվրո	մակարդակ 000, եվրո	մակարդակ 000, եվրո
<i>Իրական արժեքով չափվող կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ`</i>				
Արտարժույթի փոխանակման ֆորվարդ պայմանագրեր` հեջավորող	254	–	254	–

2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող հաշվետու տարվա ընթացում իրական արժեքի հիերարխիայի I և II մակարդակների միջև փոխանցումներ չեն իրականացվել:

\$ՀՄՄ 7.27Բ(բ)
\$ՀՄՄ 7.27Բ(գ)

2010թ. հունվարի 1-ի դրությամբ Խմբի իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները ներկայացված են ստորև.

Իրական արժեքով չափվող ակտիվներ

	2010թ. հունվարի 1	I	II	III	\$ՀՄՄ 7.27Ա
	000, եվրո	մակարդակ 000, եվրո	մակարդակ 000, եվրո	մակարդակ 000, եվրո	
<i>Իրական արժեքով չափվող կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ`</i>					
Արտարժույթի փոխանակման ֆորվարդ պայմանագրեր` հեջավորող	137	–	137	–	
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ					
Բաժնետոմսեր	1,374	334	–	1,040	
Պարտատոմսեր	378	378	–	–	

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

16. Այլ ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

16.4 Իրական արժեքներ (շարունակություն)

Իրական արժեքով չափվող պարտավորություններ

	2010թ.	I	II	III
	հունվարի 1	մակարդակ	մակարդակ	մակարդակ
	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո
Իրական արժեքով չափվող կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ՝				
Արտարժույթի փոխանակման ֆորվարդ պայմանագրեր՝ հեջավորող	271	–	271	–

III մակարդակի ֆինանսական գործիքների իրական արժեքների գնահատումների համաձայնեցում

Խուճրդ չգնանշվող բաժնետոմսերը արտացոլում է վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքների կազմում, որոնք դասակարգված են իրական արժեքի հիերարխիայի III մակարդակում:

ՖՀՄՍ 7.27Բ(գ)
ՖՀՄՍ 7.27Բ(դ)

Խուճրդ ունի չգնանշվող բաժնետոմսեր երեք կազմակերպություններում, որոնց հետ կնքել է համատեղ հետազոտության և համագործակցության համաձայնագիր: Տվյալ համաձայնագրի շրջանակներում Խուճրդ ձեռք է բերել այդ կազմակերպությունների բաժնետոմսերը:

Հաշվետու ժամանակաշրջանի սկզբի և վերջի դրությամբ մնացորդների և շարժի համաձայնեցումը ներկայացված է ստորև.

	«Էվո Լթթ»	«Լաբ Լթթ»	«Թեստ Լթթ»	Ընդամենը
	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո
2010թ. հունվարի 1	232	306	502	1,040
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված օգուտ կամ վնաս	2	(25)	6	(17)
2010թ. դեկտեմբերի 31	234	281	508	1,023
2011թ. հունվարի 1	234	281	508	1,023
Վաճառքներ	(232)	–	–	(232)
Գնումներ	–	870	–	870
Ընդհատված գործունեության կազմում վերադասակարգում (Ծան. 11)	–	–	(508)	(508)
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված օգուտ կամ վնաս	(2)	12	–	10
2011թ. դեկտեմբերի 31	–	1,163	–	1,163

Խուճրդը համապարփակ ֆինանսական արդյունքներում չի ունեցել III մակարդակի ֆինանսական գործիքների գծով օգուտներ կամ վնասներ:

«Էվո Լթթ»-ի հետ հետազոտության համաձայնագիրը ավարտվել է 2011թ., իսկ բաժնետոմսերը վաճառվել են երրորդ կողմին: «Լաբ Լթթ»-ի հետ համագործակցությունը էապես աճել է հետազոտական գործունեության գերազանց արդյունքների շնորհիվ: «Թեստ Լթթ»-ի հետ համագործակցությունը կապված է «Հոգ Լիմիթեդ»-ի ընդհատված գործունեության հետ, ինչի հետևանքով այդ կազմակերպությունում մասնակցությունը վերադասակարգվել է որպես ընդհատված գործունեություն (տես՝ Ծան. 11): Բոլոր գործարքները անկախ կողմերի միջև տեղի ունեցած գործարքներ են:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

17. Գուդվիլի և անորոշ օգտակար ծառայություն ունեցող ոչ նյութական ակտիվների արժեզրկման ստուգում

Արժեզրկման ստուգում իրականացնելու նպատակով ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռքբերված գուդվիլը և անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող լիցենզիաները բաշխվել են երկու դրամաստեղծ միավորների միջև, որոնք միմյուսյն ժամանակ հանդիսանում են նաև գործառնական և հաշվետու սեգմենտներ՝

- ▶ Էլեկտրոնային սարքավորումների դրամաստեղծ միավորներ,
- ▶ Հակահրդեհային սարքավորումների դրամաստեղծ միավորներ:

Յուրաքանչյուր դրամաստեղծ միավորին բաշխված գուդվիլի և լիցենզիաների հաշվեկշռային արժեք՝

	Էլեկտրոնային սարքավորումներ			Հակահրդեհային սարքավորումներ			Ընդամենը			
	2010թ. հունվարի		1	2010թ. հունվարի		1	2010թ. հունվարի		1	
	2011թ.	2010թ.		2011թ.	2010թ.		2011թ.	2010թ.		
	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	
Գուդվիլ	50	250	119	2,231	-	-	2,281	250	119	ՀՀՄՍ 36.134(ա)
Անորոշ օգտակար ծառայություն ունեցող արտոնագրեր	360	-	-	1,050	240	240	1,410	240	240	ՀՀՄՍ 36.134(բ)

2011թ. դեկտեմբերի 31-ին Խումբն իրականացրել է տարեկան արժեզրկման ստուգում: Արժեզրկման հայտանիշները ստուգելիս Խումբը այլ գործոնների հետ միասին հաշվի է առել իր շուկայական կապիտալացման և իր սեփական կապիտալի հաշվեկշռային արժեքի միջև կապը: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի շուկայական կապիտալացումը ցածր էր իր սեփական կապիտալի հաշվեկշռային արժեքից, ինչը նշանակում է գուդվիլի և գործառնական սեգմենտի ակտիվների հնարավոր արժեզրկում: Բացի այդ, ամբողջ աշխարհում կառուցման և զարգացման գործունեության ընդհանուր անկումը, ինչպես նաև տնտեսական շարունակվող անորոշությունը հանդիսանում է հակահրդեհային և էլեկտրոնային սարքավորումների դրամաստեղծ միավորների պահանջարկի անկման պատճառ:

ՀՀՄՍ
36.130(ա)

Էլեկտրոնային սարքավորումների դրամաստեղծ միավորներ

Հակահրդեհային սարքավորումների դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը ևս որոշվել է ակտիվների օգտագործման արժեքի հաշվարկման միջոցով՝ ելնելով ղեկավարության կողմից հաստատված հնգամյա ժամանակաշրջան ներառող ֆինանսական բյուջեով կանխատեսված դրամական միջոցների հոսքերից: Կանխատեսված դրամական միջոցների հոսքերը թարմացվել են՝ արտացոլելու ապրանքների և ծառայությունների նկատմամբ պահանջարկի անկումը: Կանխատեսված դրամական միջոցների հոսքերի նկատմամբ կիրառված նախքան հարկումը գեղչման տոկոսադրույքը կազմում է 15.5% (2010թ.՝ 12.1%), իսկ հինգ տարին գերազանցող դրամական միջոցների հոսքերը էքստրապոլացվել են՝ կիրառելով 3.0% աճի տեմպ (2010թ.՝ 5.0%), ինչը համապատասխանում է էլեկտրոնային սարքավորումների ոլորտի երկարաժամկետ աճի միջին տեմպին: Տվյալ վերլուծության արդյունքում ղեկավարությունը ճանաչել է նախկինում 250,000 եվրո ճանաչված գուդվիլի 200,000 եվրո արժեզրկում, որն արտացոլվել է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վարչական ծախսերում:

ՀՀՄՍ
36.134(գ)
ՀՀՄՍ 36.134
(դ)(iii)
ՀՀՄՍ 36.134
(դ)(iv)
ՀՀՄՍ 36.134
(դ)(v)
ՀՀՄՍ
36.126(ա)

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

17. Գուղվիլի և անորոշ օգտակար ծառայություն ունեցող ոչ նյութական ակտիվների արժեզրկման ստուգում (շարունակություն)

Հակահրդեհային սարքավորումների դրամաստեղծ միավորներ

Հակահրդեհային սարքավորումների դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը և որոշվել է ակտիվների օգտագործման արժեքի հաշվարկման միջոցով՝ ելնելով ղեկավարության կողմից հաստատված հնգամյա ժամանակաշրջանի ներառող ֆինանսական բյուջեով կանխատեսված դրամական միջոցների հոսքերից: Կանխատեսված դրամական միջոցների հոսքերը թարմացվել են՝ արտացոլելու ապրանքների և ծառայությունների նկատմամբ պահանջարկի անկումը: Կանխատեսված դրամական միջոցների հոսքերի նկատմամբ կիրառված նախքան հարկումը գեղչման տոկոսադրույքը կազմում է 14.4% (2010թ.՝ 12.8%), իսկ հինգ տարին գերազանցող դրամական միջոցների հոսքերը էքստրապոլացվել են՝ կիրառելով 2.9% աճի տեմպ (2010թ.՝ 3.8%): Աճի տեմպը գերազանցում է ոլորտի աճի միջին տեմպին, որում դրամաստեղծ միավորը իրականացնում է իր գործունեությունը 0.75% չափով: Հակահրդեհային սարքավորումների դրամաստեղծ միավորի ղեկավարությունը գտնում է, որ այս աճը բացատրվում է «Էքստինգուիշեր Լիմիթեդ»-ի ձեռքբերմամբ, քանի որ այդ ձեռքբերումը ապահովել է Խմբի վերահսկողությունը ոլորտի արտոնագրի նկատմամբ, ինչը սահմանափակում է այլ կազմակերպությունների հնարավորությունները թողարկել համապատասխան մասնագիտացված արտադրանք տասը տարվա ընթացքում: Խումբն ունի հնարավորություն երկարաձգելու արտոնագիրը 10 տարվա ժամանակաշրջանը ավարտվելուց հետո: Նոր վերլուծության արդյունքում ղեկավարությունը չի հայտնաբերել այս դրամաստեղծ միավորի արժեզրկում, որին բաշխվել է 2,231,000 եվրո գուղվիլ:

ՀՀՄՍ
36.134(գ)
ՀՀՄՍ 36.134
(դ)(iii)
ՀՀՄՍ 36.134
(դ)(iv)
ՀՀՄՍ 36.134
(դ)(v)

ՀՀՄՍ 36.134
(դ)(iii)
ՀՀՄՍ 36.134
(դ)(iv)
ՀՀՄՍ 36.134
(դ)(v)

Ակտիվների օգտագործման արժեքի հաշվարկման ընթացքում կիրառված կարևոր ենթադրություններ

Էլեկտրոնային և հակահրդեհային սարքավորումների դրամաստեղծ միավորների օգտագործման արժեքների գնահատականները առավել զգայուն են հետևյալ ենթադրությունների նկատմամբ՝

ՀՀՄՍ
36.134(դ)(i)
ՀՀՄՍ
36.134(դ)(ii)

- ▶ Համախառն շահույթ
- ▶ Զեղչման դրույք
- ▶ Հումքի գների աճ
- ▶ Բյուջեով նախատեսված ժամանակաշրջանի ընթացքում շուկայում մասնաբաժին
- ▶ Բյուջեով նախատեսված ժամանակաշրջանից հետո դրամական միջոցների հոսքերի էքստրապոլացման համար կիրառված աճի տեմպ

Համախառն շահույթ. համախառն շահույթը սահմանվում է բյուջետային ժամանակաշրջանի սկզբին նախորդող երեք տարիների ընթացքում համախառն շահույթների միջին արժեքների հիման վրա՝ հաշվի առնելով արտադրության արդյունավետության ենթարկվող աճը: Էլեկտրոնային սարքավորումների դրամաստեղծ միավորի համար կիրառվել է տարեկան 1.5% աճ, իսկ հակահրդեհային սարքավորումների համար՝ տարեկան 2% աճ:

Զեղչման դրույք. այն ներկայացնում է յուրաքանչյուր դրամաստեղծ միավորին հատուկ ընթացիկ շուկայական ռիսկի գնահատումը՝ հաշվի առնելով ժամանակի մեջ դրամի արժեքը և ակտիվներին հատուկ ռիսկերը, որոնք չեն ներառվել դրամական միջոցների հոսքերը հաշվարկելիս: Զեղչման դրույքի հաշվարկը սահմանված է Խմբի և իր գործառնական սեզնետների գործունեությանը հատուկ պայմանների հիման վրա և սահմանվում է սեփական կապիտալի միջին կշռված արժեքից ելնելով: Սեփական կապիտալի միջին կշռված արժեքը հաշվի է առնում ինչպես փոխառու, այնպես էլ բաժնետիրական կապիտալը: Բաժնետիրական կապիտալի արժեքը սահմանվում է Խմբի բաժնետերերի ներդրումների ակնկալվող եկամտաբերության հիման վրա: Փոխառու կապիտալի արժեքը հիմնվում է այն տոկոսային փոխառությունների վրա, որոնց Խումբը պարտավոր է սպասարկել: Որոշ սեզնետներին հատուկ ռիսկը հաշվի է առնվում անհատական բետա գործակիցներ կիրառելու միջոցով: Բետա գործակիցները վերագնահատվում են յուրաքանչյուր տարի շուկայում առկա տեղեկատվության հիման վրա:

Հումքի գների աճ. հումքի գների աճի գնահատումները սահմանվում են այն երկրների հրապարակված գների հիման վրա, որտեղից իրականացվում է գնումը, ինչպես նաև տվյալ ապրանքներին վերաբերող այլ տեղեկատվության հիման վրա: Կանխատեսվող ցուցանիշները օգտագործվում են միայն այն դեպքում, եթե դրանք հանրամատչելի են (մասնավորապես՝ Եվրոնեդում և Միացյալ Նահանգներում), հակառակ դեպքում, որպես գների ապագա փոփոխությունների ցուցանիշ օգտագործվել են անցյալ ժամանակաշրջաններում գների փաստացի փոփոխությունները:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

17. Գուղվիլի և անորոշ օգտակար ծառայություն ունեցող ոչ նյութական ակտիվների արժեզրկման ստուգում (շարունակություն)

Ակտիվների օգտագործման արժեքի հաշվարկման ընթացքում կիրառված կարևոր ենթադրություններ (շարունակություն)

Շուկայում մասնաբաժնի վերաբերյալ ենթադրություններ. այս ենթադրությունները կարևոր են, քանի որ ոլորտի աճի տեմպն (ստորև ներկայացված) օգտագործելու հետ միասին ղեկավարությունը գնահատում է, թե ինչպես է բյուջետային ժամանակաշրջանի ընթացքում դրամաստեղծ միավորի դիրքը փոխվում մրցակիցների նկատմամբ: Ղեկավարությունը գտնում է, որ էլեկտրոնային սարքավորումների շուկայում Խմբին պատկանող մասնաբաժինը բյուջետային ժամանակաշրջանի ընթացքում չի փոխվի, մինչդեռ ՏՆօրենների խորհուրդը, վերոնշյալ նկարագրված պատճառներով, ակնկալում է մրցակիցների նկատմամբ Խմբի դիրքերի ամրապնդում «Էքստինգուիշեր Լիմիթեդ»-ի ձեռքբերման շնորհիվ:

Աճի տեմպի գնահատում. Դրույքները սահմանվել են հիմնվելով ոլորտի հետազոտության հրապարակված նյութերի վրա: Վերոնշյալ նկարագրված պատճառներով, հակահրդեհային սարքավորումների դրամաստեղծ միավորի բյուջեի էքստրապոլացման համար կիրառվող երկարաժամկետ աճի տեմպը ճշգրտվել է ոլորտի արտոնագրի ձեռքբերման լրացուցիչ տարրը հաշվի առնելով:

Ենթադրություններում նշված փոփոխությունների նկատմամբ զգայունություն

Հակահրդեհային սարքավորումների դրամաստեղծ միավորի օգտագործման արժեքը գնահատելիս ղեկավարությունը գտնում է, որ վերոնշյալ կարևոր ենթադրությունների հնարավոր փոփոխությունները չեն հանգեցնի միավորի հաշվեկշռային արժեքի էական գերազանցմանն իր փոխհատուցվող գումարից:

ՀՀՄՍ
36.134(գ)

Էլեկտրոնային սարքավորումների դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը հավասար է իր հաշվեկշռային արժեքին և, հետևաբար, կարևոր ենթադրությունում բացասական փոփոխությունը կարող է հանգեցնել հետագա արժեզրկման վնասի: Փոխհատուցվող գումարի գծով կարևոր ենթադրությունների փոփոխությունների ազդեցությունը նկարագրված է ստորև.

ՀՀՄՍ 36.134
(գ)(i)

- ▶ **Հումքի գների աճ.** Ղեկավարությունը դիտարկել է հումքի գնի ավելի մեծ աճի հավանականությունը բյուջեում նշված աճից: Այդպիսի աճը հավանական է այն դեպքում, եթե օրենսդրությունում ակնկալվող փոփոխությունները հանգեցնեն պահանջարկի այնպիսի աճի, որը մատակարարները չեն կարող բավարարել: Բյուջեում նախատեսված գների աճը տատանվում է 1.9%-ից 2.6% միջակայքում՝ կախված այն երկրից, որից գնվում է հումքը: Եթե Խումբը չկարողանա հաղթահարել կամ փոխհատուցել 4.5% լրացուցիչ ծախսերի աճը արդյունավետության բարձրացման միջոցով, ապա այն կարող է հանգեցնել հետագա արժեզրկմանը:

ՀՀՄՍ 36.134
(գ)(ii)
ՀՀՄՍ 36.134
(գ)(iii)

- ▶ **Աճի տեմպի վերաբերյալ ենթադրություններ.** Ղեկավարությունը ընդունում է այն փաստը, որ տեխնոլոգիական փոփոխությունների արագությունը և ոլորտում նոր կազմակերպություններ հայտնվելու հավանականությունը կարող են էական ազդեցություն ունենալ աճի տեմպի վերաբերյալ կիրառված ենթադրությունների վրա: Ակնկալվում է, որ նոր կազմակերպությունները բացասական ազդեցություն չեն ունենա բյուջեում կանխատեսված ցուցանիշների վրա, բայց կարող են պլանավորված երկարատև աճի տեմպի 5.2% տոկոսադրույքի փոփոխության պատճառ հանդիսանալ: Պլանավորված երկարաժամկետ աճի տեմպի 0.8%-ով նվազեցումը կհանգեցնի հետագա արժեզրկմանը:

ՀՀՄՍ 36.134
(գ)(ii)
ՀՀՄՍ 36.134
(գ)(iii)

18. Պաշարներ

	2011թ.	2010թ.	2010թ. հունվարի 1-ի դրությամբ
	000, եվրո	000, եվրո	000, եվրո
Հումք (ինքնարժեքով)	6,046	7,793	8,250
Անավարտ արտադրանք (ինքնարժեքով)	13,899	11,224	12,951
Պատրաստի արտադրանք (ինքնարժեքով կամ իրացման գույք արժեքով)	4,930	6,472	5,950
Ընդամենը պաշարներ ինքնարժեքից կամ իրացման գույք արժեքից նվազագույնով	24,875	25,489	27,151

ՀՀՄՍ 2.36(բ)
ՀՀՄՍ 1.78(գ)

286,000 եվրո (2010թ.՝ 242,000 եվրո) պաշարների նվազեցումը ճանաչվել է որպես ծախս և ներառվել է վաճառքի ինքնարժեքում:

ՀՀՄՍ 2.36(ե)

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

19. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (կարճաժամկետ)

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո	2010թ. հունվարի 1-ի դրությամբ 000, եվրո	ՀՀՄՍ 1.78(բ) ՖՀՄՍ 7.6
Առևտրային դեբիտորական պարտքեր	26,501	23,158	24,490	
Ասոցիացված կազմակերպությունից դեբիտորական պարտքեր	551	582	602	
Այլ կապակցված կողմերից դեբիտորական պարտքեր	620	550	445	
	27,672	24,290	25,537	

Կապակցված կողմերի դեբիտորական պարտքերի պայմաններն ու ժամկետները ներկայացված են Ծան. 29-ում: ՖՀՄՍ 7.34(ա)

Առևտրային դեբիտորական պարտքերի վրա տոկոսներ չեն հաշվեգրվում և սովորաբար մարվում են 30-ից 90 օրվա ընթացքում:

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 108,000 եվրո կազմող առևտրային դեբիտորական պարտքերը (2010թ.՝ 97,000 եվրո, 2010թ. հունվարի 1՝ 95,000 եվրո) ամբողջությամբ արժեզրկվել են և դրանց համար ստեղծվել է պահուստ: Առևտրային դեբիտորական պարտքերի պահուստի փոփոխությունները ներկայացված են ստորև. (Մանրամասները ներկայացված են Ծան. 31-ում վարկային ռիսկ բացահայտման շրջանակներում): ՖՀՄՍ 7.37

	Անհատապես արժեզրկված 000, եվրո	Խմբային արժեզրկված 000, եվրո	Ընդամենը 000, եվրո	ՖՀՄՍ 7.16
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	29	66	95	
Տարվա ծախս	4	8	12	
Օգտագործված	(4)	(7)	(11)	
Զօգտագործված գումարի վերականգնում	-	-	-	
Ձեռչման դրույքի ճշգրտում	-	1	1	
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	29	68	97	
Տարվա ծախս	10	16	26	
Օգտագործված	(3)	(5)	(8)	
Զօգտագործված գումարի վերականգնում	(2)	(6)	(8)	
Ձեռչման դրույքի ճշգրտում	-	1	1	
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	34	74	108	

Դեկտեմբերի 31-ի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի ըստ ժամկետի վերլուծությունը ներկայացված է ստորև. ՖՀՄՍ 7.37

	Ոչ ժամկետանց, ոչ		Ժամկետանց, բայց ոչ արժեզրկված				
	Ընդամենը 000, եվրո	արժեզրկված 000, եվրո	< 30 օր 000, եվրո	30 - 60 օր 000, եվրո	61 - 90 օր 000, եվրո	91 - 120 օր 000, եվրո	> 120 օր 000, եվրո
2011թ.	26,501	17,596	4,791	2,592	1,070	360	92
2010թ.	23,158	16,455	3,440	1,840	945	370	108
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	24,490	18,367	2,693	1,989	862	421	158

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

20. Դրամական միջոցներ և կարճաժամկետ ավանդներ

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո	2010թ. հունվարի 1-ի դրությամբ 000, եվրո
Դրամական միջոցներ բանկում և դրամարկղում	11,316	11,125	6,816
Կարճաժամկետ ավանդներ	5,796	3,791	4,250
	17,112	14,916	11,066

Բանկում դրամական միջոցների վրա հաշվեգրվում են տոկոսներ լողացող տոկոսադրույքի հիման վրա, որոնք սահմանվում են ավանդների գծով օրական բանկային դրույքներից ելնելով: Կարճաժամկետ ավանդները ներդրվում են տարբեր ժամկետներով՝ մեկ օրից մինչև երեք ամիս՝ կախված Խմբի դրամական պահանջներից և վաստակում են տոկոսներ համապատասխան կարճաժամկետ ավանդների դրույքաչափերով:

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունեցել է 5,740,000 եվրո գումարի (2010թ.՝ 1,230,000 եվրո, 2010թ. հունվարի 1՝ 1,200,000 եվրո) չօգտագործած վարկային գիծ, որի գծով բոլոր նախնական պահանջները բավարարված էին: ՀՀՄՍ 7.50(ա)

Խումբն իր կարճաժամկետ ավանդների մի մասը գրավադրել է՝ բավարարելու գրավի նկատմամբ պահանջները: Մանրամասները ներկայացված են Ծան. 31-ում: ՀՀՄՍ 7.48

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն կազմելու նպատակով դրամական միջոցները և դրանց համարժեքները դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են ստորև՝ ՀՀՄՍ 7.45

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո	2010թ. հունվարի 1-ի դրությամբ 000, եվրո
Դրամական միջոցներ բանկում և դրամարկղում	11,316	11,125	6,816
Կարճաժամկետ ավանդներ	5,796	3,791	4,250
Ընդհատված գործունեությանը վերագրելի դրամական միջոցներ բանկում և դրամարկղում (Ծան. 11)	1,294	–	–
	18,406	14,916	11,066
Բանկային օվերդրաֆտներ (Ծան. 16)	(966)	(2,650)	(2,750)
	17,440	12,266	8,316

21. Թողարկված կապիտալ և պահուստներ

Հայտարարված կանոնադրական կապիտալ

	2011թ. Հազար	2010թ. Հազար	2010թ. հունվարի 1-ի դրությամբ Հազար
Հասարակ բաժնետոմսեր՝ յուրաքանչյուրը 1 եվրո	22,588	20,088	20,088
7% փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր՝ յուրաքանչյուրը 1 եվրո (Ծան. 16)	2,500	2,500	2,500
	25,088	22,588	22,588

Հաշվետու տարվա ընթացքում հայտարարված կանոնադրական կապիտալը աճել է 2,500,000 եվրոյով՝ 2,500,000 հատ 1 եվրո նոմինալով սովորական բաժնետոմսերի թողարկման միջոցով:

Սովորական բաժնետոմսեր՝ թողարկված և ամբողջությամբ վճարված	Հազար	000, եվրո
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	19,388	19,388
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19,388	19,388
2011թ. մայիսի 1-ին թողարկված՝ «Էքստինգուիշեր Լիմիթեդ»-ի բաժնետոմսերը փոխանակելու նպատակով (Ծան. 5)	2,500	2,500
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	21,888	21,888

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

21. Թողարկված կապիտալ և պահուստներ (շարունակություն)

Էմիսիոն եկամուտ

	000, եվրո	ՀՀՄՍ 1.78(ե)
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	-	
Ավելացում՝ 2010թ. նոյեմբերի 1-ին հետգնված բաժնետոմսերի արժեքը գերազանցող գնով բաժնետոմսերի օպցիոնների իրագործումից դրամական միջոցների մուտքերով	80	
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	80	
Ավելացում՝ 2011թ. մայիսի 1-ին «Էքստրինգուիշեր Լիմիթեդ»-ի ձեռքբերման համար բաժնետոմսերի թողարկման հետևանքով (Ծան. 5)	4,703	
Ավելացում՝ 2011թ. նոյեմբերի 1-ին հետգնված բաժնետոմսերի արժեքը գերազանցող գնով բաժնետոմսերի օպցիոնների իրագործումից դրամական միջոցների մուտքերով	29	
Նվազում՝ բաժնետիրական կապիտալի գործարքի ծախսումների հետևանքով	(32)	
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,780	

Հետգնված բաժնետոմսեր

	Հազար	000, եվրո	ՀՀՄՍ 1.79(ա)(vi)
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	335	774	
Տեղաբաշխվել է 2010թ. նոյեմբերի 1-ին՝ բաժնետոմսերի օպցիոնների իրագործումից դրամական միջոցների վճարումով (Ծան. 27)	(65)	(120)	
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	270	654	
Տեղաբաշխվել է 2011թ. նոյեմբերի 1-ին՝ բաժնետոմսերի օպցիոնների իրագործումից դրամական միջոցների վճարումով (Ծան. 27)	(75)	(146)	
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	195	508	

Մեկնաբանություն

Հետգնված բաժնետոմսերի հաշվառումը հիմնվում է համապատասխան օրենսդրական պահանջների վրա: ՖՀՄՍ-ները պահանջում են, որ այն դեպքում, երբ կազմակերպությունը հետ է գնում սեփական կապիտալի գործիքները, ապա այդ գործիքները (հետգնված բաժնետոմսերը) պետք է ներկայացվեն որպես սեփական կապիտալից նվազեցում: Կազմակերպության սեփական կապիտալի գործիքների ձեռքբերումից, վաճառքից, թողարկումից կամ չեղյալ հայտարարումից ոչ մի օգուտ կամ վնաս չպետք է ճանաչվի շահույթում կամ վնասում: Վճարված և ստացված փոխհատուցումը պետք է արտացոլվի ուղղակիորեն սեփական կապիտալում:

Յուրաքանչյուր տարում բաժնետոմսերի օպցիոնների իրագործումը մարվել է Խմբի հետգնված բաժնետոմսերի միջոցով: Հետգնված բաժնետոմսերի տարրերի նվազումը հավասար է բաժնետոմսեր ձեռք բերելու գծով կատարված ծախսումին՝ միջին կշռված հիմունքի վրա: Աշխատակիցներից ստացված դրամական միջոցների և հետգնված բաժնետոմսերի արժեքի նվազեցման միջև ցանկացած տարբերություն արտացոլվում է Էմիսիոն եկամուտում:

Բաժնետոմսերի օպցիոնների սխեմաներ

Խումբն ունի բաժնետոմսերի օպցիոնների երկու սխեմա, որոնց շրջանակներում որոշ ավագ մասնագետ աշխատակիցներին և ղեկավարներին տրամադրվում են Խմբի բաժնետոմսերի օպցիոններ (Ծան. 27):

Կապիտալի այլ պահուստներ

	Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գծով գործարքներ 000, եվրո	Փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր 000, եվրո	Ընդամենը 000, եվրո
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	338	228	566
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գծով գործարքներ (Ծան. 27)	298	-	298
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	636	228	864
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գծով գործարքներ (Ծան. 27)	307	-	307
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	943	228	1,171

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

21. Թողարկված կապիտալ և պահուստներ (շարունակություն)

Այլ պահուստների բնույթն ու նպատակը

ՀՀՄՍ 1.79(բ)

Կապիտալի այլ պահուստներ

Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գործարքներ

Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գործարքների գծով պահուստն օգտագործվում է աշխատակիցներին՝ ներառյալ առանցքային ղեկավար աշխատակազմին, որպես հատուցում բաժնային գործիքով մարվող բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների կապիտալի բաղադրիչը արտացոլելու նպատակով: Տվյալ պլանների գծով մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Ծան. 27-ում:

Փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր

Փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերի գծով պահուստը վերաբերում է թողարկված փոխարկելի բաժնետոմսերի սեփական կապիտալի տարրին: Պարտավորության տարրը արտացոլված է ֆինանսական պարտավորություններում:

Սեփական կապիտալի փոփոխության մասին համախմբված հաշվետվությունում ներառված այլ պահուստներ

Դրամական միջոցների հոսքերի հեջավորման պահուստ

Դրամական միջոցների հոսքերի հեջավորման պահուստը պարունակում է հաշվետու ամսաթվի դրությամբ դրամական միջոցների հոսքերի հեջավորման արդյունավետ մասը: 512,000 եվրոն բաղկացած է արտարժույթի ֆորվարդ պայմանագրերի փոփոխություններից և ապրանքային ֆորվարդ պայմանագրերի արդյունավետ մասից՝ նվազեցված հարկերով:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով պահուստ

Տվյալ պահուստն արտացոլում է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունները:

Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների գծով պահուստ

Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների գծով պահուստն օգտագործվում է արտերկրյա դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները վերահաշվարկելուց առաջացող փոխարժեքային տարբերությունները արտացոլելու նպատակով: Պահուստը նաև օգտագործվում է արտերկրյա ստորաբաժանումում զուտ ներդրումների հեջավորման ֆինանսական արդյունքներն արտացոլելու համար:

Ակտիվների վերագնահատման գծով պահուստ

Ակտիվների վերագնահատման պահուստն օգտագործվում է հողատարածքների և շենքերի իրական արժեքի աճը և միևնույն ակտիվի համար սեփական կապիտալում նախկինում ճանաչված աճի նվազեցումը արտացոլելու նպատակով: Սահմանափակ դեպքերում տվյալ պահուստը կարող է օգտագործվել շահաբաժիններ վճարելիս: Վերջին վերագնահատումը տեղի է ունեցել 2011թ. դեկտեմբերի 31-ին (տե՛ս Ծան. 13-ը):

22. Առաջարկված և վճարված շահաբաժիններ

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո
Տարվա ընթացքում առաջարկված և վճարված՝		
Սովորական բաժնետոմսերի գծով շահաբաժիններ՝		
2010թ. համար վերջնական շահաբաժին՝ 5.58 ցենտ մեկ բաժնետոմսի համար (2009թ.՝ 3.86 ցենտ մեկ բաժնետոմսի համար)	1,082	749
2011թ. համար միջանկյալ շահաբաժին՝ 4.07 ցենտ մեկ բաժնետոմսի համար (2010թ.՝ 4.39 ցենտ մեկ բաժնետոմսի համար)	890	851
	1,972	1,600
Բաժնետերերի տարեկան ժողովում հաստատման համար առաջարկված (դեկտեմբերի 31-ի դրությամբ որպես պարտավորություն չի ճանաչվել)		
Սովորական բաժնետոմսերի գծով շահաբաժիններ՝		
2011թ. համար վերջնական շահաբաժիններ՝ 4.97 ցենտ մեկ բաժնետոմսի համար (2010թ.՝ 5.58 ցենտ մեկ բաժնետոմսի համար)	1,087	1,082

ՀՀՄՍ 1.107

ՀՀՄՍ 1.137(ա)

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

23. Պահուստներ

	Բաժնետոմսերի օպցիոնների գծով սոցիալական ապահովագրության վճարներ			Էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների թափոններ	Ընդամենը	
	Երաշխիքային սպասարկում 000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	66	3	31	100		ՀՀՄՍ 37.84(ա)
Տարվա ընթացքում առաջացած	52	1	22	75		ՀՀՄՍ 37.84(բ)
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	118	4	53	175		ՀՀՄՍ 37.84(գ)
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	66	3	31	100		
Ընթացիկ	22	–	18	40		
Ոչ ընթացիկ	44	3	13	60		
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	118	4	53	175		
Ընթացիկ	60	–	38	98		
Ոչ ընթացիկ	58	4	15	77		

Մեկնաբանություն

Վերոնշյալ աղյուսակում Խուլմբն ինքնակամ ներկայացնում է պահուստներում փոփոխությունները համեմատական ժամանակաշրջանի համար, քանի որ ՀՀՄՍ 37.84-ը չի պահանջում այդպիսի բացահայտում:

	Երաշխիքային սպասարկում	Բաժնետոմսերի օպցիոնների գծով սոցիալական ապահովագրության վճարներ		Էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների թափոններ	Վերակառուցում	Ապագործարկում	Անբարենպաստ գործառնական վարձակալություն		Պայմանական պարտավորության պահուստ	Ընդամենը	
		Էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների թափոններ	Պայմանական պարտավորության պահուստ								
2011թ. հունվարի 1-ի դրությամբ	118	4	53	–	–	–	–	–	175		ՀՀՄՍ 37.84(ա)
Դուստր կազմակերպության ձեռքբերում (ՕձՄՆ. 5)	–	–	–	500	1,200	400	380	–	2,480		
Տարվա ընթացքում առաջացած	112	26	102	–	–	–	20	–	260		ՀՀՄՍ 37.84(բ)
Օգտագործված Չօգտագործված գումարի վերականգնում	(60)	(19)	(8)	(39)	–	(20)	–	–	(146)		ՀՀՄՍ 37.84(գ)
Ջեդյան դրույքի ճշգրտում և վերագրված տոկոս	(6)	–	–	(6)	–	–	–	–	(12)		ՀՀՄՍ 37.84(դ)
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2	1	2	11	21	6	–	–	43		ՀՀՄՍ 37.84(ե)
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	166	12	149	466	1,221	386	400	–	2,800		ՀՀՄՍ 37.84(զ)
Ընթացիկ	114	3	28	100	–	205	400	–	850		ՀՀՄՍ 1.60
Ոչ ընթացիկ	52	9	121	366	1,221	181	–	–	1,950		
	166	12	149	466	1,221	386	400	–	2,800		

Երաշխիքային սպասարկում

ՀՀՄՍ 37.85

Պահուստը ճանաչվել է վերջին երկու տարիների ընթացքում վաճառված ապրանքների գծով ակնկալվող երաշխիքային սպասարկման հայցերի համար՝ ելնելով նախորդ տարիներում վերանորոգված և վերադարձված ապրանքների քանակների վիճակագրությունից: Ակնկալվում է, որ այդպիսի ծախսերի զգալի մասը կառաջանա հաջորդ ֆինանսական տարում, իսկ բոլոր ծախսերը կառաջանան հաշվետու տարուց սկսած երկու տարվա ընթացքում: Երաշխիքային սպասարկման գծով պահուստի հաշվարկի համար կիրառված ենթադրությունները հիմնվել էին ընթացիկ վաճառքների և վերջին երկու տարիների ընթացքում վաճառված բոլոր ապրանքատեսակների գծով վերադարձված ապրանքների վերաբերյալ առկա տեղեկատվության վրա:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

23. Պահուստներ (շարունակություն)

Վերականգնվողում

Վերականգնվողումն գծով պահուստը առկա էր նախքան ձեռնարկատիրական գործունեության միավորումը և հիմնականում վերաբերում է «Էքստինգուիշեր Լիմիթեդ»-ի կողմից որոշ արտադրական հոսքագծերի լուծարմանը: Վերականգնվողումն նախագիծը կազմվել և հայտարարվել է «Էքստինգուիշեր Լիմիթեդ»-ի աշխատակիցներին 2010թ.-ին, երբ պահուստը ճանաչվել է ձեռքբերողի ֆինանսական հաշվետվություններում: Վերականգնվողումը ակնկալվում է, որ կավարտվի 2013թ.:

Ապագործարկում

Պահուստը ճանաչվել է «Էքստինգուիշեր Լիմիթեդ»-ի սեփականությունը հանդիսացող գործարանի ապագործարկման ծախսումների համար: Խումբը պարտավորված է վերականգնել հակահրդեհային սարքավորումների արտադրության համար կառուցված գործարանի հողատարածքը:

Անբարենպաստ գործառնական վարձակալություն

«Էքստինգուիշեր Լիմիթեդ»-ի ձեռքբերման ժամանակ գործառնական վարձակալության գծով ճանաչվել է պահուստ, քանի որ ձեռքբերման ամսաթվի դրությամբ վարձակալական վճարները էականորեն գերազանցում էին շուկայում գործող վճարներին: Պահուստի չափը սահմանվել է շուկայում գործող դրույքի և վճարվող դրույքի տարբերության հիման վրա:

ՖՀՄՍ-ները պահանջում են, որ կազմակերպությունը ճանաչի պահուստ այն պայմանագրերի գծով, որոնք անբարենպաստ են: Երբ տեղական ՀՀՀՍ-ները չեն պահանջում նման պայմանագրերը ճանաչել որպես պարտավորություն, ապա առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրող կազմակերպությունը պետք է ստուգի իր այն պայմանագրերը, որոնք չենդալ չհամարվող են կամ կարող են դադարեցվել՝ անբարենպաստ պայմանագրերի գծով տույժեր կրելով: Եթե պայմանագրով նախատեսված պարտականությունները կատարելու անխուսափելի ծախսումները գերազանցում են այդ պայմանագրից ակնկալվող ստացվելիք տնտեսական օգուտները, ապա պայմանագիրը հանդիսանում է անբարենպաստ (ՀՀՄՍ 37.10): Պարտավորությունները կատարելու անխուսափելի ծախսումները պայմանագիրը կատարելու զուտ ծախսերից և այն դադարեցնելու գծով ծախսերից նվազագույնն է: Խումբը չի ունեցել անբարենպաստ պայմանագրեր ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ:

Բաժնետոմսերի օպցիոնների գծով սոցիալական ապահովագրության վճարներ

Բաժնետոմսերի օպցիոնների գծով սոցիալական ապահովագրության վճարների պահուստը սահմանվել է հաշվետու ամսաթվի դրությամբ շրջանառության մեջ գտնվող օպցիոնների այն քանակի հիման վրա, որոնք ակնկալվում է, որ կիրառորթվեն: Պահուստի հաշվարկը հիմնվել է հաշվետու ամսաթվի դրությամբ բաժնետոմսերի շուկայական գնի վրա, որը հանդիսանում է իրագործման ամսաթվի դրությամբ շուկայական գնի լավագույն գնահատականը: Ակնկալվում է, որ ծախսերը կառաջանան օպցիոնի իրագործման ժամանակաշրջանի ընթացքում 2011թ. հունվարի 1-ից մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ը:

Էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների թափոններ

Էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների թափոնների գծով պահուստի հաշվարկը հիմնվել է ընթացիկ տարվա վաճառքների (նոր թափոններ) և հին թափոնների ակնկալվող հեռացման վրա (վաճառքներ մինչև 2007թ. օգոստոս):

Պայմանական պարտավորության պահուստ

380,000 եվրո իրական արժեքով պայմանական պարտավորության պահուստը ճանաչվել է «Էքստինգուիշեր Լիմիթեդ»-ի ձեռքբերման ամսաթվի դրությամբ: Հայցը դատական գործընթացի առարկա է և ակնկալվում է, որ վերջնական որոշում կկայացվի 2012թ. վերջին: Հաշվետու ամսաթվի դրությամբ պահուստը վերանայվել է, ինչի արդյունքում պահուստի հաշվեկշռային արժեքը ավելացել է մինչև 400,000 եվրո (տես՝ Ծան. 5):

ՖՀՄՍ 3.56(ա)

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

24. Պետական շնորհներ

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո
Հունվարի 1-ի դրությամբ	1,551	1,450
Հաշվետու տարվա ընթացքում ստացված	2,951	642
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլված	(1,053)	(541)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,449	1,551

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո	2010թ. հունվարի 1-ի դրությամբ 000, եվրո
Ընթացիկ	149	151	150
Ոչ ընթացիկ	3,300	1,400	1,300
	3,449	1,551	1,450

Պետական շնորհները ստացվել են որոշ հիմնական միջոցներ ձեռք բերելու նպատակով: Տվյալ շնորհների գծով չկան կցված և չկատարված պայմաններ և պայմանականություններ: ՀՀՄՍ 20.39(գ)

25. Հետաձգված հասույթ

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո
Հունվարի 1-ի դրությամբ	365	364
Տարվա ընթացքում հետաձգված	1,426	1,126
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլված	(1,375)	(1,125)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	416	365

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո	2010թ. հունվարի 1-ի դրությամբ 000, եվրո
Ընթացիկ	220	200	190
Ոչ ընթացիկ	196	165	174
	416	365	364

Հետաձգված հասույթը վերաբերում է «Գուդ բոնուսների» գործարքների հաշվեգրմանը և մարմանը:

26. Թոշակային և այլ հետաշխատանքային հատուցման պլաններ

Խումբն ունի սահմանված հատուցումների երկու թոշակային պլան՝ վերջնական աշխատավարձի վրա հիմնված պլան Եվրոլենդում և միջին աշխատավարձի վրա հիմնված պլան ԱՄՆ-ում, որոնք ընդգրկում են հիմնականում բոլոր աշխատակիցներին: Այդ երկու պլանների գծով Խումբը պարտավոր է կատարել վճարումներ առանձին կառավարվող ֆոնդերին:

ՀՀՄՍ 19.120
ՀՀՄՍ
19.120Ա(բ)

Խումբը նաև որոշել է տրամադրել լրացուցիչ բժշկական հետաշխատանքային հատուցում ԱՄՆ-ում գտնվող ավագ ղեկավար աշխատակիցներին: Այդպիսի հատուցումները չեն ֆինանսավորվում:

Հետևյալ աղյուսակները ներկայացնում են հատուցումների գծով ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլված զուտ ծախսերի և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված գումարների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

26. Թոշակային և այլ հետաշխատանքային հատուցման պլաններ (շարունակություն)

2011թ. համար հատուցումների գծով զուտ ծախսեր (վաճառքի ինքնարժեքում ճանաչված)

	Եվրոլեն- դում գործող պլան	ԱՄՆ-ում գործող պլան	Հետաշխա- տանքային բժշկական հատուցում	Ընդամենը	ՀՀՄՍ 19.120Ա(Է)
	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	
Ընթացիկ ծառայությունների արժեք	(815)	(452)	(128)	(1,395)	
Հատուցումների գծով պարտավորությունների տոկոսային ծախս	(201)	(55)	(25)	(281)	
Պլանի ակտիվներից ակնկալվող եկամուտ	127	56	–	183	
Անցյալ ծառայությունների արժեք	(55)	–	–	(55)	
Հատուցման գծով զուտ ծախս	(944)	(451)	(153)	(1,548)	
Պլանի ակտիվներից ստացված եկամուտ	445	293	–	738	ՀՀՄՍ 19.120Ա(ԺԳ)

2010թ. համար հատուցումների գծով զուտ ծախսեր (վաճառքի ինքնարժեքում ճանաչված)

	Եվրոլեն- դում գործող պլան	ԱՄՆ-ում գործող պլան	Հետաշխա- տանքային բժշկական հատուցում	Ընդամենը	ՀՀՄՍ 19.120Ա(Է)
	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	
Ընթացիկ ծառայությունների արժեք	(788)	(356)	(105)	(1,249)	
Հատուցումների գծով պարտավորությունների տոկոսային ծախս	(218)	(65)	(8)	(291)	
Պլանի ակտիվներից ակնկալվող եկամուտ	126	47	–	173	
Անցյալ ծառայությունների արժեք	(107)	–	–	(107)	
Հատուցման գծով զուտ ծախս	(987)	(374)	(113)	(1,474)	
Պլանի ակտիվներից ստացված եկամուտ	(338)	(166)	–	(504)	ՀՀՄՍ 19.120Ա(ԺԳ)

Հատուցումների գծով ակտիվներ/(պարտավորություններ) 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Եվրոլեն- դում գործող պլան	ԱՄՆ-ում գործող պլան	Հետաշխա- տանքային բժշկական հատուցում	Ընդամենը	ՀՀՄՍ 19.120Ա(Գ)
	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	
Սահմանված հատուցումների գծով պարտավորություն	(4,940)	(1,093)	(339)	(6,372)	
Պլանի ակտիվների իրական արժեք	2,617	705	–	3,322	
	(2,323)	(388)	(339)	(3,050)	
Անցյալ ծառայությունների չճանաչված արժեք	428	–	–	428	
Հատուցման գծով պարտավորություն	(1,895)	(388)	(339)	(2,622)	

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

26. Թոշակային և այլ հետաշխատանքային հատուցման պլաններ (շարունակություն)

Հատուցումների գծով ակտիվներ/(պարտավորություններ) 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Եվրոլեն- դում գործող պլան	ԱՄՆ-ում գործող պլան	Հետաշխա- տանքային բժշկական հատուցում	Ընդամենը	ՀՀՄՄ 19.120Ա(գ)
	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	
Սահմանված հատուցումների գծով պարտավորություն	(4,108)	(1,115)	(197)	(5,420)	
Պլանի ակտիվների իրական արժեք	1,763	680	–	2,443	
	(2,345)	(435)	(197)	(2,977)	
Անցյալ ծառայությունների չճանաչված արժեք	483	–	–	483	
Հատուցման գծով պարտավորություն	(1,862)	(435)	(197)	(2,494)	

Հատուցումների գծով ակտիվներ/(պարտավորություններ) 2010թ. հունվարի 1-ի դրությամբ

	Եվրոլեն- դում գործող պլան	ԱՄՆ-ում գործող պլան	Հետաշխա- տանքային բժշկական հատուցում	Ընդամենը	ՀՀՄՄ 19.120Ա(գ)
	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	
Սահմանված հատուցումների գծով պարտավորություն	(3,973)	(1,275)	(88)	(5,336)	
Պլանի ակտիվների իրական արժեք	2,134	676	–	2,810	
	(1,839)	(599)	(88)	(2,526)	
Անցյալ ծառայությունների չճանաչված արժեք	452	–	–	452	
Հատուցման գծով պարտավորություն	(1,387)	(599)	(88)	(2,074)	

Սահմանված հատուցումների գծով պարտավորության ներկա արժեքի փոփոխությունները ներկայացված են ստորև.

	Եվրոլեն- դում գործող պլան	ԱՄՆ-ում գործող պլան	Հետաշխա- տանքային բժշկական հատուցում	Ընդամենը	ՀՀՄՄ 19.120Ա(գ)
	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	
Սահմանված հատուցումների գծով պարտավորություն 2010թ. հունվարի 1-ի դրությամբ	3,973	1,275	88	5,336	
Տոկոսային ծախսեր	218	65	8	291	
Ընթացիկ ծառայությունների արժեք	788	356	105	1,249	
Վճարված հատուցումներ	(1,027)	(192)	–	(1,219)	
Պարտավորությունների գծով ակտուարային վնասներ/ (օգուտներ)	156	(432)	–	(276)	
Փոխարժեքային տարբերություններ	–	43	(4)	39	
Սահմանված հատուցումների գծով պարտավորություն 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,108	1,115	197	5,420	
Տոկոսային ծախսեր	201	55	25	281	
Ընթացիկ ծառայությունների արժեք	815	452	128	1,395	
Վճարված հատուցումներ	(669)	(321)	–	(990)	
Պարտավորությունների գծով ակտուարային վնասներ/(օգուտներ)	485	(119)	–	366	
Փոխարժեքային տարբերություններ	–	(89)	(11)	(100)	
Սահմանված հատուցումների գծով պարտավորություն 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,940	1,093	339	6,372	

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

26. Թոշակային և այլ հետաշխատանքային հատուցման պլաններ (շարունակություն)

Պլանի ակտիվների իրական արժեքի փոփոխությունները ներկայացված են ստորև.

ՀՀՄՍ
19.120Ա(ե)

	Եվրոլենդում	ԱՄՆ-ում	Ընդամենը
	գործող պլան	գործող պլան	
	000, եվրո	000, եվրո	000, եվրո
Պլանի ակտիվների իրական արժեք 2010թ. հունվարի 1-ի դրությամբ	2,134	676	2,810
Ակնկալվող եկամուտ	126	47	173
Մասհանումներ գործատուից	799	553	1,352
Վճարված հատուցումներ	(1,027)	(192)	(1,219)
Ակտուարային վնասներ	(269)	(408)	(677)
Փոխարժեքային տարբերություններ	–	4	4
Պլանի ակտիվների իրական արժեք 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,763	680	2,443
Ակնկալվող եկամուտ	127	56	183
Մասհանումներ գործատուից	1,078	47	1,125
Վճարված հատուցումներ	(669)	(321)	(990)
Ակտուարային վնասներ	318	359	677
Փոխարժեքային տարբերություններ	–	(116)	(116)
Պլանի ակտիվների իրական արժեք 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,617	705	3,322

2012թ. խումբն ակնկալում է վճարել 1,500,000 եվրո սահմանված հատուցումների թոշակային պլաններին:

ՀՀՄՍ
19.120Ա(զ)

2011թ. «Էքստրինզուիշեր Լիմիթեդ»-ի և 2010թ. «Լայթբարթ Լիմիթեդ»-ի ձեռքբերումները ազդեցություն չեն ունեցել պլանների ակտիվների կամ սահմանված հատուցումների պլանի գծով պարտավորության վրա, քանի որ այդ կազմակերպությունները չունենին սահմանված հատուցումների պլաններ:

Պլանի ակտիվների հիմնական դասերի մասնաբաժինները ընդհանուր պլանների ակտիվների իրական արժեքում ունեն հետևյալ տեսքը.

ՀՀՄՍ
19.120Ա(զ)

	Թոշակային պլաններ					
	Եվրոլենդում գործող պլան			ԱՄՆ-ում գործող պլան		
	2010թ.			2010թ.		
	2011թ.	2010թ.	հունվարի 1	2011թ.	2010թ.	հունվարի 1
	%	%	%	%	%	%
Եվրոլենդի բաժնետոմսեր	44	49	48	13	10	12
Ամերիկյան բաժնետոմսեր	29	29	29	9	9	8
Եվրոլենդի պարտատոմսեր	10	5	8	33	32	34
Ամերիկյան պարտատոմսեր	10	8	5	19	15	11
Անշարժ գույք	7	9	10	26	34	35

Պլանների ակտիվները ներառում են Խմբի կողմից զբաղեցրած անշարժ գույք 150,000 եվրո իրական արժեքով (2010թ.՝ 140,000 եվրո, 2010թ. հունվարի 1՝ 130,000 եվրո):

ՀՀՄՍ
19.120Ա(ա)

Ակտիվների գծով ակնկալվող եկամտաբերության նորման սահմանվել է պարտավորության մարման ժամանակաշրջանին վերաբերող շուկայական սպասումների հիման վրա: Այն արտացոլված է ստորև ներկայացված կարևոր ենթադրություններում:

ՀՀՄՍ
19.120Ա(բ)

Խմբի պլանների համար կիրառվող հիմնական ենթադրությունները, որոնք օգտագործվել են թոշակային և հետաշխատանքային բժշկական հատուցման գծով պարտավորությունները սահմանելու նպատակով, ներկայացված են ստորև.

ՀՀՄՍ
19.120(դ)

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

26. Թոշակային և այլ հետաշխատանքային հատուցման պլաններ (շարունակություն)

	2011թ. %	2010թ. %	2010թ. հունվարի 1 %
Զեղչման դրույթ՝			
Եվրոլենդում գործող պլան	4.9	5.5	5.6
ԱՄՆ-ում գործող պլան/ հետաշխատանքային բժշկական հատուցման պլան	5.7	5.9	5.9
Ակտիվների գծով ակնկալվող եկամտաբերության նորմա			
Եվրոլենդում գործող պլան	7.2	5.9	5.8
ԱՄՆ-ում գործող պլան	8.3	6.8	6.8
Աշխատավարձի ավելացում ապագայում			
Եվրոլենդում գործող պլան	3.5	4.0	4.1
ԱՄՆ-ում գործող պլան	3.8	4.1	4.2
Թոշակների աճ ապագայում			
Եվրոլենդում գործող պլան	2.1	2.1	2.1
ԱՄՆ-ում գործող պլան	2.2	2.3	2.3
Առողջապահական ծախսերի աճ	7.2	7.4	7.4
Աշխատանքային գործունեության ավարտից հետո 65 տարեկան թոշակառուների մահացություն			
Եվրոլենդում գործող պլան			
Տղամարդիկ	20.0	20.0	20.0
Կանայք	23.0	23.0	23.0
ԱՄՆ-ում գործող պլան/ հետաշխատանքային բժշկական հատուցման պլան			
Տղամարդիկ	19.0	19.0	19.0
Կանայք	22.0	22.0	22.0

Առողջապահական ծախսերի ենթադրվող աճի մեկ տոկոսային կետի փոփոխությունը կունենա հետևյալ ազդեցությունը՝

	Աճ 000, եվրո	Նվազում 000, եվրո	ՀՀՄՄ 19.120Ա(ժե)
2011թ.			
Ընթացիկ ծառայության ընդհանուր արժեքի և տոկոսային ծախսերի վրա ազդեցություն	6	(2)	
Սահմանված հատուցումների գծով պարտավորությունների վրա ազդեցություն	12	(8)	
2010թ.			
Ընթացիկ ծառայության ընդհանուր արժեքի և տոկոսային ծախսերի վրա ազդեցություն	4	(2)	
Սահմանված հատուցումների գծով պարտավորությունների վրա ազդեցություն	7	(5)	

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ

26. Թոշակային և այլ հետաշխատանքային հատուցման պլաններ (շարունակություն)

Ենթադրվող զեղչման դրույքի մեկ տոկոսային կեսի փոփոխությունը կունենա հետևյալ ազդեցությունը՝

ՀՀՄՍ 1.125
ՀՀՄՍ 1.129(բ)

	Աճ 000, եվրո	Նվազում 000, եվրո
2011թ.		
Ընթացիկ ծառայության ընդհանուր արժեքի և տոկոսային ծախսերի վրա ազդեցություն	(43)	37
Սահմանված հատուցումների գծով պարտավորությունների վրա ազդեցություն	(34)	31
2010թ.		
Ընթացիկ ծառայության ընդհանուր արժեքի և տոկոսային ծախսերի վրա ազդեցություն	(34)	30
Սահմանված հատուցումների գծով պարտավորությունների վրա ազդեցություն	(28)	26

Մեկնաբանություն

Թեև ՀՀՄՍ 19-ով չի պահանջվում այդպիսի բացահայտում՝ զեղչման դրույքի վերաբերյալ ենթադրությունը կամ այլ ենթադրությունները հանգեցնում են գնահատումներում անորոշությունների, ինչի արդյունքում կարող է առաջանալ նշանակալի ճշգրտման էական ռիսկ: ՀՀՄՍ 1.125-ը պահանջում է ենթադրությունների վերաբերյալ բավարար բացահայտում, որը ֆինանսական հաշվետվություն օգտագործողներին կօգնի հասկանալ գնահատումների անորոշության աղբյուրը: Այդ պատճառով, զեղչման դրույքի զգայունության վերլուծությունը դիտարկվում է որպես կարևոր տեղեկատվություն:

Ստորև ներկայացված են ընթացիկ և նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող գումարները.

ՖՀՄՍ 1.711,
ՀՀՄՍ
19.120Ա(ժգ)

	Եվրոլենդում գործող պլան	
	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո
Սահմանված հատուցումների գծով պարտավորություն	(4,940)	(4,108)
Պլանի ակտիվներ	2,617	1,763
(Դեֆիցիտ)/պրոֆիցիտ	(2,323)	(2,345)
Պլանի գծով պարտավորության ճշգրտում՝ փաստացի արդյունքների հիման վրա	(572)	(257)
Պլանի ակտիվների ճշգրտում՝ փաստացի արդյունքների հիման վրա	318	(464)

	ԱՄՆ-ում գործող պլան	
	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո
Սահմանված հատուցումների գծով պարտավորություն	(1,093)	(1,115)
Պլանի ակտիվներ	705	680
(Դեֆիցիտ)/պրոֆիցիտ	(388)	(435)
Պլանի գծով պարտավորության ճշգրտում՝ փաստացի արդյունքների հիման վրա	145	402
Պլանի ակտիվների ճշգրտում՝ փաստացի արդյունքների հիման վրա	243	(217)

	Հետաշխատանքային բժշկական հատուցումներ	
	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո
Սահմանված հատուցումների գծով պարտավորություն	(339)	(197)
Պլանի գծով պարտավորության ճշգրտում՝ փաստացի արդյունքների հիման վրա	(48)	(37)

Մեկնաբանություն

ՀՀՄՍ 19.120Ա(ժգ)-ն պահանջում է բացահայտել սահմանված հատուցման գծով հինգ տարվա տեղեկատվություն: Առաջին անգամ որդեգրողը կարող է տրամադրել այդ բացահայտումը առաջընթաց՝ ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվից սկսած (այսինքն՝ տրամադրել միայն ընթացիկ և համեմատական ժամանակաշրջանների համար տեղեկատվություն):

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ

27. Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների պլաններ

Ավագ դեկավարության համար սահմանված պլան

ՖՀՄՍ 2.45(ա)

Ավագ դեկավարության համար սահմանված պլանի շրջանակներում բաժնետոմսերի օպցիոններ տրամադրվում են այն դեկավարներին, որոնք աշխատել են կազմակերպությունում 12 ամսից ավել: Բաժնետոմսի օպցիոնի իրագործման գինը հավասար է օպցիոնի տրամադրման ամսաթվի դրությամբ բաժնետոմսերի շուկայական արժեքին: Աշխատակիցները ստանում են օպցիոնների իրագործման իրավունք այն դեպքում, եթե օպցիոնի տրամադրման ամսաթվից սկսած երեք տարվա ընթացքում Խմբի մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի ցուցանիշը աճի 10%-ով, և եթե այդ ամսաթվի դրությամբ աշխատակիցը շարունակում է աշխատել կազմակերպությունում: Եթե այդպիսի աճ չի գրանցվում, օպցիոնի իրագործման իրավունք չի շնորհվում:

ՖՀՄՍ 2.46

Բաժնետոմսերի օպցիոնների իրական արժեքը սահմանվում է օպցիոնների գնահատման բիսոմինալ մոդելի միջոցով՝ օպցիոնների տրամադրման պայմանները հաշվի առնելով:

Յուրաքանչյուր օպցիոնի պայմանագրային ժամկետը կազմում է 5 տարի: Բաժնետոմսերի օպցիոնների փոխարեն դրամական միջոցներ ստանալու հնարավորություն չի ընձեռվում: Խումբը անցյալում ևս չի ունեցել նման բաժնետոմսերի օպցիոնները դրամական միջոցներով մարելու փորձ:

Այլ աշխատակիցներին բաժնետոմսերի օպցիոններ տրամադրելու պլան

ՖՀՄՍ 2.45(ա)

Այլ աշխատակիցներին բաժնետոմսերի օպցիոններ տրամադրելու պլանի շրջանակներում Խումբն իր հայեցողությամբ կարող է տրամադրել բաժնետոմսերի օպցիոններ մայր կազմակերպության այլ աշխատակիցներին (բացառությամբ՝ ավագ դեկավար աշխատակիցների)՝ կազմակերպությունում աշխատանքային փորձի երկու տարին լրանալուց սկսած: Օպցիոնի իրագործման իրավունքը կախված է Խմբի ընդհանուր բաժնետիրական եկամտաբերությունից՝ համեմատած Խմբի հիմնական մրցակիցների նույն ցուցանիշի հետ: Օպցիոնի իրագործման իրավունքն առաջանում է, եթե աշխատակիցը կազմակերպությունում աշխատում է օպցիոնի տրամադրման ամսաթվից սկսած երեք տարվա ընթացքում: Օպցիոնների իրական արժեքը գնահատվում է օպցիոնի տրամադրման ամսաթվի դրությամբ «Մոնտե Կառլո» մոդելի միջոցով՝ հաշվի առնելով տվյալ գործիքի տրամադրման պայմանները: Մոդելում հաշվարկվում է ընդհանուր բաժնետիրական եկամտաբերությունը և իրականացվում է հիմնական մրցակիցների նույն ցուցանիշի հետ համեմատում: Մոդելը հաշվի է առնում անցյալում վճարված և ապագայում վճարվելիք շահաբաժինները, Խմբի և մրցակիցների բաժնետոմսերի գների տատանումների փոփոխությունը, որպեսզի կանխատեսի բաժնետոմսերի հարաբերական եկամտաբերության բաշխումը:

ՖՀՄՍ 2.47(ա)(iii)

Օպցիոնի իրագործման գինը հավասար է օպցիոնի տրամադրման ամսաթվի դրությամբ բաժնետոմսերի շուկայական արժեքին: Օպցիոնը տրամադրվում է հինգ տարի ժամկետով: Դրամական միջոցներով օպցիոնի վճարում չի նախատեսվում: Խումբը անցյալում ևս չի ունեցել նման բաժնետոմսերի օպցիոնները դրամական միջոցներով մարելու փորձ:

ՖՀՄՍ 2.46

Բաժնետոմսի գնի աճից օգտվելու իրավունք

Գործունեության զարգացման խմբում ներառված աշխատակիցներին տրամադրվում են բաժնետոմսերի գնի աճից օգտվելու իրավունքներ, որոնք վճարվում են միայն դրամական միջոցներով: Աշխատակիցները կարող են ստանալ այդպիսի իրավունքներ միայն որոշակի քանակությամբ վաճառքի նոր պայմանագրեր կնքելու դեպքում և տվյալ պահին շարունակում են իրենց աշխատանքը: Բաժնետոմսի գնի աճից օգտվելու իրավունքը տրամադրվում է վեց տարի ժամկետով: Այդպիսի իրավունքների իրական արժեքը չափվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ օպցիոնների գնահատման բիսոմինալ մոդելի միջոցով՝ հաշվի առնելով գործիքի տրամադրման պայմանները և սահմանված նպատակային ցուցանիշի նվաճման ընթացիկ հավանականությունը:

ՖՀՄՍ 2.45(ա)
ՖՀՄՍ 2.46

Խմբի կողմից տրամադրված բաժնետոմսի գնի աճից օգտվելու իրավունքների գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 187,000 եվրո (2010թ.՝ 82,000 եվրո, 2010թ. հունվարի 1-ի դրությամբ՝ գրո): 2011թ. դեկտեմբերի 31-ի և 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնետոմսի գնի աճից օգտվելու իրավունքներ չեն շնորհվել:

ՖՀՄՍ 2.51(բ)

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատակիցների կողմից մատուցված ծառայությունների գծով ճանաչված ծախսերը ներկայացված են ստորև.

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո	
Բաժնային գործիքով մարվող բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գծով ծախսեր	307	298	
Դրամական միջոցներով մարվող բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գծով ծախսեր	105	194	
ԸՆդամենը բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գծով ծախսեր	412	492	ՖՀՄՍ 2.51(ա)

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

27. Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների պլաններ (շարունակություն)

2011 և 2010թթ. ընթացքում պլանների փոփոխություն կամ դադարեցում տեղի չի ունեցել:

Տարվա ընթացքում փոփոխություններ

Հետևյալ աղյուսակում ներկայացված է բաժնետոմսերի օպցիոնների քանակը և իրագործման միջին կշռված գինը (ԻՄԿԳ).

	2011թ. Քանակ	2011թ. ԻՄԿԳ, եվրո	2010թ. Քանակ	2010թ. ԻՄԿԳ, եվրո	
Հունվարի 1-ի դրությամբ չիրագործված օպցիոններ	575,000	2.85	525,000	2.75	
Տարվա ընթացքում տրամադրված օպցիոններ	250,000	3.85	155,000	3.03	
Տարվա ընթացքում ուժը կորցրած օպցիոններ	–	–	(25,000)	2.33	
Տարվա ընթացքում իրագործված օպցիոններ	(75,000)	2.33	(65,000) ¹	3.08	ՖՀՄՍ 2.45(գ)
Տարվա ընթացքում ժամկետը լրացած օպցիոններ	(25,000)	3.02	(15,000)	2.13	
	725,000	3.24	575,000	2.85	
Դեկտեմբերի 31-ի դրությամբ չիրագործված Դեկտեմբերի 31-ի դրությամբ իրագործման ենթակա օպցիոններ	110,000		100,000		ՖՀՄՍ 2.45(դ)

¹ Տվյալ օպցիոնների իրագործման ամսաթվի դրությամբ բաժնետոմսերի միջին կշռված արժեքը կազմել է 4.09 եվրո:

² Տվյալ օպցիոնների իրագործման ամսաթվի դրությամբ բաժնետոմսերի միջին կշռված արժեքը կազմել է 3.13 եվրո:

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնետոմսերի չիրագործված օպցիոնների գործողության միջին կշռված մնացած ժամկետը կազմում է 2.94 տարի (2010թ.՝ 2.60 տարի):

Տարվա ընթացքում տրամադրված օպցիոնների միջին կշռված իրական արժեքը կազմել է 1.32 եվրո (2010թ.՝ 1.18 եվրո):

Տարվա վերջի դրությամբ չիրագործված օպցիոնների իրագործման գները տատանվել են 2.33 եվրոյից մինչև 3.85 եվրո (2010թ.՝ 2.13 եվրոյից մինչև 3.13 եվրո):

Հետևյալ աղյուսակները ներկայացնում են օպցիոնների գնահատման մոդելներում օգտագործված ելակետային տվյալները 2011թ. դեկտեմբերի 31-ին և 2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարիների համար.

	2011թ. Ավագ դեկտեմբերի սահմանված պլան	2011թ. Այլ աշխատակից- ների բաժնետոմսե- րի օպցիոններ տրամադրելու պլան	2011թ. Բաժնետոմսի գնի աճից օգտվելու իրավունք
Շահաբաժինների եկամտաբերություն (%)	3.13	3.13	3.13
Ակնկալվող փոփոխականություն (%)	15.00	16.00	18.00
Ոչ ռիսկային տոկոսադրույք (%)	5.10	5.10	5.10
Օպցիոնի ակնկալվող գործողության ժամկետ/ բաժնետոմսի գնի աճից օգտվելու իրավունք (տարի)	3.00	4.25	6.00
Բաժնետոմսերի միջին կշռված գին (եվրո)	3.10	3.10	3.12
Օգտագործված մոդել	Բինոմինալ	«Մոնտե Կարլո»	Բինոմինալ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

27. Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների պլաններ (շարունակություն)

	2010թ. Ավագ դեկվարու- թյան համար սահմանված պլան	2010թ. Այլ աշխատակից- ների բաժնետոմս- երի օպցիոններ տրամադրելու պլան	2010թ. Բաժնետոմսի գնի աճից օգտվելու իրավունք
Շահաբաժինների եկամտաբերություն (%)	3.01	3.01	3.01
Ակնկալվող փոփոխականություն (%)	16.30	17.50	18.10
Ոչ ռիսկային տոկոսադրույք (%)	5.00	5.00	5.00
Օպցիոնի ակնկալվող գործողության ժամկետ/ բաժնետոմսի գնի աճից օգտվելու իրավունք (տարի)	3.00	4.25	6.00
Բաժնետոմսերի միջին կշռված գին (եվրո)	2.86	2.86	2.88
Օգտագործված մոդել	Բինոմիալ	«Մոնտե Կառլո»	Բինոմիալ

	2010թ. հունվարի 1 Ավագ դեկվարու- թյան համար սահմանված պլան	2010թ. Այլ աշխատակից- ների օպցիոններ տրամադրելու պլան	2010թ. հունվարի 1 Բաժնետոմսի գնի աճից օգտվելու իրավունք
Շահաբաժինների եկամտաբերություն (%)	3.02	3.02	3.02
Ակնկալվող փոփոխականություն (%)	16.00	17.00	18.00
Ոչ ռիսկային տոկոսադրույք (%)	5.00	5.00	5.00
Օպցիոնի ակնկալվող գործողության ժամկետ/ բաժնետոմսի գնի աճից օգտվելու իրավունք (տարի)	3.00	4.25	6.00
Բաժնետոմսերի միջին կշռված գին (եվրո)	2.81	2.81	2.82
Օգտագործված մոդել	Բինոմիալ	«Մոնտե Կառլո»	Բինոմիալ

Օպցիոնների և բաժնետոմսի գնի աճից օգտվելու իրավունքների ենթադրվող ժամկետը հիմնված է պատմական տեղեկատվության վրա և չի վկայում ապագայում հնարավոր իրագործումը: Ակնկալվող փոփոխականությունը արտացոլում է այն ենթադրությունը, որ անցյալում դիտարկվող փոփոխականությունը կշարունակվի նաև ապագայում, ինչը նույնպես չի վկայում ապագայում իրականանալու փաստը:

\$ՀՀՄՄ
2.47(ա)(ii)

28. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր (կարճաժամկետ)

	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո	2010թ. հունվարի 1-ի դրությամբ 000, եվրո
Առևտրային կրեդիտորական պարտքեր	17,640	19,496	18,725
Այլ կրեդիտորական պարտքեր	1,833	1,495	1,565
Վճարման ենթակա տոկոսներ	43	269	289
Համատեղ ձեռնարկում (Ծան. 29)	30	12	9
Այլ կապակցված կողմեր (Ծան. 29)	10	9	12
	19,556	21,281	20,600

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

28. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր (կարճաժամկետ) (շարունակություն)

ՖՀՄՍ 7.39

Վերոնշյալ ֆինանսական պարտավորությունների գծով ժամկետները և պայմանները ներկայացված են ստորև.

- ▶ Առևտրային կրեդիտորական պարտքերը տոկոսային չեն և, որպես կանոն, մարվում են 60 օրվա ընթացքում
- ▶ Այլ կրեդիտորական պարտքերը տոկոսային չեն և ունեն մարման միջինը վեց ամիս ժամկետ
- ▶ Տոկոսները, որպես կանոն, մարվում են ֆինանսական տարվա ընթացքում յուրաքանչյուր եռամսյակ
- ▶ Համատեղ ձեռնարկման և այլ կապակցված կողմերի գծով կրեդիտորական պարտքերի նկարագրությունը ներկայացված է Ծան. 29-ում:

ՖՀՄՍ 7.39(բ)

Խմբի կողմից օգտագործվող պարտքային ռիսկերի կառավարման ընթացակարգերի նկարագրությունը ներկայացված է Ծան. 31-ում:

ՀՀՄՍ 24.12

29. Կապակցված կողմերի բացահայտումներ

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներառում են մայր կազմակերպության և ստորև նշված դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները:

Կազմակերպության անվանում	Գրանցման երկիր	Բաժնեմաս, %		2010թ. հունվարի 1-ի դրությամբ
		2011թ.	2010թ.	
«Էքստինգուիշեր Լիմիթեդ»	Եվրոլենդ	80.0	–	–
«Բրայթ Սպարկս Լիմիթեդ»	Եվրոլենդ	95.0	95.0	95.0
«Վայրվորկս Ինկ.»	Միացյալ Նահանգներ	98.0	98.0	98.0
	Միացյալ Նահանգներ	100.0	100.0	100.0
«Սփրինկլերս Ինկ.»	Նահանգներ	100.0	100.0	100.0
«Լայթբալբս Լիմիթեդ»	Եվրոլենդ	87.4	80.0	–
«Հոգ Լիմիթեդ»	Եվրոլենդ	100.0	100.0	100.0
«Ֆայր Էքոլիփմենթ թեստ լաբ Լիմիթեդ»	Եվրոլենդ	20.0	–	–

Խումբը տիրապետում է նոր գրանցված «Ֆայր Էքոլիփմենթ թեստ լաբ Լիմիթեդ»-ի 20% բաժնետոմսերին, ունի Տնօրենների խորհրդի անդամների մեծամասնության ներկայացուցչություն և պետք է հաստատի բոլոր կարևոր գործառնական որոշումները: Շահագործմից ի վեր՝ կազմակերպության գործառնությունները կօգտագործվեն միայն Խմբի կողմից: Այս փաստերից և հանգամանքներից ելնելով ղեկավարությունը եզրակացրել է, որ ըստ էության, Խումբը վերահսկում է կազմակերպությունը, և, հետևաբար, տվյալ կազմակերպությունը համախմբվել է Խմբի ֆինանսական հաշվետվություններում:

Ստորև ներկայացված աղյուսակը ներկայացնում է կապակցված կողմերի հետ գործարքների ընդհանուր գումարների վերաբերյալ տեղեկատվություն համապատասխան հաշվետու տարվա ընթացքում (2011 և 2010թթ. դեկտեմբերի 31-ի և 2010թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվեկշռային մնացորդների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծան. 19-ում և Ծան. 28-ում):

ՀՀՄՍ 24.17
ՀՀՄՍ 24.22

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

29. Կապակցված կողմերի բացահայտումներ (շարունակություն)

ՀՀՄՍ 24.12

		Կապակցված կողմերի վաճառքներ	Կապակցված կողմերի գնումներ	Կապակցված կողմերի պարտավորություն*	Կապակցված կողմերի պարտավորություն*	ՀՀՄՍ 24.17
		000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	
Խմբի նկատմամբ էական ազդեցություն ունեցող կազմակերպություն՝ «Ինթերնեշնլ ֆայրս Փի. Էլ. Սի.»	2011թ. 2010թ. 2010թ. հունվարի 1-ի դրությամբ	7,115 5,975 –	– – –	620 550 445	– – –	
Անցիացված կազմակերպություն՝ «Փաուեր վորկս Լիմիթեդ»	2011թ. 2010թ. 2010թ. հունվարի 1-ի դրությամբ	2,900 2,100 –	– – –	551 582 602	– – –	
Համատեղ ձեռնարկում, որտեղ մայր կազմակերպությունը հանդիսանում է մասնակից՝ «Շաուերս Լիմիթեդ»	2011թ. 2010թ. 2010թ. հունվարի 1-ի դրությամբ	– – –	590 430 –	– – –	30 12 9	
Խմբի առանցքային ղեկավար անձնակազմ՝ Այլ տնօրենների բաժնեմասեր	2011թ. 2010թ. 2010թ. հունվարի 1-ի դրությամբ	225 135 –	510 490 –	20 – –	10 9 12	

* Սույն գումարները համապատասխանաբար դասակարգվել են որպես առևտրային դեբիտորական և առևտրային կրեդիտորական պարտքեր:

		Ստացված տոկոսներ	Կապակցված կողմերի պարտավորություն	ՀՀՄՍ 24.17
Փոխառություններ ստացված կամ տրված կապակցված կողմերին				
Անցիացված կազմակերպություն՝ «Փաուեր վորկս Լիմիթեդ» (Ծան. 16.1)	2011թ. 2010թ. 2010թ. հունվարի 1-ի դրությամբ	20 – –	200 – –	
Խմբի առանցքային ղեկավար անձնակազմ՝ Տնօրենին տրված վարկ (Ծան. 16)	2011 2010 2010թ. հունվարի 1-ի դրությամբ	1 – –	13 8 8	

Վերջնական վերահսկող մայր կազմակերպություն

Խմբի վերջնական վերահսկող մայր կազմակերպությունը հանդիսանում է «Էս Ջի Լիմիթեդ»-ը:

ՀՀՄՍ 24.12
ՀՀՄՍ 1.138(գ)

Հաշվետու տարվա ընթացքում Խմբի և «Էս Ջի Լիմիթեդ»-ի միջև շահաբաժնի վճարումից բացի այլ գործարքներ տեղի չեն ունեցել (2010թ.՝ 0):

Խմբի վրա նշանակալի ազդեցություն ունեցող կազմակերպություն

«Ինթերնեշնլ ֆայրս Փի. Էլ. Սի.»

«Ինթերնեշնլ ֆայրս Փի. Էլ. Սի.» կազմակերպությանը պատկանում է առաջին անգամ \$ՀՄՍ-ներ որդեգրող «Գուդ գրուպի Ինթերնեշնլ Լիմիթեդ»-ի սովորական բաժնետոմսերի 31.48%-ը (2010թ.՝ 31.48%, 2010թ. հունվարի 1՝ 31.48%):

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

29. Կապակցված կողմերի բացահայտումներ (շարունակություն)

ՀՀՄՍ 24.12

Ասոցիացված կազմակերպություն

«Փաուեր Վորկս Լիմիթեդ»

Խմբին պատկանում է «Փաուեր Վորկս Լիմիթեդ» կազմակերպության բաժնետոմսերի 25%-ը (2010թ.՝ 25%, 2010թ. հունվարի 1՝ 25%):

Համատեղ ձեռնարկում, որտեղ Խումբը հանդիսանում է ձեռնարկող

«Շաուերս Լիմիթեդ»

Խումբը «Շաուերս Լիմիթեդ»-ում ունի 50% բաժնեմաս (2010թ.՝ 50%, 2010թ. հունվարի 1՝ 50%):

Կապակցված կողմերի հետ գործարքների պայմաններ

Կապակցված կողմերի հետ գնման կամ վաճառքի գործարքների պայմանները չեն տարբերվում անկախ կողմերի միջև գործարքների պայմաններից: Տարվա վերջի դրությամբ հաշվեկշռային մնացորդները ապահովված չեն, հանդիսանում են ոչ տոկոսային, իսկ դրանց գծով վճարումներն իրականացվում են դրամական միջոցներով: Կապակցված կողմերի դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերի գծով երաշխավորություններ չեն տրամադրվել կամ ստացվել: 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար Խումբը կապակցված կողմերի դեբիտորական պարտքերի գծով արժեզրկում չի հայտնաբերել (2010թ.՝ 0): Այս գնահատումն իրականացվում է յուրաքանչյուր հաշվետու տարի կապակցված կողմի ֆինանսական վիճակը և շուկան, որում կապակցված կողմը գործում է, վերլուծելու միջոցով:

ՀՀՄՍ 24.21
ՀՀՄՍ 24.17(բ)

Մեկնաբանություն

Այն փաստը, որ կապակցված կողմերի միջև գործարքները չեն տարբերվում անկախ կողմերի միջև գործարքներից պահանջվում է միայն այն դեպքում, եթե կազմակերպությունը կկարողանա հիմնավորել այդ փաստի իրական լինելը, այսինքն՝ ՀՀՄՍ 24.23-ը չի պահանջում այդպիսի բացահայտում: Խումբը կարողացել է հիմնավորել այդ փաստի իրական լինելը և, հետևաբար, ներկայացնում է բացահայտում:

Ասոցիացված կազմակերպությանը տրված փոխառություն

«Փաուեր Վորկս Լիմիթեդ»-ին տրված փոխառությունը նախատեսված է ֆինանսավորելու հակահրդեհային սարքավորումների արտադրության համար Նոր հաստոցների ձեռքբերումը: Փոխառությունը ապահովված չէ և ամբողջությամբ ենթակա է վճարման 2013թ. հունիսի 1-ին: Փոխառության տոկոսները հաշվարկվում են 10% տոկոսադրույքով:

Առանցքային կառավարչական անձնակազմի հետ գործարքներ

Տնօրենին տրված վարկ

Խումբը ավագ դեկավարներին հնարավորություն է ընձեռում ստանալ մինչև 20,000 եվրո վարկ, որը ենթակա է մարման տրամադրման ամսաթվից սկսած հինգ տարվա ընթացքում: Այդպիսի վարկերը ապահովված չեն և այդ վարկերի նկատմամբ կիրառվում է երկարաժամկետ վարկերի միջին տոկոսադրույքները (ներկայումս՝ EURIBOR + 0.8%): Տրամադրված վարկերը ներառված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ֆինանսական գործիքներում:

ՀՀՄՍ 24.17(բ)

Տնօրենների այլ բաժնեմասեր

2011 և 2010թթ. ընթացքում Խմբի ընկերությունների կողմից իրականացվել է «Գնում Ինդսթրիզ Լիմիթեդ»-ի բաժնետոմսերի գնում շուկայական գներով, որում տնօրենը և վերահսկող բաժնետերը հանդիսանում է Խմբի Տնօրենների խորհրդի անդամներից մեկի կինը:

Տնօրենների խորհրդի անդամներից մեկը հանդիսանում է «Հոմ Ֆայր Լիմիթեդ»-ի բաժնետոմսերի 25%-ի սեփականատերը (2010թ.՝ 25%, 2010թ. հունվարի 1՝ 25%): Խումբն ունի կրակմարիչներ մատակարարելու պայմանագիր, ըստ որի 2011 և 2010թթ. ընթացքում Խումբը «Հոմ Ֆայր Լիմիթեդ»-ին մատակարարել է կրակմարիչներ շուկայական գներով:

Խմբի առանցքային կառավարչական անձնակազմին հատուցում

	2011թ.	2010թ.	
	000, եվրո	000, եվրո	
Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ	435	424	ՀՀՄՍ 24.16(ա)
Հետաշխատանքային թոշակային և բժշկական հատուցումներ	110	80	ՀՀՄՍ 24.16(բ)
Աշխատանքից ազատման հատուցումներ ¹	40	–	ՀՀՄՍ 24.16(դ)
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ	18	12	ՀՀՄՍ 24.16(ե)
Ընդամենը առանցքային կառավարչական անձնակազմին վճարված հատուցում	603	516	

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

29. Կապակցված կողմերի բացահայտումներ (շարունակություն)

ՀՀՄՍ 24.12

Աղյուսակում բացահայտված գումարները ներկայացնում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված առանցքային կառավարչական անձնակազմի գծով ծախսերը:

Տնօրենների խորհրդի այն անդամները, ովքեր չունեն գործադիր լիազորություններ, Խմբի կողմից վճարվող թոշակների նկատմամբ իրավունքներ չեն ստանում: 2011թ. ընթացքում 40,000 եվրո վճարվել է այն գործադիր տնօրենին, ով 2010թ. ստացել է թոշակի իրավունք:

Ավագ ղեկավարության համար սահմանված պլանում տնօրենների մասնակցությունը

Տնօրենների խորհրդի գործադիր լիազորություններ ունեցող անդամների ավագ ղեկավարության համար նախատեսված պլանով բաժնետոմսերի օպցիոնները ունեն հետևյալ գործողության ժամկետները և իրագործման գները.

Թողարկման ամսաթիվ	Գործողության ժամկետ	Իրագործման գին (եվրո)	2011թ.	2010թ.	2010թ. հունվարի 1
			Հիրագործված օպցիոնների քանակ		
2010թ.	2011թ.	2.33	10,000	10,000	–
2010թ.	2013թ.	3.13	83,000	83,000	–
2011թ.	2013թ.	3.85	27,000	–	–
Ընդամենը			120,000	93,000	–

Գործադիր լիազորություններ չունեցող Տնօրենների խորհրդի անդամներին տվյալ պլանի գծով օպցիոններ չեն տրամադրվել: Պլանի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Ծան. 27-ում:

Մեկնաբանություն

Որոշ իրավական համակարգերում հնարավոր է, որ առանցքային կառավարչական անձնակազմի և Տնօրենների խորհրդի անդամների աշխատավարձերի ու հատուցումների վերաբերյալ պահանջվեն լրացուցիչ և ավելի ընդարձակ բացահայտումներ:

30. Պարտավորվածություններ և պայմանական պարտավորություններ

Գործառնական վարձակալության գծով պարտավորվածություններ՝ Խումբը որպես վարձակալ

ՀՀՄՍ 17.35(դ)

Խումբը որոշակի տրանսպորտային միջոցների և սարքավորումների գծով կնքել է վարձակալական պայմանագրեր: Վարձակալության ժամկետները տատանվում են երեքից հինգ տարվա շրջանակներում և չունեն պայմանագրով նախատեսված երկարաձգելու հնարավորություն: Վարձակալության պայմանագրերը Խմբի վրա որևիցե սահմանափակում չեն ներառում:

Չեղյալ չհամարվող վարձակալական պայմանագրերի ապագա ժամանակաշրջանների վճարման ենթակա նվազագույն վարձավճարները ներկայացված են ստորև.

ՀՀՄՍ 17.35(ա)

	2011թ.	2010թ.	2010թ. հունվարի 1
	000, եվրո	000, եվրո	000, եվրո
Մեկ տարվա ընթացքում	255	250	165
Մեկից հինգ տարվա ընթացքում	612	600	400
Հինգ տարուց հետո	408	400	300
	1,275	1,250	875

Գործառնական վարձակալության գծով պարտավորվածություններ՝ Խումբը որպես վարձատու

ՀՀՄՍ 17.56(գ)

Խումբը կնքել է պայմանագրեր ներդրումային գույքի պորտֆելի շրջանակներում, որը բաղկացած է Խմբի կողմից չօգտագործվող գրասենյակներից և արտադրական շենքերից: Չեղյալ չհամարվող գործառնական վարձակալության պայմանագրերի մնացած ժամկետները կազմում են հինգից քսան տարի: Բոլոր պայմանագրերը ներառում են պարբերություն, որը նախատեսում է վարձավճարների տարեկան վերանայման հետևանքով աճ՝ տվյալ պահին շուկայում գերակշռող պայմաններից ելնելով:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

30. Պարտավորվածություններ և պայմանական պարտավորություններ (շարունակություն)

Չեղյալ չհամարվող պայմանագրերի գծով ստացման ենթակա նվազագույն վարձավճարները
դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են ստորև.

	2011թ.	2010թ.	2010թ. հունվարի 1-ի դրությամբ
	000, եվրո	000, եվրո	000, եվրո
Մեկ տարվա ընթացքում	709	695	650
Մեկից հինգ տարվա ընթացքում	2,815	2,760	2,100
Հինգ տարուց հետո	5,901	5,864	3,500
	9,425	9,319	6,250

ՀՀՄՍ 17.56(ա)

Ֆինանսական վարձակալություն և ապառիկ գնումների գծով պարտավորվածություններ

ՀՀՄՍ 17.31(ե)

Խումբն ունի տարբեր հիմնական միջոցների ֆինանսական վարձակալության և ապառիկով գնելու պայմանագրեր: Այս պայմանագրերը ունեն երկարաձգման հնարավորություն, բայց չունեն դրանք գնելու կամ գների փոփոխության պայմաններ: Երկարաձգման մասին որոշումները կայացվում են այն կազմակերպության կողմից, ում պատկանում է վարձակալական գույքը: Ֆինանսական վարձակալության և ապառիկով գնման պայմանագրերի ապագա ժամանակաշրջանների նվազագույն վարձավճարները, ինչպես նաև նվազագույն գումար վարձավճարների ներկա արժեքը ներկայացված է ստորև.

	2011թ.		2010թ.		2010թ. հունվարի 1-ի դրությամբ	
	Վճարների ներկա արժեք (Ծան. 16)		Վճարների ներկա արժեք (Ծան. 16)		Վճարների ներկա արժեք (Ծան. 16)	
	Նվազագույն վճարներ 000, եվրո	Նվազագույն վճարներ 000, եվրո	Նվազագույն վճարներ 000, եվրո	Նվազագույն վճարներ 000, եվրո	Նվազագույն վճարներ 000, եվրո	Նվազագույն վճարներ 000, եվրո
Մեկ տարվա ընթացքում	85	83	56	51	50	47
Մեկից հինգ տարվա ընթացքում	944	905	1,014	943	985	938
Հինգ տարուց հետո	-	-	-	-	-	-
Ընդամենը նվազագույն վարձավճարներ	1,029	988	1,070	994	1,035	985
Նվազեցված ֆինանսական ծախսերով	(41)	-	(76)	-	(50)	-
Նվազագույն վարձավճարների ներկա արժեք	988	988	994	994	985	985

ՀՀՄՍ 17.31(բ)

Ներդրումային բնույթի պարտավորվածություններ

ՀՀՄՍ 16.74(գ)

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի 2,310,000 եվրո (2010թ.՝ 4,500,000 եվրո, 2010թ. հունվարի 1՝
գրո) հակահրդեհային սարքավորումների արտադրության գծով համալիրի կառուցման պարտավորվածություն:

ՀՀՄՍ 31.55

Դատական հայցի գծով պայմանական պարտավորություն

ՀՀՄՍ 37.86

Օտարերկրյա հաճախորդը Խմբի դեմ ներկայացրել է դատական հայց սարքավորման անսարք լինելու պատճառով: Դատական գործընթացը պարտվելու դեպքում վճարման ենթակա գումարը կկազմի 850,000 եվրո: Քանի որ դատական նիստի ամսաթիվը դեռ չի նշանակվել, Խումբը չի կարող որոշել հնարավոր վճարման ամսաթիվը:

Խմբի իրավական հարցերով խորհրդատուի կարծիքով դատական գործընթացում պարտությունը հնարավոր է, բայց քիչ հավանական: Այդ պատճառով, ֆինանսական հաշվետվություններում տվյալ պարտավորության վճարման գծով պահուստ չի ստեղծվել:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

30. Պարտավորվածություններ և պայմանական պարտավորություններ (շարունակություն)

Երաշխավորություններ

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը տրամադրել է հետևյալ երաշխավորությունները.

ՀՀՄՍ 24.20(ը)
ՀՀՄՍ 31.54(ա)
ՀՀՄՍ 28.40

- ▶ Ասոցիացված կազմակերպության բանկային օվերդրաֆտի 25%-ի գծով երաշխավորություն՝ առավելագույնը 500,000 եվրո գումարի չափով (2010թ.՝ 500,000 եվրո, 2010թ. հունվարի 1՝ 500,000 եվրո), որի գծով Խումբը կրում է պարտականություններ ասոցիացված կազմակերպության այլ ներդրողների հետ միասին (2011 և 2010թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համապատասխան ֆինանսական երաշխավորության պայմանագրերի հաշվեկշռային արժեքները կազմել են 67,000 եվրո և 34,000 եվրո (2010թ. հունվարի 1՝ 32,000 եվրո), տես՝ Ծան. 16-ը):
- ▶ Ոչ կապակցված կողմին տրվել է երաշխավորություն համատեղ ձեռնարկման կողմից պայմանագրի պայմանները կատարելու կապակցությամբ: Խումբն ակնկալում է, որ վճարման գծով պարտավորություն չի առաջանա:
- ▶ Ասոցիացված կազմակերպության պայմանական պարտավորությունների իր մասնաբաժնի գծով տրված երաշխավորություն 20,000 եվրո գումարով (2010թ.՝ 15,000 եվրո, 2010թ. հունվարի 1՝ զրո), որի գծով պարտականությունը Խումբը կրում է այլ ներդրողների հետ միասին:

ՀՀՄՍ 37.86

ՀՀՄՍ 31.54(բ)

ՀՀՄՍ 28.40(ա)

Պայմանական պարտավորություններ

Խումբը «Էքստինգուիշեր Լիմիթեդ»-ի ձեռքբերման գործարքում ճանաչել է 400,000 եվրո պայմանական պարտավորություն: Լրացուցիչ տեղեկությունները ներկայացված են Ծան. 5-ում:

31. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունները

Խմբի հիմնական ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ ածանցյալ պարտավորությունների, ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը և ֆինանսական երաշխավորության պայմանագրերը: Սույն ֆինանսական պարտավորությունների հիմնական նպատակը հանդիսանում է Խմբի գործառնությունների ֆինանսավորումը և երաշխավորությունների տրամադրումը: Խումբն ունի փոխառություններ և այլ դեբիտորական պարտքեր, դրամական միջոցներ և կարճաժամկետ ավանդներ, որոնք առաջանում են իր գործառնական գործունեության ընթացքում: Խումբն ունի նաև վաճառքի համար մատչելի ներդրումներ և իրականացնում է գործարքներ ածանցյալ գործիքներով:

Խումբը ենթարկվում է շուկայական, պարտքային և իրացվելիության ռիսկերին:

Խմբի ավագ ղեկավարությունը վերահսկում է այդ ռիսկերի կառավարման գործընթացը: Ֆինանսական ռիսկերի կոմիտեն Խմբի ավագ ղեկավարությանը տրամադրում է խորհրդատվություն Խմբի ֆինանսական ռիսկերի և ֆինանսական ռիսկերի կառավարման շրջանակների վերաբերյալ: Ֆինանսական ռիսկերի կոմիտեն Խմբին տրամադրում է հավաստիացում առ այն, որ Խմբի ֆինանսական ռիսկերի հետ կապված գործունեությունն իրականացվում է համապատասխան քաղաքականության և ընթացակարգերի համաձայն, իսկ ֆինանսական ռիսկերի սահմանում և գնահատումը և դրանց կառավարումն իրականացնում է Խմբի քաղաքականության և իր վրա ռիսկ ընդունելու պատրաստակամության համաձայն: Ռիսկերի կառավարման նպատակով ածանցյալ գործիքների հետ բոլոր գործառնություններն իրականացվում են համապատասխան որակավորում և աշխատանքային փորձ ունեցող մասնագետների խմբի կողմից: Քաղաքականության համաձայն Խումբը ածանցյալ գործիքներով սպեկուլյատիվ նպատակներով գործարքներ չի իրականացնում:

Տնօրենների խորհուրդը վերլուծում և հաստատում է վերոնշյալ ռիսկերի կառավարման քաղաքականությունը, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքների տատանումների ռիսկն է շուկայական գների փոփոխության հետևանքով: Շուկայական գինը ներառում է ռիսկի 4 տեսակ՝ տոկոսադրույքի ռիսկ, արժույթային ռիսկ, ապրանքների գների և այլ գների փոփոխության ռիսկ, օրինակ՝ բաժնային գործիքների գների փոփոխության ռիսկ: Շուկայական ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքները ներառում են վարկերը և փոխառությունները, ավանդները, վաճառքի համար մատչելի ներդրումները և ածանցյալ ֆինանսական գործիքները:

Ստորև նշված զգայունության վերլուծությունը վերաբերում է 2011 և 2010 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դիրքերին:

Զգայունության վերլուծությունը պատրաստվել է այն ենթադրության հիման վրա, որ զուտ փոխառության գումարը, փոխառության և ածանցյալ գործիքների հաստատուն տոկոսադրույքների հարաբերությունը լրիվապես տոկոսադրույքներին, արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների մասնաբաժինը հանդիսանում են հաստատուն մեծություններ, ինչպես նաև հեջավորման հարաբերությունների հիման վրա, որոնք տեղի են ունեցել 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

31. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունները (շարունակություն)

Վերլուծությունը չի ներառում շուկայում փոփոխական մեծությունների փոփոխության ազդեցությունը թոշակների և հետաշխատանքային հատուցումների գծով այլ պարտավորությունների, պահուստների, ինչպես նաև արտերկրյա ստորաբաժանումների ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

Զգայունության վերլուծությունն իրականացնելիս կիրառվել են հետևյալ ենթադրությունները՝

- ▶ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության զգայունությունը վերաբերում է ածանցյալ գործիքներին և վաճառքի համար մատչելի պարտքային գործիքներին,
- ▶ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության համապատասխան հոդվածի զգայունությունը համապատասխան շուկայական ռիսկերի ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է: Վերլուծությունն իրականացվել է 2011 և 2010թթ. դրությամբ առկա ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հիման վրա, ներառյալ հեջավորման հաշվառման ազդեցությունը,

Սեփական կապիտալի զգայունությունը հաշվարկվում է ելնելով դրամական միջոցների հոսքերի հեջավորման և արտերկրյա դուստր կազմակերպությունում զուտ ներդրումների հեջավորման ազդեցությունից 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ պարամետրերում ենթադրվող փոփոխությունների ազդեցությամբ:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսային ռիսկը ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքի տատանումների ռիսկն է շուկայում տոկոսադրույքների փոփոխության հետևանքով: Շուկայական տոկոսադրույքների փոփոխության ռիսկին ենթարկվում են Խմբի լողացող տոկոսադրույքով երկարաժամկետ պարտավորությունները:

Խումբը տոկոսադրույքի փոփոխության ռիսկը կառավարում է հաստատուն և փոփոխական տոկոսադրույքներով վարկերի և փոխառությունների պորտֆելի միջոցով: Խմբի քաղաքականության համաձայն փոխառությունների 40%-ից 60%-ը պետք է ունենան հաստատուն տոկոսադրույքներ՝ բացառելով ընդհատված գործունեությանը վերաբերող փոխառությունները: Տոկոսադրույքի ռիսկը կառավարելու նպատակով Խումբը կնքում է տոկոսային սվոպերի պայմանագրեր, ըստ որոնց Խումբը համաձայնվում է որոշակի ժամանակահատվածներում ստանալ կամ վճարել հաստատուն և փոփոխական տոկոսային վճարների միջև տարբերությունը՝ հաշվարկված փոխառության պայմանական համաձայնեցված զումարի հիման վրա: Տվյալ սվոպերը նախատեսված են հեջավորելու նշված փոխառությունների գծով պարտավորությունները: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տոկոսային սվոպերի ազդեցությունը հաշվի առնելուց հետո, հաստատուն տոկոսադրույքով Խմբի փոխառությունները կազմում են մոտավորապես 43% (2010թ.՝ 50%, 2010թ. հունվարի 1՝ 41%):

Տոկոսադրույքի փոփոխություններին զգայունություն

Հետևյալ աղյուսակը արտացոլում է զգայունության վերլուծությունը վարկերի և փոխառությունների այդ մասին վերաբերող տոկոսադրույքների հնարավոր փոփոխություններին՝ հաշվի առնելով հեջավորման հաշվառման ազդեցությունը: Բոլոր այլ փոփոխականների հաստատուն լինելու պայմանի դեպքում լողացող տոկոսադրույքով փոխառություններն ունեն հետևյալ ազդեցությունը Խմբի նախքան հարկումը շահույթի վրա:

	Բազիսային միավորներում աճ/ նվազում	Նախքան հարկումը շահույթի վրա ազդեցություն	\$ՀՄՄ 7.40(ա)
		000, եվրո	
2011թ.			
Եվրո	+45	(48)	
ԱՄՆ դոլար	+60	(13)	
Եվրո	-45	33	
ԱՄՆ դոլար	-60	12	
2010թ.			
Եվրո	+10	(19)	
ԱՄՆ դոլար	+15	-	
Եվրո	-10	12	
ԱՄՆ դոլար	-15	-	

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

31. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունները (շարունակություն)

Տոկոսադրույքների փոփոխությունների զգայունության վերլուծության շրջանակներում բազիսային միավորներում փոփոխությունների վերաբերյալ ենթադրությունները հիմնված են տվյալ պահին շուկայում դիտարկվող վիճակի հիման վրա, ինչը բնորոշում է նախորդ տարիների հետ համեմատած նշանակալի փոփոխականություն:

Արժութային ռիսկ

Արտարժութային ռիսկը արտարժույթի փոխարժեքների փոփոխության հետևանքով ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքների տատանումների ռիսկն է: Արտարժույթի փոխարժեքների փոփոխության ռիսկին ենթարկվում է Խմբի գործառնական գործունեությունը (երբ հասույթը կամ ծախսը արտահայտված են այլ արժույթով, քան Խմբի ֆունկցիոնալ արժույթն է) և Խմբի զուտ ներդրումները արտերկրյա դուստր կազմակերպություններում:

\$ՀՄՄ 7.33
ՖՀՄՄ 7.40(բ)

Խումբը կառավարում է արժութային ռիսկը հեջավորման գործարքների միջոցով, որոնք ակնկալվում է մարել առավելագույնը 24 ամիս հետո: Որոշակի բնույթ ունեցող գործարքները հեջավորվում են առանց ժամանակային սահմանափակումների:

Եթե հեջավորման գործարքը տնտեսական հեջավորում չի հանդիսանում, Խմբի քաղաքականության համաձայն հեջավորման առավելագույն արդյունավետությունն ապահովելու նպատակով հեջավորման համար նախատեսված ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքների պայմանները պետք է սահմանել հնարավորինս մոտ հեջավորման առարկա հանդիսացող գործարքների պայմաններին:

Խումբը հեջավորում է արտերկրյա ստորաբաժանումների գործունեության արդյունքները եվրոյով փոխարկելու ռեպլում փոխարժեքի տատանման ռիսկը՝ օգտագործելով արտարժույթով զուտ փոխառություններ, ինչպես նաև արտարժութային սվոպեր և ֆորվարդ պայմանագրեր:

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը հեջավորել է իր արտարժույթով վաճառքների 75% (2010թ. դեկտեմբերի 31-ի և հունվարի 1-ի դրությամբ՝ 70%), այդ վաճառքները հաշվետու ամսաթվի դրությամբ համարվում են մեծ հավանականությամբ կանխատեսվող գործարքներ:

Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների նկատմամբ զգայունություն

Ստորև ներկայացված աղյուսակը ներկայացնում է ԱՄՆ դոլարի փոխարժեքի հնարավոր փոփոխության նկատմամբ զգայունությունը՝ այլ փոփոխականների հաստատուն լինելու դեպքում: Խմբի նախքան հարկումը շահույթի վրա ազդեցությունը պայմանավորված է դրամական ակտիվների և պարտավորությունների (ներառյալ՝ արտարժութային ածանցյալ գործիքների, որոնք նախատեսված չեն որպես հեջավորում) իրական արժեքների փոփոխություններով: Խմբի սեփական կապիտալի վրա ազդեցությունը պայմանավորված է որպես դրամական հոսքերի հեջավորում և որպես զուտ ներդրումներում հեջավորում նախատեսված ֆորվարդ արժութային պայմանագրերի իրական արժեքների փոփոխություններով: Այլ արժույթների փոփոխությունների նկատմամբ Խմբի ենթարկվածությունը էական չէ:

	ԱՄՆ դոլարի փոխարժեքի փոփոխություն	Նախքան հարկումը	Սեփական կապիտալի	\$ՀՄՄ 7.40(ա)
		շահույթի վրա ազդեցություն	վրա ազդեցություն	
		000, եվրո	000, եվրո	
2011թ.	+9%	(30)	(154)	
	-9%	20	172	
2010թ.	+8%	(40)	(146)	
	-8%	40	158	

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

31. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունները (շարունակություն)

Հարկումից հետո շահույթի վրա ազդեցության փոփոխությունը պայմանավորված է որպես հեջավորման գործիքներ չնախատեսված ածանցյալ ֆինանսական գործիքների և ԱՄՆ դոլարով արտահայտված դրամական ակտիվների և պարտավորությունների (որտեղ ԱՄՆ դոլարը չի հանդիսանում կազմակերպության ֆունկցիոնալ արժույթ) իրական արժեքի փոփոխություններով: Թեև ածանցյալ գործիքները չեն նախատեսվել որպես հեջավորման գործիքներ, սակայն հանդիսանում են առևտրային հեջավորման գործիքներ, որոնք կփոխհատուցեն հիմքում ընկած գործարքները՝ վերջիններիս տեղի ունենալու դեպքում:

Սեփական կապիտալի փոփոխությունները պայմանավորված են ԱՄՆ-ում գտնվող արտերկրյա ստորաբաժանումում զուտ ներդրումների և դրամական միջոցների հոսքերի հեջավորման դեպքում ԱՄՆ դոլարով արտահայտված փոխառությունների փոփոխություններով (զուտ դրամական միջոցներից և դրանց համարժեքներից): Տվյալ փոփոխությունները կհաշվանցեն ԱՄՆ դոլարով արտահայտված ստորաբաժանման զուտ ակտիվների եվրոյով փոխարկումը:

Ապրանքների գների փոփոխության ռիսկ

Խումբը ենթարկվում է որոշակի ապրանքների գների փոփոխականության ռիսկին: Խմբի գործառնական գործունեությունը պահանջում է էլեկտրոնային սարքավորումների բաղադրիչների պարբերաբար ձեռքբերում և արտադրում և, հետևաբար, պահանջում է նաև պղնձի կանոնավոր գնում: Հումքի գների էապես աճած փոփոխականության հետևանքով, Խմբի Տնօրենների խորհուրդը մշակել և հաստատել է ապրանքների գների փոփոխականության ռիսկի կառավարման և այդ ռիսկի նվազեցման ռազմավարություն:

Անհրաժեշտ պղնձի 12 մսիս ներառող կանխատեսման հիման վրա Խումբը հեջավորում է պղնձի գնման գինը՝ օգտագործելով ապրանքային ֆորվարդ գնման պայմանագրեր: Ակնկալվում է, որ կանխատեսման ճշգրիտ լինելու հավանականությունը շատ մեծ է:

Ապրանքի մատակարարում նախատեսող ֆորվարդ պայմանագրերը, որոնք համապատասխանում են սովորական գնման, վաճառքի կամ օգտագործման չափանիշներին, չեն ճանաչվում որպես ածանցյալ գործիքներ և բացահայտվում են Ծան. 30-ում:

Ապրանքների գների փոփոխության նկատմամբ զգայունություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է նախքան հարկումը շահույթի և սեփական կապիտալի վրա պղնձի գնի փոփոխության ազդեցությունը՝ զուտ հեջավորման հաշվառման ազդեցությունից:

	Տարվա վերջի դրությամբ գնի փոփոխություն	Նախքան հարկումը շահույթի վրա ազդեցություն	Սեփական կապիտալի վրա ազդեցություն	
		000, եվրո	000, եվրո	\$ՀՄՄ 7.40(ա)
2011թ.				
Պղինձ	+15%	(220)	(585)	
	-15%	220	585	

Բաժնային գործիքների գների փոփոխության ռիսկ

\$ՀՄՄ 7.33(բ)

Խմբի գնանշվող և չգնանշվող բաժնետոմսերը ենթարկվում են ներդրումային արժեթղթերի ապագա արժեքի անորոշությամբ պայմանավորված ռիսկին: Խումբը կառավարում է բաժնային գործիքների գների փոփոխության ռիսկը ներդրումները դիվերսիֆիկացնելու և առանձին ու ընդհանուր բաժնային գործիքների նկատմամբ սահմանաչափեր կիրառելու միջոցով: Բաժնային գործիքների պորտֆելի վերաբերյալ հաշվետվությունները կանոնավոր կերպով ներկայացվում են Խմբի ավագ ղեկավարներին: Խմբի Տնօրենների խորհուրդը վերլուծում և հաստատում է բաժնային ներդրումների գծով բոլոր որոշումները:

Հաշվետու ամսաթվի դրությամբ իրական արժեքով չափվող չգնանշվող բաժնային գործիքների ռիսկին

\$ՀՄՄ 7.33(ա)

ենթարկվածությունը կազմել է 1,163,000 եվրո: Կատարված հաշվարկներում ընդհանուր շահույթի 10%-ով փոփոխությունը Խմբի սեփական կապիտալի վրա կարող է ունենալ մոտավորապես 120,000 եվրո աճի կամ նվազեցման ազդեցություն:

\$ՀՄՄ 7.40

Հաշվետու ամսաթվի դրությամբ իրական արժեքով չափվող գնանշվող բաժնետոմսերի ռիսկին

ենթարկվածությունը կազմել է 337,000 եվրո: Նյու-Յորքի ֆոնդային բորսայում շուկայական ինդեքսի 10%-ով նվազեցումը կարող է 55,000 եվրոյի ազդեցություն ունենալ Խմբին վերագրելի շահույթի կամ սեփական կապիտալի վրա՝ կախված ընդհանուր շահույթում այդ նվազեցման էական կամ շարունակական լինելուց: Գնանշվող բաժնետոմսերի արժեքում 10%-ով աճը ազդեցություն կունենա միայն սեփական կապիտալի վրա, բայց ազդեցություն չի ունենա շահույթի կամ վնասի վրա:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

31. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունները (շարունակություն)

Պարտքային ռիսկ

ՀՀՄՍ 7.33

Պարտքային ռիսկն իրենից ներկայացնում է գործընկերոջ կողմից՝ ֆինանսական գործիքի կամ հաճախորդի հետ կնքած պայմանագրի գծով պարտականությունները չկատարելու հետևանքով ֆինանսական վնասներ կրելու ռիսկը: Խումբը ենթարկվում է պարտքային ռիսկին՝ կապված գործառնական գործունեության (հիմնականում առևտրային դեբիտորական պարտքերի) և ֆինանսական գործունեության հետ, ներառյալ՝ բանկերում և ֆինանսական հաստատություններում ավանդները, արտարժույթի փոխարկման գործարքները և այլ ֆինանսական գործիքները:

Առևտրային դեբիտորական պարտքեր

ՀՀՄՍ 7.34(գ)
ՖՀՄՍ 7.Բ8

Հաճախորդների գծով պարտքային ռիսկի կառավարումն իրականացվում է յուրաքանչյուր գործառնական ստորաբաժանման կողմից՝ Խմբի կողմից սահմանված հաճախորդների գծով պարտքային ռիսկի կառավարման քաղաքականության, ընթացակարգերի և վերահսկողության համակարգերի համաձայն: Հաճախորդների վարկունակությունը գնահատվում է պարտքային վարկանիշի մանրամասն վերլուծության հիման վրա և այդ գնահատումից ելնելով սահմանվում են անհատական պարտքային սահմանաչափեր: Հաճախորդների դեբիտորական պարտքերի գծով իրականացվում է կանոնավոր մոնիտորինգ, իսկ հիմնական հաճախորդներին ապրանքների մատակարարումը, որպես կանոն, ապահովվում է ակրեդիտիվներով կամ պարտավորությունը չվճարելու ապահովագրության այլ տեսակներով: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 55 հաճախորդ (2010թ.՝ 65 հաճախորդ, 2010թ. հունվարի 1՝ 60 հաճախորդ), որոնցից յուրաքանչյուրն ուներ ավելի քան 250,000 եվրո պարտք, իսկ ընդհանուր գումարը կազմում էր դեբիտորական պարտքերի 71%-ը (2010թ.՝ 76%, 2010թ. հունվարի 1՝ 72%): Հինգ (2010թ.՝ յոթ, 2010թ. հունվարի 1՝ երեք) հաճախորդների դեբիտորական պարտքերը 1 միլիոն եվրոյից ավել են և կազմում են ընդհանուր դեբիտորական պարտքերի գումարի 17%-ը (2010թ.՝ 19%, 2010թ.՝ հունվարի 1՝ 13%): Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ իրականացվում է արժեզրկման ստուգում անհատական հիմունքով բոլոր հիմնական հաճախորդների համար: Բացի այդ, փոքր գումարի դեբիտորական պարտքեր ունեցող հաճախորդները խմբավորված են համանման բնութագրեր ունեցող խմբերում և գնահատվում են ըստ արժեզրկման հայտանիշների առկայության խմբային հիմունքով: Հաշվարկները սահմանվում են անցյալում փաստացի կրած վնասների հիման վրա: Վարկային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը Ծան. 16-ում բացահայտված ֆինանսական ակտիվների յուրաքանչյուր դասի հաշվեկշռային արժեքն է հաշվետու ամսաթվի դրությամբ: Խմբի դեբիտորական պարտքերը գրավով ապահովված չեն: Խումբը առևտրային դեբիտորական պարտքերի ռիսկի համակենտրոնացումը գնահատում է որպես ցածր, քանի որ իր հաճախորդները գտնվում են տարբեր երկրներում, գործում են տարբեր ոլորտներում և անկախ շուկաներում:

Ֆինանսական գործիքներ և դրամական ավանդներ

ՖՀՄՍ 7.33
ՖՀՄՍ 7.36

Բանկերում և ֆինանսական հաստատություններում տեղակայված միջոցների մնացորդներից առաջացող պարտքային ռիսկը կառավարվում է Խմբի գանձապետական վարչության կողմից Խմբի քաղաքականության համաձայն: Լրացուցիչ միջոցները ներդրվում են նախապես հաստատված գործընկերների հաշիվներում՝ յուրաքանչյուր գործընկերոջ համար սահմանված պարտքային սահմանաչափի համաձայն: Գործընկերների համար հաստատված սահմանաչափերը վերանայվում են Խմբի Տնօրենների խորհրդի կողմից և կարող են փոփոխվել տարվա ընթացքում: Խմբի ֆինանսական կոմիտեի կողմից հաստատում ստանալու դեպքում: Սահմանաչափերը սահմանվել են ռիսկի համակենտրոնացումը նվազեցնելու նպատակով և, հետևաբար, զսպելու ֆինանսական վնասը՝ գործընկերոջ հնարավոր անվճարունակության հետևանքով: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության տարրերի պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը Ծան. 16-ում ներկայացված հաշվեկշռային արժեքներն են, բացառությամբ՝ ֆինանսական երաշխավորությունների և ածանցյալ ֆինանսական գործիքների: Ֆինանսական երաշխավորությունների և ածանցյալ ֆինանսական գործիքների ռիսկին ենթարկվածությունը ներկայացված է համապատասխանաբար Ծան. 30-ում և ստորև ներկայացված իրացվելիության աղյուսակում:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

31. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունները (շարունակություն)

Իրացվելիության ռիսկ

Խումբն իրականացնում է դրամական միջոցների դեֆիցիտի ռիսկի նկատմամբ վերահսկողություն՝ օգտագործելով շարունակական իրացվելիությունը պլանավորելու գործիքը:

ՖՀՄՄ 7.33
ՖՀՄՄ 7.39(գ)

Խմբի նպատակն է պահպանել ֆինանսավորման շարունակականության և ճկունության միջև հավասարակշռություն՝ բանկային օվերդրաֆտների, բանկային վարկերի, պարտատոմսերի, արտոնյալ բաժնետոմսերի, ֆինանսական վարձակալության և ապառիկով ապրանքների գնման պայմանագրերի օգտագործման միջոցով: Խմբի քաղաքականության համաձայն՝ ցանկացած 12-ամսյա ժամանակաշրջանի ընթացքում պետք է մարվեն փոխառությունների ոչ ավել, քան 35%-ը: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվություններում ներառված փոխառությունների հաշվեկշռային արժեքների հիման վրա հաշվարկված Խմբի փոխառությունների 10.6%-ը (2010թ.՝ 11.1%, 2010թ. հունվարի 1՝ 19.0%) պետք է մարվի մեկ տարվա ընթացքում: Խումբը գնահատել է ռիսկի համակենտրոնացումն իր փոխառությունները վերաֆինանսավորելու տեսանկյունից և եզրակացրել, որ համակենտրոնացումը ցածր է: Խումբն ունի բավարար ֆինանսական աղբյուրներ, իսկ 12 ամսվա ընթացքում վճարման ենթակա փոխառության մարման ժամկետները ընթացիկ վարկառուների հետ պայմանավորվածության համաձայն կարող են տեղափոխվել ավելի ուշ ժամանակաշրջաններ:

ՖՀՄՄ 7.Բ8

Ստորև ներկայացված աղյուսակում արտացոլված է Խմբի ֆինանսական պարտավորությունների մարման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն՝ հիմնված չզեղված պայմանագրային վճարումների վրա:

2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարի

	Ցպահանջ	3 ամսից պակաս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	5 տարուց ավել	Ընդամենը	ՖՀՄՄ 7.39(ա)(բ)
	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	
Տոկոսային վարկեր և փոխառություններ	966	21	1,562	10,554	8,000	21,103	
Փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր	-	-	-	676	2,324	3,000	
Այլ պարտավորություններ	-	-	-	150	-	150	
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	3,620	14,766	1,170	-	-	19,556	
Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր	87	-	-	-	-	87	
Ածանցյալ ֆինանսական գործիքներ	1,970	2,740	391	1,191	1,329	7,621	
	6,643	17,527	3,123	12,571	11,653	51,517	

2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարի

	Ցպահանջ	3 ամսից պակաս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	5 տարուց ավել	Ընդամենը	
	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	
Տոկոսային վարկեր և փոխառություններ	2,650	18	1,433	7,572	11,600	23,273	
Փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր	-	-	-	624	2,376	3,000	
Այլ պարտավորություններ	-	-	-	202	-	202	
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4,321	14,904	2,056	-	-	21,281	
Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր	49	-	-	-	-	49	
Ածանցյալ ֆինանսական գործիքներ	549	1,255	-	-	-	1,804	
	7,576	16,177	3,489	8,398	13,976	49,609	

2010թ. հունվարի 1-ի դրությամբ

	Ցպահանջ	3 ամսից պակաս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	5 տարուց ավել	Ընդամենը	
	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	
Տոկոսային վարկեր և փոխառություններ	2,750	23	1,523	7,235	8,127	19,658	
Փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր	-	-	-	598	2,402	3,000	
Այլ պարտավորություններ	-	-	-	180	-	180	
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4,707	13,894	1,998	-	-	20,599	
Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր	32	-	-	-	-	32	
Ածանցյալ ֆինանսական գործիքներ	532	1,272	-	-	-	1,804	
	8,021	15,189	3,521	8,013	10,529	45,273	

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

31. Ֆինանսական դիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունները (շարունակություն)

Մեկնաբանություն

«Ֆինանսական գործիքների մասին բացահայտումների բարելավում» (Փոփոխություններ ՖՀՄՍ 7-ում) փաստաթուղթը փոփոխել է ՀՀՄՍ 39-ի 39-րդ պարագրաֆը՝ բացահայտ պահանջելով այն ֆինանսական պարտավորությունների պայմանագրային մարման ժամկետների վերլուծությունը, որոնց համար պայմանագրային մարման ժամկետները կարևոր են համապատասխան դրամական միջոցների հոսքերի ժամանակայնությունը հասկանալու համար:

Վերոնշյալ աղյուսակում բացահայտված ածանցյալ ֆինանսական գործիքները հանդիսանում են համախառն չգեղչված դրամական միջոցների հոսքեր: Այնուամենայնիվ, այս գումարները կարող են մարվել ինչպես համախառն, այնպես էլ՝ զուտ հիմքով: Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այդ գումարների համաձայնեցումն իրենց համապատասխան հաշվեկշռային արժեքներին:

2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարի	Ցպահանջ	3 ամսից պակաս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	5 տարուց ավել	Ընդամենը	ՖՀՄՍ 7.39(ա)(բ)
	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	
Ներհոսք	800	1,000	250	700	950	3,700	
Արտահոսք	(1,970)	(2,740)	(391)	(1,191)	(1,329)	(7,621)	
Զուտ	(1,170)	(1,740)	(141)	(491)	(379)	(3,921)	
Ձեռչված համապատասխան միջբանկային դրույքներով	(1,170)	(1,731)	(139)	(463)	(343)	(3,846)	
2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարի	Ցպահանջ	3 ամսից պակաս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	5 տարուց ավել	Ընդամենը	
	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	
Ներհոսք	500	1,000	–	–	–	1,500	
Արտահոսք	(549)	(1,255)	–	–	–	(1,804)	
Զուտ	(49)	(255)	–	–	–	(304)	
Ձեռչված համապատասխան միջբանկային դրույքներով	(49)	(254)	–	–	–	(303)	
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	Ցպահանջ	3 ամսից պակաս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	5 տարուց ավել	Ընդամենը	
	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	000, եվրո	
Ներհոսք	500	1,000	–	–	–	1,500	
Արտահոսք	(532)	(1,272)	–	–	–	(1,804)	
Զուտ	(32)	(272)	–	–	–	(304)	
Ձեռչված համապատասխան միջբանկային դրույքներով	(32)	(271)	–	–	–	(303)	

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

31. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունները (շարունակություն)

ՀՀՄՍ 1.134
ՀՀՄՍ 1.135

Սեփական կապիտալի կառավարում

Սեփական կապիտալը ներառում է փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերը և մայր կազմակերպության սեփականատերերին վերագրելի կապիտալը:

Խմբի սեփական կապիտալի կառավարման հիմնական նպատակը սեփական կապիտալի վարկունակության կայունության և ֆինանսական ցուցանիշների համապատասխան մակարդակի պահպանումն է՝ Խմբի գործունեության աջակցության և բաժնետերերի շահույթը մաքսիմալացնելու նպատակով:

Խումբը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ՝ տնտեսական պայմանների փոփոխություններին համապատասխան: Խմբի սեփական կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ կարգավորելու նպատակով Խումբը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, վերադարձնել բաժնետերերին կապիտալը կամ թողարկել նոր բաժնետոմսեր:

2011 և 2010թթ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարիներին սեփական կապիտալի կառավարման նպատակներում, քաղաքականություններում կամ ընթացակարգերում փոփոխություններ չեն իրականացվել:

Խումբն իրականացնում է սեփական կապիտալի վերահսկողություն ֆինանսական լծակի գործակցի միջոցով, որը հաշվարկվում է որպես զուտ փոխառությունների և ընդհանուր կապիտալի ու զուտ փոխառությունների հանրագումարի հարաբերակցություն: Խմբի քաղաքականության համաձայն ֆինանսական լծակի գործակցը պետք է պահպանել 25%-ից 40%-ի միջև: Խմբի զուտ փոխառությունները ներառում են տոկոսային վարկերը և փոխառությունները, համատեղ ձեռնարկման գործընկերոջից վարկ, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը՝ նվազեցված դրամական միջոցներով և դրանց համարժեքներով, բացառելով՝ ընդհատված գործունեությունը:

	2011թ.	2010թ.	2010թ. հունվարի 1	
	000, եվրո	000, եվրո	000, եվրո	ՀՀՄՍ 1.134
Տոկոսային վարկեր և փոխառություններ (Ծան. 16)	20,538	22,334	21,469	
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր (Ծան. 28)	19,556	21,281	20,600	
Նվազեցված՝ դրամական միջոցներով և կարճաժամկետ ավանդներով (Ծան. 20)	(17,112)	(14,916)	(11,066)	
Զուտ փոխառություն	22,982	28,699	31,003	
Փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր (Ծան. 16)	2,778	2,644	2,522	
Սեփական կապիտալ	62,190	48,551	42,841	
Ընդամենը սեփական կապիտալ	64,968	51,195	45,363	
Սեփական կապիտալ և զուտ փոխառություն	87,950	79,894	76,365	
Ֆինանսական լծակի հարաբերակցություն	26%	36%	41%	

Մեկնաբանություն

Համաձայն ՀՀՄՍ 1.134-ի և ՀՀՄՍ 1.135-ի պահանջների կազմակերպությունները պետք է բացահայտեն սեփական կապիտալի կառավարման նպատակների, քաղաքականությունների և ընթացակարգերի վերաբերյալ քանակական և որակական տեղեկատվություն: Խումբը բացահայտել է ֆինանսական լծակի գործակցը, քանի որ սեփական կապիտալի վերահսկողության նպատակով Խումբն օգտագործում է այդ ցուցանիշը: Խումբը սեփական կապիտալն ու զուտ փոխառությունը դիտարկում է որպես ֆինանսավորման գլխավոր տարրեր, և հետևաբար, որպես սեփական կապիտալի կառավարման մաս ևս: Այլ կազմակերպություններին համար կարող են օգտագործվել այլ չափանիշներ և ֆինանսական լծակի գործակցի այլ ցուցանիշներ:

Գրավ

Խումբն իր կարճաժամկետ ավանդների մի մասը գրավադրել է առկա հեջավորված ածանցյալ գործիքների ապահովման գծով պահանջները կատարելու նպատակով: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրավադրված կարճաժամկետ ավանդների իրական արժեքը կազմել է 5 միլիոն եվրո (2010թ.՝ 2 միլիոն եվրո, 2010թ. հունվարի 1՝ 2 միլիոն եվրո): Գործընկերները ունեն պարտականություն արժեթղթերը Խմբին վերադարձնելու գծով: Գրավի օգտագործման հետ կապված այլ էական պայմաններ չկան:

ՀՀՄՍ 7.48
ՖՀՄՍ 7.14
ՖՀՄՍ 7.38

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չի ունեցել որպես գրավ ստացված որևէ միջոցներ (2010թ.՝ զրո, 2010թ. հունվարի 1՝ զրո):

ՀՀՄՍ 7.15

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

32. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

2012թ. հունվարի 14-ին 1,695,000 եվրո զուտ հաշվեկշռային արժեք ունեցող շենքը վնասվել է ջրհեղեղի հետևանքով, իսկ 857,000 եվրո զուտ հաշվեկշռային արժեք ունեցող պաշարները կորել են: Ակնկալվում է, որ ապահովագրական հատուցումը 750,000 եվրոյով չի բավարարի շենքերը և պաշարների կորուստը ամբողջովին վերականգնելու համար: Համախմբված ֆինանսական հաշվետվությունները չեն ճշգրտվել ակնկալվող կորուստն արտացոլելու նպատակով:

ՀՀՄՍ 10.21
ՀՀՄՍ 10.10

Հավելված 1. Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն (միասնական հաշվետվության օրինակ)

2011 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

ՀՀՄՍ 1.10(բ)
ՀՀՄՍ 1.51(բ)(գ)

Մեկնաբանություն

Խումբը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը ներկայացնում է երկու առանձին հաշվետվություններով: Ցուցադրական նպատակով, այս հավելվածում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը ներկայացված է որպես համապարփակ ֆինանսական արդյունքների մասին մեկ հաշվետվություն:

ՀՀՄՍ 1.10(բ), ՀՀՄՍ 1.51(բ)(գ)

	Ծան.	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո	ՀՀՄՍ 1.51(դ)(ե)
Շարունակական գործունեություն				
Ապրանքների վաճառք		190,599	172,864	ՀՀՄՍ 18.35(բ)(i)
Ծառայությունների մատուցում		17,131	16,537	ՀՀՄՍ 18.35(բ)(ii)
Հասույթ «Գուդ բոնուսների» մարումից	25	1,375	1,125	ՀՀՄՍ 18.35(բ)(ii)
Վարձակալությունից եկամուտ	14	1,404	1,377	ՀՀՄՍ 18.35(գ)
Հասույթ		210,509	191,903	ՀՀՄՍ 1.82(ա)
Վաճառքի ինքնարժեք		(163,691)	(155,268)	ՀՀՄՍ 1.103
Համախառն շահույթ		46,818	36,635	ՀՀՄՍ 1.85, ՀՀՄՍ 1.103
Այլ գործառնական եկամուտ	9.1	1,585	2,548	ՀՀՄՍ 1.103
Վաճառքի և բաշխման ծախսեր		(14,000)	(13,002)	ՀՀՄՍ 1.103
Վարչական ծախսեր		(19,746)	(13,482)	ՀՀՄՍ 1.103
Այլ գործառնական ծախսեր	9.2	(1,153)	(706)	ՀՀՄՍ 1.103
Գործառնական շահույթ		13,504	11,993	ՀՀՄՍ 1.82(ա)
Ֆինանսական ծախսեր	9.3	(2,868)	(1,223)	ՀՀՄՍ 1.82(բ), ՀՀՄՍ 7.20
Ֆինանսական եկամուտներ	9.4	1,186	211	ՀՀՄՍ 1.82(ա)
Ասոցիացված կազմակերպության շահույթից բաժնեմաս	7	83	81	ՀՀՄՍ 1.82(գ), ՀՀՄՍ 28.38
Շարունակական գործունեությունից շահույթ նախքան շահութահարկը		11,905	11,062	ՀՀՄՍ 1.85
Շահութահարկի գծով ծախս	10	(3,893)	(3,432)	ՀՀՄՍ 1.82(դ), ՀՀՄՍ 12.77
Շարունակական գործունեությունից հաշվետու տարվա շահույթ		8,012	7,630	ՀՀՄՍ 1.85
Ընդհատված գործունեություն				
Ընդհատված գործունեությունից հաշվետու տարվա շահույթ/(վնաս) շահութահարկից հետո	11	220	(188)	ՀՀՄՍ 1.82(ե), ՀՀՄՍ 5.33(ա)
Հաշվետու տարվա շահույթ		8,232	7,442	ՀՀՄՍ 1.82(զ)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ				
				ՀՀՄՍ 1.82(է)
Ջուտ ներդրումների հեջավորումից զուտ օգուտ		278	–	
Արտերկրյա ստորաբաժանման գործառնությունների վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերություններ		(351)	(167)	
Դրամական միջոցների հոսքերի հեջավորման զուտ շարժ	9.8	(732)	33	
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով զուտ (վնաս)/ օգուտ	9.8	(60)	(22)	
Սահմանված հատուցումների պլանների գծով ակտուարային օգուտ/(վնաս)	26	311	(401)	ՀՀՄՍ 19.93բ
Հողամասերի և շենքերի վերագնահատում	13	846	–	
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների տարրերի գծով շահութահարկ	10	(88)	166	ՀՀՄՍ 1.90
Հաշվետու տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ՝ զուտ հարկերից		204	(391)	ՀՀՄՍ 1.85
Հաշվետու տարվա ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ՝ զուտ հարկերից		8,436	7,051	ՀՀՄՍ 1.82(զ)

Հավելված 1. Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն (միասնական հաշվետվության օրինակ)

ՀՀՄՍ 1.10(բ)
ՀՀՄՍ 1.51(բ)
ՀՀՄՍ 1.81(ա)
ՀՀՄՍ 1.51(գ)

2011 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Ծան.	2011թ.	2010թ.	
		000, եվրո	000, եվրո	
Վերագրելի շահույթ՝				
Մայր կազմակերպության սեփականատերերին		7,944	7,203	ՀՀՄՍ 1.83(ա)(ii)
Չվերահսկող բաժնեմաս		288	239	ՀՀՄՍ 1.83(ա)(i), ՀՀՄՍ 27.27
		8,232	7,442	
Վերագրելի ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ				
Մայր կազմակերպության սեփականատերերին		8,148	6,812	ՀՀՄՍ 1.83(բ)(ii)
Չվերահսկող բաժնեմասին		288	239	ՀՀՄՍ 1.83(բ)(i), ՀՀՄՍ 27.27
		8,436	7,051	
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ	12	եվրո	եվրո	ՀՀՄՍ 33.66
▶ Մայր կազմակերպության սովորական բաժնետոմսեր տիրապետողներին վերագրելի տարվա բազային շահույթ		0.38	0.38	
▶ Մայր կազմակերպության սովորական բաժնետոմսեր տիրապետողներին վերագրելի տարվա նոսրացված շահույթ		0.38	0.37	
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շարունակական գործունեությունից շահույթ				
▶ Մայր կազմակերպության սովորական բաժնետոմսեր տիրապետողներին վերագրելի շարունակական գործունեությունից բազային շահույթ		0.37	0.39	
▶ Մայր կազմակերպության սովորական բաժնետոմսեր տիրապետողներին վերագրելի շարունակական գործունեությունից նոսրացված շահույթ		0.37	0.38	

Մեկնաբանություն

Խումբը ցուցադրական նպատակով այս հավելվածում ներկայացնում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին մեկ հաշվետվության բացահայտում:

Համապարփակ ֆինանսական արդյունքների տարբեր տարրերը վերոնշյալ հաշվետվությունում ներկայացված են զուտ հիմքով: Հետևաբար, պահանջվում է լրացուցիչ ծանոթագրություն՝ ներկայացնելու վերադասակարգման ճշգրտումների գումարը և ընթացիկ տարվա օգուտները և վնասները: Այլապես, առանձին տարրերը կարող էին ներկայացվել անմիջապես այլ համապարփակ ֆինանսական արդյունքների կազմում:

Այս հավելվածում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում շահութահարկի ազդեցությունը Խումբը ներկայացնում է զուտ հիմքով: Հետևաբար, կպահանջվի լրացուցիչ բացահայտում ծանոթագրությունում, ինչը այստեղ ցուցադրված չէ:

Հավելված 2. Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն (Ժախսերն ըստ բնույթի ներկայացման օրինակ)

ՀՀՄՍ 1.10(բ)
ՀՀՄՍ
1.51(բ)(գ)

2011 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Մեկնաբանություն

Խումբը ներկայացնում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը՝ ծախսերը բացահայտելով ըստ գործառնությունի: Ցուցադրական նպատակով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ծախսերի՝ ըստ բնույթի բացահայտումը ներկայացված է այս հավելվածում:

	Ծան.	2011թ. 000, եվրո	2010թ. 000, եվրո	ՀՀՄՍ 1.51(դ)(ե)
Շարունակական գործունեություն				
Ապրանքների վաճառք		190,599	172,864	ՀՀՄՍ 18.35(բ)(i)
Ծառայությունների մատուցում		17,131	16,537	ՀՀՄՍ 18.35(բ)(ii)
Հասույթ «Գուդ բոնուսների» մարումից		1,375	1,125	
Վարձակալությունից եկամուտ		1,404	1,377	ՀՀՄՍ 18.35(գ)
Հասույթ		210,509	191,903	ՀՀՄՍ 1.82(ա)
Այլ գործառնական եկամուտ	9.1	1,585	2,548	ՀՀՄՍ 1.103
Պաշարներում պատրաստի և անավարտ արտադրանքի փոփոխություն		(1,133)	(3,791)	ՀՀՄՍ 1.103
Օգտագործված հումք և այլ նյութեր		(148,440)	(130,833)	ՀՀՄՍ 1.103
Աշխատակիցների հատուցման գծով ծախս	9.6	(44,019)	(43,853)	ՀՀՄՍ 1.103
Մաշվածություն, ամորտիզացիա և գույվիլի արժեզրկում		(3,845)	(2,974)	ՀՀՄՍ 1.103
Ոչ ընթացիկ ակտիվների արժեզրկում	13	-	(301)	
Այլ ծախսեր	9.2	(1,153)	(706)	ՀՀՄՍ 1.103
Ֆինանսական ծախսեր	9.3	(2,868)	(1,223)	ՀՀՄՍ 1.82(բ)
Ֆինանսական եկամուտներ	9.4	1,186	211	ՀՀՄՍ 1.82(ա)
Ասոցիացված կազմակերպության շահույթից բաժնեմաս	7	83	81	ՀՀՄՍ 1.82(գ)
Շարունակական գործունեությունից շահույթ նախքան շահութահարկը		11,905	11,062	ՀՀՄՍ 1.85
Շահութահարկի գծով ծախս	10	(3,893)	(3,432)	ՀՀՄՍ 1.82(դ) ՀՀՄՍ 12.77
Շարունակական գործունեությունից հաշվետու տարվա շահույթ		8,012	7,630	ՀՀՄՍ 1.85
Ընդհատված գործունեություն				
Ընդհատված գործունեությունից հաշվետու տարվա շահույթ/(վնաս) շահութահարկից հետո	11	220	(188)	ՀՀՄՍ 1.82(ե) ՀՀՄՍ 5.33(ա)
Հաշվետու տարվա շահույթ		8,232	7,442	ՀՀՄՍ 1.82(զ)
Վերագրելի՝				
Մայր կազմակերպության սեփականատերերին		7,944	7,203	ՀՀՄՍ 1.83(ա)(ii)
Չվերահսկող բաժնեմասին		288	239	ՀՀՄՍ 1.83(ա)(i)
		8,232	7,442	
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ	12	եվրո	եվրո	ՀՀՄՍ 33.66
▶ Մայր կազմակերպության սովորական բաժնետոմսեր տիրապետողներին վերագրելի տարվա բազային շահույթ		0.38	0.38	
▶ Մայր կազմակերպության սովորական բաժնետոմսեր տիրապետողներին վերագրելի տարվա նոսրացված շահույթ		0.38	0.37	
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շարունակական գործունեությունից շահույթ				
▶ Մայր կազմակերպության սովորական բաժնետոմսեր տիրապետողներին վերագրելի շարունակական գործունեությունից բազային շահույթ		0.37	0.39	
▶ Մայր կազմակերպության սովորական բաժնետոմսեր տիրապետողներին վերագրելի շարունակական գործունեությունից նոսրացված շահույթ		0.37	0.38	

Հավելված 3. Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունն ուղղակի մեթոդով

2011 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Մեկնաբանություն

ՀՀՄՍ 7.18-ը կազմակերպություններին թույլ է տալիս գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքերը ներկայացնել օգտագործելով ինչպես ուղղակի մեթոդը, այնպես էլ՝ անուղղակի մեթոդը: Խումբը դրամական միջոցների հոսքերի հաշվետվությունը ներկայացրել է անուղղակի մեթոդի միջոցով: Ցուցադրական նպատակով ուղղակի մեթոդով պատրաստված գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը ներկայացված է այս հավելվածում:

			ՀՀՄՍ 1.10(դ)
			ՀՀՄՍ
			1.51(բ)(գ)
			ՀՀՄՍ 7.10
	2011թ.	2010թ.	ՀՀՄՍ 1.51(դ)(ե)
Ծան.	000, եվրո	000, եվրո	ՀՀՄՍ 7.18(ա)
Գործառնական գործունեություն			
Հաճախորդներից ստացված դրամական միջոցների մուտքեր	227,113	235,778	
Մատակարարներին վճարումներ	(165,231)	(173,966)	
Վշխատակիցներին վճարումներ	(43,954)	(43,948)	
Ստացված տոկոսներ	336	211	ՀՀՄՍ 7.31
Վճարված շահութահարկ	(3,759)	(4,379)	ՀՀՄՍ 7.35
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	14,505	13,696	
Ներդրումային գործունեություն			ՀՀՄՍ 7.21
Մուտքեր հիմնական միջոցների վաճառքից	1,990	2,319	ՀՀՄՍ 7.16(բ)
Հիմնական միջոցների ձեռքբերում	13 (10,352)	(7,822)	ՀՀՄՍ 7.16(ա)
Ներդրումային գույքի ձեռքբերում	14 (1,216)	(1,192)	ՀՀՄՍ 7.16(ա)
Ֆինանսական գործիքների ձեռքբերում	(3,294)	(225)	ՀՀՄՍ 7.16(գ)
Մուտքեր վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումների վաճառքից	232	-	
Ոչ նյութական ակտիվների գնում	15 (587)	(390)	ՀՀՄՍ 7.16(ա)
Դուստր կազմակերպության ձեռքբերում՝ ստացված դրամական միջոցների նվազեցումից հետո	5 230	(1,450)	ՀՀՄՍ 7.39
Պետական շնորհների ստացում	24 2,951	642	
Զուտ դրամական միջոցների հոսքեր օգտագործված ներդրումային գործունեությունում	(10,046)	(8,118)	
Ֆինանսավորման գործունեություն			ՀՀՄՍ 7.21
Բաժնետոմսերի օպցիոնների իրագործումից հոսքեր	21 175	200	ՀՀՄՍ 7.17(ա)
Չվերահսկող բաժնեմասի ձեռքբերում	5 (325)	-	
Բաժնետոմսերի թողարկման գծով գործարքի ծախսումներ	21 (32)	-	
Ֆինանսական վարձակալության պարտավորությունների գծով վճարումներ	(51)	(76)	ՀՀՄՍ 7.17(ե)
Մուտքեր փոխառություններից	5,299	2,645	ՀՀՄՍ 7.17(գ)
Մարված փոխառություններ	(1,806)	(1,784)	ՀՀՄՍ 7.17(դ)
Վճարված տոկոսներ	(586)	(983)	ՀՀՄՍ 7.31
Մայր կազմակերպության սեփականատերերին վճարված շահաբաժիններ	22 (1,972)	(1,600)	ՀՀՄՍ 7.31
Չվերահսկող բաժնեմասին վճարված շահաբաժիններ	(30)	(49)	ՀՀՄՍ 7.31
Զուտ դրամական միջոցների հոսքեր ստացված/ (օգտագործված) ֆինանսավորման գործունեությունից	672	(1,647)	
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	5,131	3,931	
Արտարժույթի փոխարժեք փոփոխությունների զուտ տարբերություններ	43	19	ՀՀՄՍ 7.28
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հունվարի 1-ի դրությամբ	20 12,266	8,316	
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	20 17,440	12,266	ՀՀՄՍ 7.45

Մեկնաբանություն

ՀՀՄՍ 7.33 թույլ է տալիս վճարված տոկոսները ներկայացնել որպես գործառնական կամ որպես ֆինանսավորման գործունեություն, իսկ ստացված տոկոսները որպես գործառնական կամ որպես ներդրումային գործունեություն՝ կախված այն բանից, թե կազմակերպությունը որ տարբերակն է ավելի տեղին համարում: Խումբը որոշել է ստացված տոկոսները դասակարգել որպես գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր:

Նշումներ

Ընկերության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

«Էրնսթ Ընդ Յանգ» ընկերությունը առաջատար դիրք է գրավում առուդիտորական, հարկային, գործարքների ուղեկցման և խորհրդատվական ծառայությունների համաշխարհային շուկայում: Աշխարհի տարբեր երկրներում գտնվող մեր 152,000 աշխատակիցներին միավորում է ընդհանուր արժեքների և որակյալ սպասարկման հանդեպ իրենց հավատարմությունը: Մեր հաջողությունը մեր աշխատակիցների, հաճախորդների և ամբողջ հանրության ներուժի բացահայտման մեջ է:

Ավելի մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ey.com վեբ-հասցեում:

Մենք մշտապես ընդլայնում ենք մեր ծառայությունների և ռեսուրսների շրջանակը՝ հաշվի առնելով հաճախորդների կարիքները: Շուրջ 4,000 մասնագետներ պաշտատում են ԱՊՆ երկրներում գտնվող 18 գրասենյակներում՝ Մոսկվայում, Սանկտ Պետերբուրգում, Նոյսիբիրսկում, Եկատերինբուրգում, Կազանում, Կրասնոդարում, Տոյյատիում, Յուժոտ-Սայալինսկում, Ալմաթիում, Աստանայում, Աթիրաուում, Բաքվում, Կիևում, Դոնեցկում, Տաշքենդում, Թբիլիսիում, Երևանում և Մինսկում:

«Էրնսթ Ընդ Յանգ»-ը գլոբալ կազմակերպություն է, որը միավորում է Ernst & Young Global Limited անդամ ընկերությունները, որոնցից յուրաքանչյուրը առանձին իրավաբանական անձ է: Ernst & Young Global բրիտանական ընկերությունը սահմանափակված է իր մասնակիցների երաշխիքներով և հաճախորդներին ծառայություններ չի մատուցում:

«Էրնսթ Ընդ Յանգ» ընկերության Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների խմբի մասին
Ֆինանսական հաշվետվություններ հրապարակող յուրաքանչյուր կազմակերպության համար Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին անցումը հանդիսանում է կարևորագույն գործընթաց, ինչի ազդեցությունը անդրադառնում է ոչ միայն հաշվապահական հաշվառման, այլև կայացվող բոլոր որոշումների վրա, և չի սահմանափակվում միայն վերջիններիս արտացոլման կարգով:

Հաճախորդների հետ աշխատելիս մենք օգտագործում ենք «Էրնսթ Ընդ Յանգ» կազմակերպության միջազգային ռեսուրսները՝ մեր մասնագետների խմբերը ներգրավելու և կուտակված գիտելիքները կիրառելու միջոցով: Տնտեսության տարբեր ոլորտներում ծառայությունների մատուցման ընդարձակ փորձի, առաջադրված խնդիրների ըմբռնման և աշխարհի տարբեր երկրներում գտնվող կազմակերպությունների հետ համատեղ աշխատանքի ընթացքում ստացված նորագույն մշակումների շնորհիվ մենք կապահովվենք անվիճելի առավելություններ ձեր կազմակերպությանը: Այսպիսով՝ մենք պատրաստ ենք աջակցել մեր հաճախորդների բիզնեսի զարգացմանը:

© 2012 «Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ.

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Այս հրատարակությունը պարունակում է ամփոփ տեղեկատվություն և, հետևաբար, նախատեսված է օգտագործելու միայն որպես ընդհանուր ուղեցույց: Այն նախատեսված չէ փոխարինելու որևէ մանրակրկիտ հետազոտություն և չի կարող հիմք հանդիսանալ մասնագիտական դատողության իրականացման համար: Ոչ «Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ-ն, ոչ էլ համաշխարհային «Էրնսթ Ընդ Յանգ» կազմակերպության որևէ անդամ որևէ կերպ պատասխանատվություն չեն կրում այն վնասների համար, որոնք կարող են պատճառվել որևէ անձի՝ սույն հրատարակությունում առկա տեղեկատվության օգտագործման արդյունքում որևէ գործողություն իրականացնելու կամ գործողությունից հրաժարվելու հետևանքով: Ցանկացած մասնավոր հարցի դեպքում անհրաժեշտ է դիմել համապատասխան խորհրդատուին:

